



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2590

24584

24585

84

5-41

Օ. Ֆեոյի - Վոյապ երկուսուսոր էլ վեղճ - Գ. Պատրիարք
Վ. Լաճարթիճ - Զրապիկ-ԼԼ ւ - Մ. Զ. Կ
Վ. Բրիգո - Պաճօճ Լաթօ - Գր. Գրիգորիանճ

84
Ք-411
0. ՅԷՕՅԷ
©ԵՃՏՏՁ

ԱՂՔԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՎԷՊԸ



Թ.Ս.Բ.Մ.Ա.Ն.Ե.Յ.
Գ. ՄՍԵՐԵԱՆ

1002
ԵԿԵԵ

Հ.Ս.Ս.Ֆ.Ֆ.Ա. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/31 1922
Имени Мясникова
ՍՅԱՍԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Զմիռնիս

ՏԷՐ-ՆՐԱՏԱՐԱՆԻՉ ՏԻԳՐԱՆ ԵՍԵՐՈՒԹՅՈՒՆ ՏԷՏԷՆԱՆ
ՏԳԱԿՐՈՒԹՅՈՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1875

Եթէ այսօր մեր ազգը, եւրոպական մատենագրութեան զլիսաւոր վէպերու մէկ մասը թարգմանուած ոճի եւ կը վայելէ, կան տակաւին հեղինակներ որոնց անունը բոլորովին անձանօթ է իրեն, եւ որոնց գործերը սակայն ոչ նուազ գրական արժէք եւ հետեւաբար համբաւ ունեցած են:

Էօժէն Սիւ, Հիւլիօ եւ Տիւմա, փրպական ճիւղին մէջ գրեթէ հաւասար տաղանդով պաշտօնակիցներ ունին, որոնց հեղինակութիւնները, ղէպբերու այնքան առատութիւն, դժուար հիւս, աղետալի անցքերու կամ տեսարաններու յաջորդութիւն չեն ներկայացըններ եւ այնչափ հետաքրքրական չեն, բայց այնքան բնական եւ սպիտակ պարզութիւն մը, մարդկային սրտի այնպիսի խորին ծանօթութիւն մը, ազգի ազգի զգացումներու ու կրից անանկ ճշգրիտ նկարագիր մը կը պարունակին, որ ընթերցողին վրայ մեծ տպաւորութիւն մ'ընելով բարոյական աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենան:

Պալլար*, Ժ. Սան, Է. Քէյսօ, Ա. Քառ, եւ Օ. Քէյօէ այս կարգէն են եւ ներկայ թարգմանութիւնը որ այս վերջինին գործն է, մեր ըսածին ապացոյց մը կրնայ ըլնիլ: Ս. Վ. ՔԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԻԻ ՄԸ ՎԵՊԸ իրօք շատ մը լեզուներու թարգմանուած՝ եւ իր բանագործական (dramatique) մասը թատերական բազմամիւ բեմերու վրայ ներկայացուած է իբր ճշմարիտ պատկեր այն վսեմ զգացումներու, որոնց աղբիւր կրնայ ըլնիլ մարդկային սիրտը, եթէ դարուս բարուց ապականութիւնը, վատութիւնը եւ շահախնդրութիւնը մուտ գտած չեն հոն, կ'ընդունը որ գործն ինքնին խօսի եւ ընթերցողը դատէ:

Գ. ՄՍՍԵՐՍԱՆ

* Ի մտի ունինք այս հեղինակներու քանի մը գործերը թարգմանելով 'ի լոյս բնծայել:

† Հայ թարգմանիչներու սովորութիւն մ'եղած է իրենց թարգմանութիւնները հարկաւոր, շոր լեզուներու թարգմանուած, կոչել, օրինակի աղագաւ 100-80-ի ԹՇՈՒՆՆԵՐԸ, ընաւ հռչակաւոր չեն, և միայն հայերէնի թարգմանուած. ~~Ք. Վ. ՔԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԻԻ~~ միջակ վիպասաններու կարգէն է և ցաւալի է որ իր թարգմանիչը՝ որ բոլոր օրտով կը յարգենք՝ իր աշխատութիւնը ուրիշ գործի մը վրայ չէ ըրեր:

ԱՂՔԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ

ՎԵՊԸ

Sursum corda!
Սիրաերը բարձր

Բարից, 10 ապրիլ 185 . . .



2003

Ազա երկրորդ գիշերն է այս, որ խեղճ սենեկիս մէջ, տխուր աչքով մը պարպոյ կրակարանս նայելով, փողոցին միօրինակ դղրդիւնն և մրմունջները մտիկ ընելով կ'անցընեմ, ու այս մեծ քաղաքին մէջ՝ Ռվկիանոսին մէջտեղը իր խորսակեալ տախտակին վրայ սարսուռը նաւարեկեալէն աւելի առանձին, Լբեալ և յուսահատութեան մօտ կ'զգամ ինքզինքս :

Այսքան վատութիւնը հերիք է, ալ ճակատադրիս երեսը դէմ առ դէմ կ'ուզեմ նայիլ իր ուրուականի երեսը լը կորզելու համար, կ'ուզեմ նաև վշտալից սիրտս բանալ սա յետին ու տժգոյն բարեկամիս՝ որու արդահատանքը զիս չկրնար անարգել, այն է պատկերս որ հայելոյս մէջէ ինձ կ'նայի :

Կ'ուզեմ ուրեմն իմ կեանքն ու մտածումները գրի առնուլ, չէթէ առօրեայ ու մանրակրկիտ ճշգրութեամբ մը, այլ առանց ծանր բացատրութեան և մանաւանդ առանց ստեղծ : Պիտի սիրեմ այս օր-

հաշիւս, վասն զի եղբայրական արձագանգի մը նման իմ մեռու
 թիւնը պիտի խաբէ և երկրորդ խղճմտանքի մը պէս միանգամայն,
 սաղագրար պիտ' ըլնի ինձ որ կեանքիս մէջ չ'ընեմ այնպիսի գործ
 մը զոր մատերս չկարենան հաստատութեամբ արձանագրել:

Հիմակ տխուր հետաքրքրութեամբ մ'անցեալին մէջ կը փնտռեմ
 այն ամեն դէպքերն ու անցքերը որ շատոնց պէտք էին աչերս բանալ,
 եթէ երջանիկ պարագայի մ'անտարբերութիւնը, որդիական ակ-
 նածութիւնը, զանոնք որ և է լուսոյ առջև գոցած չըլնէին: Մօրս
 այն խորին և անփոփոխ մեղամաղձութիւնը կ'իմանամ, կ'իմանամ նաև
 աշխարհիս համար անոր ունեցած զգուանքը և այն պարզ ու միաձև
 հազուադար մերթ հօրս հեղնութեանց և մերթ բարկութեանը առար-
 կայն կ'ըլնէր. — Սպասուհի կ'իմանիս, կ'ըսէր անոր:

Թէև կ'հասկնայի որ ան ասեն մեր ընտանեկան կեանքը երբեմնակի
 աւելի ծանրկեկ կուխներով ալ կ'իմանգարուէր, բայց անոնց ուղ-
 ղակի հանգիստտես եղած չէի երբէք: Հօրս բարկալիւր ու հրա-
 մայական եղանակները և աղերսուն ձայնի մը մրմունջները և խեղ-
 դուկ հեծիւններ միայն կրնայի լսել:

Մայրս շքեղ և ազմկալի կեանքի մօտեցնելու համար եղած ան-
 պրդիւն և բուռն փորձերու կ'տայի այս փոթորիկները, կեանքի մը՝
 զոր մայրս սիրած էր, որքան որ պարկեշտ կ'ին մը կրնար սիրել,
 բայց ալ նոյն ճամբուն մէջ օրէ օր աւելցող զղուանքով մը հօրս կը
 հետևէր: Այս կուխնեով ետքը հայրս սովորաբար զօհար մը գնե-
 լու կ'վազէր, զոր սեղան նստելու ատեն մայրս իր ղենջակին տակը
 կ'գտնէր բայց վրան չէր կրեր երբէք:

Օր մ'ալ ձմեռուան մէջ, մայրս Բարիզէ ծանրադին ծագիկներով
 լի սնտուկ մ'ընդունեցաւ, եւանդով շնորհակալ եղաւ հօրմէն բայց
 անի գուրս ելածին պէս՝ ուսերը վեր ըրաւ մեղմիկ և անբուժելի
 յուսահատութեամբ լի նայուածք մ'երկիրը վերցուց:

Իմ մանկութեան և պատանութեան հասակի մէջ, հօրս համար
 շատ ակնածութիւն, բայց բաւական քիչ սէր ունեցիր էի: Իրօք,
 ան ասեն՝ անոր բնութիւններու միայն տխուր կողմը կ'ճանչնայի,
 վասն զի ներքին կենցաղավարութեան մէջ՝ որու բոլորովին անյար-
 մար էր նա, այս աչքի կ'դարնէր, բայց ետքը, երբ տարիքս նե-
 րեց որ ընկերութեանց մէջ իրեն ընկերանամ, զարմացայ, կար-
 ծածէս բոլորովին տարբեր տեսնելով զինքը: Արժեքս թէ մեր հին

քզիկին շրջապատին մէջ, դժնդակ բժժանքի մը ներքև կ'գտնուէր և
 դունէն դուրս ելածին պէս, դէմքը կ'պայծառանար, կուրծքը կը
 լայնար ու ինքը կ'երիտասարգանար, — Մաքսիմ, կ'ըսէր նա, ա-
 ղէ, արշաւներ քիչ մը, և քաջարշաւ ընդ յսուաջ կը սլանայինք
 զուարթագին: Անտան մանկային խնդութիւն, աւիւն, մտային հա-
 ճոյքներ, զգայմանց յուզութիւն մը կ'դար վրան որոնք իմ դեռա-
 հաս սիրտս կ'զուարթացնէին և որոնց մէկը մասը՝ տան մէկ ան-
 կիւնը մոռցուած մօրս կ'ուզէի տանիլ:

Սասնկով սկսայ հայրս սիրել և մանուաւոր ճշմարիտ հիացում
 մ'ալ աւելցաւ սիրոյս, երբ աշխարհասէր կենաց ամեն հանդէսնե-
 բու, որսրբութեանց, ձիարշաւերու և հացկերոյթներու մէջ ցը-
 ցուցած իր զուարթ բնութեան սիրազրաւ հանգամանքները տե-
 սայ:

Քաջ ձիավար, առատաձեռն խաղամուղ, արիասիրտ, ձեռքը բաց
 անձ մ'էր նա և իբր առնական շնորհքի և ասպետական ազնու-
 պետութեան կատարեալ տիպարը կ'նկատէի ես զինքը, ան ալ տե-
 սակ մը դառն ժպիտով վերջին ապարանջն կ'կոչէր ինքզինքը:

Հայրս ահա այսպէս էր ընկերութեան մէջ, բայց սուրը մտածին
 պէս, մայրս ու ես, անհանգարտ, բարկացուտ ու դէգ ծեր մը դար-
 ձած կը տեսնէինք զինքը:

Մօրս նման հեղու քնքուշ արարածի մը դէմ, հօրս բարկու-
 թիւնները անշուշտ կ'սրբմտեցրնէին զիս, եթէ ինչպէս որ ըսի ետ-
 քէն աւելի համակրական ցոյցեր և կրկնակի ինսամներ չյաջողէին
 անոնց: Ձղջումի այս ապացոյցներով աչքիս առջև հայրս արգարա-
 նալէ ետքը, բնութեամբ իրօք բարի ու զգայուն մարդ մը կ'երևէր
 ինձ, որ երբեմն իր ճաշակին ու սիրած բաներուն դէմ եղած յա-
 մառ ու կանոնաւոր դիմադրութենէ զոչուուելով ինքզինքէն կ'ել-
 նէր: Մայրս ջլոյլին կամ մաղձային հիւանդութեան մ'ենթակայ կը
 կարծէի, այնպէս կը ներկայացնէր զինքը հայրս, թէև միշտ այս
 մասին այնպիսի զգուշութիւն մը բանեցընելով, որ խիստ օրինաւոր
 կ'դասէի:

Իսկ հօրս նկատմամբ մօրս զգացումները, անբայատրելի էին ինձ:
 Անոր վրայ երբեմն այնպիսի նայուածքներ կ'նետր նա, որ խստու-
 թեան անօրինակ երևոյթ մ'ունէին, բայց փայլակի պէս շուտով
 կ'անցնէր այս և մէկ բոպէ ետքը իր խնաւ աղոթք աչքերը ու ան-

վրդով դէմը սիրալի հնազանդութենէ և խանդաղատալի անձնութեան թե՛նէ մ'աւելի բան մը կ'այսնէին :

Տասն և հինգ տարեկան կարգուած էր մայրս և 21 տարիս լրացուցած էի երբ քոյրս , խեղճ Հէլէնը ծնաւ : Ատր ծննդենէ քիչ մը ետքը , առտու մը հայրս խորհոն դէմըով մ'ելաւ այն սենեկէն ուր մայրս կ'ստաւպէր ու ինձ նշան ըրաւ որ պարտեզը իրեն հետեւիմ : Առեկեայն քանի մը շրջան ընելէ ետքը :

— Մարտիմ , ըսաւ , մայրդ երթալով այլանդակ կ'ըլնի :

— Հիւանդութենէն է , հայր իմ , ըսի :

— Այո՛ , անշուշտ , բայց տարօրինակ փափաք մ'ունի , կ'ուզէ որ իրաւագիտութիւն սորվիս :

— Իրաւագիտութիւն մի , ինչ այս հասակովս , ծննդեամբս և վերահակովս մայրս կ'ուզէ որ երթամ դպրոցի մը նստարաններուն վրայ քաշքրտուիմ : Ծիծաղելի կ'ըլնի :

— Ես ալ այնպէս կարծեմ , ըսաւ կարուկ կերպով մը հայրս , այլ մայրդ հիւանդ է և ուրիշ ճար չկայ :

Այս ատեններս , անունովս , պղտի կարևորութեամբս ու սրահակներու մէջ ունեցած մանր մունր յաջողութիւններովս , շատ ուռած փքած և բարձրամիտ էի , բայց սիրտս մաքուր էր և կ'պաշտէի մայրս՝ որու հետ քսան տարի , անդիլի ծայր սերտ մտերմութեամբ կ'պուլուած էի , ուստի վաղելով իմ հնազանդութիւնը գայի հաւաստելու իրեն , տխուր ժպիտով մը գլուխը ծռելով շնորհակալ եղաւ նա և համբուրել տուաւ քոյրս որ իր ծունկերու վրայ կ'ննջէր :

Կրրնօպլը քաղքէն , միայն կէս ժամ հեռի բնակելուս , առանց հայրենի տունէս բաժնուելու , կրցայ իրաւագիտութեան դասերուս հետեւիլ :

Մայրս , իմ յառաջագիմութեան վրայ այնպիսի անձանձիր և եռանդուն հետաքրքրութեամբ կը տեղեկանար ամեն օր , որ կ'հարցընէի իւրովի , թէ այս արտաքոյ կարգի հողատարութեան տակ , արդեօք հիւանդի մը մտային հաճոյրէն զատ ուրիշ բան չկար : Արդեօք կենաց իրական ու ձանձրալի մասին համար , հօրս ունեցած զգուանքն ու արհամարհը , մեր հարստութեան զարմնի փնասներ պատճառած էին և մայրս կարծէր որ կրնայի իրաւագիտութիւն և գործ սորվելովս անոնց դարման տանիլ :

Բայց ասոր ալ չկրցայ հաւատալ , իրաւ կ'յիշէի որ երբեմն հայրս

զանգատած էր , յերգափոխութեան ատեն մեր հարստութեան մեծ կորուստներ կրեչուն համար , բայց այս զանգատները շատոնց դադրեք էին , այլուր , զանոնք միշտ անիրաւ կ'դանէի ես , մեր նիւթական վերահակը շատ զոհասցուցիչ կարծելով , վասն զի Կրրնօպլը քաղքին մօտ կ'ընակէինք մեր ընտանիքին ժառանգական զղեակը զոր իր անուարկետական ձեւին համար բոլոր երկրին մէջ մատուլ կը ցըցունէին ամենքն ալ :

Ես և հայրս , շատ անգամ ամբողջ օր մ'որսրդութիւն կ'ընէինք , առանց մեր հողերէն կամ անտառներէ դուրս ելնելու : Մեր ատենները հոգակաւոր էին և թանկ ձիերով լի՝ որոնք հօրս պարծանքը ու մարտիւնը եղած էին : Ասկէ զատ Բարդի մէջ Բարիւսին պուլվարին վրայ գեղեցիկ սպարանք մ'ունէինք որով հոն ալ վայելուչ ոտնկայ (pied-a-terre) մը պահուած էր մեզ : Վերջապէս մեր տան սովորական զնայքին մէջ նեղութիւն կամ պէտք յայտնող ստուեր մը չկար : Մեր սեղանը շահուած էր սպիտակ կերակուրներով և մասնաւոր փափիկութեամբ մը որու մեծ կարևորութիւն կը տար հայրս :

Մօրս առողջութիւնը սակայն , եթէ ոչ զգալի՝ դոնէ անընդհատ կերպով կ'դէշնար : Իր հրեշտակային բնաւորութիւնը սկսաւ աւրուիլ , իր լեզուն որ դէթ իմ ներկայութեանս՝ անոյշ խօսքեր կ'արտասանէր միայն , դառնացաւ . գղեկէն դուրս առած մէն մի քայլս հեղնական դիտողութեան մ'աւարկայ կ'ըլնէր , հայրս որ ինէ աւելի չէր ինայուեր , այս յարձակումներու այնպիսի համբերութեամբ մը կ'տանէր , որ զովետսի արժանի կը թուէր ինձ , բայց ան ալ սկսաւ յառաջուրնէ աւելի դուրսը ապրել , ըսելով որ ինքզինքը մօռնալու և միտքը ցրուելու պէտք ունէր անգուլ :

Միշտ կ'յորդորէր զիս որ իրեն ընկերանամ , իմ սիրոյս մէջ հաճութիւն , հասակիս անհամբեր եռանդին և մէկ խօսքով սրտիս վատութեանը մէջ , շատ զիւրին հնազանդութիւն մը կ'դանէր :

Հազար ութը հարիւր յիսուն և . . . տարւոյն սեպտեմբեր ամսուն մէջ , օր մը , մեր զղեկէն քիչ մը հեռի դատարի մը մէջ ձիարշաւ մը պիտ' ըլնէր որու մէջ հայրս իր ձիերէ շատերը դրաւի դրած էր :

Առտու կանուխ մէկտեղ դացեր հոն ճաշեր էինք : Կէսօրին մօտ , մրցումն ելքը մօտէն տեսնելու համար ասպարէզին սահմանին վրայ

արշաւելու ատենս, մեր ծառաներէ մէկն յանկարծ ինձ մօտեցաւ ըսելով որ կէս ժամէ աւելի զիս փնտուեր է և թէ հայրս արդէն դարձեր էր դղեակը ուրկէ մայրս զինքը կանչել տուեր էր և կը խնդրէր որ ես ալ անյապաղ իրեն հետեւէի :

- Բայց, ինչ կայ ըսի, յանուն Աստուծոյ :
- Կարծեմ տիկինը աւելի անհանդիստ է, պատասխանեց նա : Ասոր վրայ խենդի պէս մեկնեցայ :

Տունը հասած ատենս տեսայ որ քոյրս կ'իտաղար մարդագետներն վրայ, անսպաս և լռին բակին մէջտեղը : Չիէս իջնելու կէտիս առջևս վազեց նա և զիս գրկելով խորհրդաւոր և զրեթէ զուարթ եղանակաւ մ'ըսաւ. — Թողըղդայեանս եկաւ : Սակայն տան մէջ արասքոյ կարգի յուզմունք մը, յուսահատութեան և շփոթի նշան մը չէի տեսներ : Սանդիսէն վեր ելայ փոյթ 'ի փոյթ : Մօրս սենեակը հաղորդող դահլիճէն անցնելու ատեն դուռը բացուեցաւ մեղմիկ ու հայրս դուրս ելաւ . իր առջև կանդ առի ու տեսայ որ խիստ դեղներ էր ու շուրթերը կ'զոզային :

— Մաքսիմ, ըսաւ նա առանց ինձ նայելու, մայրդ քեզ կ'ուզէ : Հարցմունք ընել կ'ուզէի, բայց ձեռքովը նշան ըրաւ որ երթամ և արտօրնօք պատուհանի մը մօտեցաւ իրբև թէ դուրս նայելու համար :

Ներս մտայ :

Մայրս կէս մը պառկած էր իր թիկնաթուղին վրայ և մէկ թևն անշարժ կախուած էր : Մոմի պէս սպիտակ դէմքին վրայ յանկարծ նորէն տեսայ այն աղնիւ քաղցրութիւնը ու փափուկ շնորհքը զորս հիւանդութիւնը խանդարեր էր երբեմն :

Յախտնական հանդստութեան հրեշտակը այս խաղաղեալ ճակտին վրայ իր թևը սկսեւ էր տարածել : Կուսկի վրայ ընկայ, կէս մ'աչերը բացաւ նա և իր կորացեալ գլուխը դժուարութեամբ վերցրանելով զիս երկար նայուածքով մը պատեց, ետքը այնպիսի ձայնով մ'որ ընդհատ շունչ մը դարձեր էր, այս խօսքերն ըսաւ ծանրութեամբ .

— Խեղճ աղայ . . . կ'տեսնես, ալ մաշած եմ . . . մի լար . . . : Այս օրերս քիչ մ'երեսէ ձգեցիր զիս, բայց ես շատ անհամցած էի . . . : Նորէն պիտի տեսնուինք Մաքսիմ . . . և պիտի բացատրուինք որդեակս . . . : Ո՛հ, կարողութիւնս չմնաց . . . ինձի

խոստացածը յիշեցուր հօրդ : Իսկ դու այս կեանքի կուտին մէջ զօրաւոր եղիր ու տկարներուն ներէ : »

Շունը կարեցաւ, խօսքը ընդմիջեց պահ մ'ու ետքը ձգով մը, մէկ մաաը վեր վերցրնելով և ուշով երեսս նայելով. « Քոյրդ » ըսաւ ու իր կապուտակ արտեանունքը դարձեալ փակուեցան և մէկէն բացաւ զանոնք, դժեղակ ու բուռն կերպով մը թևերը տարածեց ձեռքը : Չայն մը ձգեցի, հայրս ներս վազեց ու երկար ատեն նստահալի մ'այս խեղճ մարմինը իր կուրծքին վրայ սեղմեց աղեկեղ հեծիւններով :

Քանի մը շարաթ ետքը հայրս ուզեց որ Քրանսայէ մեկնիմ ըսելով որ մեր ողբացած անձին յետին կամացը կ'հնազանդէր : Ուստի ճանբայ ելայ և աշխարհիս մէջ սկսայ վարել այն թափառիկ կեանքը զոր մինչև այսօրս շարունակեցի :

Միամտայ բացակայութեան մը միջոցին, քանի որ հասակիս յոռի եռանդը կ'մեղմանար, սիրտս որ երթալով ընտանեսէր կ'ընէր, շատ անգամ կենացս աղբիւրին մօտեւում, մօրս զերեզմանին ու քրոջս օրորին քով դառնալու կ'մղէր զիս, բայց ուղեւորութեանս ճիշդ տեւողութիւնը հայրս սահմանած էր և անիկա իր կամքը առաթուր կուխելու վարժեցուցած չէր զիս :

Իր թղթակցութիւնը, որ սիրալիբ բայց կտրուկ էր, ընաւ անհամբերութիւն մը չէր յայտներ վերագարձիս վրայ, մանաւանդ ահուզողը աւելցաւ սակայն, երբ ստիէ երկու ամիս յառաջ Մարտէլ հասնելով հոն իրմէ շատ մը նամակներ գտայ որոնք սաստիկ անասարանօք զիս ետ կ'կանչէին :

Փետրվար ամսուն միջին իրիկուն մը, վերջապէս տեսայ մեր հինօրեայ բնակարանին թանձր պատերը, որ դաշտը պատող ձեան բարակ խաւին վրայ կ'որոշուէին : Կծու ու սառ. քամի մը կ'փչէր մերթընթ մերթ. եղեամի գնտակներ կ'ըյնէին ճամբուն ծառերուն չոր տերեւներուն պէս և ախոր ու տկար շշուկով մը, խոնաւ երկրին վրայ կ'նստէին :

Բակը մտնելու ատեն գետնայարկի սրահին մէջ որ մօրս վերջին օրերը երբէք չէր բացուեր, ստուեր մը տեսայ որ հօրս ստուերին նմանցրնելով հոն վազեցի, հայրս զիս տեսնելուն պէս խորունկ աղաղակ մը ձգեց, ետքը թևերը ինձ բացաւ և զգացի որ իր սիրտը իմնիս դէմ կ'ընդունէր ու ժգնակի :

— Սաւեր ես, խեղճ տղաս, ըսաւ իր սովորութեան հակառակ եղակի գործ ածելով: Տարջիր, տարջիր: Այս սենեակը պաղ է, բայց հիմակ միւսներէ նախագաս կ'համարիմ ես, վասն զի հոս գոնէ շունչ կ'անուռի:

— Եւ ուղջութիւննիդ ինչպէս է, հայր իմ:

— Բաւական լաւ, ինչպէս որ կ'տեսնես:

Եւ զիս կրակարանին մօտ ձգելով այն ընդարձակ սրահին մէջ զոր 2-3 մոմեր հաղիւ հազ կ'լուսաւորէին, նորէն շարունակեց իր շրջագայութիւնը որ ես ընդմիջեր էի ըստ երևութի:

Այս այլանդակ ընդունելութենէ շփոթած, ապշօրէն հօրս երեսը նայեցայ:

— Զիերս տեսա՞ր, հարցուց յանկարծ առանց կայ առնլու:

— Հայր իմ:

— Հա՛, իրաւ, դեռ հիմն հասար:

Պահ մը լուռ թնէ ետքը,

— Մարտիմ, շարունակեց, քեզի բսելիք ունիմ:

— Մտիկ կ'ընեմ զձեզ, հայր իմ:

Պարծես թէ ըսածս չլսեց, ժամանակ մ'եւ շրջեցաւ վայրկեան յառ վայրկեան կրկնելով,

— Խօսելիք ունիմ քեզ:

Հուսի յետոյ խորունկ հառաչանք մ'արձակեց, ձեռքը ճակատին վրայէն անցուց և շտապաւ նստաւ, դիմայը ինձ ալ աթու մը ցըցունելով:

Այն ատեն, աչերը իմիններուս յառեցան, այնպէս որ կարես թէ խօսիլ կ'ուզէր ու չէր համարձակեր, նայուածքին մէջ աղերսի, վարանման և խոնարհութեան երևոյթ մը կար, երևոյթ որ սիրտս շարժեց հօրս պէս մարդու մը վրայ տեսնելուս:

Ինչ որ էին իր յանցանքները զորս խօսաւովանելու համար այնքան դժուարութիւն կ'ունենար, կ'զրայի հոգեայ խորէն որ բոլորովին ներեալ էին, երբ յանկարծ այն հայուածքը որ վրայէս չէր վէրջըներ, ապուշ, անտրոշ և սոսկալի անշարժութիւն մ'առաւ, իր ձեռքը թևիս վրայ կ'օկեցաւ, կէս մը թիկնաթուղին վրայն ելաւ և խիտն նորէն ընելով յատակէն վրայ տասպալեցաւ: — Մեծութեմ էր նա:

Մեր սիրտը արամբանել ու հաշուել չունի ամենեւին: Իր փառքն

է այս: Վայրկենէ մ'ի վեր ամեն բան գուշակեր էի, բոպէ մը բաւական եղեր էր առանց բացատրութեան յայտնելու լուսոյ անդիմադրելի ճառագայթով մ'այն դժնդակ ճշմարտութիւնը որ քսան տարիէ 'ի վեր ամեն օր աչքիս տակ կրկնուող դէպքեր մաքէս չանցուցներ էին: Իսկայն հասկրցեր էի որ սնանկութիւնը մեր տան մէջ էր և գլխիս վրան, բայց և այնպէս չզիտեմ որ, հայրս կրնար ինձ աւելի և դառն արցունք թափել տալ, եթէ զիս իր բարիքներով բեռնաւորած մեռնէր:

Իմ վշտերու և խորին կսկիծներու մէջ կար նաև դժուրութեան զգացում մ'ալ, որ զաւակէն առ հայրն ուղղուելուն՝ անդիի ծայր սրտաշարժ էր: Այն աղերսական խոնարհ ու շփոթած նայուածքը աչքիս առջևն էր միշտ, կ'յուսահատէի այս թշուառ սրտին խորտակուելէն յառաջ միտթարութեան խօսք մ'ըսել չկարենալուս և հիմակ որ ալ ձայնս չէր լսեր նա, յիմարբար կ'դուչէի — Կ'ներեմ, կ'ներեմ՝ քեզի:

Կ'նչ վայրկեաններ էին անոնք, Աստուած իմ:


Պը՛տի որ կրցայ մակարերել, մայրս չմտած, խօսք առած էր հօրմէս որ էր ստացուածքներու մեծ մասը ծախէ և բոլորովին սրբելով այն պարտքը՝ որ ըրած էր ամեն տարի իր հասոյթներէն մէկ երրորդ մ'աւելի ծախս ընելով, մնացածովը ապրի: Հայրս իր այս խօստու մը բռնելու աշխատե՛ր՝ իր անտառներն ու երկիրներու մէկ մասը ծախեր էր, բայց ասանկով ինքզինքը անձ դրամագլխի մը տէր տեսնելով՝ անոր մի պղտի մասը պարտքերը սրբելու յաւակցուցե՛ր՝ և մնացածը Պօրսայի դարշելի խաղերու բաղդին յանձնելով՝ իր նախկին հարստութիւնը վերստին շահելու ձեռնարկեր ու բոլորովին փճացեր էր:

Մինչև յատակը տակալին չկրցայ չափել այն անդունդը ուր ընկած ենք: Հօրս մահուրէն շաբաթ մ'ետքը ծանր հիւանդացայ ու 2 ամիս տառապելէ ետքը հաղիւ հայրենի դղիկէս կրցայ ելնել այն օրն որ օտարական մը կ'զար հոն անդաւորուելու: Բարեբաղդաբար մօրս ծեր բարեկամներէ մէկը որ Բարիզ կ'ընակի և որ ժամանակաւ իրրե նօտար մեր ընտանեկան դործերը կ'նայեր, այս տխուր պարագաներու մէջ ինձ օգնութեան հասաւ: Ինքնին յանձն առաւ հաշիւներու կարգադրութիւնը որ իմ անփորձութեան համար անյարգելի դժուարութիւններ կ'ներկայացընէին:

Ժառանգութեան վերաբերեալ գործերը կարգի դնելու հոգը բռնորովին իրեն թողի և կյուսամ որ իր պաշտօնը այսօր լմնցած է : Երեկ առտու հոս հասածիս պէս , իր սունը վաղեցի բայց զերն էր , ուրկէ վաղը պիտի վերագառնայ : Այս երկու օրերը խիստ տաժառնելի թուեցան ինձ , յիրաւի անստուգութենէն աւելի մեծ չարիք մը չկայ , վասն զի հոգւոյ զօրութիւնն և արիւթիւնն 'ի կախ կը ձգէ այն 'ի հարկէ :

Շատ պիտի զարմանայի , եթէ 10 տարի յառաջ մէկը դուշակէր թէ այն ծերուկ նօտարը , որու կանոնապահ լեզուն և չոր քաղաքավարութիւնը հայրս և զիս այնքան կ'զուարճացրնէին , օր մ'այն պատգամը պիտ' ըլնէր որմէ իմ ճակատագրոյ յետին վճիռը պիտի սպասէի : Չափազանց մեծ ակնկալութիւններու դէմ զզոյշ ըլնելու համար , ձեռքէս եկածը կ'ընեմ , հաշիւ ըրի վեր 'ի վերոյ որ մեր ամեն պարտերը վճարելէ ետքը 120 կամ 150 հազար Ֆրանքի դրամազուլս մը կ'մնայ մեզ , վասն զի 5 միլիոն Ֆրանքի հասնող հարստութիւն մը դժուար է որ դոնէ այս բեկորը չթողու : Իմ մասին , միտք ունիմ 10 հազար Ֆրանքի չափ առնուլ և երթալ Միացեալ նահանգաց նոր երկիրներու մէջ բազմ փնտռել . մնացածը քրոջս պիտի թողում :

Այս չափս հեռիք է այս զիշերուան համար : Ինչ տխուր զբաղում է այսպիսի տխուր յիշատակներ արձանադրել : Կ'զգամ սակայն որ անով քիչ մը հանդարտեցայ : Աշխատութիւնը նուիրական օրէնք մ'է անշուշտ , վասն զի անով քիչ մը զբաղածիդ պէս , չգիտեմ ինչ տեսակ դոհութիւն և հանդարտութիւն մը կ'զգաս : Այլ մարդս աշխատութիւնը չսիրեր բնաւ , անոր անվրիպելի բարիքը չկրնար ուրանալ , ամեն օր կ'վայելէ զայն , կ'խնդայ անով և ամեն առտու մի և նոյն զըռանքով աշխատութեան կ'սկսի : Ինձ կ'թուի թէ տարօրինակ ու խորհրդաւոր հակասութիւն մը կայ հոս որսվ կարծես թէ աշխատութեան մէջ պատիժը ու դատաւորին հայրական ու երկնային հանդամանքը կ'զգանք միանդամայն :



Հինգշաբթի

Այս առտու արթնցած ատենս , Պ. Լօպօբէնի կողմէ նամակ մը սուին ինձ որով ճաշու կ'հրաւիրէր զիս իր մեծ համարձակութեան համար ներումն խնդրելով , բայց իմ շահերու նկատմամբ բան մը չէր ըսեր : Այս լուրիսէ գէշ գուշակութիւն մ'ըրի :

Որոշեալ ժամը սպասելով , քոյրս իր վանքէն հանեցի և Բարիզի մէջ ժուռ ամեցի : Մեր սնանկութիւնը խեղճին մտքէն չէր անցնէր և այն օրը բաւական ուղիղ փափաքներ ունեցաւ , առատ պաշար մ'առաւ ձեռնոյցներու , վարդագոյն թղթերու , իր բարեկամահեաց համար շաքարեղէններու , աղնիւ հոտերու , արտքոյ կարգի տապօններու ու պղտի վրձիններու որ անտարակոյս խիստ կարեւոր բաներ՝ բայց ճաշէ մը նուազ անհրաժեշտ են :

Երանի թէ ասանկ ըլլիլը յաւիտեան չիմանայ :

Ժամը ճին քատեթ փողոց , Պ. Լօպօբէնի տունն էի : Մեր ծեր բարեկամին տարիքը չեմ գիտեր , բայց միտքս է որ այսօր ինչպէս է նէ նոյնն էր նաև յառաջ , նիհար , մարմինը քիչ մը կորած , տակնուվրայ ճերմակ մազեր , խիտ ու սև յօնքերու տակ սուբ աչեր , առողջ և բարակ զձաղբութիւն մը , ահա այս է իր նկարագիրը :

Տեսայ միանդամայն նախնաձև սև հագուստը , պաշտօնական ճերմակ փողպատը և սրնկապի ժառանգական անդամանոցը , 'ի վերջէ կանոնաւոր , աւանդապահ և ծանրագլուխ մարդու մը բոլոր արտաքին նշանները : Ծերունին իր պղտիկ սրահակին բաց դրան սեմին վրայ ինձ կ'սպասէր , մեծ խոնարհութենէ մ'ետքը երկու մատով մեղմիկ մը ձեռքս բռնեց և բաւական պարզ երևութով պառաւ տիկնոջ մ'առջև տարաւ զիս որ կրակարանի քով կանդնած էր :

— Կը ներկայացընեմ ձեզ Պ. տը Շանսի տ'Օթըրիվ մարբիդը , ըսաւ ան ատեն Պ. Լօպօբէն , իր հաստ , ծանր և աղիւռ ձայնովը , ետքը մէկէն աւելի խոնարհ եղանակաւ մ'ինձ դատնալով ըսաւ ,

— Տիկին Լօպօբէն :

Պատանք և վայրկեան մը վարանումով լի լուրիւն մը տիրեց : Իմ վերջնական վիճակի վրայ անմիջական բացատրութիւն մը կ'ըս-

պատէի և տեսնելով որ 'ի կախ կ'ձգուէր, հետեցուցի որ հա-
ճոյական չէր այն և այս կարծիքս կ'հաստատուէր այն դաղտագողի
ու ցաւակցական նայուածքներէն, որոնցմով տիկին Լօպօբէն զիս
կ'պատուէր: Իսկ Պ. Լօպօբէն կ'զիտէր զիս զարմանալի ուշադրու-
թեամբ մը որ չարութեամբ խառն կ'թուէր ինձ:

Ան ատեն յիշեցի որ հայրս միշտ կ'ըսէր թէ այս քաղաքալար
սրտին մէջ և իր շինծու յարդանաց տակ, Էն-ճէ, շինականի և
նոյն իսկ Թաքօպէնի(*) հին խմորի մնացորդ մը կար: Սոյն կէտին
ինձ այնպէս թուեցաւ որ այս խմորը քիչ մը սկսեւ էր եփ ելնել
և թէ ձերունոյն դաղանի հակակրութիւնները աւարակէ մը (gen-
tilhomme) շարձարանքի տեսարանով գոհութիւն կ'զգար:

Բայց ես զդպցած ճշմարիտ ցաւիս հակառակ՝ մտքի հանդարտու-
թիւն ցըցունելու աշխատելով, անմիջապէս խօսիլ սկսայ:

— Ինչպէս Պ. Լօպօբէն, Բըթի-Բէր հրապարակէն ելաք. ինչ-
պէս այսպիսի որոշում կրցաք ընել, երբէք չէի կարծեր:

— Տէր ողորմեա, Պ. մարբիդ, պատասխանեց Պ. Լօպօբէն, ի-
բաւ իմ տարիքին համար անվայել անհաւատարմութիւն մ'է, բայց
դրանոնեակը տալու ատեն հարկադրեցայ տունն ալ տալու, վասն
զի նոտարի ծանուցագիր մը խանութի նշանի պէս չկրնար տեղա-
փոխիլ:

— Բայց սակայն, տակաւին դատերով կ'զբաղիք, այնպէս չէ:

— Իբր բարեկամ և հաշտարար այն, Պ. մարբիդ, քանի մը
պատուաւոր և նշանաւոր ընտանիքներ՝ որոնց վստահութիւնը վստակե-
լու երջանկութիւնը ունեցեր եմ 45 տարի ծառայելով իրենց, եր-
բեմն, և մասնաւորապէս փափուկ պարագաներու մէջ իմ փորձա-
ռութենէ խորհուրդ ուղեւու կ'հաճին և կարծեմ կրնամ աւելցնել
թէ քիչ անդամ զանոնք մտիկ ընելուն կ'զջան:

Սոյն միջոցին որ Պ. Լօպօբէն ինքզինքին առած այս դովեստը կը
վերջացնէր, պառաւ աղախին մ'եկաւ ծանուցանելու որ ճաշը պա-
տրաստ էր: Ան ատեն զտիկին Լօպօբէն մօտակայ սրահը տանելու
պատիւն ունեցայ:

Սեղանին վրայ շարունակ աննշան խօսակցութիւն մ'ունեցանք,
վասն զի Պ. Լօպօբէն իր թափանցող և կասկածոտ նայուածքը
վրայէս չէր վերջըներ անդու և տիկին Լօպօբէն ամեն մէկ կերա-

(*) Կարմիր ռամկապետական:

կրէն ինձ մեծարելու ատեն այն խոճալի և վշտաբեկ եղանակաւ կը
խօսէր հետս, զոր հիւանդի մ'անկողնոյն քով կ'զործածեն:

Վերջապէս սեղանէ ելանք և ձեր նոտարը զիս իր գահլինքը տա-
րաւ ուր խահուէն մեծարուեցանք: Անտեսն զիս նստեցնելով,

— Պարոն մարբիդ, ըսաւ Պ. Լօպօբէն, ձեր հանգուցեալ հօրը,
Պ. Շանսի ա'Օթըրիվ մարբիդին ժառանգութիւնը կարգադրելու հո-
ղը ինձ յանձնելու պատիւն ըրիք: Նոյն իսկ երէկ ձեզ նամակ
գրելու կ'պատրաստուէի երբ ձեր Բարիդ հասնիլը իմացայ, որով
իմ ջանիցս և զործողութեանցս արդիւնքը, բանիւ բերանոյ կրնամ
ձեզ հաղորդել:

— Յառաջմէ կ'զգամ, պարոն, որ այդ արդիւնքը նպատաւոր
չէ:

— Սոյն նպատաւոր չէ, պարոն մարբիդ, և ձենէ չեմ պահեր
որ զայն իմանալու համար արիութեամբ զինուելու պէտք ունիք:
Բայց իմ սովորութիւնն է կանոնով սկսիլ:

1820ին Լուիզ-Հէլէն Տիւկալ Տըլաթուշ օրիորդը ամուսնութեան
ուղուեցաւ Շարլը Քրիսթիան Օաիօ տը Շանսի ա'Օթըրիվ մար-
բիդէն: Գարաւոր աւանդութեամբ մը Տիւկալ Տըլաթուշ ընտանի-
քին զործերու ուղղութիւնը ինձ յանձնուած ըլնելուն՝ և ասկէ զատ
նորատի ժառանգուհւոյն քով շատոնց յարգալի ընտանութիւն մը
ունենալու՝ խոհեմութեան պահանջած բոլոր առարկութիւնները
մէջ բերի այս աղետալի միութենէ զինքը ետ կեցընելու և սրտին
միտումն յաղթելու համար: Սղետալի ամուսնութիւն, կ'ըսեմ.
չէ թէ Պ. Շանսիի հարստութիւնը օրիորդ Տըլաթուշի հարստու-
թենէ վար՝ և նոյն իսկ ան ատեն մատամբ մը դբաւի տակ ըլնելուն՝
այլ Պ. Շանսիի բարբը ու կերպիւ իւրիք իր ժառանգական բնաւո-
րութիւնը ճանչնալու համար: Ինչպէս իր ընտանեաց բոլոր ան-
զամները, նոյնպէս զինքը նշանաւոր ընող հրապարիչ և ասպետա-
կան երեոյթներու տակ, իր յամառ անխոհեմութիւնը, անբուժելի
թեթեւութիւնը, զբօսանքի մոլեգին մէրը և անողք ինքնասիրու-
թիւնը կ'տեսնէի որոշակի . . .

— Պարոն, ըսի մէկէն՝ զինքը ինչպէս կ'ընտանի, հօրս յի-
շատակը նուիրական է ինձ համար անտեսնելու պէտք չունի
ամեն անոնց, որոնք ինչպէս որ խօսքը կ'ընտանի:

— Պարոն, վրայ ինչպէս, յանդերձանք և բուն ինչպէս
ընտանի:

1002
6466



քով մը, այդ զգացումնից կ'այրգեմ, բայց ձեր հօրը վրայ խօսելու ատենս մեծ դժուարութիւն ունիմ մոռնալու որ մայրերնից մեռցնող մարդուն խօսքը կ'ընեմ, մայրերնից որ գիւցաղնական մանուկ մը, սրբուհի մը և հրեշտակ մ'էր :

Ոտք ելած էի այլայլմէ . Պ. Լօպօբէն՝ որ սրահին մէջ քանի մը քայլ ըրած էր, թեւս բռնեց,

— Ներեցէք, երիտասարդ, ըստ ինձ, այլ մայրերնից կ'սիրէի և վրան ողբացած եմ, հաճեցէք ներել :

Ետքը նորէն կրակարանին առջև տեղաւորուելով,

— Աշարունակեմ, աւելցուց իր սովորական հանդիսաւոր ձայնովը : Տիկին մայրերնուդ ամուսնական դաշնադիրը շարադրելու պատիւն ու ջարը ունեցայ : Խմ ստիպմանս հակառակ օծտային խնդիրը մէկ զի դրուած էր և շատ մեծ աշխատութեամբ յաջողեցայ դաշնադրոյն մէջ գնել պաշտպան յօդուած մ'որ կ'հաստատէր թէ մօրերնուդ հաստատուն կալուածներուն մէկ երրորդ մասը, անվաճառելի էր, առանց իր օրինաւորագէտ վաւերացած հաճութեանը : Աւելորդ զգուշութիւն մ'եղաւ այս, պարոն մարբիզ, կրնամ ըսել նաև կարճատես բարեկամութեան մը դժպատեհ զգուշութիւն, վասն զի այս դժնդակ յօդուածը, ամենէ անտանելի տանջանքը պատրաստեց այն անձին որու շահերը պիտի պաշտպանէր, առիթ տուաւ, ըսել կ'ուզեմ, այն կրիւներու, վէճերու և բռնութեանց, որ անշուշտ ստեղծականջնուդ զարկած են, և որոնց մէջ մայրերնուդ ձեռքէն կտոր կտոր կ'յափշտակուէր իր վերջին ժառանգութիւնը, իր գաւառներու հայրը :

— Պարոն, կ'աղաչեմ զձեզ :

— Ախտնարհիմ, պարոն մարբիզ . . . և ասկէ ետքը միայն ներկային վրայ կ'խօսիմ. ձեր վտահալութեամբ զիս պատուածնուդ պէս իմ առաջին պարտաւորութիւնը եղաւ զձեզ յորդորել որ ձեզ ընկած ժառանգութիւնը միայն հաշուեկշռէն շահ ելած ատենը ընդունիք :

— Այդ միջոցը չընդունեցայ, պարոն, վասն զի հօրս յիշատակին համար նախատալի թուեցաւ ինձ :

Պ. Լօպօբէն, իրեն ընտանի եղող հետաղնին նայուածքներէ մէկը, վրաս նետելէ ետքը, շարունակեց .

— Արեւի թէ զիտէք, պարոն, որ եթէ այս օրինաւոր միջոցը

ձեռք չառնուք, ժառանգութենէ մնալիք պարտքերը վրանիդ առած կ'ընիք . նոյն իսկ երբ ձեր առած ժառանգութենէն ալ աւելի մեծ գումար մը կ'ներկայացընեն : Արդ՝ ցաւալի պարտաւորութիւն մ'է ինձ իմացընել ձեզ որ գործն այսպէս է : Ինչպէս որ այս հաշիւներէ պիտի տեսնէք, ձեր ապարանն անյուսալի պայմաններով ծախուելէ ետքն ալ կ'հաստատուի որ դուք և օրիորդ ձեր քոյրը, տակաւին 45,000 ֆրանքի գումար մը պարտաւոր կ'մնաք ձեր հօրը պարտատէրներուն :

Այս լուրը աննկով որ իմ ամենէ գէշ վախերս կ'զանցանէր՝ բոլորովին զդեմնեցայ : Վայրկեան մը ժամացուցին վրայ առանց նայուածքի աչք մը սևեռեցի իր միօրինակ ճօճիւնին ապուշ մտազրուութիւն մ'ընելով :

— Հիմա, շարունակեց Պ. Լօպօբէն լուրթենէ մ'ետքը, պէտք եմ իմացընել ձեզ որ տիկին մայրերնից նախատեսելով այն դէպքերը որ այսօր իրականութիւն կ'դառնան, քոյս քանի մը գոհարներ ՚ի պահեստի ունէր որոնց արժէքը զրեթէ 50,000 ֆրանք կ'հաշուի : Որպէս զի այսուհետէ ձեր միակ նեցուկը եղող այս գումարը, ժառանգութեան պարտատէրներուն ձեռքը չանցնի, կրնանք ձեռք առնուլ այն օրինաւոր փախուստը որ ձեր առջև դնելու պատիւը պիտ'ունենամ :

— Բոլորովին աւելորդ է այդ, պարոն : Այդ անակնկալ օգնութեամբ հօրս պարտքերը ամբողջապէս վճարել կարինալուս մեծապէս երջանիկ եմ, և կ'աղաչեմ զձեզ որ այս նպատակին զործածէք զայն :

Պ. Լօպօբէն թեթեւ մը խոնարհեցաւ :

— Թող այնպէս ըլնի, ըստ, բայց պէտք եմ զիտել ձեզ, պարոն մարբիզ, որ եթէ իմ ձեռքս գտնուած առանդէն, այն պարտքի գումարը իջնէ, ձեզ և օրիորդ Հէլէն քոյրերնուդ, իբրև բարեհարստութիւն, 4 կամ 5,000 ֆրանքի գումար մը պիտի մնայ որ այսօրուան զեղջին վրայ հաշուելով 225 ֆրանք տարեկան հասոյթ պիտի բերէ միայն : Հիմա, պարոն մարբիզ, մտերմի կամ բարեկամի տիտղոսով ներելի ըլնի ինձ հարցընել յարգանք, թէ ձեր և քոյրերնուդ ապրուստը ապահովելու միջոցները մտածած էք և թէ ինչ է ձեր ծրագիրը :

— Ալ ծրագիր մը չունիմ, պարոն, կ'խոստովանիմ : Մինչև

Հիմա միտքս դրածներէս և ոչ մէկը կ'յարմարի այն կատարեալ աղ-
քատութեան ուր ընկած եմ: Թէ որ աշխարհիս վրայ մինակ ըլ-
նէի, զինուոր կ'գրուէի, բայց քոյրս ալ կայ, և մտքէս անկամ
չեմ կրնար անցնելու հանդուրժել որ խեղճ մանուկը աշխատան-
քի և զրկանաց դատապարտուի: Իր վանքին մէջ երջանիկ է և դեռ
քանի մը տարի հոն մնալ կարենալու չափ դեռահաս: Ամենայօժար
սրտի կ'ընդունիմ այնպիսի գործ մ'որով ես նեղութեամբ ապրե-
լով քոջս ուռնիկը շահիմ ու ասպողային համար իրեն օժիտ մը
պատրաստեմ:

Պ. Լօպորէն երեսն նայեցաւ ուշի ուշով:

— Այս պատուաւոր նպատակին հասնելու համար, ըսաւ, ձեր
այս տարիքով կառավարութեան գործերու կամ հասարակային
պաշտօններու ծանր ասպարէզին մէջ մանեւր մարերնէդ մի անցը-
նէք: Չեղի այնպիսի գործ մը պէտք է որ նոյն իսկ ՚ի սկզբանէ մ
կամ 6 հազար ֆրանքի տարեկան մը բերէ և պէտք եմ ըսել ձեզ
որ մեր ընկերական վիճակի մէջ այս փափաքին հասնելու համար
ձեռքը երկնյանն չհերիք չէ: Բարեբաղլարար քանի մ'առաջարկու-
թիւններ ունիմ ձեզ հազարէիք որոնք առանց դժուարութեան ձեր
վիճակը հիմակուրնէ կրնան մեղմել:

Պ. Լօպորէնի աչքերը յառաջուրնէ աւելի թափանցող ուշադրու-
թեամբ վրաս յառեցան և շարունակեց.

— Նախ և յառաջ, պարոն մարբիզ, ձեր մօտը, հորուստ,
վարպետ ու աղբեղութիւն ունեցող շահագլխի մը միջնորդը պիտ'ըլ-
նիմ ես: Այս անձը մեծ գործի մը գաղափարը յղացած է, որու տե-
սակը պիտի բացատրեմ ետքէն և որ այս երկրին միայն ազնուա-
պետական դատուն օգնութեամբ կրնայ յառաջադիմել: Նա կ'կարծէ,
պարոն մարբիզ, թէ ձերինն պէս հին ու փառաւոր անուն մը նոյն
գործոյն հիմնադիր անդամներուն մէջ զանուելով, կրնայ իրեն
դրուել հասարակութեան շին յատուկ կարգին համակրութիւնները
որու պիտի ուղղուի ձեռնարկութեան յայտարարութիւնը: Այս ա-
ռաւելութեան փոխարէն՝ նախ ձեզ 10ի չափ բաժին կ'տայ ձրիա-
բար որոնց հասարակօրէն քննայ անունը կ'տան և որոնց ամեն մե-
կի արժէքը, թէև այսօր 10,000 ֆրանք, բայց հաւանականա-
բար գործոյն յառաջադիմութեամբ պիտի եռասպատկի: Ասկէ զատ

— Այդչափը բաւական է, պարոն, այդպիսի անարդ գործեր չեն
արժեր որ զանոնք ինձ բացատրելու աշխատիք:

Տեսայ որ ձերուուոյն թաւ աչքը յօնքերուն տակէն յանկարծ
փայլեցաւ, այնպէս որ կարծես թէ կայծ մ'ելաւ անկէ, ու իր դի-
մաց խոժոռ ծալքերը տկար ժպիտով մը պարզուեցան:

— Եթէ այս առաջարկութիւնը չէք հաւնիր ես ալ ձենէ աւել-
լի հաւնած չեմ, պարոն մարբիզ, ըսաւ ինձ թոթովելով: Բայց և
այնպէս զայն ձեր առջև դնելը պարտ համարեցի: Ահա ուրիշ
մ'ալ որ կարելի է հաճելի թուի ձեզ և որ իրօք աւելի ըն-
դունելի է: Իմ յաճախորդներու մէջ, մօտերս գործէ քաշուած
պատուաւոր վաճառական մը կայ, որ իր միակ' հետեւարար իրեն
պաշտելի եղող աղջկան քովը հանդիստ կ'վայելէ այնպիսի պար-
տական չափաորոշիւն մը որ կարծես 250,000 ֆրանքով կ'ընի:
Արդ՝ երեք օր կայ, դիպուածը բերաւ որ յաճախորդիս աղջիկը վի-
ճակնուզ վրայ տեղեկութիւն ստանայ, և ինձ այնպէս կ'երևի որ՝
(ամենը ըսեմ) կոյած եմ համոզուիլ, թէ այս բաւական դեղատե-
սիլ և յարգելի հանգամանաց աէր օրիորդը վայրիկ մը պիտի չյա-
պաղի ձեր ձեռքէն ար Էանսի մարբիզուհւոյ պատուանունն ընդու-
նելու: Հայրը կ'հաւանի և ձենէ խօսք մը միայն կ'սպասեմ, պարոն
մարբիզ այս . . . համակրական ընտանիքին տունն ու անունը ձեզ
ճանչցունելու համար:

— Ատոր վրայ բոլորովին կ'որոշեմ, պարոն, վաղուրնէ սկսեալ
ձեզ այնպիսի անուն մը որ աս վիճակիս մէջ եղող մէկու մը համար
ծիծաղելի է և որ ասկէ զատ ալ սատանութեան ամենէ վատ
ձեռնարկութիւններուն ենթակայ կ'ընէ դիս: Իմ ընտանեաց սկզբնա-
կան անունը Օտիօ է և ասկէ ետքը միայն այս անունը կրելու միտք
ունիմ: Հիմակ, պարոն, ճանչնալով ձեր բարեկամութեան բոլոր
մեծութիւնը որ ինձ այս տարօրինակ առաջարկութիւնները ընելու
միջց զձեզ, կ'ինդրեմ որ եթէ ասոնց նման ուրիշներ ալ ունիք նէ
տակաւին, չգրուցէք ինձ ինայելով:

— Անանկ է նէ, պարոն մարբիզ, ըսաւ Պ. Լօպորէն, ալ ու-
րիշ ըսելիք մը չունիմ:

Եւ նոյն հետոյն վրան զարմանալի զուարթութիւն մը գալով
ճմուտուած մագաղաթի ձայնով մը ձեռքերը իրարու շփեց, ու ծի-
ծաղելով աւելցուց.

— Չեր տեղադրելը դժուարին պիտ'ընի, պարոն Մարտիմ: Հա հան, շատ դժուարին: Ջարմանալի է, պարոն, որ աւելի յառաջ չնման-
րեցի այն նմանութիւնը որ բնութիւնը դրեր է ձեր ու տիկին մո-
րերնուդ զծագրութեանցը մէջ: Աչքերնիդ ու ժպիտնիդ մանաւանդ
. . . այլ խօսքէ չշեղինք և որովհետեւ ձեր պարտատի միջոցները
միայն պատուար որ աշխատութեան մը կ'ուզէք պարտաւորիլ. ներեցէք
որ հարցընեմ թէ ինչ տաղանդի տէր էք ու ինչ բանի յարմա-
րութիւն ունիք:

— Բնականօրէն, պարոն, իմ դատարարակութիւնը, հարուստ և
անդործ ապրելու սահմանուած մարդու մը դատարարակութիւնը ե-
ղած է, սակայն իրաւադիտութիւն սորված եմ և փաստաբանի տիտ-
ղոսն անգամ ունիմ:

— Փաստաբանի մը: Վայ, փաստաբան էք: Բայց տիտղոսը
չբաւեր. փաստաբանի ասպարէզին մէջ ուրիշ ասպարէզէ մ'աւե-
լի աշխատութիւն պէտք է. . . և հոն. . . նայինք. . . : Ինք-
զինքնիդ լեզուանի կ'զգանք, պարոն մարբիդ:

— Խիստ քիչ, այնպէս որ, պարոն, հասարակութեան առջև
Ձ տուն խօսք ընելու բոլորովին անխարդ կ'կարծեմ ինքզինքս:

— Հը, հոգեւորի ձիրք մը չենք կրնար կոչել այդ, հետեւաբար
ուրիշ կողմ մը դառնալ պէտք էք, բայց այս նիւթիս վրայ լա-
խորհրդածութեան պէտք ունիք: Ասիէ զատ կ'տեսնեմ որ յոգնած
էք, պարոն մարբիդ: Ահա ձեր հաշուեծրարը (dossier) կ'ինդրեմ որ
ծանրութեամբ քննէք զայն: Պատիւ ունիմ զձեզ ողջունելու: Նե-
րեցէք որ լոյս բռնեմ: Ինդրեմ. . . միթէ ձեռքս գանուած զո-
հարեղէններու ու անդամանդներու զինք ձեր պարտատէրներու վճար-
ման չյատկացուցած ձեռք ուրիշ հրամանի պէտք եմ սպանել:

— Ձէ անշուշտ: Մանաւանդ այդ պահեստի դումարէն ձեր բա-
րի ծառայութեանց ճիշդ վարձատրութիւնն ալ վար դրէք:

Մանդուղին ոտքն հասած էինք, Պ. Լօպօբէն՝ սրու հասակը քայ-
լելու ատեն քիչ մը ծռած էր, յանկարծ շտիւտեցաւ:

— Պարտատէրներուդ նկատմամբ ինչ որ ըսէք պատրաստ եմ
յարգանք հնազանդելու, բայց երբ խնդիրը իմ վրայ է, գիտնալ
պէտք էք որ մայրերնուդ բարեկամն եղած եմ, և ստիպողապէս ու
խոնարհաբար կ'աղաչեմ որ մայրերնուդ տղան ալ զիս բարեկամի

Չեռ քիս մէկը ձերունույն երկնցուցի որ զայն ոյժով սեղմեց ու
բաժնուեցանք:

Այս պանդոկին յարկին տակ ունեցած սենեակս, որ ալ ինձ չվե-
րարերիւր, մանեւու ասեն ես ինքս ինքիս փորձով հաստատել ուզե-
ցի որ կատարեալ թշուառութիւնս մաքու մ'անարժան լքումի մէջ
չէր ձգեր զիս: Ահնայց այս վճռական օրին պատմութիւնը սկսայ
զրել, ձեր նստարին խօսքերու կարգը, այն քաղաքավարութեամբ
և կարծրութեամբ, զգացումով և կասկածով խառն խօսակցութիւ-
նը, որ հոգիս վշտով լցուած ատեն միաքս զուարթացուցած էր
ճիշդ պահելու աշխատելով:

Ահա ուրեմն աղքատութիւնը, բայց չէ թէ այն հպարտ, գաղտ-
նի և բանաստեղծական աղքատութիւնը որ իմ երեւակայութիւնը
արիաբար անտաներու ու անպատնէրու մէջ կ'ժուռածէր, այլ
իրական թշուառութիւնը, նեղութիւնը, ուրիշէ կախումը, խոնար-
հութիւնը և անկէ աւելին՝ ընկած հարուստի դառն աղքատութիւնը,
սե զգեստով աղքատութիւնը որ իր մերկ ձեռքերը, անցնող հին
բարեկամներու աչքէն կ'պահէ:

— Աղէ, արիացի՛ր, եղբայր:

Երկուշաբթի, 27 ապրիլ

Կարգու էր հինգ օր անցուցի Պ. Լօպօբէնէ լուր մը սպա-
սելով: Ա'խոստովանիմ որ իրացնէ անոր ինծի ցըցուցած բարեկա-
մութեան վրայ դրած էի յոյս: Իր փորձառութիւնը, զործնական
ծանօթութիւնները, ընդարձակ յարաբերութիւններն ինձ օգտակար
ընելու միջոցներ կ'ապին իրեն: Իր առաջնորդութեամբը բոլոր հարկ
եղածները ընելու պատրաստ էի, բայց մինակս ուր երթալիքս չզի-
տեմ:

Այնպէս երեցեր էր ինձ որ քիչ խոստացող ու շատ կատարող
մարդերէ մէկն էր անի, բայց կ'փախնամ որ սխալած չըլլիմ: Միտք

ունէի այս առտու իր տունը երթալ իրեն վերադարձնելու համար ինձ յանձնած թուղթերը որոնց ցաւալի ճշգրտութիւնը կրցայ ստուգել: Ինձ ըսին որ զիւղական կեանքի քաղցրութիւնները վայելելու զացած էր չդիտեմ Պարթանյըրի որ գղեկին խորը: Այս լուրը զիս բողբոլին զգեանեց:

Անձնուէր բարեկամութեան մը հոգատարութիւնը գտնել յուսացած տեղս, չէ թէ միայն անտարբերութիւն ու լքում գտնելու՝ այլ նաև եկածիս պէս, պարագ քաղիովտուն դառնալու ցան ունեցեր էի: Իրօք մտադիր էի աղաչել զպարոն Լօպօթէն, որ մեր պարտքերու ամբողջ վճարումէ ետքը մեզ մնալիք 3-4000 ֆրանքէն ինձի քիչ մը ստակ փոխ տայ, վասն զի Բարիզ հասնելէս ի վեր թէև ճգնաւորի մը պէս կ'ապրիմ, ճամբորդութեանս համար պահած ստակս բոլորովին հատած է, այնպէս որ այս առտու հովուական ճաշ մ'ընելէն ետքը խաշուած շագանակովու կաթով, այս իրիկուն ընթրելու համար հարկադրեցայ տեսակ մը զողովութիւն ընել, որու տխուր յիշատակը հոս արձանագրել կ'ուզեմ:

Որքան ճաշք թեթև ըլնի այնքան մեծ կ'ըլնի ընթրելու փափաքը: Այս այնպիսի վճիռ մ'է, որու ճշգրտութիւնը այսօր արևը մարը մտնելէ շատ յառաջ զգացի: Այն շրջապայտներու մէջ՝ որ երկնքին անուշութիւնը աս կէսօրէ ետքը, Թիւրքի բերած էր և որոնք արձաններու մարմարեայ գէմքերուն վրայ դարնանային առաջին ժպիտներու բեկբեկիլը կ'զիտէին, կ'տեսնուէր դեռ երիտասարդ և խիտ վայելուչ հագուած մարդ մ'որ արտաքոյ կարգի հետաքրքրութեամբ մը բնութեան զարթնումը կ'քննէր: Նորաբոյս դաւարիներու տեսքով իր աչքերը պարարելով զոճ չընելով՝ այս մարդը, ստէպ դաղտապողի կերպով հաճոյատեսիլ ծիւեր, կիտարաց տերևներ կը փրցընէր ու բուսադէտի հետաքրքրութեամբ շուրթերուն կ'տանէր: Բայց անձամբ ստուգեցի որ այս աննդական միջոցը զոր նա արեկութեանց պատմութեան տրված էի, ոչինչ արժէք ունէր: Սակայն և այնպէս փորձառութիւնս քանի մը հետաքրքրական տեղեկութիւններ ևս շահեցաւ:

Օրինակի համար, ասկէ ետքը զիտեմ որ շագանակեմիին տերևը ինչպէս օրաին նոյնպէս բերնին համար անդիլի ծայր դառն է. վարդենին գէշ չէ, թմրենին իւրօտ և ըստ բուսականին հաճելի է. շիփորակը պղպեղոտ՝ ու կարծեմ մնասակար է:

Այս գիւտերու վրայ խորհելով դէպ ՚ի Հէլէնի դանուած վանքը ուղղեցայ: Ոտքս խօսարանին մէջ՝ զոր մեղուի բեթակի պէս լեցուն գտայ՝ դրած աստին, զգացի որ ականջներս սովորականէն աւելի կ'սուլնային նորատի մեղուներուն աղմկալի խօսակցութիւններով:

Մէյ մ'ալ, Հէլէն եկաւ, մաղերը տակուվրայ, բոցալառ այտերով, կարմրած և փալփլուն աչքերով ու թեյն երկայնութեամբը հացի կտոր մ'ի ձեռին: Մինչդեռ մտախօհ կերպով մը զիս կը զրկէր,

- Հէ, ինչ կայ աղջիկ: Միթէ լացիր, ըսի:
- Չէ, չէ, Մաքսիմ, բան մը չէ:
- Ետքը ձայնը մեղմացնելով,
- Ա՛հ, թող զիս շատ թշուառ եմ, սիրական Մաքսիմ:
- Իրա՞ն կ'ըսես, անանկ է նէ հացդ կեր ու պատմէ նայիմ:
- Ո՛հ, հացս պիտի չուտեմ աներկբայ, այնչափ թշուառ եմ որ չեմ կրնար ուտել: Լիւսին կ'ճանչնաս, Լիւսի Գանպէլը, իմ լուսադոյն բարեկամուհին, ահա հիմակ անոր հետ մահու չափ կռիւ ըրինք:

— Վայ Ատուած . . . բայց հանդիստ եղիր, տատրակս, բան մը չէ կ'հաշտուիր:

— Ո՛հ, Մաքսիմ, տեսնես անկարելի է: Շատ ծանր բաներ եղան: Յառաջբան մը չէր, բայց զիտես մարդ երթալով կ'տարնայ և ալ չմտածեր: Փետրադուռ (volant) կ'խաղայինք և Լիւսի կէտերը համրելու ատեն սխալեցաւ, ես 680, անիկա միայն 615 ունէր և յանկարծ սնդեց որ 675 ունի: Խօստովանէ որ մարտելը քիչ մը դժուարին էր այս բանը: Ես իմ թուոյս վրայ սնդեցի, բնականօրէն ան ալ իրենին վրայ:

«— Լաւ, օրիորդ, ըսի, սա օրիորդներուն հարցընէնք, ես անոնց ըսածը կ'ընդունիմ:

«— Չէ, օրիորդ, պատասխանեց, ես իմ թուոյս վրայ ապահով եմ և դուն խաղանքնդ ես:

«— Եթէ այդպէս է, օրիորդ, կրկնեցի, դուն ալ ստախօս ես:

«— Քաջ է, օրիորդ, վրայ բերաւ նա ան ատեն, ես այնքան կ'արհամարհեմ զքեզ որ պատասխան չեմ տար:

«Սէնթ-Ֆէլիքս քոյրը այն կէտին բարեբաղդաբար վրայ հասաւ, 4

վասն զի կարծեմ զինքը պիտի ծեծէի . . . ահա եղածն աս է :
Հիմայ, տես թէ ասոր վրայ ալ կրնանք հաշտուիլ : Անկարելի՛ և
վատութիւն է : Հիմա զգացած ցաւս քեզ չեմ կրնար բացատրել :
կարծեմ թէ երկրի վրայ ինէ աւելի թշուառ մէկը չկայ :

— Հարկաւ, աղջիկս, դժուար է քու կինէդ աւելի մեծ դժբաղ-
դութիւն մ'երեւակայելը, բայց կարծեօքս, դուն այդ դժբաղդութիւ-
նը բռնի վրադ բերեր ես, վասն զի այս կուոյն մէջ ամենէ աւե-
լի նախատական խօսքը քու բերնէ ելեր է : Ո՛ր է նայինք սա
Լիւսիդ, խօսարանն է :

— Այո՛, ահա աղբիկ է, վարը անկիւնը :
Այս ըսելով, զլիսի գաղտնի և հպարտ նշանով մը, պղտիկ
խաժակն աղջիկ մը ցըջուց ինձ որ նմանապէս բոցավառեալ այտեր
ունէր նոյն միջոցին և Սէնթ-Ֆէլիքս կուսին գալուստովը ընդհատ-
ուած եղելութեան պատմութիւնը կ'ըսէր խիստ ուշադիր պառաւ
տիկնոջ մը :

Նիւթին արժանի եռանդով մը խօսելու ատեն, օրիորդ Լիւսի
իմ ու քրոջս վրայ զաղտուկ նայուածք մը կ'նետէր :

— Է՛հ, սիրասուն աղջիկս, բսի քրոջս, իմ վրաս վստահու-
թիւն ունիս :

— Այո՛. Մաքսիմ, քու վրայ շատ վստահութիւն ունիմ :

— Անանկ է նէ, նայէ ինչ կ'ընես, մեղմիկ մը կ'երթաս և օ-
րիորդ Լիւսիին աթոռին ետևը կ'տեղաօրիս, զլուխը սանկ կ'բռնես
խաբերայի պէս, այսպէս երկու երեսներէ բռնի կ'պագնես և ետքը
կ'տեսնես ան ալ ինչ պիտ' ընէ ըստ կարգէ :

Հէլէն, պահ մը դանդաղիլ ցըցուց, ետքը մեծ քայլերով դնաց
և կայծակի պէս օրիորդ Քանսլէի վրայ ընկաւ և ոչ նուազ ամե-
նաբաղքը զարմանք մը պատճառեց անոր, երկու թշուառուհիները
յաւիտենապէս միանալով սրտաշարժ խմբակ մը կազմեցին, մինչպէս
պառաւ ու յարգելին տիկին Քանսլէ, եղջերափողի աղմուկով մը
քիթը կ'կնջէր :

Հէլէն բոլորովին զուարթացած նորէն քովս եկաւ :

— Է՛ սիրականս, բսի իրեն, կ'յուսամ որ հիմակ հացդ պիտ'
ուտես :

— Ո՛հ, իրաւ որ չէ, Մաքսիմ, կ'տեսնես, սիրտս շատ դող ե-
լաւ, ասկէ զատ պէտք եմ քեզ սա ալ ըսել որ այսօր աշակերտ

մ'եկաւ, նոր մը, որ մեզի շփուէ, շարքէ ու անուշեղէնէ բաղ-
կուցած հարկինք մը տուաւ, այնպէս որ բնաւ անօթի չեմ : Շատ
շիտթած եմ անգամ, վասն զի, սիրտխաղով հացս զամբիւղը դնե-
լու մուցայ ինչպէս որ պէտք է ընէ ախորժ չունեցողը ու կ'վախ-
նամ որ չպատժուիմ, բայց բակէն անցնելու ատեն զայն նկուղին լու-
սամուտէն ներս նետելու պիտի աշխատիմ մարդ չտեսած :

— Ի՛նչ, քորիկ, վրայ բերի թեթեւ մը կարմրելով, այդ ահա-
գին հացը պիտի կորսընցընես :

— Ա՛հ, քաջ գիտեմ որ աղէկ բան չէ, վասն զի կարելի է
անանկ աղքատներ կան որ շատ դոհ կ'ըլնէին եթէ այնքանը ունե-
նային, անանկ չէ՛, Մաքսիմ :

— Անշուշտ, սիրելի աղջիկս :

— Բայց ինչպէս կրնամ ընել, աղքատները հոս չեն դար :


— Ինձի նայէ, Հէլէն, այդ հացը ինձի տուր, ես քու անու-
նով զիմացս ելնող աղքատին կ'տամ, կ'ուզես :

— Հասցնա՛ :

Ներս մտնելու որոշեալ ժամը դարկաւ : Հացը երկուքի բաժնե-
ցի ու ամենաբով վերարկուիս զբայանին մէջ աներեւոյթ ըրի :

— Արկին տեսութիւն, սիրելի Մաքսիմ, շարունակեց քորիկս,
եթէ զիմացդ աղքատ մ'երնէ ու հացս համով գտնէ, ետքէն ըսես
ինձի :

— Այո՛, Հէլէն, հանդիպեցայ աղքատի մը, հացդ տուի իրեն
և իր օրսին պէս առաւ իր մանսարդը տարաւ զայն ու համով գտաւ :
այլ անարի աղքատ մ'էր նա, վասն զի քու սիրատուն պղտի ձեռ-
նեղու ողորմութիւնը լափելու ատեն լացաւ : Այս ամենը քեզ պիտ'
ըսեմ, Հէլէն, վասն զի պէտք ես գիտնալ որ այս երկրի վրայ
քու տղայական վշտերէդ աւելի ծանր վշտեր կան, այո՛, ամեն բան
պիտ' ըսեմ քեզի՛, աղքատին անունէն զատ :



Երեքշաբթի, ապրիլ 28

Այս առտու ժամը Գին Պ. Լօպօբէնի դուռը զարկի, ներսէս յուսալով որ կարելի է դիպուածով իր վերադարձը փութացուցեր էր: Բայց իմացայ որ վաղը պիտի գայ եղբւր:

Իսկոյն մտածեցի տիկին Լօպօբէնի դիմել և յայտնել իրեն այն տաստիկ նեղութիւնը ուր ընկած էի իր ամուսնոյն բացակայութեամբը: Մինչդեռ ամօթոյ ու կարօտութեան մէջ կ'սարուբերէի, պառաւաղախինը կ'երևի թէ իր վրայ սևեռած անօթի նայուածքէս զարհուրած՝ խնդիրը պարզեց կոստութեամբ դուռը երեսիս գոցելով: Արոշումս ըրի անատեն և ի մտի դրի մինչև վաղը ծով բռնել:

Օր մը ծովապահութեամբ մարդ չմեռնիր, ըսի մտքէս, և եթէ այս պարագային մէջ ծայրայեղ հպարտութիւնս ինձ յանցանք մ'էր, հետևանքը ես քաշելու՝ ուրիշի մ'ըսելիք չէր մնար:

Ասոր վրայ Սօրպօն դացի, ուր յաջորդաբար բազմաթիւ գասնորու ներկայ գտնուեցայ հոգևոր վայելումով ջանալով լեցնել այն պարագը որ մարմնականիս մէջ կ'զգայի, բայց ժամը եկաւ որ այս միջոցն ալ պակեցաւ ու զան ալ սկսայ անբաւական գտնել: Մասնաւորապէս ջղային զրգուցթիւն մը կ'զգայի, զոր քայլելով կ'յուսայի մեղմել: Մասնախլատ ու ցուրտ օր մ'էր: Սէն-Բէր կամ մուրջին վրայէն անցնելու ատենս, գրեթէ ակամայ կանգ առի, թուրքի կռթնեցայ և կամարներուն ներքև պզտոր ջուրերուն գահալիժիլը գիտեցի: Չգիտեմ թէ այն վայրկենին իմ յոգնած ու ուտարացած մտքէս ինչ խորհուրդներ անցան, յանկարծ յարատև մրցումներով լի ծառայական անարգ ապագաս ուր անօթութեան դռնէն կ'մտնէի, ամեն անտանելի գոյներով ներկայացաւ առջիս, բացարձակ, խորունկ զգուանք մը և ապրելու անկարելիութիւն մը զգացի: Միևնոյն ատեն բիրտ ու վայրենի բարկութիւն մը գլուխս կ'եղնէր, վրաս շլացումի պէս բան մ'եկաւ և ստորային մէջ ծուռելով տեսայ որ գետին բոլոր մակերևոյթը կայծերով կ'շողջողար:

Ըստ սովորութեան, Ասորոս շաբթի, չեմ ըսեր: Այս հասարակ ձևերը չեմ սիրեր ու կ'համարձակիմ ըսել, թէ ես չուզեցի:

Աստուած զմեզ ազատ ստեղծեց և եթէ յառաջ ասոր վրայ կրցած էի տարակուսել, սոյն յետին վայրկենիս, ուր հոգին ու մարմինը, արիութիւնը ու վատութիւնը, չարն ու բարին իմ ներսս անանկ յայտնի ու մահացու կուի մը կ'ընէին իրարու հետ, սոյն վայրկենիս իմ տարակոյտները փարատեցան անդաւանալի կերպով:

Ինքզինքիս եկածիս պէս, այս ահուելի ալիքներուն զիմացը աս անմեղ ու հասարակ փափարը ունեցայ միայն որ ներսս այրող ծառաւը յաղեցնեմ: Ետքը մտածեցի որ սենեկիս մէջ շատ աւելի յստակ ջուր մը կար և պանդոկս ուղղեցայ փութանակի, հոն ունենալիք հաճութեանցս վրայ հեշտալի տեսիլներով աւելի:

Տղայամուտութեանս մէջ, այս գերագոյն միջոցը աւելի կանուխ չմտածելուս վրայ դարմանալէ չէի դադարեր: Պուլվարին վրայ Աստիօն տը Վօ բարեկամն որ երկու տարիէ 'ի վեր չտեսեր էի, յանկարծ զիմացս ելաւ: Վայրիկ մը վարանելէ ետքը կանգ առաւ, մտերմաբար ձեռքս սեղմեց, ճամբորդութեանցս վրայ քանի մը խօսք ըրաւ և արտոնքը բաժնուեցաւ ինձ: Յետոյ ետ դառնալով,

— Բարեկամ, ըսաւ, պէտք ես ներել որ այս օրերս իմ ունեցած մէկ երջանկութեանս զքեզ բաղդակից ընեմ: Ձեռքս դանձմ'անցաւ, բեռ մը սիկար ընդունեցայ որու հատը Չ Ֆրանքի՝ բայց իրօք անգին է, ահաւասիկ առ սա, նայէ անդամ մը ու ետքը ըսէ ինձ: Մնաս բարով, սիրելիս:

Մեծ դժուարութեամբ վեց գտնիւններէս վեր ելայ և յուզմունքէս զողջով, երանելի ջուրի փարչս ձեռք առի և իր բոլոր պարունակածը պուտ պուտ խմեցի, ետքը բարեկամիս սիկարը վառեցի, հայելոյս մէջ ինքզինքիս սիրտ տուող ժպիտ մ'ուղղելով: Մակայն համոզուելով որ մարմնական շարժումը ու փողօցի զբաղմունքը աւելի օգտակար էին ինձ, նորէն դուրս ելայ:

Մեծապէս նեղացայ ու զարմացայ երբ դուռս բանալով նեղ գալութիւն մէջ, պանդոկին դռնապանին կինը տեսայ որ իմ յանկարծական երևութիւն վրայ շատ շփոթեցաւ: Այս կինը ժամանակաւ ծառայութիւն ըրած էր մօրս քով որ զինքը սիրեր՝ և կարգելու ատեն իր այսօրուան ունեցած շահաւոր պաշտօնը տուեր էր իրեն:

Գիտած էի որ քանի մ'օրէ 'ի վեր զիս կ'լրատէր անիկա և այս անգամ զինքը գրեթէ գործին վրայ բռնելուս՝

— Ինչ կ'ուզես ըսի բարկութեամբ:

— Աչինչ, Պ. Մաքսիմ, բան մը չեմ ուզեր, պատասխանեց նա խիստ շքմբած, կաշք կ'պատրաստէի :

Ուսերս վեր ընելով մեկնեցայ :

Օրը կ'տարածամէր : Քաղքին ամենէն յաճախուած տեղերը կրցայ շրջիլ առանց վախնալու որ անհաճօ հանդիպումներ ունենամ : Սօսիպուեցայ սիկարո նետել որ զիս նեղէր : Պտոյաս 2-3 անագորոյն ժամեր ակեց : Քաղաքակրթեալ կենաց բոլոր առատութեանց ու շքեղութեան մէջ, վայրենի կեանքի ժանտախոր եղող անօթութեան ենթակայ ըլնելը, աղէյօշ մորմոք մը կ'ազդէ, խնթութեան կ'հասցընէ զհարգ, վաղը մ'է այն որ պուլվարին մէջտեղը կարծես թէ կոկորդէզ կ'բռնէ :

Նորանոր խորհրդածութիւններ կ'ընէի : Անօթութիւն բառը պարսպ խօսք մը չէ ուրեմն կ'ըսէի իւրովի, իրօք կայ այս անտնով հիւանդութիւն մը, և այս ախար, որով ես կեանքիս մէջ անգամ մը ու զիպուածով կ'տառապիմ, արարածներ կան որ սովորապէս ամեն օր կ'տանջուին : Էւ արդեօք այս տուայտը տակաւին ինչ ու թիշ ճիւղերով ևս կ'աւելնայ զորս ես չ'ունիմ գեռ : Գոնէ զիտեմ որ աշխարհիս վրայ սիրած միակ էակս այս իմ քաշած չարչարանքէս ազատ է . իր զուարթ, երջանիկ և վարդազոյն գէմքը աչքիս գիմացն է : Հասցա ինչ ընեմ անոնք որ մինակ չեն տանջուիր, անոնք որ իրենց աղիքներուն սրտակեղ աղաղակին ուրիշ միբասուն և աղերական շուրթերէ կրկնուիլը կ'լսեն, անոնք որ ցուրտ բնակարանի մը մէջ զիւրեք սպասող աշնագէմ կիներ ու տխուր դասակներ ունին . . . խեղճ մարդիկ . . . ո՛ սուրբ ողորմութիւն :

Այս խորհուրդները որ զանգատելու արիութիւնս կ'ջնջէին, մինչև վերջը այս փորձութեան զիմանալու ոյժ տուին : Ստուգիւ զայն մեղմիլը ձեռքս էր, վասն զի հոս քանի մը ճաշարաններ (restaurant) կան ուր հարուստ եղած ատենս կ'մտնէի նաև երբ քսակս առնելու մտցած էի . հիմակ ալ տոյն միջոցը կրնայի բանեցրնել, նմանապէս Քարիզի մէջ զիւրաւ կրնայի մէկէ մը ֆրանք փոխ առնուլ, բայց կ'զանէի այս հնարքներէ՝ որ խարդախութեան և թշուառութեան դրօշմը կ'կրէին : Աղքատներու համար այս ճամբան սահուն է, անոր համար չեմ ուզեր ռաքս հոն գնել, կարծեմ լաւագոյն ունիմ նոյն իսկ ուղղամտութիւնս քան թէ խղճահարութիւնս կորուսնել որ այն հասարակ առաքինութեան աղնուագոյն նշանն է : Արդ՝ ոչ միայն

թշուառութեան շունչէն՝ այլ և նեղութեան պարզ մտաւայտութեամբը, արդարասիրութեան տոյն փափուկ զգացումին տոսկալի դիւրութեամբ բռնաբարոյիւն ու նուաստանալը շատ ստեպ տեսած ըլնելուս՝ խնտիւ հսկեցի վրաս, և իբրև կասկածելի մէկի նետեցի, նաև ամենէ անմեղ երեցող խղճի թոյլառութիւնները : Գէշ օրերու մէջ մարդ իր հողին կակղութեան տորկեցընելու չէ, վասն զի արգէն ինքնին շատ հակամէտ է ծուռելու :

Յուրաք ու յոյնութիւնս ստիպեցին որ ժամը Չին մօտ տուն դառնամ : Պանդոկիս գուռը բաց դտայ ու ուրուականի քայլով մը վեր կ'եւնէի, երբ դանսպանին խցիկին մէջ տաք խօսակցութեան մը ազմուկը լսեցի որու նիւթը կ'երևէր թէ ես եղած էի, վասն զի սեղոյն բռնաորը անունս նախսական եղանակաւ մը կ'արտասանէր :

— Կ'խնդրեմ, աիկին Աօպէրժէ, կ'ըսէր նա, քու Մաքսիմովդ զիս մի ձանձրացրնէր : Միթէ այս Մաքսիմը ես սնանկացուցի : Անանկ է նե ինչ զլուխ կ'ցարցընես : Կ'հ, եթէ ինքզինքը մեռցընէ կ'թաղեն, ինչ ընեմ :

— Քեզ կ'ըսեմ որ եթէ փարչը պարպելը սեանէիր սիրտդ կտոր կտոր կ'ընէր, կ'ըսէր կիներ . . . : Էւ եթէ հաւատայի որ դերասանի պէս անհոգ անհոգ «Եթէ ինքզինքը մեռցընէ կ'թաղեն . . .» ըսած ատենը սրտովդ կ'խօսիս . . . բայց չեմ հաւտար վասն զի 'ի ներքուստ բարեսիրտ ես, թէ և չես սիրեր որ սովորութիւններդ խանդարեն . . . : Միտքդ բեր ուրեմն անգամ մը, Աօպէրժէ, թէ հաց ու կրակ չունենայ անանկ տղայ մը որ իր բոլոր կենացը մէջ ազնիւ կերակուրներով, ու սիրուած խեղճ կատուի մը պէս մուշ տակներու մէջ մեծցած է : Միթէ ամօթ ու անպատուութիւն մը չէ այս և միթէ այլանգակ կառավարութիւն մը չէ քու կառավարութիւնդ որ ասանկ բաներ կ'ներէ :

— Բայց այդ բանը կառավարութեան չվերաբերիր բնաւ, պատասխանեց բառական իրաւունքով, Պ. Աօպէրժէ . . . ասիէ զատ ալ կ'սխալիս . . . մինչև հոն հասած չէ անի . . . անկարելի է որ ուտելու հաց չունենայ :

— Եթէ այդպէս կ'կարծես, Աօպէրժէ, կեցիր որ ամեն բան ըսեմ, իր ետեւէն գայի, լրտեսեցի, Էտուարին ալ լրտեսել տուի, և ապահովեմ որ երէկ չընթրեց, այս առտու չնախաձաշեց և որով

Հեռու իր ամեն զրպանները ու զզրոցները խառնեցի և բուլ մը չգտայ, անշուշտ այսօր ալ ճաշած չէ, վանն զի շատ հպարտ է նա ու ճաշիկ մը չմտարար:

— Ապա ուրեմն, ինքը լծող խորհի, աղքատը պէտք չէ որ հպարտ ըլնի, ըսաւ պատուելի դոնապանը որ այս պարագային մէջ դոնապանի մը զգացումները կ'այսնէր ըստ իս:

Աւելի չուղեցի մտիկ ընել ու խօսքերնին ընդմիջեցի յանկարծ խցիկին դուռը բանալով և ճրագ մ'ուղեցի Պ. Վօպերժէն որ կարծեմ թէ աւելի պիտի չշփոթէր եթէ իր գլուխը ուզէի: Այս մարդերու առջև անվրդով երևելու փափաքիս հակառակ՝ սանդուխէ երնելու աստի ոտքս քանի մ'անդամ սահեցաւ, գլուխս կ'բառնար:

Սենեակս՝ որ հասարակօրէն այնքան պաղ էր, մտնելու ատեն զուարթ և պայծառ կրակով մը պահուած բարեխառն օդ մը դանելով զարմացայ: Զայն մարելու խստութիւնը չունեցայ և աշխարհիս վրայ դանուող բարի սիրտերը օրհնելով Խեթիթի թափելով ծածկուած աթոռի մը վրայ՝ զսր ձախորդութիւնը գետնայարկէն մանսարդը բերեր էր ինծի պէս, ննջելու աշխատեցայ: Գրեթէ կէս ժամէ 'ի վեր, այն տեսակ թմրութեան մը մէջ էի որու միանձև երողները փառաւոր հարկինքներ և համադամ կերակուրներ կ'ներկայացրնէին երբ դուան բացուելու ձայնը զիս արթնցուց ընդոտս:

Տեսնելով որ տիկին Վօպերժէ ահագին ափսեայ մ'ի ձեռին՝ ուրու վրայ 2-3 հոտուէտ պնակներ կ'մխային, ներս մտաւ, կարծեցի որ դեռ կ'երազէի: Ես լծմութեանէս չելած սոյն ափսեայն արդէն գետին գրեր՝ և սեղանին վրայ ծածկոց մը փռելու սկսեր էր նա: Վերջապէս ոտք ելայ աշխուժիւ:

- Ատ ի՞նչ է, ըսի, ի՞նչ կ'ընես:
- Տիկին Վօպերժէ մեծ զարմանք մը ձևացուց:
- Մի՞թէ հրամանքնիդ ճաշ չապսպրեցիք:
- Բնաւ ամենին:
- Էտուար ըսաւ որ հրամանքնիդ . . .
- Էտուար սխալեցաւ, նայէ քովի վարձուրը չըլնի:
- Բայց հրամանքնուդ գտիկոնին վրայ ուրիշ վարձուր չկայ . . . չեմ հասկնար . . .
- Վերջապէս ես չեմ, . . . ի՞նչ ըսել կ'ուզես: Զիս կ'ձանձրացրնես առ տար նայիմ սրտնք:

Անտեսն խեղճ կիրք սկսաւ իր ծածկոցը ծալլել տրտմոցին, ծեծ ևւտող շան մը արտասուածքնոր նայուածքները նետելով:

— Հաւանականաբար ճաշած պիտ' ըլլիք, աւելցուց վեհերոտ ձայնով մը:

— Հաւանականաբար: — Մե՛ղք, վանն զի ճաշը բոլորովին պատրաստ էր, հիմա պիտի կորսուի և պղտիկը հօրմէն յանդիմանութիւն պիտի ըլնէ: Եթէ պատահմամբ ճաշած չըլլէիք շատ պիտի պարտաւորիք զիս . . .

Ռոքս գետին զայ կի բարկութեամբ: — Բանդ զ'նա, կ'ըսեմ քեզի:

Յետոյ տեսնելով որ դուրս կ'ելնէր, իրեն մօտեցայ ու ըսի, — Բարեսիրտ Լուիզոնս, միտքդ կը հասկնամ, շնորհակալ եմ, բայց այս իրիկուն քիչ մը հիւանդ ըլնելուս անօթի չեմ:

— Ա՛խ, Պ. Մաքսիմ, գոչեց նա լայլազին, զիտնայիք որքան կ'ամէցնէք զիս: Լաւ, թէ որ կ'ուզէք ճաշս վճարել սասկնիդ եկած ատենը ձեռքիս մէջ դրէք . . . բայց հաւատարմիք որ եթէ 100,000 ֆրանք տար այնչափ հաճութիւն չէք պատճառեր ինձ, որչափ ճաշս ուտելով: Ամենամեծ ողորմութիւն մը տուած կ'ըլլիք, հաւատացէք: Գուք լսելացի էք, Պ. Մաքսիմ, հետևաբար այս ըսածս զիւրաւ պէտք էք հասկնալ:

— Անանկ է նէ, սիրական Լուիզոնս . . . Ի՞նչ ընեմ: Հարիւր հազար ֆրանք չեմ կրնար տալ քեզի . . . այլ ճաշիկդ կ'ուտեմ . . . զիս մինակ պիտի թողնու, այնպէս չէ:

— Այո՛, պարոն: Ա՛հ, շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, պարոն: Բարի սիրտ ունիք:

— Ու աղէկ ալ ախորժակ, Լուիզոն: Չեռք տուր, բայց ստակ զնելու համար չէ, հանդիստ եղիր: Հա՛ . . . կրկին տեսութիւն, Լուիզոն:

Պատուական կինը հեծկլտալով դուրս ելաւ: Լուիզոնի ճաշիկը պատուելէ ետքը այս տողերը կը լմացնէի, երբ սանդուխին վրայ դանդաղ ու ծանր քայլի մը գզրգիւնը լսեցի, միևնոյն ժամանակ իմ խոնարհ նախախնամութեանս ձայնը որոշեցի որ յուզուած եղանակաւ մը կը փսրտար: Քիչ մ'ետքը դուռը դարձնուեցաւ և մինչդեռ Լուիզոն մուծի մէջ կը պահուրէր, դուան

ըրջանակին մէջ ձեր նստարին հանդիսաւոր ստուերին երևիլը տե՛ս սայ :

Պ. Լօսյօբէն, արագախոյժ նայուածք մը նետեց փսեսային վրայ ուր կերակրոյս մնացորդները ժողված էի, ետքը ինձի եկաւ և 'ի նշան ամօթոյ ու միանդամայն յանդիմանութեան թեկերը բանալով :

— Յանուն Աստուծոյ, ինչո՞ւ ինձի չ . . .

Խօսքը կտրեց՝ սենեկին մէջ ճեմեց մեծարայլ և յանկարծ կանգ առնելով :

— Երիտասարդ, շարունակեց, աղէկ չբրիր ազ բանը, բարեկամ մը վիրաւորեցիր, ձեր մ'ամչցուցիր դու :

Կարի յուզուած էր նա, ես ինքս ալ շուարած ինչ ըսելիքս չգիտնալով երեսը կը նայէի երբ յանկարծ զիս իր կուրծքին վրայ առաւ և շունչս կտրելու չափ սեղմելով ըսաւ .

— Խեղճ աղաս . . .

Վայրկեան մը լուռ թիւն տիրեց մէջե ընիս ետքը նստանք :

— Մաքսիմ, վրայ բերաւ նորէն Պ. Լօսյօբէն, միշտ միևնոյն տրամագրութեանց մէջ էր : Ամենախնարհ գործը, ամենահամեստ պաշտօնը ընդունելու արիւթ թիւնը պիտի ունենանք, բաւական է որ պատուաւոր և ձեր անձնական ապրուստը ապահովելով ներկային ու ապագային մէջ քոյրերնիդ ազբատութեան ցաւերէ ու վտանգներէ պահէ :

— Անշուշտ, պարոն, իմ պարտաւորութիւնս է այդ ու պատրաստ եմ ընելու :

— Եթէ այդպէս է, մտիկ ըրէք : Պրըժայնէ կը գամ, այս չին դաւառին մէջ, Լարօք անուն հարուստ ընտանիք մը կայ որ երկար տարիներէ հետէ զիս իր կատարեալ վտահաթեամբը կը պատուէ : Ծերունի մը և երկու կիներ՝ որոնց տարիքն ու բնութիւնը զիրենք գործի անվարժ կ'ընէ, այսօր այս ընտանիքը կը ներկայացընեն : Լարօքեանք, հողային մեծ հարստութեան մը տէր են որու տեսչութիւնը այս վերջի տարիներս հազարապետի մը յանձնուած էր զոր ես կը համարձակէի իրբն խարդախ նկատել : Մեր տեսութեան երկրորդ օրը, Մաքսիմ, այս մարդուն մահուան լուրը առի, Լարօքեան գղեկը երթալու ճամբայ ելայ իսկ և իսկ ու պարագ պաշտօնը ձեզի համար ուղեցի : Ձեր փաստաբանի փողոսը և մասնաւորապէս բա-

քոյական յատկութիւնները առջև բերի : Կաթերնուդ համակերպելով ձեր ծննդեան վրայ չխօսեցայ ամենևին, տան մէջ միայն Մաքսիմ Օտիօ անունով ծանօթ էք և պիտ' ըլնիք : Զատ Էռնէ մը պիտի բնակիր ուր ձեր կերակուրն ալ պիտի բերեն երբ որ ընտանեաց սեղանը նստիլ չուղէք : Տարեկաննիդ 6000 ֆրանք սրոշուած է, ձեռք կը տայ :

— Պատուականապէս կը տայ և ձեր բարեկամութեան բոլոր զգուշութիւնները ու փափկութիւնները կարի կը շարժեն զիս, այլ իրաւը ըսելու համար վախնամ որ քիչ մ'այլանդակ կամ համբալ տեսուչ մը պիտ' ըլնիմ :

— Այդ կէտին վրայ, բարեկամ, ապահով եղիք : Իմ վախերը ձերինները կանխելով այդ բանը չպահեցի իրենցսէ, — Տիկին, ըսի պատուական բարեկամուհոյս՝ տիկին Լարօքի, ձեր հարստութեան համար պարէտի կամ տեսուչի մը պէտք ունիք, ձեզի մէկը գտայ որ իր նախորդին վարպետութիւնը չունի ամենևին, բնաւ տեղեակ չէ վարձքի, ազարակի գաղտնիքներու, բան մը չգիտէ այն գործերէ զորս պիտի հաճիք իրեն յանձնել, մասնաւոր հմտութիւն, վարժութիւն, փորձառութիւն չունի և դեռ սորված չէ ինչ որ կը սորվուի, բայց անիկա անանկ բան մ'ունի զոր իր նախորդը չունէր, զոր 60 տարուան վարժութեամբ կրցած չէր ձեռք ձգել և 10,000 տարի ալ անցնէր չէր կրնար ստանալ, այն է ուղղափրութիւնը : Այս շողան տեսայ, փորձեցի և ես կ'երաշխաւորեմ : Առէք զան, թէ ինէ և թէ իրմէ շնորհակալ կ'ըլնիք :» Տիկին Լարօք շատ խնդաց, երիտասարդ դու, մարդ յանձնարարելու կերպիս վրայ, բայց վերջապէս կ'երևի թէ աղէկ կերպ մ'է եղեր այն, վասն զի յաջողեցաւ :

Ասոր վրայ պատուական ծերունին, ինձ քանի մ'սկզբնական և ընդհանուր զիտելիքներ ուղեց հաղորդել տեսչութեանս նկատմամբ որոնց պիտի յաւելցընէ նաև Լարօքեան ընտանիքի վրայ տեղեկութիւններ՝ զորս ինձի համար քաղելու և խմբագրելու ծանրութիւնը առեր է :

— Եւ երբ պէտք եմ մեկնիլ, սիրելի պարոնս :

— Բայց ճշմարիտ, աղաս, (սը Պ. Մաքսիմը մէկդի ըրաւ) որ չափ շուտով այնքան աղէկ է, վասն զի այդ մարդերը կ'իթէ ամեն-

քը մէկ գալու ըլնին, ընկալադիր մը շեն կարող շինել: Մասնա՛ւորապէս տիկին Լարօր, պատուական բարեկամահի, թէև շատ նկատումներով նշանաւոր՝ բայց գործի համար այնպիսի խալովիւն անյարմարութիւն ու սղայութիւն մ'ունի, որ անկարելի է երևակայել: Գաղթածին մ'է նա:

— Ա՛հ, գաղթածին է, կրկնեցի չգիտեմ ինչ եռանդով:

— Այո՛, երիտասարդ դու, պառաւ գաղթածին մը, վրայ բերաւ խախու Պ. Լօպօբէն: Իր էրիկը Պրըթայիցի էր, բայց այս պարագաները ժամանակին կ'յայտնուին . . . մնաս բարով, Մաքսիմ, սիրտ առ . . . հա՛ մոռցայ . . . հինգշաբթի առտու չգացած՝ բան մ'ըրի որ անհաճոյ պիտի չըլնի քեզ, պարտաւէրներուդ մէջ քանի մը խարդախներ կային որոնք հօրդ հետ ըրած գործերնուն մէջ զգալի կերպով վաշխառութիւն ըրած էին, օրինաց շանթով գինուած՝ իրենց պարտքը կիսովին իջեցուցի և ամբողջին համար րնկալադիր առի: Ի վերջէ՛ 20,000 Փրանքի չափ գրամազուխ մը կը մնայ ձեզ, ասոր վրայ աւելցնելով այն խնայողութիւնները որ ամեն տարի կրնաս ընել տարեկանեդ պահելով, տասը տարիէն առդէկ պոյց մը կ'ունենանք Հէլէնի համար . . . հա՛, նայէ ինչ կ'ըսեմ, վաղը եկու Պ. Լօպօբէնի հետ տեսնուելու ու բոլոր ասոնք կարգադրենք ըրնցընենք . . . Գիշեր բարի, Մաքսիմ, գիշեր բարի սղաս:

— Աստուած վարձահատոյց ըլնի ձեզ, պարոն:



(ՏՄԱՐԳ) Լարօբեան դղեակ. 1 մայիս

Երէկ Բարիդէ մակնեյայ: Պ. Լօպօբէնի հետ ունեցած վերջին տեսութիւնս վշտալի եղաւ: Այս ծերունոյն համար որդիական սէր մ'առնուեցի: Ետքը Հէլէնի մնաս բարեւ ըսելու դայցի: Ենհրածեշտ եղաւ ճշմարտութեան մէկ մասը յայտնել իրեն հասկըցընելու համար թէ պէտք էի պաշտօն մը ընդունիլ: Ըսի որ ստակի անցաւոր նեղութիւն մ'ունէինք բայց կարծեմ թէ խեղճ մանուկը

ըսածէս աւելին հասկըցաւ, իր զարմացած մեծ աչերը արտաբերով լեցուեցան ու վիզը ցատկեց:

Հուսկ յետոյ ճամբայ ելայ: Երկաթուղին դիւ 'ի Ռէնը տարաւ, ուր գիշերն անցուցի: Այս առտու ճեպընթաց (diligence) մը հեծայ որ Ծ-Յ ժամէն Լարօբեան դղեկէն քիչ մը հեռի Մօրպիհանի մէկ պղտի քաղաքը պիտի ձգէր զիս: Բէննէ ներս 10 մղոնի չափ ճամբայ ըրի, առանց հասկընալու թէ հին Արմօրիքը ինչո՞ւ այնքան նկարագրական տեղոյ մը համբաւն ունի աշխարհիս մէջ:

Իմ տեսածը, տափարակ, կանաչ և միօրինակ երկիր մ'էր, անհասնում մարդերու մէջ անհասնում խնձորենիներով: Ասուէ անդ թփուտ փայեր ու պատեր ճամբուն երկու կողմն տեսարանը աչքէս կը ծածկէին, դաշտային շնորհք ունեցող հաղիւ թէ քանի մը պղտի անկիւններ՝ ու այս հասարակ պատկերները կենդանացընող բազէններ ու մոմապատ գլխարկներ կը տեսնէի, որով առջի օրէն 'ի վեր կը խորհէի թէ, բանաստեղծական Պրըթայը, ստորին Նորմանտայ անապատ և նոյն իսկ քիչ մը վտիտ մէկ քոյրն էր:

Պատրանքէս ու խնձորենիներէս ձանձրացած՝ ժամէ մ'ի վեր ալ բնաւ ուշադրութիւն չէի ընէր ընալուցրերուն և կը ննջէի տրտմաւ գին, երբ ինձ այնպէս թուեցաւ որ մեր ծանր կառքը պէտք եղածէն աւելի ընդ յաւաջ կը ծռուէր: Միևնոյն ատեն ձիերուն քալուածքը կ'ձանրանար և մասնաւոր շփումով երկաթներու ձայն մը, կ'ձանուցանէր թէ ամենասնլիքոր կառավարը ամենանշահ անակալը (sabot) դրած էր ամենէ խարխուլ ճեպընթացին:

Քոզս նստող պառաւ կին մը, թեւ բունեց այն բուն համակրութեամբ որ վտանգէ կ'ըզխի: Գլուխս դռնակէն հանեցի և տեսայ որ երկու բարձր որմերու մէջ տեղէ խիստ ցից զօռիվայրէ մը կ'իջնէինք որ ուղիղ գծի սիրահար ճարտարապետի մը գործն էր աներկբայ:

Քիչ մ'ետքք, կէս սահելով ու կէս մը դիլ ու գլոր գալով, տխուր ձորի մը մէջ գանուեցանք որու խորէն պղտի դետակ մը թաւ շամբուտներու մէջ, դժուարութեամբ կ'հոսէր լուեխայն, մինչդեռ իր փլփլուն դարախանց վրայ ծառերու ծեր ու մամուապատ կոճղեր կ'երկնային ցիւրուցան:

Ճամբան, այս գետակին վրայէն կ'անցնէր միակամար կամուրջով մը, ետքը գիմացի զուրթափէն վեր կ'ենէր ձերմակ ախօս մը բանալով, ընդարձակ, չոր և բոլորովին ամայի լեռնադաշտի մը մէջ որու դադաթը գիմացի Տորիզոնին մէջ կը բարձրանար սիգօրէն:

Ճամբուն եզերքը և կամուրջին քով միայնակ խրճիթ մը կը տեսնուէր որու անմարդի և լքեալ տեսքը մարդու սիրտը կը սեղմէր: Առոյգ երևտասարդ մը որու խարտիչադեղ մազերը ետէէն սև ժապաւէնով մը բռնուած էին, դռան առջև փայտ ջարդելու զբաղած էր:

Իրեն մօտեցած ատեննիս գլուխը վեր վերցուց ու իր անդոյր նայուածքին, կասրոյ աչքերուն և դէմքին տարօրինակ երևութիւն վրայ զարմացայ, անձանօթ լեզուով, կտրուկ, անոյշ և վայրենի շեշտով մը գիտ բարեկց:

Խրճիթին պատուհանին մէջ կ'էն մը դիման կը մանէր, իր գզակը և հագուստներու կտրուածքը թատրական ճշգրութեամբ այն նիհարութեամբ աչքէն դղելու հիններու կը նմանէին զորոնք գերեզմաններու վրայ պառկած կը տեսնենք:

Այս մարդիկը գեղացիի կերպարանք չունէին բնաւ և գերագոյն կերպով կը կրէին այն բարեկեցիկ շնորհալի և ծանր երևոյթը որ ազնուական հով կը կոչուի:

Իրենց դժպտութիւնը ունէր այն տխուր և մտախորհ տեսքը որ սրտի մարմնով տեսած էի յոլովակի այն ժողովուրդներու վրայ, որոնց ազգայնութիւնը կորսուած է:

Զառիթափէ վեր ելնելու համար, կառքէն վար իջայ: դաշտափայլը՝ որ այլ ճամբուն կը խառնուէր, մինչև աչքի կտրած հորիզոնը կը տարածուէր բոլորովին: Ամեն կողմ՝ սև հողի մը վրայ սողացող թափեր, հեղեղատներ, անտէր ձգուած քարահատեր ու գեանա մնած ժայռեր կը տեսնուէին բայց և ոչ ծառ մը չէր երևեր շուրջանակի:

Միայն թէ, երբ բլրին դադաթը հասայ, տեսայ որ աջ կողմն դաշտափայլին մութ գիծը հեռուն աներևոյթ ըլնելով, աւելի հեռաւոր հորիզոնի դօտի մը կը ներկայացնէր, օձաձև, լուրթ ու շողանշուղ դօտի մը՝ որ կարծես թէ այս դալկադէմ ու աւերեալ երկրին մէջ, պայծառ և գիւթական աշխարհի մը հեռանկար պատկերը կը բանար:

Մհա, վերջապէս աս էր Պրըթայնը:

* * * Քաղքին մէջ պարտաւորեցայ ուղեկառք մը վարձել, մնացած 2 մըն անդը կը թալու համար: Այս ճամբորդութեանս մէջ ալ որ կարճատև չեղաւ, շփոթ կերպով մը կը յիշեմ որ աչքիս տակէ անտառներ, դաշտեր, լճեր, հովիտներու մէջ պահուած դալարագեղ օաղիաներ կ'անցնէին, բայց Լարօքեան դղիկին մօտեցածիս պէս միտքս բիւր ցաւալի խորհուրդներով լեցուեցաւ որոնք քիչ տեղ կը ձգէին ուղեւորի մը զիտողութեանց:

Քանի մը վայրկեանէ անձանօթ ընտանիքի մը մէջ պիտի մանէի ծայտեալ ծառայութեան աստիճանով մը, և հազիւ թէ տան սպասարներու յարգանք և պատկառանք ազդող տիտղոսով, այս բանը նոր էր ինձի համար:

Նոյն իսկ այն կէտին որ, Պ. Լօպօրէն այս պարէտի պաշտօնը ինձ առաջարկեր էր, բոլոր իմ բնազդումները ու սովորութիւնները սաստիկ ապստամբեր էին այսպիսի պաշտօններու յատուկ եղող հպատակութեան դէմ: Բայց և այնպէս իր առաջարկութիւնը անկարելի երևցեր էր ինձ մերժել, որպէս զի բարեկամիս ինձի համար ըրած եռանդոտ ջանքերուն վճատեցուցիչ պարտաւով մը պատասխանած չըլնիմ: Ասկէ զատ ուրիշ աւելի ազատ պաշտօններու մէջ շատ տարիներէ ետքը կրնայի ձեռք ձգել այն առաւելութիւնները որ հոս առջի օրէն ունէի և որոնք կը ներէին ինձ քրոջս ապագային համար աշխատիլ անյապաղ: Աւտի յաղթեցի դժկամակութեանց որ սաստիկ եղած էին և մօտալուտ իրականութեան զիմացը աւելի զօրաւոր կերպով կ'արթնային:

Նորէն պէտք ունեցայ օրինազրբին մէջ կարգալու որ ամեն մարդ իր ներսի դին գրուած ունի պարտաւորութեան և զոհողութեան յողուածները, միանգամայն ինքզինքիս կը կրկնէի թէ չկայ խոնարհազոյն վիճակ մը, ուր անձնական արժանատիքս իմ չկարենայ զիմանալ և վերականգնիլ: Յետոյ Լարօքեան ընտանիքին դէմ յանգիծան բռնելիք ընթացքիս ծրագրեր կը շինէի միտքս դնելով որ իրենց շահերու՝ երկիւղած հաւատարմութիւն մը և իրենց անձերուն համար նուաստութենէ միանգամայն բրտութենէ ալ հեռի՝ արդարացի յարգանք մը ունենամ:

Այնքան կը տեսնէի սակայն, որ ծրագրոյս այս վերջին մասը որ

ամենադժուարն էր աներկբայ, պիտի կրճատուէր կամ ընդարձա-
կուէր զարմանալի կերպով, այն անձերու բնութեանց և գաղտնաբար-
ներու համեմատ, որոնց հետ հաղորդակցութիւն պիտի ունենայի :
Արդ Պ. Լօպօբէն անձնականի խնդրին վրայ ունեցած անձկութեանս
օրինաւորութիւնը ճանչնալով հանդերձ, յամառութեամբ այս նիւ-
թիս վրայ տեղեկութիւններ և մանր պարագաները խնայեր էր :
Բայց և այնպէս ճամբայ ելնելու կէտիս, մտերմական ցուցակ մը
տուած էր ապօպրելով որ անկէ ինձ օգտակար եղածը քաղա-
ծիս պէս զայն կրակը նետեմ : Այս ցուցակը թղթակալէս հանեցի
և սկսայ անոր Սիպիլլական ասացուածքները զորս ճշդիւ հոս կ'օ-
րինակեմ, քննել :

(Տ'Արց) Լարօբեան զղեակ

ՅԻՇԵԱԼ ԳՂԵԱԿԸ ԲՆԱԿՈՂ ԱՆՉԱՆՉ ԿԿԱՐԱԳՅՈՒՐԸ

«1 Պ. Լարօբ (Լուի Օլիւսթ) ութսունամեայ ալեոր, ըն-
տանեաց արդի մեծը և հարստութեան գլխաւոր աղբիւրն է : Հին
ծովաւար և իբրև վաւերացեալ հէն՝ առաջին կայսրութեան ներքև
հուշակաւոր եղած՝ և կ'երևի թէ զանազան օրինաւոր ձեռնարկու-
թիւններով հարստացած է : Երկար ատեն զաղթակալնութեանց մէջ
բնակեցաւ : Բնիկ Պրըթայնցի է և 30 տարի կայ որ հոն վերա-
դարձաւ ընկերութեամբ իր լուսահոգի միածին որդւոյն, Բիէր-Ան-
թուան Լարօբի որ ամուսին էր,

«2 Տիկին (Ժօզէֆին-Բլարա) Լարօբի, վերոյիշելոյն հարսը,
բնիկ զաղթածին 40 տարեկան, միսկական զլուս, բարի հոգւոյ
տէր, քիչ մը ցնորասէր, ու բնութեամբ անհոգ :

«3 Օրիորդ Լարօբ (Մարգարիտ-Լուիզ) վերոյրեալնորութեան
աղջիկը ու ժառանգուհին, 20 տարեկան, գաղթածին ու Պրըթայն-
ցի, քիչ մը ցնորասէր, բարի հոգւոյ տէր :

«4 Տիկին Օպրի, Պրըթայն մեծած պորայի գործակալ, Պ. Օ-
պրիի որբւարի, երկրորդ կարգի տոհմուհին (cousine) տունը ըն-
գունուած, դէպ բնութեամբ :

«5 Օրիորդ Հէլուէն (Քարօլին Ապրիէլ) 26 տարեկան, վա-
ղեմի վարժուհի, այսօր ընկերուհի օրիորդ (demoiselle de com-
pagnie) մշակուած զլուսի՝ այլ անվտանգելի բնութեան տէր :

« Այլէ : »

Այս յիշատակագիրը իր ցուցրցած զլուսութեան հակառակ՝ ինձ
անօգուտ չեղաւ, անձանօթի երկիւղին հետ զգացի որ վախերուս
մէկ մասն ալ կը փարատէր : Այլուր եթէ Պ. Լօպօբէնի ըսածին
պէս դղելին 5 բնակիչներէ 2ը բարի հոգւոյ տէր էին յիբաւի այս-
չափը յուսալու իրաւունքը անգամ չունէի :

Երկու ժամ քալելէ ետքը, կառապանը կանգ առաւ երկու կող-
մէ անակներով ամրացած վանդակի մ'առջև որոնք բարապանին բնա-
կարանը կը յօրինէին : Իմ մեծ անտուկը հոն ձգեցի և մէկ ձեռքս
պայուսակս առած՝ և միւսով դաւազանիս հարուածներովը մարդա-
գեանին վրայ փալփուռն մարդարտածաղիկները ջարդելով դէպի
զղեակը ուղղեցայ :

Ահային շողանակներնեւրու ծառաշարքի մը մէջէ քանի մը հա-
րիւր քայլ ընելէ ետքը, մեծ և բոլորաձև պարտեզի մը մէջ մայ
որ քիչ մ'աւելի անդին շերտի (parc) կը փոխուէր : Յաջ և յահեակ
թաւ և արդէն կանաչոտած պուրակներու մէջ կը նշմարէի շինուա-
ծոյ հեռաւոր խորունկ տեսարաններ, ծառերուն տակ խուսափող
աւազաններ և ճերմակ մակոյկներ որ դեղջական յարկերու ներքև կը
հանգստանային :

Դիմացս կը բարձրանար զղեկին ընդարձակ շէնքը, Լուի ԺԳԻ
առաջին տարիներու փառաւոր՝ և կէս մ'իտալական ճաշակով շի-
նուած :

Գղեկին առջև, ճակատի բարձր պատուհաններուն տակ ու դեա-
նայարկին կրկին սանդուխներուն ոտքը՝ սարահարթ մը (terrasse) կը
տարածուէր որ տեսակ մը մասնաւոր պարտեզ կը ներկայացընէ և ուր
շատ մը ցած ու լայն սանդուխներով կը մտնուի : Այս բնակութեան
ծիծաղուն ու փառաւոր տեսքը ինձ ճշմարիտ լքում մը պատճառեց
որ չնուազեցաւ բնաւ երբ սարահարթին մօտեւով մանկական ու զուարթ

ձայներու շշուկ մը լսեցի որ աւելի դաշնակի հետևորդ բզզումին վրայ կ'որոշուէր :

Մտքէս երևակայած տխուր ամրոցէս շատ տարբեր՝ ու զբոսալի տեղ մը կը մտնէի անվրէպ :

Մ'ը խորհրդածելու տեղը չէր սակայն, սանդուխներէ վեր ելայ թեթևակի և յանկարծ այնպիսի տեսարանի մ'առջև գտնուեցայ որ ուրիշ որ և է պարագայի մէջ բաւական շնորհալի պիտի թուէր ինձ : Բուրաստանին մարմանդին (pelouse) վրայ՝ արևի լոյսին զոյգ զոյգ պլլուած ճի չափ մանկտի կը խայտային թև 'ի թև, մինչդեռ վարպետ ձեռքէ մը զարնուած դաշնակ մը կայթոտ քաշի մ'եղանակը իրենց կը հասցընէր պատուհանէն :

Բայց հազիւ ժամանակ ունեցայ պարուհիներուն՝ որոնց մազերը արձակուած և գլխարկները ուսերնէն կախուած էին, հրավառ դէմքերը տեսնելու . իմ՝ յանկարծական երևոյթը ընդհանուր աղաղակով մը ողջունուեցաւ որու խորին լուծիւն մը յաջորդեց իսկոյն : Պարերը դադրեցան և բոլոր խմբակը պատերազմի կարգաւ շարուած ծանրութեամբ օտարականին անցնելուն կ'սպասէր :

Օտարականը քիչ մը շփոթած կանգ առած էր . թէև ժամանակէ մը հետէ աշխարհային տեսիլներ չունիմ, կը խոստովանիմ որ եթէ ձեռքէս դար պայուսակի սիրով կը նետէի այն կէտին : Պէտք եղաւ որ որոշումս ընեմ վերջապէս և այն միջոցին որ գլխարկ 'ի ձեռին, դրէկին դաւիթը տանող կրկին սանդուխը կ'ուղղէի, յանկարծ դաշնակը դադրեցաւ :

Նախ բաց պատուհանին առջև տներիկեան ահագին դամբա մ'երևնալով իր առիւծի քիթը յենարանի երկաթին վրայ դբաւ երկու մազոտ թաթերուն մէջտեղ, և քիչ մ'եսքը բարձրադիտակ օրիորդ մ'ելաւ որու քիչ մը թխորակ դէմքը ու հանդարտ գծադրութիւնը սեւաթոյր և փայլուն մազերու թանձր հիւսակով մը շրջապատուած էին : Իր աչքերը որ արտաքոյ կարգի մեծութեամբ մ'երեցան ինձ, թոյլ հետաքրքրութեամբ մը գուրքը անցած տեսարանի պատճառը հարցուցին :

— Ե՛հ, ի՛նչ կայ ուրի՛ն, ըսաւ հանդարտ ձայնով մը :

Մեծ խոնարհութիւն մ'ըրի և անգամ մ'ևս անիծելով պայուսակս որ զգալի կերպով այս օրիորդները կը զուարճայրնէր, գեանայարկը մտնելու փութացի :

Մեազգեստ ու ճերմկորակ մազերով ծառայ մը որ գալթին մէջ գտայ, անունս առաւ և քանի մը վայրկեան ետքը դեղին մետաքսով շտիլուած մեծ սրահակ մը տարուեցայ, ուր նախ պատուհանը տեսած նորաստի անձս տեսայ որ մէկ խօսքով հիանալի կերպով գեղեցիկ էր :

Կրակարանին քով ուր ճշմարիտ հնոց մը կը վառէր, միջին տաքիքով կին մը, որու գծադրութիւնը գաղթածնի տիպար կը կրէր ամենեւեւ, զանազան մեծութեամբ փետրալի բարձրով բարձիկներով լի թիկնաթուի մը մէջ թաղուած էր :

Նախնաձև եռոտանի մը որու վրայ վառ ուռան (brasero) մը կը հանդէր իրեն մօտիկ դրուած էր, և մերթ ընդ մերթ իր նիհար ու դեղնած ձեռքերը անոր կը մօտեցընէր : Ուրիշ կին մը գուլպայ կը հիւսէր տիկին Վարօքի քով ու իր անդեղեայ ու կախ գէմքէն իսկոյն ճանչցայ երկրորդ կարգի տոհմուհին, Պելճիգա մեւնոզ պօրսայի գործակալի որբուարին :

Տիկին Վարօքի վրաս նետած առաջին նայուածքը՝ ապշութեան մօտ զարմանքով մը խառն երեցաւ ինձ : Անունս կրկնել տուաւ :

— Ներեցէք, ի՛նչպէս ըսիք, պարոն . . .

— Անունս Օտիօ է, տիկին :

— Մարտիմ Օտիօ, այն պարէտը, տեսուչը, որ Պ. Լօպօրէն . . .

— Այո՛, տիկին :

— Քաջ ապահով էք :

Խնդուքս չլրցայ բռնել :

— Այո՛, տիկին, կատարելապէս ապահով եմ :

Տիկին Վարօք, պօրսայի գործակալի որբուարին՝ և յետոյ ծանրադէմ նորատի աղջկան վրայ արագ նայուածք մը նետեց, իբրև թէ անոնց ըսելու համար — Այս բանը դուք կ'ընդունէք մի : Ետքը իր բարձիկներուն մէջ քիչ մը շարժեցաւ ու շարունակեց,

— Ինչ և է, հաճեցէք նստիլ Պ. Օտիօ : Շատ շնորհակալ եմ, պարոն, որ ձեր տաղանդը մեզի նուիրելու կը զիջանիք : Չեր օգնութեան ու սատարին մեծապէս պէտք ունինք, հաւաստի եղիք, վասն զի վերջապէս, չենք կրնար ուրանալ որ շատ հարուստ ըլլեալու գծադրութիւնն ունինք . . .

Տիկին Լարօք տեսնելով որ այս խօսքերուն, երկրորդ կարգի տոհմուհին ուսերը վեր կ'ընէր,

— Այո, սիրելիդ իմ տիկին Օպրի, կրկնեց, կ'ուզեմ խօսիլ: Բարերարն Աստուած զիս հարուստ ընելով փորձել ուզեց: Աղքատութեան, անձուիրութեան և զոհողութեան համար ծնած էի աներկբայ, բայց միշտ ուզածիս հակառակն եղած է: Օրինակի համար կ'ուզէի հիւանդոտ ամուսին մ'ունենալ, և Պ. Լարօք պատուական առողջութիւն մ'ունէր: Ահա այսպէս ճակատի դիրս մէկ ծայրէ միւսը վրիպած է ու պիտի վրիպի:

— Գաղբէ դու ալ, ըսաւ խստիւ տիկին Օպրի, աղքատութիւնք քեզի աղէկ պիտի վայլէր որ ինքզինքիդ ամենափոքր բան մ'և հաճութիւն մը չես կրնար զլանալ:

— Ներքէ, սիրելի տիկին, վրայ բերաւ, տիկին Լարօք, անօգուտ ինքնանուիրութեան համար ոչինչ համակրութիւն չունիմ: Թէ որ հիւս ամենախիստ զրկումներու դատապարտեմ զինքս որո՞ւ և ինչի կ'օգտէ: Թէ որ առաւօտէ մինչև իրիկուն սառիմ, դու աւելի երջանիկ կ'ընիս:

Տիկին Օպրի յայտնի նշանով մը հասկցուց որ աւելի երջանիկ չընի, բայց տիկին Լարօքի լեզուն չափազանց շինդածոյ և ծիծաղելի կը գտնէ:

— Ի վերջէ, երջանիկ կամ ապերջանիկ, շարունակեց, այդ հող չէ: Ուստի շատ հարուստ ենք, Պ. Օտիօ, և որչափ որ այս հարստութիւնը բանի տեղ չեմ գներ, պարտքս է պահել զայն աղջկանս համար թէ և ան ալ ինէ շատ հողը չընէր, անանկ չէ, Մարգարիտ:

Այս հարցման վրայ ժպիտ մը օրիորդ Մարգարիտի արհամարհական շուրթերը բացաւ ու իր յօնքերու աղեղնաձև կամարը պարզուեցաւ թեթևակի, յորմէ ետքը այս հպարտ և ծանր գծագրութիւնը հանդարտեցաւ կրկին:

— Պարօն, կրկնեց տիկին Լարօք, Պ. Լօպօբէնի բացարձակ ինդրոյն վրայ, ձեզի համար սահմանուած օթարանը պիտի ցուցնեն ձեզ հիւսակ, այլ նախ և յառաջ թող տուէք որ զձեզ անդամ մը սկեւարայրիս տանին որ շատ զոհ պիտ'ընի ձեզի տեսնելով: Այլ հաճին զանգալը զարնել, սիրելի տոհմուհիս: Այլ յուսամ, Պ. Օտիօ, որ այսօր հետերնիս ճաշելու հաճութիւնը կ'ընէք մեզ: Մնաց բարով և ՚ի մօտոյ:

Ծառայի մը յանձնուեցայ որ զիս կից սրահ մը թողլով աղաչեց որ մինչև Պ. Լարօքէ հրաման անելը սպասեմ: Այս մարդը գուռը կէս բաց ձգած ըննելուն՝ ինձ անկարելի եղաւ չլսել այս խօսքերը զորս տիկին Լարօք իրեն սովորական եղող քիչ մը հեղանական պարզամտութեան եղանակաւ կը լրացընէր:

— Նայէ, բան մը կը հասկըննա սա պարօն Լօպօբէնէ, որ տարօք, պարզ ու հասուն երիտասարդի խօսք կ'ընէ, և ասանկ պարօն մը կը զրկէ ինձ:

Օրիորդ Մարգարիտ քանի մը խօսք մըմնաց, զորս չլսելուս համար կը խոստովանիմ որ շատ կը ցաւիմ և որոնց մայրը պատասխանեց խեղոյն:

— Զէ չեմ ըսեր, աղջիկս, բայց և այնպէս բոլորովին ծիծաղելի բան մ'է այս Պ. Լօպօբէնի կողմէ: Ինչպէս կ'ուզես որ ասանկ պարօն մը, հերկուած արտերու մէջ վազէ սանդղաներով: Գրաւ կը գնեմ որ կեանքին մէջ սանդղալ հաղած չէ այս մարդը: Անոր ինչ ընելը անդամ չդիտէ: Լաւ, կարելի է կ'սխալիմ, աղջիկս, բայց առանց սանդղալի չեմ կրնար լաւ տեսուչ մը երևակայել: Այլ մտածեմ որ հաւոյդ քով իրեն ընկերանաս, Մարգարիտ, դուն ինչ կ'ըսես:

Օրիորդ Մարգարիտ գրեթէ նոյն հետայն դանուած սենեակս մտաւ և զիս հոն տեսնելուն զոհ չերեցաւ:

— Ներքեք, օրիորդ, այլ ան ծառան ըսաւ որ զինքն հոս սպասեմ:

— Հաճեցէք, պարօն, ինձի հետեիլ:

Հետեցայ իրեն: Սանդուխէն վեր հանեց զիս, շատ մը ձեմէ լիքներէ անցուց և վերջապէս թողուց տեսակ մը դաւթի մէջ ուր սիսայ պատերէն կախուած պատկերները դիտել:

Այս նկարակերտներէ շատը կայսրութեան վաղեմի հէնին փառքին նոյնիւրուած միջակ գործեր էին: Բազմաթիւ ծովային պատերազմներ կը տեսնուէին քիչ մը մրոտուած, որոնց մէջ յայտնի կերեւէր սակայն որ Սէրան երկիւյսը (brick) Լարօք նաւապետին հրամանին ներքև և 26 թնդանօթով ամենաղալի փլատներ կու տար անդղիացոյն: Ետքը կ'ըսային Լարօք նաւապետին բնական մեծութեամբ պատկերները որոնք իմ յատուկ ուշադրութիւնը գրաւեցին:

Թեթև փոփոխութեամբ, ամենքն ալ հսկայ հասակով, հասարակագետականի տեսակ մը խիստ շքեղ համազգեստ հագած, քլէպէրի նման մազոտ, ազդու, կրակոտ և խոժոռ նայուածքով մ'առջևը նայող և վերջապէս անանկ մարդ մը կը ներկայացընէին որ արտօրին կողմ մը չունէր :

Ուշի ուշով այս մեծ պատկերները դիտելու տեսնս որ մարդուն՝ հէնի մը, նոյն իսկ ելուազակի մը վրայ կազմած գաղափարը հիանալի կերպով կ'իրացընէին, օրիորդ Վարդարիտ աղաչեց որ ներս մտնեմ :

Ան ատեն նիհար ու զոռամեալ ծերունիի մը դիմացը գտնուեցայ որու աչերը հաղիւ կենսական կայծը կը կրէին և որ ինձ ընդունելութիւն ընելու համար դողդոջուն ձեռքով մը, իր փողովի պէս փայլուն գանկը ծածկող սև մետաքսի զգակին զգաւ :

— Սիրելի հաւս, ըսաւ օրիորդ Վարդարիտ ձայնը բարձրացընելով, Պ. Օտիօն է :

Խեղճ ու ծերունի հէնը, քիչ մը կանգնեցաւ իր թիկնաթոռին վրայ, անորոշ և սկար երեղթով մ'երեսս նայելով : Նստայ օրիորդ Վարդարիտի մէկ նշանին վրայ որ կրկնեց :

— Հրամանքը Պ. Օտիօն է, մեր նոր տեսուչը, հայր իմ :

— Ա՛հ, բարի լոյս, պարօն, մրմուաց ծերունին, ու ամենատաժանելի լուսութիւն մը յաջորդեց անոր :

Լարօք նաւագետը, մարմինը երկուքի ծալլած և գլխի կոր իր խռոված նայուածքը վրաս սևեռելը կը շարունակէր : Վերջապէս խիստ կարեոր խօսակցութեան նիւթ մը դտած երեւալով, անլուր և խորին ձայնով մ'ըսաւ :

— Պ. Պօշէնը մեռաւ :

Այս անակնկալ ազդարարութեան դէմ պատասխան մը չկրցայ գտնել, Պ. Պօշէնի ով ըլնիլը ամենեկին չդիտէի և օրիորդ Վարդարիտ զայն ինձ հասկըցընելու ծանրութիւն չառնելուն՝ ցաւակցութիւն յայտնող տկար միջարկութեամբ մը այս վշտալի դէպքին հազորդ գտնուիլս յայտնելով դո՛հ եղայ :

Բայց կ'երեւի թէ ծեր նաւագետին համար այսքանը բաւական չէր, քան զի քիչ մ'ետքը նոյն տխուր եղանակաւ կրկնեց :

— Պ. Պօշէնը մեռաւ :

Այս յամառութեան առջև շիփ ու շփոթ բոլորովին աւելցաւ, կը տեսնէի որ օրիորդ Վարդարիտ ոտքը դետին կը զարնէր անհամբեր, վրաս յուսահատութիւն եկաւ ու ըստ դիպած միտքս եկածն ըսի :

— Վայ, և ինչէն մեռաւ :

Այս հարցումը հազիւ բերնէս փախեր էր երբ օրիորդ Վարդարիտի զայրացած նայուածքէն մակարեցեցի թէ կը կասկածէր անի որ իր հաւը կը հեղնէի անպատկառ, ուստի թէև կ'զգայի որ յանցանքս միայն անհեթեթ բան մը ըսելս էր, խօսակցութեան աւելի յաջողակ գարձուածք մը տալ աշխատեցայ և ձեռնալիքին մէջ տեսած պատկերներուս խօսքն ըրի, ըսի թէ արդօք ինչ որտաշարժ յիշատակներ կը բերէին անոնք նաւագետին միտքը, յայտնեցի այն յարգալի հետաքրքրութիւնը որով կը համապուէի նոյն փառաւոր անցքերու դիպազնը տեսնելով : Պարագանբուն մէջ ալ մտայ և եռանդուն կերպով քանի մը պատերազմներ յիշեցի որոնց մէջ ինձ այնպէս երեցեր էր որ Սէրուս երկկայմը հրաշքներ կը գործէր իրօք :

Մինչդեռ այս ընտիր քաղաքավարութեան օրինակը կ'ընծայէի, մեծ զարմանօք տեսայ որ օրիորդ Վարդարիտ ակներև դժգոհութեամբ և տահաճութեամբ երեսս կը նայէր շարունակ : Սակայն իր հաւը ուշի ուշով ունկնդիր կ'ըլնէր ինձ և կը դիտէի որ գամ քանզգամ դուրսը վեր կ'ելնէր, տարօրինակ ժպիտ մը իր նիհար դէմքը կը լուսաւորէր և անոր բոթերը կը շտկէր կարծես : Մէյ մ'ալ յանկարծ երկու ձեռքով թիկնաթոռին թեկերը բռնելով ելաւ կանգնեցաւ իր երկայն հասակովը, իր խորունկ ակնապիծերէ արեսեան բոց մը ցայտեց ու զիս գողացընող մեծագոյ ձայնով մը դոտաց :

— Հո՛վին գարձուցէք դեկափայտը, ամեն ինչ հո՛վին : Չախակողմն կրակ ըրէք : Վօտեցի՛ր, մօտեցի՛ր : Ետ ընդ ետ նետեցէք ճանկերը . . . հա՛ ձեռքերնիս է : Կրակ հոգ վերը ու անոր յարկը մէկ հարուածով աւելցէք : Բովս հասիք հիմա, օ՛ն անդր անգղիացոյն՝ անիծեալ սաքսօնին վրայ խոյանանք խմբովին : Աեցցէ՛ :

Իր թուան հողատար ձեռքերու վրայ ընդ ունայն կոթնած աւելորը այս յետին աղաղակը՝ որ իր կոկորդին մէջ խրաց, արձակելու ատեն, իր թեկաթոռին վրայ ընկաւ ողեսպառ :

Օրիորդ Լարօք հրամայական նշան մ'ըրաւ ինձ : Գուրս ելայ ու կրցածիս պէս ճամբաս դտայ սանդուխներու և ճեմելեաց լարիւրին- թոսին մէջէ : շատ շնորհաւորելով ինքզինքս Սէրու երկկայմին ծեր նաւապետին հետ ունեցած տեսութեանս մէջ ցուցըցած նրբամտութեանս համար :

Գաւթին մէջ ինձ կ'սպասէր դղեկը հասած տտենս զիս ընդունող սպիտակահեր ծառան , որու անունը Ալէն է , տիկին Լարօքի կողմէ ըսելու համար որ ճաշէն յառաջ ժամանակ չունէի բնակարանս տեսնելու :

Սրահակը մանելու վայրկենիս՝ քսանի չտի անձերէ բաղկացեալ ընկերութիւն մը , սովորական քաղաքավար ձևերով դուրս կ'երևէր անկէ սեղանատուն երթալու համար : Այս առաջին անգամ էր վիճակիս փոփոխութենէն 'ի վեր՝ որ աշխարհասէր ընկերութեան մը մէջ կը գտնուէի և տակաւին քիչ յառաջ , այն պղտի մեծարանաց՝ որ սրահակներու սովորոյթը ընդհանրապէս հարստութեան կամ զարմի կ'ընծայէ , վարժուած ըլնելուս՝ դառն մտմօքով մ'ընդունեցայ արհամարհի ու անհոգութեան նշանները որոնց անխօսելի կերպով դատապարտուած եմ նոր գիրքովս , բայց սին փառասիրութեան այս շարժմունքները կրցածիս չտի զսպելով , թեւ կարճ հասակով այլ սիրուն և բարեձև աղջկան մը նուիրեցի որ ամեն հանդիսականներէ ետև կեցած՝ ու ինչպէս որ գուշակեր էի , վարժուհի օրիորդ շէլուէնն էր :

Մեղանին վրայ անդս իրենին քով նշանակուած էր : 'Նստելու վրայ էինք , երբ օրիորդ Մարգարիտ երեցաւ Ննթիկօնի նման իր հաւին ծանր ու գետնաբարձ քալուածքը առաջնորդելով և իրեն յատուկ անդօրը վեհութեամբ եկաւ աջ կողմս նստաւ , մինչդեռ ամեն զամփոք՝ որ կ'երևի թէ այս բամբռին սեպհական պահապանն է , իր աթոռին ետև կը տեղաօրուէր :

Այս առթիւ պարտ անձին համարեցի , զգացած ցաւս յայտնել անխոհեմութեամբ այնպիսի յիշատակներ արթնցնելուս համար որ կ'երևի թէ դժնդակ կերպով մ'իր հաւոյն միտքը կը յուզէին :

— Ինձ կը վայելէ ներում ինդրել , պարոն , ըսաւ անի , ես յառաջմէ պարտաւոր էի աղջ առնել ձեզ որ պապուս առջև անգղիացոյն վրայ խօսելու չէ բնաւ . . . Միթէ ասկէ յառաջ Պրըթայն եկած էիք , պարոն :

Պատասխան տուի թէ ասկէ յառաջ եկած չէի , բայց շատ գոհ էի զայն տեսնելուս և ասոր ալ արժանի ըլնիլս հաստատելու համար ճամբան , իմ ուշը գրաւող նկարագրական գեղեցկութիւններու վրայ վիպասանական ոճով սկսայ խօսիլ :

Այն ինչ կարծէի թէ այս յաջողակ շողորդութեամբ գեռահաս Պրըթանուհին բարեկամութիւնը կը շահէի մեծապէս , անդէն մեծ զարմանօք , իր կերպարանին վրայ տաղտկութեան և անհամբերութեան նշաններու նկարիլը տեսայ :

Սառույլ բաղդ չունէի այս մանկամարդ աղջկան քով :

— Աղէ՛ , ըսաւ նա հեղնութեան այլանդակ ձևով մը , կը տեսնեմ պարոն , որ գեղեցիկը , երեակայութեան ու հոգւոյ ազգու- թիւն ընող բաները , բնութիւնը , դաւարին , քարերն ու գեղարուեստ- ները կը սիրէք : Սքանչելի կերպով կը համաձայնիք օրիորդ շէլուէնի հետ որ աս ամենը կը պաշտէ նմանապէս և զորս ես բնաւ չեմ սիրեր :

— Բայց , յանուն Աստուծոյ , օրիորդ , ինչ կը սիրէք ուրեմն : Այս հարցման՝ զոր սիրուն զուարթութեան եղանակաւ մը կ'ընէի , օրիորդ Մարգարիտ ինձ դառնալով շտապաւ , վրաս սեգ նա- յուածք մը նետեց ու պատասխանեց խօսիւ .

— Շուն կը սիրեմ , Մերվին հոս եկու :

Յետոյ ձեռքը դորովանօք մը դամփոխն թանձր մորթին մէջ խօթեյ՝ որ ետևի ոտքերուն վրայ կանդնած , վիթխարի դուրիւր իմ և օրիորդ Մարգարիտի սկաւառակներու մէջ կ'երկնցընէր :

Չկրցայ ինքզինքս զսպել և այս տարօրինակ անձին դժագրութիւնը նոր հետաքրքրութեամբ մը դիտեցի , հոն փնտռելու համար այն հոգ- ուոյ չորութեան նշանները զորս ինքը կը վարդապետէ :

Օրիորդ Լարօք՝ որ նախ խիստ բարձրագիտակ երեցեր էր ինձ , այս երեւոյթը իր գեղեցկութեան կատարեալ ներդաշնակութեանը կը պարտաւորի : Միջակ հասակ մ'ունի , իր ձուակերպ այլ քիչ բոլոր- բաձև գէմքը , շնորհալի և քիչ մը սեգ վիզը թեթև մը ծած- կուած են ոսկիի մութ գոյնով մը : Իր ձակտին վրայ թաւ դարե-ւանդ մը ձևացընող զիսակը , գլխին մէն մի շարժուածքին՝ կայցոյտ և երփն երփն շողիւններ կ'արձակէ : Նուրբ ու քնքուշ ունդունքը կարծես թէ հոռուական կուսի մը պատկերէ օրինակուած ու կեն-

դանի սուտակի մէջ քանդակուած են : Լայն , խորունկ ու թախծաւ լի աչերու տակ իր այտերու ոսկեզօծ խանդարը (hale) տեսակ մը աւելի թխտեսիլ շրջանակով մը կը նկարուի որ երկայն արտեանունքներու ստուերէն յառաջ եկած՝ կամ իր նայուածքի հրանշայլ շտապիղներէ այրած է դողցես :

Գժուարին է ինձ , նկարագրել իր ժպտին վսեմ՝ քաղցրութիւնը որ մերթ ընդ մերթ այս գեղատեսիլ դէմքը կ'կենդանացընէ և չգիտեմ ինչ զօշոտիչ պոստոմով կը մեղմէ այն խոշոր աչքերու հրավառ շողը . բանահիւսութեան , երազներու և երեակայական աշխարհներու զիցուհին անգամ , մարդկան յարգանքն ու մեծարանքը ընդունելու համար անտարակոյս կրնայ ներկայանալ , այս պարմանուհւոյն կերպարանքին տակ որ իր շունը կը սիրէ միայն :

Այսպէս բնութիւնը իր ամենէ ընտիր գործերու մէջ այս անասնոցն այսպանքը կ'ընծայէ մեզի :

Եւ սակայն ինծի ինչ , կ'զգամ՝ արդէն ըստ բաւականի որ օրիորդ Փարզարիտի երեակայութեան մէջ սեռակի մը դերը խաղալու դատապարտուած եմ , առարկայ՝ որ չնչին հրապոյր ունի գաղթածնի մը համար : Իմ կողմէ կը յուսամ որ օրիորդ Փարզարիտի չափ հպարտ եմ , ամենէ անկարելի սիրահարութիւնը ինծի համար ան է , որ զիս կասկածի տակ կրնայ ձգել իբրև շահամուկ ու խորամանկ : Այլ բարոյական մեծ զօրութեան մը պէտք չունիմ այնպիսի վտանգի մը դէմ՝ զինուելու համար որ հասնական չթուի ինձ , վասն զի օրիորդ Լարօքի գեղեցկութիւնը աւելի արհեստագիտին զուտ հիացումը՝ քան թէ մարդկային գողարիկ զգացումը արթնցընող տեսակէն է :

Այն պահուն որ օրիորդ Փարզարիտ , Մէրվին ըսելով իր թիկնասպահը կ'կանչէր , ձախակողմեան դրացուհիս , օրիորդ Հէլուէն՝ Նրթուրի դարը նետուեր էր սանձարձակ ու կ'հաճէր սորվեցընել ինձ թէ Մէրվին՝ ուսմիկն Մէրվին կոչած նշանաւոր հարցուկին բուն անունն էր :

Ետքը Թապիր-Բօնտի ասպետներէ մինչև Ախարու ժամանակը յառաջացաւ և տրուիաներու , քուրմերու և քրմասպետներու բոլոր դասակարգութիւններով երկանկեկ թափոր մ'անցաւ առջևէս , որմէ ետքը Աեղտեան դամբաններէն , շիրիմներէն ու մոմիաներէն անցնե-

քով բնականօրէն Գրովէիններու՝ մէջ ընկանք :

Մինչդեռ օրիորդ Հէլուէնի՝ որու քիչ մը գիրութիւն կը պակսի միայն , բաւական շնորհքով տրուիտուհի մ'ընելու համար , քայլերուն կը հետևէի Աեղտեան անտառներուն մէջ , ահա մեր քով նստող Պօրսայի գործակալի որբեարին՝ կոյրի մը հեծիւններուն նման՝ անրնդհատ ու միօրինակ գանգատի ձայներով օդը կը թնդացընէր , ըսելով թէ իրեն ոտքի ջերուցիչ (chauffe-pied) մուցեր էին տալու , առւած արգանակնին սպաղ էր , չոր ոսկորներ կը մեծարէին իրեն , այսպէս կը վարուէին հետը , բայց ինքը վարժ և սովոր էր ասոնց : Ցաւալի , խիտ ցաւալի է , կը կրկնէր , աղքատ ըլնիլը , երանի թէ մեռած ըլնէր , և այլն :

— Այո՛ , տօթօր , կը յարէր իր դրացուհւոյն գառնալով որ մի սակաւ շինուածոյ ու հեզնական հետաքրքրութեամբ մ'իր տրտունջը մտիկ կ'ընէր , այո՛ , տօթօր , կատակ չեմ ընէր , երանի թէ մեռած ըլնէի , ան տտեն ամեն մարդ կը հանդէր : Մտածէ հեղ մը , տօթօր , ինչ գժուարին է ողորմութեան կարօտ ու ծառաներու խաղալիք գառնալ ինծի համար , որ այնպիսի վիճակի մը մէջ գանուած եմ ատենօք և իմ վինանշանը կրող արծաթ սկաւառակներու մէջ ճաշ ըրած եմ . . . մէկը չգիտէ և չպիտի գիտնայ թէ այս տան մէջ ինչ քաշած եմ , հպարտ մարդը անտրտունջ կը տառապի , ես ալ կը լուեմ , տօթօր , բայց ոչ նուազ ներսէս կը խորհիմ :

— Լաւաղոյնն ատ է , սիրելի տիկինս , ըսաւ բժիշկը որ կարծեմ Տէմարէ՛ կը կոչուի , ալ կտրէ ու պաղ ջուր խմէ որ հանդարտիս :

— Մահը միայն պիտի հանդարտեցընէ զիս , տօթօր :

— Անանկ է նէ երբոր կ'ուզես , վրայ բերաւ տօթօրը անվեհեր :

Սեղանին աւելի կեդրոնական մէկ կողմը , հանդիսականներու ուշքը դրաւուած էր Պ . Պէվալլան անուն մէկու մը կծու և մեծաբան շողփաղփով որ կ'երևի թէ այս տան մէջ մասնաւոր մտերմութեան

*Այսպէս կը կոչուէին տեսակ մը շէնքեր որ ըստ ոմանց կրօնական ազդամքներու կը ծառայէին : 20. 60.

մ'արտօնու թիւնները կը վայելէ : Բարձրահասակ մարդ մ'է , հասուն երիտասարդութեամբ , իր գլուխը ճիշդ Ֆրանսուա առաջնոյն տիպարը կը բերէ : Պատղամի պէս մտիկ կ'ըլլուի և նոյն ինքն օրիորդ Լարօք , աշխարհիս մէջ առարկայի մը համար որքան որ հետաքրքրութիւն ու հիացում կրնայ նէ զգալ այս մարդուն կ'ընծայէ : Բայց որովհետև լսած կատակներուս՝ զորս ծափով կ'ընդունէին , մեծ մասը տեղական անցքերու և առանին պարագաներու կը վերաբերի , առ այժմ անկատար կերպով կրցած եմ այս Երմօրիկեան լեճի տրժէքը կշռել :

Իր բարեկրթութենէ շատ դո՛հ եղայ սակայն , վասն զի ճաշէն ետքը սիկար մը նուիրելով զիս ծխարանը (boudoir à fumer) տալու : Միևնոյն ատեն , հապիւ պատանութենէ ելնող 3-4 երիտասարդներու ալ որ անվրէպ զինքը իբրև բարեձևութեան ու ընտիր անօրէնութեանց օրինակ կը նկատեն՝ հիւրամեծարութիւն կ'ընէր :

— Ապա ուրեմն , Պէվալլան , ըսաւ այս դեռահաս արբանեակներէ մին , արևու քրմուհիէն չես հրաժարիր :

— Երբէք , պատասխանեց Պ. Պէվալլան , տասը ամիս , 'ի հարկին տասը տարի կ'սպասեմ , բայց կամ իմս պիտ' ըլնի անի կամ և ոչ մէկինը :

— Գժրադդ չես , հինգ ստահակ , վարժուհին ալ կ'օղնէ քեզ համբերելու :

— Ականջներդ , չէ նէ լեզուդ պէտք եմ կտրել , Երթուր , վրայ բերաւ կէս ձայնով Պ. Պէվալլան իր խօսակցին մօտեւով ու աբաղափոյթ նշանով մ'իմ ներկայութիւնը ցուցնելով անոր :

Այն ատեն զարմանալի անկարգութեամբ մը , տեղւոյն բոլոր ձիւրուն , շուներուն և տիկնանց խօսքը եղաւ խառն 'ի խառն : Փափաքելի է որ կանայք իրենց կենաց մէջ անգամ մը գոնէ , զաղտնապէս ունկնդիր ըլնէին էրիկ մարդերու այն խօսակցութիւններէ մէկուն որ զուարթ և պարարտ ճաշի մը հետևող առաջին զեղման մէջ տեղի կ'ունենայ : Ահա այս խօսակցութեանց մէջ մեր բարուց ինչ աստիճանի փափուկ և մեր որչափ վստահութեան արժանի ըլնելը կրնային հասկընալ անոնք ճշդիւ :

Չեմ ուզեր բնաւ պարկեշտութիւն ծախել , այլ լսած խօսակցու-

թիւնս ամենէ ազատ կատակի սահմանէն անցնելու ծանր թերութիւնը ունէր ըստ իս : Անցողակի ամեն բանի կը դպնար , ամեն ինչ կը խճրճէր թեթևակի և վերջապէս ընդհանուր այսպանքի երևոյթը կ'ստանար : Երգ՝ իմ դաստիարակութիւնը որ խիստ անկատար է ու թերի անշուշտ , սրտիս մէջ ձգած է յարգանաց քանքար մը որ նաև զուարթութեան ամենէ գերագոյն աստիճանին մէջ պէտք է պահել :

Բայց այսօր Ֆրանսայի մէջ մեր նոր Ամբրիկառ ունինք որ եթէ խմելէ ետքը քիչ մը շհայճոյէ , դո՛հ չըլնիր , Ապագային յայտն եղող այս սիրուն անզգամները որ հայր ու մայր ունեցած չեն , հայրենիք չունին , և Աստուած չեն ճանչեր բնաւ , կարծես թէ անսիրտ ու անհոգի մեքենայի մը ծնունդ են որ զիպուածով զանոնք այս աշխարհիս վրայ դրած է որպէս զի անոր ամենաչնչին զարդն ըլնին :

Ձերկնյընեմ , Պ. Պէվալլանը որ այս անմօրօս պակշտաներու շնահան ուսուցիչն ըլնելու չվախնար , չսիրեցի և ես ալ կարծեմ չսիրուեցայ իրմէ , ուստի քիչ մը յոգնած եմ ըսելով օթոցս քաշուեցայ :

Խնդրանացս վրայ ձերուկու Ալէն լապտերով մը զինուեցաւ և շերոցին մէջէն ինձ սահմանուած բնակարանը առաջնորդեց զիս : Քանի մը վայրկեան քալելէ ետքը , քարավազի մը վրայ ձգուած փայտաշէն կամուրջէ մ'անցանք և գտնուեցանք հաստ և աղեղնաձև դռան մ'առջև որոս վրայ տեսակ մը դիտանոց մ'և երկու աշտարակներ կը բարձրանային :

Հին դղեկիս մուտքը այս էր :

Այս հողատիրական բեկորին բոլորտիքը դարևոր կաղնիներ և եղեիններ խորհրդաւոր շրջապատ մը կը կազմեն որ խորին ամայութեան տեսք մը կ'ընծայէ իրեն : Ահա այս աւերակին մէջ պիտի բնակիմ :

Օթարանս որ պարսիկ կտաւով մաքուր շտկուած , երեք սենեկէ կը բաղկանայ , դռան վրայէ մէկ աշտարակէ մինչև միւսը կ'երկնայ : Այս տխուր կենցաղը անախորժ չէ ինձ ու վիճակիս կը յարմարի :

Ծեր Ալէնէ բաժնուելուս պէս՝ որ քիչ մը շատախօս է բնութեամբ , սկսայ զրել այս կարևոր օրուանս պատմութիւնը , մերթընդ մերթ աշխատութիւնս ընդհատելով պատահաններու տակէ սահող քարավազին անոյշկեկ մրմունջը և մօտակայ անտառներու

մէջ առանդական բուին, իր տխուր սիրահարութիւնները հռչակող ձայնը մտիկ ընելու համար :



Ի Յուշիս

Արդ՝ ժամանակն եկաւ որ իմ անձնական և ներքին կեանքի թեւը՝ որ երկու ամէն հետէ պաշտօնիս բազմազարդ պարտաւորութեանց մէջ կորսուեցաւ քիչ մը, նորէն ձեռք առնում :

Հոս հասնելուս երկրորդ օրը, բնակարանիս մէջ Հիւվար աղբարին, (նախորդս այսպէս կ'կոչուի եղեր) թուղթերն ու անարակները քննելէ ետքը, գրեակը ճաշելու պացի ուր առջի օրուան հիւրերու միայն մէկ մասը դտայ :

Տիկին Լարօք, որ իր սկեսրայրին վատառողջութեամբը յաւիտենապէս զիւղական կեանքի գատապարտութիւ յառաջ երկար ատեն Բարիզ ապրած է, նաև իր մնութեան մէջ հաւատարմօրէն կը պահէ վայելչատէր, թեթև ու բարձր իրերու ճաշակը որոնց հայելի եղած էր Պար փողոցի առուակը, տիկին տը Սթաւլի փաթոյթի օրովը :

Սակէ զատ Էւրոպայի գլխաւոր քաղաքներու մեծ մասը ժուռ եկած կ'երևի և այն տեղերէ հետը բերած է այնպիսի դրական թուրքներ որոնք Բարիզուհի մը բանասիրութեան և հմտութեան հասարակ չափը կ'զանդանեն : Բազմաթիւ հանդէսներու լրագիրներ կ'ըստանայ և որքան որ կարելի է հետուէ իսկ՝ կ'աշխատի հետեւելու այն նրբացեալ քաղաքակրթութեան՝ որու աւելի կամ նուազ խաբէական ծաղիկներն ու պտուղներն եղած են թատրոնները, թանգարաններն և մեր նորատիպ գրեանքը :

Ճաշի վրայ, խօսքը նոր օքտօբրէ մը վրայ եկաւ և այս մասին տիկին Լարօք հարցում մ'ըրաւ Պ. Պէվալլանի որ չկրցաւ պատասխան տալ, թէև ըստ իւր ասից, միշտ աչքին ու ոտքին մէկը, Պուլվար տեղ իթալիէնի վրայ է : Ան ատեն տիկին Լարօք ինծի դար-

ձաւ, այնպիսի մտախորհ եղանակաւ մ'որ կը յայտնէր թէ իր սեսուշը այս բաներու քիչ հմուտ կը կարծէ : Բայց զժբազդարար ես ալ միայն այս բաներու անդեակ եմ :

Իտալիա եղած ատենս ըսած էի որ նոյն օքտօբրէ՝ Քրանսայի մէջ նոր խաղացեր էին : Նոյն իսկ իմ՝ պատասխաններու զգուշաւորութիւնը տիկին Լարօքի հետաքրքրութիւնը զրգուեց և սկսաւ նա իր հարցումներովը զիս ստիպել ու քիչ մ'եաքն ալ հաճեցաւ իր ճամբորդութեանց յիշատակները, տպաւորութիւնները ու եռանդը ինքն ալ պատմել : Չերկնցընմ, երկու ընկերներու պէս սկսանք Էւրոպայի ամենէ անուանի պատկերազարդ ճեմելիքներն ու թատրոնները պլտրտիլ և սեղանէ ելնելու ատեն՝ մեր խօսակցութիւնը այնքան տաքցած էր որ խօսակիցս անոր ընթացքը չընդհատելու համար թեւս մտաւ անզգուշաբար :

Սրահակը դայկնը մեր համակրական հաղորդակցութիւնը շարունակելու և տիկին Լարօք ես քան զես կը մտնար այն բարեխնամ պաշտպանութեան եղանակը զոր մինչև այն ժամը ինծի հետ խօսելու ատեն գործածելովը զիս բաւական վիրաւորած էր :

Մինչ այս մինչ այն, խոստովանեցաւ որ թատրոնին ստատնան սաստիկ կը տանջէր զիւրը և թէ ՚ի մտի ունէր զգեակը կատակերդ մը (comedie) խաղցընել տալ : Այս գրօսանքի կարգադրութեան վրայ խորհուրդ հարցուց ինծի, ես ալ Բարիզ ու Բէթէրպուրի տեսած քանի մը մասնաւոր տեսարաններու մանր պարագաներու վրայ խօսեցայ, յետոյ ինծի եղած բարի ընդունելութիւնը չուզելով եղծանել, յանկարծ ոտք ելայ ըսելով որ իմ պաշտօնս կ'ուզէի սկսիլ անյապաղ, զղեկէն Չփարսախ հեռի գտնուող ագարակի մը զննութիւնն ընելով :

Այս յայտարարութեան վրայ տիկին Լարօք վրդովեցաւ, երեսնայեցաւ, սրահ մը յուզուեցաւ իր բարձիկներու մէջ, ՚ի վերջէ կէս ձայնով ըսաւ :

— Ա՛հ, ինչ կ'ըլնի, հիմակ թող սուէք ատիկա :

Եւ տեսնելով սր կ'ընդդիմանայի,

— Բայց տէր Աստուած, կրկնեց զուարթ շփոթով մը, ճամբաները ստակալի են անոր համար կ'ըսեմ, . . . զոնէ գարնան սպասեցէք :

— Չէ, տիկին, ըսի ծիծաղելով, վայրկեան մը չեմ սպասեր, քանի որ տեսուչ եմ պէտք եմ տեսչութիւնս ընել:

— Տիկին, ըսաւ ծերուկն Ալէն որ հոն կը գտնուէր, պարոն Օտիօյի համար Հիվար աղբարին սայլակը կրնայ լծուիլ, որ թէև պտուտակաւոր չէ բայց աւելի դիմացկուն է:

Տիկին Լարօք նայուածքով մը շանթահարեց զխեղճ Ալէն որ Հիվար աղբարին սայլակը առաջարկելու կը համարձակէր ինծի պէս տեսուչի մը որ Հէլէն մեծ դքսուհոյն տունը թատրական ներկայացումի մը հանդիսատես եղած էր:

— Միթէ ամերիկեան կառքը՝ ճամբէն չկրնար անցնիլ, հարցոց:

— Ամերիկեանը մի, տիկին, ստուգիւ չկրնար, չէ, անհնար է որ անցնի, կամ եթէ անցնի անպամ, ամբողջ չկրնար անցնիլ. . . և դարձեալ չեմ կարծեր որ անցնի, ըսաւ Ալէն:

Բողոքեցի որ կրնայի ոտքով երթալ:

— Չէ, չէ, անկարելի է, չեմ ուզեր: Անցիք նայինք. . . կեցիք, հոս Ծ-Յ հաս հեծնելիք ձիեր ունինք որ գործ մը չունին. . . բայց հաւանականաբար ձի չէք հեծներ:

— Ներում կը խնդրեմ, տիկին, բայց իրաւ որ անօդուտ է, կ'երթամ. . .

— Ալէն, պարոնին համար ձի մը թամբել տուր. . . որը պատրաստ է, դուն ըսէ, Վարդարիտ:

— Բրօզէրբինը տուէր, մրմուաց Պ. տը Պէվալլան քթին տակէն խնդալով:

— Չէ, չէ, Բրօզէրբինը չըլնիր, պողաց աշխուժիւ օրիորդ Վարդարիտ:

— Ինչո՞ւ չէ, օրիորդ, ըսի ան ատեն:

— Որովհետև դձեղ վար կը նետէ, պատասխանեց պարզապէս նորասի աղջիկը:

— Վայ, իրան, և ինչպէս. . . ներեցէք, կրնամ հարցընել ձեզ օրիորդ, եթէ այդ կենդանին դուք կը հեծնէք:

— Այո, պարոն, բայց շատ դժուարութեամբ:

— Ուրեմն, կարելի է նուազ դժուարութիւն կրէք եթէ ես մէկ

*Ցասակ մը կառք որու նորելը Ամերիկայէն եկած է:

Ծ. Թ.

երկու անգամ զայն հեծնեմ: Ուտի Բրօզէրբինը թամբել տուր, Ալէն:

Օրիորդ Վարդարիտ իր սև յօնքը պոտոնց և նստաւ ձեռքով նշան մ'ընելով իբր թէ իր նախատեսած մօտայնուտ աղէտըին պատասխանատուութիւնը մերժելու համար:

— Թէ որ իր թամի պէտք ունիք, ձեզի համար զոյգ մ'ունիմպատրաստ, ըսաւ անատեն Պ. Պէվալլան, որ անշուշտ կը կարծէր թէ խօսքէս պիտի դառնամ:

Օրիորդ Վարդարիտի առ բարեմիտ ազատորդին նետած յանդիմանական նայուածքը չտեսնելու զարնելով իր իր թամանները ընդունեցայ: Հինգ վայրկեան ետքը, ոտից անկարգ տրոփիւններ կը ծախուցանէին Բրօզէրբինի մերձեանալը որ մանաւոր պարտիկին սանդուխներէ մէկուն տակը կը բերէին բաւական դժուարութեամբ: Յիշենք անյողակի որ շատ գեղեցիկ արարիտի պիտակ մ'էր այն ձեքարին նման սև:

Իսկոյն դեմնայարկի սանդուխէն իջայ: Պ. Պէվալլանի առաջնորդութեամբ քանի մը հողի կարծեմ մարդասիրութենէ շարժեալ, ինձ հետեւեցան տրահարթին վրայ և մի և նոյն ատեն ծերերու և կանանց համար սրահակի երեք պատուհանները բացուեցան:

Բողոր այս մեծարանքէն կը հրաժարէի սիրով, բայց՝ վերջապէս հարկ եղաւ համակերպիլ, այլուր մեծ անհանդատութիւն մը չունէի արկածին հետեւանայք վրայ, վասն զի նորնձայ տեսուչ՝ բայց շատ հին ձիավար մ'եմ: Տղայութեանս ատեն հազիւ ոտք ելեր էի երբ հայրս ձիու մը վրայ աշտանակած էր զիս 'ի մեծ յուսահատութիւն մօրս և անկէ ետքն ալ ամեն ինչամ տարած էր զիս իր հաւասարն ընելու այնպիսի արուեստի մը մէջ, որ զամենքը կը գերազանցէր: Այս մասին դատարարակութիւնս մինչև վերջին ծօցրը հասցուցած էր ձիավարժարան կրթութիւններս աւելի հեշտիւ կատարելու համար մեր ընտանեկան հին ու ծանր զրահները երբեմն հաղցընելով ինծի:

Սակայն Բրօզէրբին թողուց որ իր սանձերը շտկեմ նոյն իսկ պարանոցին դպնամ, առանց բարկութեան նշան մը տալու, բայց ոտքիս ասպատանին վրայ ծանրանալը զզայցածին պէս, յանկարծ մէկ կողմ նետուեցաւ, սանդուխը զարդարող մարմարայ անօթներու

8

վրայէ երեք չորս փառաւոր արքայիներ արձակելով . ետքը երկու ռոսքերուն վրայ ելաւ կանգնեցաւ խիստ շեղով, առջևի ոտքերովը օգջ ծեծեց ու վերջապէս հանդարտեցաւ դողդղալով :

— Հեծնելը դիւրին չէ, ըսաւ աչքը քթթեղով, ակոտին մանչը :

— Ար տեսնեմ, տղաս, բայց զինքը շատ պիտի զարմացընեմ հիմակ, անհոգ եղիբ, ըսի առանց ասպատանին դպնալու անմիջապէս վրան նետուելով ու մինչդեռ Բրօզէրքին գլուխը եկածին վրայ կը մտածէր ես հաստատուն կերպով տեղաւորուեցայ վրան :

Վայրկեան մ'ետքը, որսական արշաւանքով, շագանակինիներու ծառուղւոյն մէջ աներեւոյթ կ'ըլնէինք քանի մը ծափահարութեանց ձայնիւ որու նշանը Պ. Պէվալլան տուած էր լրջօրէն :

Սյս դէպքը թէև աննշան՝ բայց ինչպէս որ նոյն իրիկունն իսկ նշմարեցի ամենուն կերպարանքէն, իրենց համարման մէջ վարկս աւելցուց : Գաստիարակութեան շնորհիւ ձեռք ձգած ասոր նման քանի մը տաղանդներովս բոլոր փափաքած կարեորութիւնս ձեռք ձգեցի՛ կարևորութիւն որ իմ անձնական արժանապատուութիւնը պիտի երաշխաւորէ :

Սակէ զատ իմ համեստ պաշտօնին չհամաձայնող դերմը յափշտակելու համար, գղեկին մէջ ինձ եղած ինքնայօժար մեծարանքն ու ակնածութիւնը չեմ եղծիր բնաւ : Առանց յայտնապէս պատշաճութեանց դէմ վարուելու, կարելի եղածին չափ յաճախ, աշտարակին մէջ կը գոցուիմ, մէկ խօսքով ճիշդ իմ արժանաւոր տեղը կը կենամ որպէս զի իրենք չտեսնուին զիս հոն կեցընելու :

Գաչէս քանի մ'օր ետքը ներկայ էի այն հանդիսաւոր ճաշերէ մէկուն, որ այս եղանակին մէջ զրեթէ հոս ամենօրեայ բաներ են, երբ լսեցի որ գղեկուհի տիկնոջ աջ կողմը նստող մօտակայ քաղքին գաւառապետը, հարցական շեշտով մ'անունս կ'արաստաներ :

Տիկին Վարօք՝ որ ստէպ այսպիսի մտքի՝ ցրտմներու ենթակայ է, մոռցաւ որ իրմէ հեռի չէի գտնուեր որով կամայ ակամայ իր տուած պատասխանէն բաւ մը չկորուսի :

— Աստուած իմ, ատոր խօսքը մ'ընէք ինձ, այստեղ անըմբռնելի գաղանիք մը կայ . . . : Մենք կը կարծենք որ ծպտեալ իշխանազուն մ'է նա . . . սա ժամուս՝ շատեր կան որ աշխարհք կը պտրտին . . . ասիկա բոլոր երևակայելի տաղանդներն ունի, ձի

կը հեծնէ, դաշնակ կը զարնէ, կ'գծադրէ և այս ամենը կ'ընէ կատարեալ կերպով . . . խօսքը մէջերնիս, սիրելիք իմ գաւառապետ կը հաւանիմ որ խիստ համբակ տեսուչ մ'է բայց շատ ակորժելի մարդ մ'է յիրաւի :

Գաւառապետը որ ինքն ալ շատ ակորժելի մարդ մ'է կամ ըլնել կը կարծէ (որ իր անձնական գոհութեանը համար միևնոյն բանը ըսել է) իր մտեղ ձեռքերով փառաւոր կրկնամօրուսը շոյելով շնորհալի կերպով մը պատասխանեց որ, գղեկիս մէջ շատ ազուոր աչքեր գտնուելուն շատ գաղանիքներ կը մեկնուէին, թէ կը վախնար որ տեսուչը փեսայութեան հետամուտ մը չըլնի, թէ մէրջ խեղճութեան օրինաւոր հայրն էր և երեք շնորհաց ընական տեսուչը . . . Յետոյ խօսուածքին ձևը մէկէն փոխելով,

— Սակայն, տիկին, աւելցուց, եթէ այս մարդուն նկատմամբ ամենափոքր կասկածս ունիք, վաղը հեծելազօրքի գնդապետին զինքը հարցափորձել կ'տամ :

Տիկին Վարօք այս փաղաքշական չափագանց եռանդը մերժելով խօսակցութիւնը ուրիշ նիւթի վրայ դարձաւ, բայց ես շատ վիրաւորուեցայ, չէ թէ գաւառապետէն՝ զոր ընդհակառակը շատ կ'հաւանէի, այլ տիկին Վարօքէ որ իմ մասնաւոր հանդամանացս ծայրայեղ գովեստ մը տալով հանդերձ՝ ըստ բաւականի գոհ չէր երևար պաշտօնական արժանիքէս :

Գլխուածն այնպէս բերաւ որ նոյն իսկ երկրորդ օրը մեծկակ ազարակի մը վարձքը նորոգեմ : Սյս գործը պիտի ըմնար շատ խորամանկ ծեր գեղջուկի մը հետ զոր սակայն կրցեր էի շլայցնել, քանի մը իրաւագիտական բառերով և խոհեմ քաղաքականութեան մը զգուշութիւններով : Մեր պայմանները որոշելէ ետքը, այս մարդը հանդարտութեամբ զրատեղանիս վրայ ոսկիով լի երեք հատ գլանաձև ծրարներ գրաւ :

Թէև այս վճարման նշանակութիւնը չէի հասկընար ամենին, անխոհեմ զարմանք մը չցուցրցի, բայց ծրարները բանալու ատեն՝ անուղղակի կերպով ըրած քանի մը հարցմունքներէս իմացայ որ այս դումարը սակարկութեան առհաւատչեայն կամ պարզեղ կը ներկայացընէր զոր կ'երևի թէ մէն մի վարձքի նորոգման ատեն վարձակաշները սովորութիւն ունին ազարակին տիրոջը տալու :

Իմ նախորդէս գրած Հին դաշնադիրերու մէջ՝ զորս ինձ օրինակ
ըրած էի ես , այս առհասարակայնեան վրայ բնաւ յիշատակութիւն
մը տեսած չըլնելուս՝ զանոնք ուզելը մտքէս անդամ անցուցած չէի :
Գարձեալ նոյն միջոցին այս պարագայէն հետեւութիւն մը չհանեցի ,
բայց երբ այս շնորհաւորի պարզեը տարի տիկին Լարօքի տուի , իր
ցուցըցած ապշութիւնը զիս զարմացուց :

— Աս ինչ է , ըսաւ :

Պարզեին տեսակը բացատրեցի իրեն , բայց չհասկնալով նորէն
կրկնել տուաւ զայն :

— Միթէ ատիկա սովորութիւն է , կրկնեց :

— Այո , տիկին , ամեն անգամ որ նոր վարձք մը կ'ստորագրուի :

— Բայց իմ դիտցածս , երեսուն տարիէ 'ի վեր , տասնէն աւելի
աղբարակի վարձքեր նորոգուեցան . . . ինչպէս կ'ըլնի որ մինչև հի-
մակ բան մ'ըսած չեն ինձ :

— Չգիտեմ , տիկին :

Տիկին Լարօք մտածութեանց անդունդի մը մէջ ընկաւ որու խո-
քը կարելի է Հիվար աղբարին պատկառելի ստուերը տեսաւ , ետքը
քուսերը վեր ըրաւ մեղմիկ , նայուածքը մէյ մը վրաս՝ մէյ մը ոսկե-
կոյտին վրայ ու վերստին վրաս գարձքնելէ ետքը քիչ մը դանդա-
ղիլ ցուցուց : Աերջպէս իր թիկնաթուին մէջ երկնցաւ խորունկ
հառաչելով ու այնպիսի պարզութեամբ մ'որմէ շնորհակալ եղայ ,
ըսաւ :

— Բաջ է , սարոն , շնորհակալ եմ :

Այս հասա ուղղասիրութեան նշանը , որու համար տիկին Լա-
րօք զիս շնորհաւորելու աղնուութիւնը ունեցաւ , ոչ նուազ մեծ
գաղափար մը տուաւ անոր իր տեսչին գործ օնութեան և առարկնու-
թեանց վրայ ինչպէս որ քանի մ'օրէն կ'ըլլայ գատել : Իր աղջիկը
հիւսիսային բեւեռը եղած ճամբորդութեան մը պատմութիւնը կը
կարդար ուր այնպիսի տարօրինակ թուում մը կը յիշուէր որ չթուի ,

— Այն , ըսաւ տիկին Լարօք , ուրեմն իմ տեսչիս կը նմանի , ո-
րո՞ւ ձեռքէն ստակ մը անդամ չթուչիր :

Այն ժամանակէն 'ի վեր կը յուսամ հաստատապէս , որ ընդու-

* Բնագիրէն ստիպուեցանք քիչ շեղիլ հոս , որովհետև այնպիսի բառա-
բաղ մը կայ որ հայերէն անկարելի է թարգմանել :

նամ պաշտօնիս պարտաւորութիւնները կատարելու համար տարած
սաստիկ ինամբովս աւելի գոհ են ինէ :

Երբ մօտերս , քոյրս գրկելու համար Բարիզ գացի , Պ. Լօպօ-
բէն եռանդուն զգացուածով մը շնորհակալ եղաւ ինէ , արդարացը-
նելուս համար այն խօսամունքները որ ինքը ինձ նկատմամբ տուած
էր :

— Երիպիր , Մաքսիմ , ըսաւ , Հէլէնը պիտի օժտենք , խեղճ
մանուկը գրեթէ բանէ մը տեղեկութիւն պիտի չունենայ : Իսկ դուն ,
բարեկամդ իմ , հոգ մ'ըներ ամենին , թէ որ այս աշխարհիս մէջ
բան մը կայ որ ամենէ աւելի կը նմանի երանութեան , դուն ներսդ
ունիս զայն և փառք Աստուծոյ կը անսնեմ որ միշտ պիտ' ունենաս ,
այսինքն խղճի խաղաղութիւնը և բւթրովին իր պարտաւորութեանց
նուիրեալ հոգւոյ մ'առնական հանդարտութիւնը :

Անշուշտ այս ծերունին իրաւունք ունի : Հանգարա եմ իրաւ , տա-
կայն ինքզինքս ամենին երջախիկ չեմ զգար , հոգւոյս մէջ՝ որ զու-
հողութեանց խիստ վայելքներու համար դեռ բաւական հասուն չէ
երիտասարդ և յուսահատ շարժումներ կ'ըլլամ : Աեանքս որ աւելի
սիրասուն և տկար կեանքի մը ուխտուած և նուիրուած է , ալ ին-
ծի չվերաբերիր , ապագայ չունի և յստիտենապէս դոցուած մենա-
բանի մը մէջ է : Բայց հոգ չէ , թող քոյրս երջանիկ ըլնի : Տա-
րիները ինձի համար արդէն կը մօտին , երանի թէ շուտ գային : Աբ
փափաքիմ որ գտն վաճառ զի գուցէ անոնց ձիւն ծերութիւնը արիւ-
թիւնս աւելցընէ :

Ասկէ զատ չեմ կրնար գանգատիլ այնպիսի վիճակէ մը որ ամենը
մէկ առնելով , իմ ամենէ յուր վախերը սպարսպ հանեց և լաւա-
բոյն յոյսերը իսկ կը զանցանէ : Իմ աշխատանքը , մօտակայ հողա-
բաժինները ըրած ճամբորդութիւններս և առանձնասիրութիւնս զիս
շատ անգամ հեռի կը պահեն զղեկէն՝ որու աղմկալի ակումբներէ
կը խուսիմ մանաւանդ :

Արեւի է այս զգուշարութեանէ և որ այն բարեկամական ըն-
դունելութիւնը կը գտնեմ հօն : Մանաւորապէս տիկին Լարօք
ճշմարիտ գորով մը կը ցուցընէ ինձ :

Չիս խորհրդակից ըրած է իր ինքնուիրութեան , բանաստեղծա-
կան անձնուրացութեան և աղքատութեան համար ունեցած անկեղծ

ջնորդը որ իբրև մսկոտ (frileuse) գաղթածին ըրած ազգի ազգի գգուշութեանց հետ հակասատիեր մը կը կաղմնն ։

Երբեմն կը նախանձի այն քօշաներէ (bohémienne) որ իրենց զաւակները շալկած ճամբաներու վրայ խախուտ սայլակ մը կը քաշեն և իրենց կերակուրը կ'իփեն մայրաններու ետին , երբեմն կոյսերու կամ բանակի զինեպանուհիներու զխցաղնական աշխատանքին կը ցանկայ ։ Ի վերջէ իր ոչորմած հօգի ամուսին՝ Պ. Լարօքէ կը դանդատի անդու որ քաջառողջ ընելուն կարող եղած չէր փորձով ցուցնել իր հիւանդասպահի հանգամանքները զորս իր սրտին մէջ կ'զգար լիօրէն ։ Բայց և այնպէս այս օրերս իր թիկնաթուփն բուրտիքը , պահանջողի դիտանոցի մը ձեով պատեր հանելու խորհուրդն յղացաւ , ինքզինքը հօղմորձանքէ (vents coulis) պահպանելու համար ։

Զինքը անցեալ առտու այս ամպհովանիի ներքև փառաորապէս տեղաւորուած դոսայ ուր բաւական համբերութեամբ իր նահատակութեանը կ'սպասէ ։

Գղեկին միւս բնակիչներէ ալ ոչ նուազ դօհ եմ ։ Օրիորդ Մարգարիտ որ Նուպիացի սփէնքսի մը նման գողցես անձանօթ երազի մը մէջ ընկղմած է յարածամ , իմ սիրած եղանակները նուաղելու կը դիջանի մարդասէր բարութեամբ մը ։ Բժեշկաբանի հիւանալի ձայն մ'ունի նա զօր խիստ վարպետութեամբ կը գործածէ , այլ այնպիսի անհոգութեամբ և սառնութեամբ մը որ կարծես թէ դիտամբ կ'ընէ ։ Իրօք երբեմն կը պատահի որ մտքի զբառմով եռանդուն ձայներ կը փակցնեն շուրթերէն , բայց խսկոյն սառնալի ճշդութեան մը սահմաններու մէջ մանելու կը փութայ , կերպիւ իր իւր բնութիւնը կամ դերը մտնալուն համար ։

Յաջողեցայ նաև Պ. Լարօքի բարեկամութիւնը ձեռք ձգելու հետեւ քանի մը խաղ քիւիէն խաղալով զորս կորուսելու հեշտ քաղաքավարութիւնը ՚ի գործ դրի ։ Խեղճ ձերուկը իր տկար աչքերով երբեմն վրաս այնպիսի ուշադիր նայուածքներ կը սեւեռէ որ յիրակի զարմանալի են , անասն կարծես թէ այս յոգնած յիշողութեան , ամպերու մէջ ուր ամբողջ դարի մը շփոթ պատկերները կը ծածանին անցելոյն մի տեսիլը կամ ցնորական նմանութիւն մը կ'զարթնու կիսօրին ։ Բայց որ զարմանալին է կորուսած ստակս ետ տալ կ'ու-

ղէին Լարօքեանք ։ Կերեկի թէ ալեոր նաւապետին սովորական խաղընկերը՝ (partenaire) տիկին Օպրի , յօժարութեամբ կանոնաւորապէս ետ կ'առնու իր կորուսածը թէև ստեպ կը շահի զհէնը՝ որու հետ աղմկալի կռիւներ կ'ունենայ այս սարաղաներու մէջ ։

Ամենին համակրութիւն չեմ զգար այս կնոջ համար զօր Պ. Լարօքէն շատ աշուուութեամբ դատած էր զանի միայն դէպ կոչելով , բայց և այնպէս տանտետեալը սիրոյն համար իր բարեկամութիւն ալ շահելու ջանացի և յաջողեցայ , երբեմն իր ներկայ վիճակի վրայ ըրած ցաւալի ողբերը և երբեմն իր անցեալ պերճութեան , արծաթեղէններու , կարասեաց , տանթեղներուն և զոյգ զոյգ ձեռնոյններուն ազդու նկարագիրները համբերութեամբ մտիկ ընելով ։

Պէտք եմ խօստովանիլ որ կորուսած ինչքս արհամարհելու համար պատուական գպրոցի մը մէջ եմ ։ Այս տան մէջ ամենքն ալ իրենց ձեւերով և խօսուածքով հարստութեան արհամարհը կը քարոզեն ինձ խիստ լեզուանութեամբ ։

Առաջինն է տիկին Օպրի , որ կրնամ համեմատել այն անաւօթ որկորայներու հետ որոնց զգուելի աչքածակութիւնը խորթակի կը կտրէ և իր զոված կերակուրներէ կը ձանձրացնեն , յետոյ այս ձերուկին որ իր միլիոններուն վրայ կը մարի ցաւաղին , ինչպէս Յօք երանելին իր աղբերուն վրայ , այս պատուական՝ այլ յափրած ու վիպական կինը , որ իր տաղտիւլի հարստութեան մէջ , աղքատութեան արդիւնալ պտուղը կ'երազէ , հուսկ յետոյ սէյ ու բարձրավիզ Մարգարիտը որ փշէ պսակի մը պէս կը կրէ այն հոյակապ գեղեցկութեան և հարստութեան թաղը որով իր ձակատը ճղմեր է Աստուած ։

Զարմանալի սղջիկ ։

Օդը գեղեցիկ եղած ատեն Կրեթէ ամեն օր դիտանոցիս պատուհաններու տակէն անցնիլը կը տեսնեմ . գլխի ծանր շարժումով մը Կրե ի սղջուէն որով իր թաղեայ գլխարկին փետուրը ալեծուփ կը յուզի և ետքը հին գղեկին աւերակներու մէջէ անցնող հովանաւոր արահետին մէջ կ'հեռանայ ծանրաքայլ ։

Սովորաբար ձեր Մէլէնը կը հետեի իրեն և երբեմն իր միակ ընկերը հաւատարիմ ու ահագնատեսիլ Մերլէնն է որ մտախոհ աբջի մը պէս , իր շքեղ տիրուհւոյն քովէն կ'ընթանայ ։

Մարդարիտ այսպէս շրջակայ երկիրներու մէջ ողորմասիրական արկածներ կը փնտռէ, պաշտպանի պէտք չունի, վասն զի Յ մընն հեռաւորութեամբ չկայ խզիկ մը որ զինքը չճանչէ ու չպաշտէ բա՝ բերար կիսի նման: Իր խօսքը ընելու ասեն զեղայցիները պարզապէս քա՛ջէջ կը կոչեն այն թագաւորի ազջիկներէ մէկուն վրայ խօսելու պէս, որոնցմով իրենց պատմութիւնները զարգարուած են և սրոնց գեղեցիկութիւնը, կարողութիւնը և գաղանիքը կը կարծեն թէ օրիորդ Լարօք ունի:

Ար մտածեմ սակայն թէ միշտ իր դէմքը ծածկող սև մտախոհ հովիտներ, իր նայուածքի կասկածոտ ու սէզ խտտութիւնը և խօսուածքին դառն ցամաքութիւնը ինչէն է արդեօք: Ար հարցընեմ իւրովի թէ արդեօք ասոնք, այլանդակ ու խտուն բնութեան մը նշանները, թէ գաղանի մտատանջութեան մը, վշտի, վախի կամ այս ազնիւ սիրտը կրծող սիրոյ յայտարար հանգամանքներն են: Մարդ սրբան ալ անտարբեր ընի ինդրոյն մէջ, այնպիսի հրապուրիչ անձի մը դիմացը անկարելի է որ իր հետաքրքրութիւնը կարենայ բո՛ւ լորովին զսպել:

Երէկ իրիկուն, մինչդեռ ձերուսին Ալէն, որու սիրելին եմ, իմ մենաւորիկ ընթրիքս կը բերէր,

— Է՛, Ալէն, ըսի, օգը այսօր գեղեցիկ էր: Պարտելու գա՛ցիք:

- Այո՛, պարոն, այս առտու օրիորդին հետ:
- Վայ, իրա՛ւ:
- Անցնելիս տեսաք հրամանքնիդ, այնպէս չէ:
- Կարելի է, Ալէն: Այո՛, երբեմն անցնելիք կը տեսնեմ, . . . ձիուն վրայ շնորհքով ես, Ալէն:
- Շատ աղնիւ էք, պարոն: Օրիորդն ինէ շնորհալի է:
- Խիստ աղւոր ազջիկ մ'է՛ նա:
- Օ՛, կատարելապէս, ներսով դրսով, պարոն, իր տիկին մօրք նման: Հրամանքնուդ բան մը պիտի ըսեմ: Գիտէի որ այս կալուածքը երբեմն Քասթէննէր կոմսինն էր որու ծառայելու պատին ունէի: Ե՛քք Լարօքեան ընտանիքը դղի կը գնոյ առաւ, կը խտտովանիմ որ քիչ մը սիրտս ելաւ և տան մէջ մնալու գեղեցեցայ: Ազնուականուէս թիւնը յարգելով մեծցած ըլնելուս՝ ազատոհմիկ մարդերու (gens

sans naissance) ծառայել դժուարս կը գար: Անշուշտ հրամանքնիդ ալ կրթած էք զիտել որ մասնաւոր հաճոյք մը կ'զգամ ձեզ ծառայելու, որովհետև ազատանիի հովմը կը գտնեմ վրանիդ: Միթէ քաջ ապահով էք որ ազնուական չէք, պարոն:

— Ատինամ՝ ապահով եմ, խեղճ Ալէնս:

— Բայց, ես ալ այդ ըսել կ'ուզէի հրամանքնուդ, կրկնեց Ալէն շնորհքով մը խոնարհելով, այս տիկնանց ծառայելով, սորվեցայ որ զգացումներու ազնուութիւնը միւսէ՛ և մասնաւորապէս, Քասթէննէր կոմսին ազնուութեանն նախադաս է, որ իր մարդիկը ձեռնելու թերութիւնն ունէր: Սակայն մեզք, պարոն, որ օրիորդը մեծանուն ազատանիի մը հետ չկրնար ամուսնանալ: Եթէ աս ալ ըլնէր, ալ բան մը պիտի չպակսէր իր կատարելութեանն:

— Բայց, Ալէն, կարծեմ թէ այդ բանը միայն իրմէ կախում ունի:

— Եթէ Պ. Պէվալլանի խօսքը ընել կ'ուզէք, իրաւ միայն իրմէ կախում ունի ինդրը, վասն զի վեց ամսէ առելի է հիմա որ զանի կնութեան ուղեց: Տիկինը բոլորովին հակառակ չէր երեւեր, և սառուցիւ Պ. Պէվալլան՝ Լարօքեաններէ ետքը, երկրին ամենէ հարուստն է, այլ օրիորդը առանց իր միտքը որոշակի յայտնելու, մտածելու ժամանակ ուղեց:

— Բայց եթէ զՊ. Պէվալլան կը սիրէ նա ու հետը կրնայ ամուսնանալ երբ որ ուզէ, ինչո՞ւ այնքան ախտը և մտազբաղ է յարածամ:

— Ատ իրաւ է, պարոն, որ երկու երեք տարիէ 'ի վեր օրիորդը բոլորովին փոխուեցաւ: 'Նախ՝ զուարթութեան կողմէ թռչնիկ մ'էր, հիմա կործեա թէ զինքը վշտայնող բան մը կայ, այլ բոլոր յարգանքս, չեմ կարծեր որ այդ պարոնին համար սեր մ'ըլնի պատճառը:

— Կարծեմ դու ինքք, բարի Ալէն, շատ շեւ սիրեր զՊ. Պէվալլան: Շատ աղնիւ տոհմէ է սակայն . . .

— Այդ չարդիւեր, պարոն, որ անառակ մէկը ըլնի և իր ժաւ մանակը տեղոյս ազջիկները դիտէ հանելով անցընէ: Եւ եթէ առ շարժութիւն ընէք կրնաք տեսնել որ դիւկին մէջ տիրապետելու կը փախարի հիմակուրնէ:

Սակաւատե լուծենէ մ'ետք Ալէն շարունակեց :
 — Մեղք որ հրամանքնիդ գոնէ հարիւր հազար ֆրանքի չափ ե-
 կամուտ մը չունիք :
 — Եւ ինչո՞ւ համար , Ալէն :
 — Անոր համար , ըստ Ալէն մտախորհ եղանակաւ մը գլուխը օ-
 րելով :

25 Յուլիս

Անցեալ ամսոյ շրջանին մէջ մէկ բարեկամուհի և կարծեմ՝
 երկու թշնամի շահեցայ :

Թշնամիներս են , օրիորդ Մարգարիտ և օրիորդ Հէլուէն , իսկ բա-
 րեկամուհիս ութսուն և ութը տարեկան օտարդ աղջիկ մ'է , որով
 վախնամ շահը զէնիս չհամապատասխաներ :

Օրիորդ Հէլուէն , որու հետ հաշիւս կարգադրել կ'ուզեմ նախ ,
 ապերախտ և ապաշնորհ աղջիկ մ'է : Այն բանը որ ինքը իբր յան-
 ցանք կը նկատէ , ընդհակառակն պէտք էր իմ պատուաւոր մէկն
 ըլլալը ցուցնել իրեն , այլ կ'երևի թէ , աշխարհիս վրայ դանուող
 այն բազմաթիւ կիներէ մէկն է նա , որոնք պատիւն ու յարգը չեն
 դատեր այն զգացումներու մէջ զորս կը սիրեն որ ուրիշներն ի-
 րենց ու իրենք ալ ուրիշներու ներշնչեն :

Հոս հաստատուելէս 'ի վեր , տեսուչի և վարժուհիի վիճակներու
 տեսակ մը նմանութիւնը , դղեկին մէջ երկուքնուս ալ գրեց չափա-
 ւորութիւնը , մզած էին զիս օրիորդ Հէլուէնի հետ սիրալիբ բարե-
 կամութեան մը յարաբերութիւնները յօդելու : Այս աղջիկներու
 նկատմամբ միշտ ունեցած եմ այն համակրութիւնը որ ըստ իս ի-
 րենց ամուլ պաշտօնը անհաստատ ու անապագայ կեանքը իրենց վրայ
 կը հրաւիրէ :

Ասկէ զատ օրիորդ Հէլուէն , զեղանի է , ուշիմ ու տաղանդա-
 ւոր , և թէև այս ամենը քիչ մը կ'աւրէ իր գնացից աշխուժութեամբ ,
 տենդոս պճնասիրութեամբ ու թեթև իմաստակութեամբ որոնք իր

պաշտօնին սովորական թերութիւններն են , կը խօստովանիմ որ
 յանձն առած ասպետական դերս իր քովը խաղալու դուզնարեայ ար-
 ժանիքն ունէի :

Սակաւ առ սակաւ այս դերը իմ առջև պարտաւորութեան մ'ե-
 լելոյթն առաւ երբ շատ մ'ազգաբար նշաններ նախազգալ տուն
 ինձ , թէ ֆրանսուս առաջնոյն դժագրութեամբ դիշտախչ առիւծ մը
 սանուհւոյս (protegee) բոլորտիքը կը շըջէր :

Այս նենդութիւնը որ Պ. Պէվալլանի յանդուրութեան պատիւ կը
 բերէ , սիրուն ընտանութեան մը զոյներով այնպիսի քաղաքակա-
 նութեամբ և վտահալութեամբ կը յառաջանայ որոնք շատ անուշա-
 գիր և անմեղ նայուածքներ կը խաբեն : Մասնաւորապէս տիկին Լա-
 բօր ու իր աղջիկը աշխարհիս չարութեանց շատ անփորձ և ամեն ի-
 շականութենէ հեռի ըլլալուն՝ կասկածի ստուերն անգամ չունին :

Բայց ես այս անկուշտ սրտակերին (mangeur de coeur) դէմ
 էիստ դայրացայ և իր գիտաւորութիւնները 'ի գերեւ հանելը ինձ
 հաճութիւն մը համարեցի , քանի մը անգամ դարձուցի այն ուշա-
 գրութիւնը որ իր վրայ ձգելու կը տընէր , մանաւանդ ջան 'ի գործ
 դրի օրիորդ Հէլուէնի սրտին մէջ նուազեցընելու այն մենութեան
 ու լքումի դառն զգացումը որ ընդհանրապէս իրեն ընծայուած միտ-
 թարութիւնները ընդունելու պատճառ կ'ընի :

Չգիտեմ որ արդեօք այս անխորհուրդ կուռին մէջ եղբայրական
 պաշտպանութեան մը սահմաններէն անդին անցայ : Չեմ կարծեր
 սակայն , և նոյն իսկ մեր կարճ խօսակցութիւնը որ յանկարծակի մեր
 յարաբերութիւններու ձևը փոխեց , իմ զգուշաւորութեան համար
 նպատաւոր կերպով կը վկայէ գողցես :

Անցեալ շաբթու՝ իրիկուն մը սարահարթին վրայ զով օդ կը
 ծծէինք , օրիորդ Հէլուէն որու առիթ ունեցեր էի նոյն օրը քա-
 նի մասնաւոր նկատումներ ցուցընելու թեւ մտաւ թեթևակի և իր
 նուրբ ու սպիտակ ախաւներով նարնջնիլի ծաղիկ մը խածնելով ,

— Բարեւիրտ էք , պարոն Մարտիմ , ըսաւ ինձ քիչ մը յուզած
 ձայնով :

- Ս'աշխատիմ , օրիորդ , այնպէս ըլնելու :
- Ճշմարիտ բարեկամ մ'էք :
- Այո՞ :

- Բարեկամ մը . . . բայց ի՞նչպէս :
- Ճշմարիտ ըսիք ահա :
- Չիս սիրո՞ղ բարեկամ մը :
- Անշուշտ :
- Շատ :
- Անտարակոյս :
- Այլ տրիփո՞վ :
- Չէ :

Այս միավանկին վրայ զոր խիստ որոշակի արտասանելով հաստատուն նայուածքով մ'ալ պնդեցի, օրիորդ Հէլուէն թափով նարնջենիի ծաղիկը իրմէ հեռի նետելով թեւ ձգեց և այս գծազդ ժամէն 'ի վեր հետս այնպիսի արհամարհով մը կը վարուի որու իրաւամբ արժանի չէի և եթէ նոյն իսկ երկրորդ օրը իմ արկածը տեսակ մը ընդդիմակռօմ մը չունենար, պիտի հաւատայի թէ մէկ սեռէ միւսը, բարեկամական զղացումը ցնորական բան մ'է :

Իրիկունը դիւրը անցնելու գացեր էի : Նոյն առտու քանի մը ընտանիքներ մեկնած էին անկէ տասնևհինգ օրի չափ հոն անցնելէ ետքը, հետևաբար միայն սովորական հիւրերը գտայ, այսինքն ժողովրդապետը, գաւառին հարկահանը, Տէմարէ բժիշկը, հոսկ յետոյ տը Սէն-Քասթ զօրապետն ու իր կինը որ բժիշկին պէս մօտակայ պզտի քաղաքը կը բնակին :

Ներս մտած ատենս, տիկին տը Սէն-Քասթ որ բաւական դեղեցիկ պուոյզ մը բերած կ'երևի իր ամուսնոյն, տիկին Օպրիի հետ ապր խօսակցութեան մը բունուեր էր :

Այս երկու տիկինները իրենց սովորութեան համաաա կատարելապէս կ'յարմարէին և հովուերդական հովիւներու պէս, կարգ ըստ կարգէ հարստութեան աննման քաղցրութիւնները կը հոչակէին այնպիսի լեզուաւ մը ուր ձևի ազնուութիւնը մտքի բարձրութեան կը հաւասարէր :

— Շատ իրաւունք ունիք, տիկին, կ'ըսէր տիկին Օպրի, աշխարհիս մէջ միայն մէկ բան մը կայ, այն է հարուստ ըլնել : Ես ալ հարուստ եղած ատենս, հարուստ չեղողները բոլոր սրտանց կ'արհամարհէի, ուստի հիմակ բոլորովին բնական կը գտնեմ և չեմ, դանդաղաբ եթէ դիս ալ արհամարհեն :

— Ատոր համար չեն արհամարհեր զձեզ, տիկին, անշուշտ չէ, կը պատասխանէր տիկին տը Սէն-Քասթ : Այլ տարակոյս չկայ որ հարուստ և աղքատ ըլնելու մէջ ահագին տարբերութիւն կայ : Ահա զօրապետը փորձով դիտէ, նա որ իր սրէն զատ բան մը չունէր երբ հետն ամուսնացայ և դիտէր որ սուրը ապուռին մէջ եղ չկաթեցըներ, անանկ չէ, տիկին :

— Ոչ, ոչ, ո՛հ, ոչ երբէք, տիկին, դոչեց տիկին Օպրի այս յանդուգն այլարանութեան ծափ զարնելով : Պատին ու փառքը շատ աղքոր բաներ են վէպերու մէջ, այլ լաւագոյն ունիմ լաւ կտոր մը, այնպէս չէ, տիկին :

— Այո, տարակոյս չկայ, տիկին, ես ալ այս առտու հոս գալու աստն այդ կ'ըսէի զօրապետին, այնպէս չէ, զօրապետ :

— Հը՛հ, մրմուսց զօրապետը որ անկիւն մը նստած հէնին հետ թուղթ կը խաղար տրամազին :

— Քեզի հետ ամուսնացած ատենս բան մը չունէիք, կը յուսամ որ ուրանալու միտք չունիս :

— Ահա ըսիր արդէն, մրմնջեց զօրապետը :

— Բայց և այնպէս թէ որ ես չընէի ճամբան ոտքով պիտի երթայիր, զօրապետդ իմ, որ տառապանք մ'է գրեթէ քու վէքքերը ունեցող մէկու մը համար . . . : Բու ունեցած 6 կամ 7000 ֆրանքով կտաք չէիր կրնար ունենալ, բարեկամ . . . : Այսօր, տիկին, այս կ'ըրուցէի իրեն, մեր նոր բերել տուած կառքին առթիւ, որ անդիի ծայր դիւրասահ է : Բայց իրաւ է որ, տիկին, զինն ալ սուղ է, 4000 ֆրանք համրեցի :

— Անշուշտ, տիկին : Իմ հանդիսաւոր (de gala) կտորս 5000 ֆրանքի էր, ոտքի համար առած ընձենիս ալ մէկտեղ հաշուելով որ 500 ֆրանք կ'արժէր :

— Ես, յարեց տիկին ար Սէն-Քասթ, քիչ մը մտածելու ստիպուեցայ, վասն զի այս օրերս սրահակիս կահն ու կարասին նորեցի և միայն դորդ ու զարգի համար 1500 ֆրանք մտխեցի : Պիտ' ըսէք որ գաւառին մէկ ծակին համար չափազանց է այս և իրաւ է . . . : Այլ բոլոր քաղաքացոյն բերանը բաց մնաց և մարդ կը սիրէ ուրիշներէ յարգուիլ, այնպէս չէ, տիկին :

— Անտարակոյս, պատասխանեց տիկին Օպրի, մարդ ուրիշներէ

յարդուիլ կը սիրէ և իր ունեցած ստակին համեմատ կը յարդուի : Իմ մասին այսօր չյարդուելուս վրայ կը մխիթարուիմ մտածելովոր եթէ առաջուանը ըլնէի, հիմակ բոլոր զիս արհամարողները պիտի երկրպագէին ինձ :

— Աստուած վկայ, ես պիտի չերկրպագէի, դոչեց տօբթօր Տէմարէ յանկարծ ոտք ելնելով : Թէ որ 100 միլիոն ֆրանք եկամուտ ունենայիք անդամ զիս ձեր ոտքը ընկած պիտի չտեսնէիք, պատուոյս վրայ խօսք կը տամ ձեզի, ու քիչ մ'օգ առնելու կերթամ . . . վասն զի յանկարծակի դամ, ալ գիմացուելիք բան չէ ազ :

Այս ըսելով բարի տօբթօրը սրահակէն դուրս ելաւ բոլոր իմ երախտագիտութիւնը հետը տանելով, վասն զի ճշմարիտ ծառայութիւն մ'ըբաւ ինձ, զգուանրէ ու զայրոյթէ սեղմուած սիրտս թէթեւցընելով :

Թէև Պ. Տէմարէ, տան մէջ իբր Յոլհան ոսկերերան մ'ընդունուած և իրեն լեզուի ամենամեծ ազատութիւն մը տրուած է, նախտիները սաստիկ ըլնելուն հանդիսականներու վրայ անախորժ տպաւորութիւն մ'ըբաւ որ տաղտկալի լուծեամբ մը յայտնուեցաւ : Սակայն աիկին Աարօք վարպետութեամբ խղեց զայն իր աղջկան հարցընելով թէ ժամը ութը զարկած էր արդեօք :

— Ոչ, մայր իմ, պատասխանեց օրիորդ Մարգարիտ, քանզի օրիորդ Բէրհօէ չեկաւ տակաին :

Վայրկեան մ'ետք, այն ինչ ժամացոյցին զարկը (timbre) կ'ըսկսէր հնչել դուրը բացուեցաւ և օրիորդ ժօսըլինտ տը Բէրհօէ-Վաէլ, թեք տօբթօր Տէմարէի տուած սրահակը մտաւ աստղարաշխական ճշգումթեամբ մը :

Օրիորդ տը Բէրհօէ-Վաէլ որ այս տարի իւր ութտուն և ութերորդ դարունը տեսաւ և որ մետաքսի մէջ պահած երկայն եղէգի մ'երեւոյթն ունի, յետին բողբօջն է խիստ ազնիւ սերունդի մ'որու մեծ պատերը կը կարծուի թէ հին Արմօրիբի առասպելական թաղաւորներու մէջ կը գտնուին : Ի վերայ այս ամենայնի այս ընտանիքը միայ ժ. դարուն պատմութեան մէջ կը տեսնուի Պրըթայնի կրտսեր ճիւղէն՝ Քօնան լը Թօրի որդի Յուզայէլի շնորհիւ :

Բէրհօէնց արեան քանի մը կաթիլները Ֆրանսայի ամենէ նշանաւոր այսինքն Բօհաններու, Աուսինեաններու, Բանթիէվըրներու

երակներու մէջ հոսած են և այս ազատորդիք անոնցմով կը պարծէին : Ար յիշեմ որ օր մը մանկական սնապարծութեամբ իմ ընտանեաց ամենական պատմութիւնը քննելու ատենս, այս Բէրհօէի այլանդակ անունը աչքիս զարնելով, հայրս՝ որ այս խնդիրներու խիստ հմուտ շատ գոված էր զայն :

Օրիորդ Բէրհօէ որ այսօր իր ընտանեաց և անուան յետինն է երբէք չկամեցաւ ամուսնանալ, զաղղիական ազնուապետութեան հօրիզոնին մէջ կարելի եղածին չափ երկար ատեն Բէրհօէ-Վաէլ մողական վանկերու համաստեղութիւնը պահելու համար : Օր մը զիպուածով Պուրպօնեան յեղի ծագման վրայ խօսք եղած ժամանակ,

— Պուրպօնեանը, ըսաւ օրիորդ Բէրհօէ քանի մը անգամ գուպայի ասեղը իր խարտեաշ կեղծամիւն մէջ խօթելով, Պուրպօնեանը անարատ ազնուականութենէ են, այլ (յանկած համեստութեան երևութով մը) անկէ աղէկն ալ կայ :

Բայց և այնպէս անկարելի է չխոնարհիլ այս օլոտտափառ պառաւ աղջկան առջև՝ որ անմահ արժանապատուութեամբ մը կ'ընդունի ծննդեան, տարիքի և դժբաղդութեան եռակի ու ծանր վեհութիւնը : Իր ժամանակաւ ունեցած պղտի հարստութիւնը զգալի կերպով նուազած է տաննուհնդ տարիէ ՚ի վեր որ Պաղղիաէ դուրս գատ մը վարելու կը յամուտի և այսօր հաղիւ թէ 1000 ֆրանք տարեկան եկամուտ ունի : Այս հարուածը իր հպարտութիւնը պակսեցուցած կամ բնութեանը վրայ բան մ'աւելցուցած չէ ամենեւին, զուարթ է, միօրինակ և քաղաքավար : Մտրդ չղխտեր թէ իր տնակին մէջ ինչպէս կ'ապրի պղտի սպասուհւոյ մը հետ, և շատ ալ ողորմութիւն ընելու միջոց կը գտնէ :

Տիկին Աարօք և իր աղջիկը, իրենց ազնիւ և աղքատ զբացուհոյն համար այնպիսի սէր մ'ունին որ իրենց պատիւ կը բերէ, տունը եկած ատեն առարկայ կ'ըլնի նա այնպիսի ուշադիր յարգանքի մ'որ զտիկին Օպրի կը շփթէ : Տեսայ որ օրիորդ Մարգարիտ շատ անգամ ամենէ զուարթ պարը կը թողուր օրիորդ Բէրհօէի Ռէնի խաղին մէջ չորրորդ խաղընկերն ըլնելու համար, վասն զի եթէ օրիորդ Բէրհօէի Ռէնի (կէտը 10 բարայի) օր մ'ետ մնայ, աշխարհ կը կործանի : Աս ինքս ալ պառաւ օրիորդին սիրելի խաղընկերներէ մին եմ և ըսած իրիկունս քիչ մ'ետքը ժողովրդապետը

բժիշկն ու ես՝ Ուլիսի սեղանին բողբոջիքը շարուեցանք Բօնան լը
Թօրի թուան դիմացն ու քովերը :

Գիտնալ պէտք է որ վերջին դարու սկիզբը, օրիորդ ԲէրՏօէի
մի մեծ հօրեղբայրը, որ Անժուի դուքսին տանը միացած էր, Գի-
լիբ Ե անունով դահն ելնող իշխանին հետեւելով Բիրենեան լեռ-
ները անցաւ և Սպանիաի մէջ տուն մը հիմնեց որ շատ յառա-
ջացաւ : Ա՛րեւի թէ ՚Ա՛մ տարիէ ՚ի վեր անոր բուն ժառանգները մե-
ռած են և օրիորդ ԲէրՏօէ որ իր անդրալեռնեան ազգականները
աչքէ կորուսած չէր բնաւ, խնայն իրրե ժառանգուհի ներկայացաւ
անոնց հարստութեանը որ մեծ կը համարուի, այլ իր պահանջումը
մերժուեցաւ Բասթիլեան ամենէ հին ընտանիքներէ մէկէն որ Բէր-
Տօէնց սպանիական ճիւղին կապուած էր : Ահա ասկէ է այն դատը
որ դժբաղդ ու թնամանին մեծ ծախքով ատենանէ ատենան կը քաշէ
խնդուութեան մօտ յամառութեամբ որու վրայ իր բարեկամները
կը ցաւին ու անտարբերները կ'զբօնուն :

Նոյն ինքն սօքթօր Տէմարէ, օրիորդ ԲէրՏօէի համար ունեցած
ակնածութեան ներհակ, ծաղրողներու թիւէն է և յայտնապէս կը
մերժէ այն նպատակը որու իր քիմերական ժառանգութիւնը նուիրած
է նա իր մտքով, — այն է, մօտակայ քաղքին մէջ փառաւոր ու
ճով կաթողիկէ մը շինել տալ որ մինչև ապագայ դարերու վերջը,
անսահ թողու իր հիմնադրին և աներոյթ եղած մեծ սերունդի մ'աւ-
նունը :

Ցնորքի մը վրայ հիմնուած այս երեակայական կաթողիկէն այս
պառաւ մանկան անմեղ խաղալիքն է : Անոր յատակագծերը շինել
կը տայ և իր օրերը երբեմն զիշերները իսկ անոր շքեղութեանց
վրայ թորհելով կ'անցընէ, ձևերը կը փոխէ, դարդեր կ'աւելցը-
նէ և այնպէս մ'անոր խօսքը կ'ընէ որ կարծես թէ արդէն շինուած
է ու իրական : Օրինակի համար, կ'ըսէ — Կաթողիկէիս դահճիւն
մէջ էի, այս զիշեր կաթողիկէիս հիւսիսային միջովայրին վրայ,
խիստ անհամ բան մը տեսայ, դռնապանին սպասահանդերձը փո-
խեցի, և այլն և այլն :

— Ե՛հ նայինք, օրիորդ, ըսաւ սօքթօրը թղթերը խտունելով,
երէկուրնէ ՚ի վեր միթէ ձեր կաթողիկէին աշխատեցանք :

— Լաւ Հապա, սօքթօր : Նաև բաւական դաղափար մ'ունեցայ :

Խիրացուներու դասը աւանդատունէն բաժնող լեցուն պատին տեղ,
բանտ ամ քարէ վանդակ մը գնել տուի, Ժօսըլէնի եկեղեցւոյն մէջի
Բիթսօնի մատուան հետեւելով : Այսպէս շատ աւելի թեթև կ'ըլնի :

— Այնպէս է անշուշտ : Բայց առ այժմ Սպանիաէ ինչ լուր :
Հա՛, աղէկ միտքս եկաւ, միթէ իրաւ է ինչ որ կարծեմ Հանդէս
Երկու աշխարհին մէջ կարողացի, այսինքն թէ Վիլլա Հեմօզիս նո-
բասի գուքը . կ'առաջարկէ եղեր ձեզ որ դատերնիդ քաղցրու-
թեամբ լինցընէք ամուսնութիւնով մը :

Օրիորդ ար ԲէրՏօէ, արհամարհական շարժումով մ'իր դիակի
վրայ ծփող թառշամեալ ժապաւեններու գարգմանակը յուզեց և ըսաւ,

— Խիստ մերժումով մը պիտի պատասխանեմ անոր :

— Այո՛, այո՛, անանկ կ'ըսէք, օրիորդ, բայց ինչ կ'նշանակէ
այն կիթառի ձայնը որ քանի մը զիշերէ հետէ պատուհաններու գ
տակ կ'լսուի :

— Բէ՛օ՛հ :

— Բէօհ մի՛ : Հապա ան կօճկուած և վերարկուով Սպանիկը որ
թմափ առեալ կ'ըջի երկրին մէջ և կ'հառաչէ անդու :

— Խեղիատակին մէկն էք, ըսաւ օրիորդ ար ԲէրՏօէ, իր քթա-
խոտի տուփը բանալով հանդարտօրէն : Բայց որովհետև լուր կը
հարցնիք, զիտցած եղիք որ փաստաբանս Ձ օր յառաջ դրած է
Մատրիաէն որ քիչ մը համբերելով մեր տատապանը պիտի լիննայ :

— Տէր ողորմա, կը հաւատամ անշուշտ : Բայց միթէ զիտէք
ձեր փաստաբանը ուրիշ ելած է, ուղղակի ծիւ Պլասայ քաղաքէն,
և ձեր վերջին սկութն ալ քաշելէ ետք զձեզ պիտի հեղնէ : Ո՛հ,
ինչ խեղացի պիտի փրթիք թէ որ այդ խնդուութիւնը մէկ զի գնե-
լով հանդիստ ապրիք . . . : Նայինք մէյ մը սա միլիոնները ին-
չերնուգ պիտ' օգտեն : Միթէ արդէն երջանիկ ու յարգի չէք . . .
ինչ կ'ուզէք ատկէ աւելի . . . իսկ Կաթողիկէնուդ՝ գալով ատուր
խօսքը չեմ բներ, վասն զի անհամ կատակ մ'է :

— Իմ կաթողիկէս, միայն անհամ կատակախօսներու աչքին ան-
համ կատակ մ'է, սօքթօր Տէմարէ, այլուր իրաւունքս կ'պաշա-
պանեմ և արդարութեան համար կը կռուիմ, հարիւր անգամ հօր-
մէս լսած եմ որ այն ինչքերը իմն են և բնաւ իմ հաճութեամբը
գլխի չերթան այնպիսի անձերու որ այնքան օտար են իմ ընտանեաց

* Կաթողիկէ իրրե մայր եկեղեցի (cathedrale) գործածեցինք : Ծ. Թ.

որբան դուք, սիրելի բարեկամ, և կամ հրամանքը, աւելցուց նաք
զլիս նշանով մը զիս ցուցնելով:

Այս քաղաքալաբու թեանէ զչարելու տղայութիւնը ունեցայ և իս-
կոյն պատասխանեցի:

— Ինձ նկատմամբ կ'սխալիք, օրիորդ, վասն զի իմ ընտանիքը
ձերինին հետ խնամութեամբ կապուելու պատիւն ունեցած է և փո-
փոխակի:

Այս ահագին խօսքերը լսելու ատեն օրիորդ տը Բէրհօէ իր ձեռ-
քին մէջ կանային հովահարի պէս բացած թուղթերը աշխուժիւ չոր-
ցած թշին տարաւ ու երկայն հասակը շտկելով երեսնայեցաւ, նախ
մտային վիճակիս վրայ ապահովուելու համար, ետքը դերմարդկային
ճղով մը հանդարտելով, իր սուր քթին քիչ մը Սպանիայի ծխախոտ
մօտեցուց ու ըսաւ:

— Այդ ըսածնիդ ինձ պիտ'ապացուցանէք, պարոն:

Իմ ծիծաղական սնտարծութեան վրայ ամօնելով և տնոր իմ
վրայ հրաւիրած հետաքրքիր նայուածքներէ բոլորովին շուարած ա-
ռանց պատասխանելու անշտրհք կերպով մը խոնարհեցայ:

Ուէ՛ր երնիս լմնցաւ չոր ու ցամաք լուծեան մը մէջ: Ժամը տասն
էր և կծիկը դնելու կը պատրաստուէի, երբ օրիորդ տը Բէրհօէ թե-
ւիս դպցաւ:

— Պարոն պարէտ, արդեօք մինչև ծառուղոյն ծայրը ինձ ընկե-
րանայու պատիւը պիտի ընէք:

Արկին խոնարհելով իրեն հետեւեցայ:

Ընդ հուպ շերտոյին մէջ գտնուեցանք: Պզտի սպասուհին, տեղացիի
հագուստով առջևէն կերթար լապտեր մ'ի ձեռին, յետոյ կ'զար
օրիորդ տը Բէրհօէ ուղղորդ ու լին, հողատար և համեստ ձեռքով
մ'իբ մետաքսեայ շրջազգեստին ծալքերը բառնալով: Խստութեամբ
թեւ մերժած էր նա և ես քովէն կ'ընթանայի զլիսիւր ու ինքզին-
քէս խիստ դժգոհ: Այս ախուր քալուածքը քանի մը վայրկեան
շարունակելէ ետքը,

— Է՛հ, պարոն, ըսաւ ինձ, պառաւ օրիորդ, խօսեցէք, մտիկ
կ'ընեմ: Բսիք որ իմ ընտանիքը ձերինին հետ խնամութիւն ըրած
էր, և որովհետեւ այսպիսի խնամութիւն մ'ինձ համար պատմու-
թեան բոլորովին մէկ նոր կէտն է, շատ կը պարտաւորեք զիս ե-
թէ զայն ինձի բացատրէք:

Հաստատ որոշած էի ինքնին որ և է գնով իմ ծպտումի դադա-
նիքը երևան չհանել:

— Տէր ողորմեա, օրիորդ, ըսի, կը համարձակիմ յուսալ որ
խօսակցութեան մէջ բերնէս փախած մէկ կատակին կը ներէք:

— Անտակ մի, գոչեց օրիորդ տը Բէրհօէ: Իրօք նիւթը շատ յար-
մար է կատակի: Եւ այս դարու մէջ, պարոն, ինչպէս կ'անուանէք
այն կատակներ որ մարդիկ արիարար կ'ուզղեն անպաշտպան պառա-
ւի մը մինչդեռ էրիկ մարդու մը զիմաց չեն համարձակիր ընելու:

— Օրիորդ, փախուստի միջոց մը չէք թողուր, ուստի ինձ կը
մնայ ձեր խոհեմութեան վստահիլ: Չգիտեմ, օրիորդ, եթէ Շանտի
տ'Օթըրիվ անունը ծանօթ է ձեզ:

— Խիստ լաւ կ'ճանչեմ, պարոն, Շանտի տ'Օթըրիվները, որ
Տօփինեան ամենայարգի ընտանիք մ'են: Ի՞նչ հետեւցնել կ'ուզէք:

— Այսօր այդ ընտանիքը ներկայացնողը ես եմ:

— Գուք, ըսաւ օրիորդ տը Բէրհօէ յանկարծ կայ առնելով: Շան-
տի տ'Օթըրիվ մ'էք դուք:

— Արաւ, այո, օրիորդ:

— Խնդիրը կ'փոխուի, ըսաւ նա, թեկնիդ ինձ տուէք ուրեմն,
տոհմիդ իմ և ձեր պատմութիւնը սրտմեցէք:

Այսպէս թուեցաւ ինձ որ իրերու այս վիճակին մէջ ամենէ ա-
ղէկը ստուգիւ իրմէ բան մը չպահելն էր: Աւստի իմ գժբազդու-
թեանց տաժանելի պատմութիւնը լմնցնելու վրայ էի երբ խիստ
ցած ու նեղ տան մը զիմացն հասանք որու մէկ կողմը սրածայր տա-
նիքով կարծուկ աղաւնետուն մը կ'երևէր:

— Մտէք, մտքիդ, ըսաւ ինձ Պատելեան թողաորներու աղջի-
կը իր աղքատ պալատի սեմին վրայ կանգնած, մտէք ուրեմն,
ինդրեմ:

Մէկ վայրկեան ետքը խեղճօրէն աղլուսով յատակեալ պզտի սրա-
հակ մը մտայ: Պատելը ծածկող գեղնած պաստառին (tapisserie)
վրայ զբաական ծիրանիով շքուած տանի չափ նախահայրերու պատ-
կերներ կախուած էին խիա առ խիա: Արակարանին վրայ, կրիայի
պատենէ, պղնձով բանուած և արեգական կառքը ներկայացնող
խմբակով մը պսակուած սքանչելի ժամացոյց մը տեսայ: Հաւթա-
ձև յեղարաններով քանի մը թիկնաթուներ ու բարակ ոտքերով
բազմոց մը բոլոր յարդն ու զարդը կ'ամբողջացնէին այս սենե-

կին՝ ուր ամեն կողմը բծախնդիր մաքրութիւն մը կ'իփայլէր և որ լի էր կեցրոնացած հիրիկի, սպանիական ծխախոտի և անորոշ քաղցր հոտով մը :

— Նստիք, ըսաւ ինձ պառաւ օրիորդը ինքն ալ բազմացի մը վրայ տեղաւորուելով, նսաէք, տոհմիկդ իմ, վասն զի թէև իբօք ազգական չենք բնաւ և չենք կրնար ըլնիլ, որովհետև, խօսքը մեջերսին, Յովհաննաս ար Բէրհօէ և Հիւկ ար Շանտի զատակ չունենալու անմտութիւնը ունեցան, սիրելի է ինձ ձեր հրամանաւ ձեզ հետ իրբև տոհմուհի վարուիլ երբ առանձին ըլնինք, որպէս զի աշխարհիս մէջ մինակ ըլնելուս դառն զգացումը սակաւ ինչ մեղ մի : Այսպէս ուրեմն, իմ տոհմիկս, գործերնիդ այդ վիճակի մէջ են, անցքը դժուարին է աներկբայ, բայց և այնպէս պիտի տամ ձեզ քանի մը խորհուրդներ որ ինձ սովորական են և կարծեմ թէ ձեզ ալ մեծկակ միտիթարութիւն մը կրնան տալ : Նախ և յառաջ սիրելիդ իմ մարքիդ, շատ անգամ կ'ըսեմ իւրովի թէ՛ այս ցած և վաղեմի ծառաներու մէջ՝ որոնք այսօր կատրելով կը շրջին, աղքատութիւնը ազնուականութեան ու նորը ախորժի դերադոյն հոտ մ'ունի : Ասկէ զատ զրեթէ քիչ մը կը հաւատամ որ Աստուած մեջերսէս մէկ քանին նեղ վիճակի մը մէջ ձգեց, որպէս զի այս կոշտ նիւթամուղ ու ոսկեպաշտ դարը, մեր անձերու վրայ տեսնելով աչքին առջև ունենայ արժանապատուութեան, շքեղութեան և արժանիքի տեսակ մը, որու մէջ նիւթն ու ոսկին չմանեն բնաւ, որ բանով մը գնոյ չառնուի, և ծախու չըլնի : Ըստ երևոյթի ահա այս է, տոհմիկդ իմ, ձեր և իմ բաղդերու նախախնամական արգարացումը :

Յայտնեցի օրիորդ ար Բէրհօէի թէ ինքզինքս քանի հպարտ կը դանդէի իրեն հետ ընտրուած ըլնելուս՝ աշխարհիս տալու համար այն ազնիւ գասը, որմէ այնքան պէտք ունի և օգուտ կ'ըտէ այն :

Տոհմուհիս շարունակեց,

— Ես իմ մասին, պարոն, չքսուորութեան սորված եմ և քիչ կը նեղուիմ, երբ մարդս կեանքի երկար ընթացքի մը մէջ, իր աշուան արժանի հայր մը, և իրենց հօր արժանաւոր եղբայրներու՝ երկաթի կամ գնտակի ներքև ընկձիլը և հետզհետէ իրեն բոլոր սիրելի և պաշտելի եղող առարկաներու կորստիլը տեսած է, շատ պղտիկ հոգի մը պէտք է ունենայ, աւելի կամ նուազ ձոխ սկզբնի և աւելի կամ նուազ թարմ հաղուստի մը ետեկէն հառաչելու

համար : Հաւատի եղիք, Մարքիդ, որ եթէ միայն իմ անձնական ունեւորութեան վրայ ըլնէր խնդիրը, Սպանիաի միլիոններս հոգս չէի ընեւր բնաւ, այլ պատշաճ ու իբր բարի օրինակ մը կ'երեւի ինձ որ իմինիս պէս ընտանիք մը երկրէս չանհետի առանց իր ետին տեւական հետք մը, իր մեծութեան և հաւատոյն մի մեծ յիշատակարան մը թողլու : Անոր համար մեր պատերու մէկ քանիին օրինակին հետեւելով, տոհմիկդ իմ, 'ի մտի դրի (և քանի որ կեանք ունիմ որոշմանս վրայ պիտի մնամ) ընել այն հողեւոր հիմնադրութիւնը որմէ տեղեկութիւն ունիք :

Իմ հաւանութեան վրայ հաւատի ըլնելէ ետքը, պառաւ ու ազնիւ օրիորդը, իր միաբը ամփոփեց և մինչդեռ իր պնդերու կէս տարուած պատկերներուն վրայ մեղմաղձոտ նայուածք մը կ'նետէր, մթին սրահակին մէջ ժառանգական ժամացոյցը միայն, կէս գիշերուան լուծիւնը խանդարեց :

— Այս եկեղեցոյն ծառայութեան յատուկ կանոնիկոններու ժողովմ'ալ պիտ' ըլնի, յաւելցուց յանկարծ օրիորդ Բէրհօէ : Ամեն օր առաւօտեան պաշտաման միջոցին, ընտանեացս մասնաւոր մատուան մէջ, իմ՝ և պատերուս հոգւոյն համար, անձայն պատարաց մը պիտ' ըլնի : Պատարագիչ քահանային ոտքերը սապանագրի մարմարի մը վրայ պիտի կոխեն որ խորանին պատուանդանը պիտի ներկայացընէ, ու իմ ոսկերքը պիտի ծածկէ միանգամայն :

Ճշմարիտ յարգանքի մը յուզմունքով խոնարհեցայ :

Օրիորդ ար Բէրհօէ ձեռքս բռնելով զայն սեղմեց մեղմիկ :

— Թող ինչ կ'ուզեն ըսեն, մի կարծէք որ խենթ եմ, տոհմիկս ըսաւ նա : Հայրս որ երբէք չէր ստեր, զիս հաւատած է միշտ թէ՛ մեր սպանիական ճիւղի անմիջական ժառանգները հատածնուն պէս, ժառանգութեան իրաւունքը մեզ պիտ'ըլնէր : Իր յանկարծական ու բուռն մահը դժբաղդաբար այս խնդրոյն վրայ մեզ աւելի որոշ տեղեկութիւններ տալու ժամանակ չթողուց, բայց անոր խօսքին վրայ տարակրօս չունենալուս՝ իրաւունքիս վրայ ալ տարակրօս չունիմ . . . : Սակայն, յաւելցուց զաղարէ մ'ետքը և սրտաշարժ յուզման եղանակաւ մը, թէ որ խենթ չեմ, պառաւ եմ և այս բանը լաւ գիտն 'ի Սպանիա : Տասն և հինգ տարիէ 'ի վեր սլայմանաժամէ սլայմանաժամ կը քաշեն զիս և կ'սպասեն մահս որ ամեն բան պիտի լմնցընէ . . . : Եւ կը տեսնէք որ շատ պիտի չսպասեն, օ .

ըին մէկը պէտք պիտի ընին որ իմ յետին զոհողութիւնը ընեմ . . . : Այս խեղճ կաթողիկէն որ իմ միակ սէրն է ու սրտիս մէջ այնքան խորակուած և սեղմուած զգացումներու տեղ բռնած է, միայն մէկ քար պիտ' ունենայ, այն է գերեզմանիս քարը :

Օտարդ օրիորդը լուեց, իր նիհար ու վտիտ ձեռներովը թառառ-մնալ զէմբին վրայէ դար վար սահող երկու արտաքիւ կայլակներ սրբեց, ետքը ժպտելու աշխատելով շարունակեց .

— Ներեցէք, տոհմիկդ իմ, արդէն դուք այնքան ցաւ ու վիշտ ունիք : Ներեցէք ինձ . . . այլուր ժամանակն ալ անցաւ, դնայէք, 'ի վտանգի կը դնէք զիս :

Մեկնելէ՛ յառաջ, նորէն օրիորդ տը ԲէրՏօէէ խնդրեցի որ բոլորովին գազանի պահէ այն խորհուրդս որ իրեն յայտնելու հարկադրեք էի : Քիչ մը փախուստի ձեռով պատասխանեց ինձ որ անհոյ կրնայի ընել և թէ ինքը իմ արժանապատուութիւնը և հանգստութիւնը պահպանելու միջոցը գիտէր : Ի վերայ այս ամենայնի յաջորդ օրերը տիկին Լարօքի մեծարանաց աւելնալէն կատկածեցայ թէ պատկառելի բարեկամուհիս իմ գազանիքը անոր յայտնած էր :

Նոյն իսկ օրիորդ տը ԲէրՏօէ, զայն խոստովանելու չգեղեկեցաւ զիս հաւատարմով որ իր ընտանիքի պատուոյն համար ուրիշ կերպ չէր կրցած ընել և թէ սակայն տիկին Լարօք նոյն իսկ իր ազնկան չէր կարող յայտնել այնպիսի գաղտնիք մ'որ իր ազնուութեամբ արանդուած էր :

Պատաւ օրիորդին ունեցած խօսակցութիւնն սակայն զիտ այնպիսի գորովալի յարգանքը մը համակուած ձգեք էր, որ անոյ հաստաթիքը յայտնել ուղեցի և երկրորդ իրիկունէ սկսեալ իմ կապարեայ գրչին բոլոր վարպետութիւնները իր կաթողիկէի ներքին տաճարին զարդերու նուիրեցի : Այս ուշադրութիւնը որու շատ երախտաղէտ երեցաւ նա, կամայ ակամայ սովորութեան մը կանոնադրութիւնը առաւ :

Ամեն իրիկուն Ուիլիէ ետքը կ'սկսիմ աշխատիլ և երեսակայական շէնքը, արձան մը, ամպիոն մը կամ բեմ մը կը շահի :

Օրիորդ Մարգարիտ ալ որ կ'երևի թէ իր գրացոյն համար տեսակ մը պաշտօն կ'տանի, իմ ողորմատիրական աշխատութեան ընկերանալ ուղեց ԲէրՏօէնց տաճարին համար նկարի մասնաւոր տետրակ մը յատկացընելով զոր լեցընելը իմ վրայ ձգուած է :

Ասկէ զատ առաջարկեցի իմ պատաւ մտերմիս որ կ'ուղէի մասնակից ընել այն հետազոտութեանց, և ամեն տեսակ հոգերու որ իր դատը կրնայ պահանջել :

Խեղճ կինը խոստովանեցաւ ինձ որ մեծ ծառայութիւն մը կ'ընէի իրեն, թէ իրաւ տակաւին իր թղթակցութիւնը կրնայ ընել, բայց իր տխրացած աչքերը զլւանին ձեռագիր յիշատակարանները կարդալը կը մերժէին, և թէև այս աշխատութիւնը իրեն համար խիստ կարեւոր մինչև այն օրը զայն կատարելու հոգը ուրիշի մը յանձնած չէր փոխանորդադար, տեղացիներու անբարեկիրթ հեղնութեանը նոր առիթ մը չտալու համար : Մէկ խօսքով իբր խորհրդական և օգնական բնուանեց զիս նա :

Այն ասանէ 'ի վեր խճի մասը իր դատին վերաբերեալ ահա զին պրակը (dossier) քննեցի և համոզուած եմ որ տոհմուհոյս զատոր, որ այս օրերս պիտի լմնայ, յառաջմէ կորսուած է կատարելագին :

Այս մասին Պ. Լօպօրէնի կարծիքն ալ հարցուցի և ան ալ ինձ համամիտ է, բայց առ այժմ որքան որ պարագաները կը ներեն ձեռնարկութիւնը պիտի պահեմ պատաւ բարեկամուհիէս, սպասելով միտա մի կ'ըստեմ իր ընտանեկան յիշատակարանները որոց մէջ կը յոսոյ միշտ իրեն նպաստաւոր վճռական թուղթ մը գտնել : Գժբաղ-գարար ալ իր զլւանդերը շատ հարուստ են և աղանետունը թուղթերով լի է բոլորովին մնուանէն մինչև տանիքը :

Արէկ կանախիկի, օրիորդ տը ԲէրՏօէի տունը գացեր էի ճաշու ժամն յառաջ, 116րդ թիւ ծրարին բովանդակութիւնը լմնցընելու համար : Ան տիրուհին զեռ արթնցած չըլնելուն՝ պղտի սպասուհու մեղքակցութեամբը լուի մնջիկ տեղաօրոտեցայ սրահակին մէջ իմ գոշիկը գործողութեան սկսայ ստանձնակի :

Յարջ ժամ'ետքը, մինչդեռ անպատում ինդութեամբ մը 116րդ ծրարին յիսն թերթը աչքէ կ'անցընէի, ահա օրիորդ տը ԲէրՏօէ ներս մտաւ, ձերմակ լաթով մը մաքուր ծածկուած պատտա մ'ի ձեռին զոր հագին կրնար վերցընել :

— Բարի լոյս, սիրուն տոհմիկս, բաւա : Լսելով որ այս առտու ինձ համար կ'աշխատէիք ես ալ ձեզի համար աշխատիլ ուղեցի և 116րդ ծրարը կը բերեմ :

Չգիտեմ ո՞ր պատմութեան մէջ, թշուառ իշխանուհի մը կայ որ

աշտարակի մը մէջ փակուած է և որու, վրայ վրայի տարօրինակ և անհնարին աշխատութիւններ ընել կը տայ իր ընտանեաց թշնամի կիւս մը. կը խոստովանիմ որ այս վայրկենիս օրիորդ տը ԲէրՏօէ իր ամեն առաքինութեանց հակառակ՝ այս կիւսի մօտիկ ազդականը երեցաւ ինձ :

— Այս գիշեր երազս տեսայ որ իմ սպանիկ դանձուն բանալին այս ծրարիս մէջ է, շարունակեց նա : Ուստի շատ կը պարտաւորէք զիս եթէ անոր քննութիւնն ալ անմիջապէս սխիբ : Այս աշխատութիւնը լմննալէ ետքը, ընդունելու պատիւը պիտ' ընէք այն համեստ ճաշը որ ձեզ կ'ուզեմ տալ սարիինայիս շուրին ներքև :

Ուստի համակերպեցայ : Ահարդ է ըսել որ 116 թիւ ծրարն ալ իր նախորդներու պէս միայն դարերու փոշին կ'պարունակէր : Ճիշդ կէսօրին պատառ օրիորդը եկաւ թեւ տուաւ ինձ և հանդիսով տարաւ զիս առաստիներով զարդարուած պարտեզ մ'որ կից ածուի մը հետ, այսօր ԲէրՏօէնց բոլոր կալուածը կ'ներկայացընէ :

Սեզանը կամարի ձեռով ծուած մասաղ նշգրտեցի իմ տակ պատրաստուած էր ու ամառային գեղեցիկ օրուան մ'արեւը, տերեւներուն մէջէ՛ ձեան պէս ճերմակ ու հոսատեա ծածկոցին վրայ քանի մը ծիածանացեալ շառախղներ կ'արձակէր : Ոսկիօձ վառելին, թարմ աղցանին և հին Պօրտոյի զինիին բրած պատիւս լմնցընելու վրայ էի, երբ օրիորդ ԲէրՏօէ որ ախորժակէս շատ զո՛հ երեցիւր էր, խօսքը Վարօքեան ընտանիքի վրայ բերաւ :

— Ա՛րտասովանիմ ձեզ որ, ըսաւ ինձ, վաղեմի ծովահէնը չեմ սիրեր ամենեկին : Միտքս է որ յառաջ հոս եկած ատենը, ընտանի կապիկ մ'ունէր ծառայի պէս հազուեցողութեամբ և որու հետ ինքը շատ կ'համաձայնէր : Այս կենդանին զատուին մէջ ճշմարիտ վորձանք մ'էր և անբարեկիրթ ու անոպայ մարդ մը միայն կրնար անով զլլտիլ : Կապիկ է կ'ըսէին, ես ալ կը հաւատայի, այլ ներսէս կարծեմ թէ պարզ սեռի մ'էր, վասն զի միշտ կասկած ունեցած եմ որ իր տէրը այս բերքի առուտունն ըրած է Վիրիկիի ծովեզերքին վրայ : Ի վերայ այս ամենայնի իր ողորմած հոգի տղան Պ. Վարօք, լու և խիստ բարեկիրթ մարդ մ'էր, Տիկնանց մասին (խօսքս տիկին Վարօքի և իր աղջկան՝ վրայ է և չէ թէ Օպրի որբեւարիին որ ստորին արարած մ'է) զովեստ չկայ որու արժանի չըլնին :

Այս խօսքին վրայ էինք, երբ պարտեզին պատին տակէն անցնող ճամբուն վրայ, ձիու մ'արագ քայլուածքին ձայնը լսուեցաւ : Նոյն վայրկենիս սարիինային յօտիկ գունակը քանի մ'անգամ զարնուեցաւ ուժգնակի :

— Ո՛վ է ան, ըսաւ օրիորդ տը ԲէրՏօէ :
Աչքերս վեր ըրի և պատին կատարին վրայ, սև փետրի մը ծածանիլը տեսայ :

— Բացէք, ըսաւ դրսէն ծանր ու խնդաղին ձայն մը, բացէք, եկողը ֆրանսայի բաղդն է :

— Ի՛նչ, գուն ես տատրակս, գոչեց պատառ օրիորդը : Վաղեցէք տո՛հմիկս, բացէք դուռը :

Գուռը բացածիս պէս Մերովին՝ ներս նետուեցաւ և ոտքերուս մէջէ սպրկելով քիչ մնաց որ զիս վար նետէ և տեսայ որ օրիորդ Մարդարիտ իր ձիուն սանձերը ցանկատարաբար մը ձողերուն կապելու զբաղած էր :

— Բարի լոյս, պարոն, ըսաւ ինձ, զիս հոն դանելուն համար առանց ամենափոքր զարմանք մը ցուցընելու : Յետոյ իր զեանաքարչ շրջազգեստին երկայն ծալքերը թեկին վրայ բառնալով պարտեզը մտաւ :

— Բարի եկար, գեղեցիկ աղջիկ, ըսաւ օրիորդ տը ԲէրՏօէ, զիս գրկէ նայիմ : Վաղեր ես, խենթուկ, որովհետև երեսոց սաստիկ շոռապներէ և աշերէդ կրակ կ'եղնէ : Ի՛նչ կրնամ հրամայընել քեզ չքնաղդ իմ :

— Նայինք, ըսաւ օրիորդ Մարդարիտ, սեղանին վրայ նայուածք մը նետելով : Ի՛նչ ունիք հոգ . . . միթէ պարոնը ամեն բան կերաւ հասցուց . . . բայց ես անթի չեմ այլ ծայտա :

— Սաստիկ կ'արդիլեմ որ բան մը չխմնս այդ վիճակիդ մէջ, սակայն կեցիր . . . այս ածուի եզրին վրայ, քանի մ'եղակ ևս կայ . . . :

— Ելա՛կ մի, ո՛վ ուրբախնէնք՝ երգեց պարմանուհին : Շուտ սա տերեւներէ մէկն առէք, պարոն, և հետս եկէք :

Մինչդեռ թղենիի մ'ամենէ լայն տերեւը կ'ընտրէի, օրիորդ տը

*Օ՝ ճօյա :
†Պարմանուհի բառը (jeune fille) նշանակումեան շատ յարմար կ'ընտրուի մեզ, պարմանի որ մանկամարդ տղայ կ'նշանակէ իզականի ալ կրնայ դատնալ կարծենք :
Տ. Թ.

Բէրհօ՛ւ, աչքին մէկը կէս մը գոցելով և կամարար ժպիտով մը՝ միւստովը արեւուս ծառուղիներու մէջէ՛ իր սիրելոյն սիդաճեմ քալուածքը դիտելով :

— Նայէ սը որ, տոհմիկ, ըսաւ ինձ մեղմիկ, միթէ մեր մէջ մտնելու արժանի չէ՞ նա :

Սակայն օրիորդ Մարգարիտ, ածուի եղբրբին վրայ ծուռած և իր բնթայքին մէջ ամեն մէկ քայլին դայթելով, ուրախութեան պղտի ձայնով մը դտած մէն մի ելակը կ'ողջունէր : Ես ալ քովը կը կենայի ձեռքիս մէջ բաց ունենալով թղենի տերևը որու վրայ ելակ մը կը գնէր երկու հատ կանխաւ բերանը նետելէ ետքը : Երբ հունձքը իր ուղածին շափ գոհացուցիչ եղաւ, յաղթանակաւ սարփինային տակ եկանք, ուր մնացած ելակները շաքարով համեմուելով մեծ ախորժով կերուեցան :

— Ա՛հ, որչափ գոհ եմ, ըսաւ ինձ ան ատեն օրիորդ Մարգարիտ, գլխարկը բազմուի մը վրայ նետելով և նշտարենոյն ցանկին կռթնելով : Եւ հիմակ իմ երանութիւնը կատարեալ ընելու համար, սիրելի օրիորդ, անցելոյն վրայ գեղեցիկ պատմութիւններ պիտի պատմես ինձ, այն ատենի վրայ՝ որ դուն աղուոր մարտիկ մ'էիր :

Օրիորդ տը Բէրհօ՛ւ ծիծաղուն և բոլորովին յափշտակուած՝ ալ չնազեցաւ լա Բօշ Ժաքքլէններու և Աէսրիւրներու առջնորդութեամբ եղած յանգուզն արշաւանքներու ամենէ նշանաւոր անցքերը պատմելու և այս առթիւ իմ օսարդ բարեկամուհոյս հոգւոյ բարձրութեան մէկ նոր ապացոյցը ևս ունեցայ, երբ տեսայ որ այն տիտանեան մարտերու ամեն գիւցաղանց, արժանաւոր եղած դովետար կ'տար նա առանց դրօշի խարութեան : Գրեթէ գորովալի զարմացումով կը խօսէր մասնաւորապէս Հօշ զօրապետին վրայ որու կալանաւորն եղած էր :

Օրիորդ Մարգարիտ, այս պատմութեանց այնպիսի եռանդուն ուշադրութիւն մը կ'ընէր որ զարմացայ : Երբեմն կէս մ'իւր նշգրտեայ բոյնին մէջ ընկղմած և երկայն արտեանունքը քիչ մը խոնարհած՝ անպրիկ մ'անշարժութիւնը կ'պահէր, երբեմն իր հետաքրքրութիւնը աւելի գրգռուելով պղտի սեղանին կ'կռթնէր և իր փափուկ ձեռքք արձըկուած մաղբուն հեղեղին մէջ խօթելով իր խոշոր աչերու հրատապ ճաճանջը պառաւ Աւանտէացւոյն վրայ կը սեւեւէր :

Պէտք եմ խոստովանիլ որ իմ տխուր կենաց ամենէ անոյշ ժամերու մէջ պիտի հաշուեմ այն ժամերը որ այս ազնիւ դէմքին վրայ պայծառ երկնքի մը ցուցումը արի սրտի մը տպաւորութիւններու հետ խառնուելը գիտելով անցուցի :

Երբ մեր վիպասանին յիշատակները սպառեցան, օրիորդ Մարգարիտ գրկեց զանի և իր ոտքերու ներքև ննջող Մերովինը արթնացնելով իմացուց որ գրկելը կը վերագառնար : Հետը մեկնելէ չըզդուշացայ, բնաւ համողութեամբ ըլնելով որ նեղութիւն մը չէի պատճառեր իրեն : Եւ իրօք, 'ի բաց առնելով հարուստ ժառանգուհոյն նկատմամբ, իմ անձին և ընկերակցութեան խիստ աննշանութիւնը միայն ընդ միայնում տեսութիւնը իրեն համար տաղտուկ բան մը չէ ընդհանրապէս, վասն զի մայրը աներկիւղ տուած է իրեն այն ազատ գաստիարակութիւնը որ նոյն իսկ ինքը առած է բրիտանական գաղթականութիւններէ մէկուն մէջ, և յայտնի է որ անգղիական մէթօսը կ'ոճայ կանանց շաւուսնացած այն ամեն անկախութիւնը որ մենք անօր եղծումները անդարմանելի եղած օրը կը տանք իրենց :

Ուստի 'ի միասին ելանք պարտագէն, ձին հեծնելու խտնը ասպատանը բունեցի և դէպ 'ի գրկելը յուզի ընկանք : Քանի մը քայլ ընելէ ետքը :

— Աստուած իմ, ըսաւ ինձ, կարծեմ շատ անհամ բան մ'ըրի գալստի : Յաջողութեան մէջ էիր :

— Ստոյգ է, օրիորդ, այլ որովհետև շատոնց այդ յաջողութեան մէջ էի, կը ներեմ ձեզ և նոյն իսկ շնորհակալ կ'ըլնիմ :

— Շատ հոգ ու խնամք կ'տանիք մեր խեղճ գրացուհոյն : Մայրս շատ երախտաղէտ է ձեզ :

— Եւ ձեր մօրը աղջիկը, ըսի ծիծաղելով :

— Ա՛հ, ես այնքան շուտով չեմ գովէր, եթէ կը կարծէք որ վրանիք կը զարմանամ պէտք էք քիչ մը ժամանակ ևս համբերելու բարութիւնը ունենալ : Աւարժ ու սովոր չեմ մարդկային գործերը՝ որ ընդհանրապէս երկու երեսունին, թեթևօրէն դատելու : Ար խոստովանիմ որ օրիորդ տը Բէրհօ՛ւի նկատմամբ ձեր ընթացքը գեղեցիկ երևոյթ ունի, բայց . . .

Խօսքը կարեց պահ մը, գլուխը ցնցեց և դառն ու իրօք նախառական լուրջ եղանակաւ մը յարեց :

— Բայց ապահով չեմ որ իր ժառանգութիւնը առնելու յուսով չէք մեծարեր զինքը :

Չգացի որ կը դեղնէի : Այլ խորհելով որ ծիծաղելի կ'ըլնէր պարծուկի մը պատասխանը ապա այս նորաստի աղջկան , ինքզինքս բռնեցի և ըսի ծանրութեամբ :

— Ներեցէք ինձ , օրիորդ , ձեր վրայ զթալ անկեղծօրէն :

Չարմացած երևյալ նա :

— Իմ վրայ զթալ , պարոն :

— Այո , օրիորդ , ներեցէք ինձ սր յայտնեմ ձեզ այն յարդա-
լի դուրը որու արժանի կ'երևիք ինձ :

— Գնութը , ըսաւ նա իր ձին կայնեցընելով և դէպ ինձ դար-
ձնելով մոզիկ արհամարհանքէ կէս մը դոցուած աչքերը : Չեք
միտքը հասկընալու պատիւը չունիմ :

— Ըսածս խիստ պարզ է սակայն , օրիորդ : Եթէ տարակոյսը՝
հոգույ չորութիւնը և բարոյն վրայ անհաւատարմութիւնը երկար
կեանքի մը ամենադառն փորձառութեան պատուէն են , աշխարհի
վրայ բան մը չկայ որ այնքան կարեկցութեան արժանի ըլնի որքան
դեռահաս այլ կասկածոտ սիրա մը :

— Պարոն , պատասխանեց օրիորդ Վարօք , իր խօսուածքին ան-
տվար եղող խանդով մը , չզիտէք ինչի վրայ կը խօսիք : Եւ ա-
ւելցուց խտիւ , կը մոռնաք որու կը խօսիք :

— Այդ իրաւ է , օրիորդ , պատասխանեցի կամաց մը խնայրհե-
լով , քիչ մ'առանց գիտնալու կը խօսիմ , այլ առաջին օրինակը
դուք տուիք :

Ան ատեն օրիորդ Մարգարիտ , աչքերը ճամբան պատող ծառե-
րուն գաղաթներուն վրայ յառելով հեղինական հպարտութեամբ մը
ըսաւ .

— Հմբկ է արդեօք թողութիւն խնդրել :

— Եթէ երկուքնէս մէկը պէտք է թողութիւն խնդրել , հարկու
դուք էք այն , օրիորդ , պատասխանեցի աշխուժիւ , վստայ զի դուք
հարուստ էք և ես աղքատ , դուք կրնաք խնայրհել . . . այլ ես
չեմ կրնար :

Առութիւն մ'եղաւ : Իր սեղմուած շուրթերը , բացուած ոնդուն-
քը և դէմքին յանկարծական դեղնութիւնը իր ներքին յուզմանքը
կ'այտնէին : Յանկարծ բարևելու պէս իր մտքակը լջեցընելով ,

— Աս ուրեմն , ներեցէք , ըսաւ և միևնոյն ատեն ձին ուժգին
մտրակեց և մեկնեցաւ արշաւակի , ճամբուն մէջ տեղը զիս մնաւ օ-
րիկ թողով :

Անկէ 'ի վեր զինքը տեսած չեմ :

Հաւանականութեանց հաշիւը երբէք այնչափ ունայն կամ սխալ
չէ , որքան երբ կնոջ մը մտածմանց և զգացումներու վրայ կ'ըլ-
նուի :

Մէջերնիս անդի ունեցած անասորձ դէպքէ ետքը , շատ մ'օրի-
որդ Մարգարիտի առջև երևալ չուզելով երկու օրէ 'ի վեր զզեկը
չգացեր էի , յուսովով որ այս կարծ միջոցը այն հպարտ սրտին
մէջ արթնացած սիս փարատելու հաղիւ կը բուէր :

Սակայն , երէկ չէ առջի օրը ժամը 7ի մօտերը , այն ինչ աշ-
տարակիս բաց պատահանին քով կ'աշխատէի , յանկարծ լսեցի որ
մտերմական զուարթութեան եղանակաւ մը զիս կ'կանչէր նոյն իսկ
այն անձը որ կը կարծէի թէ ինձ թշնամի ըրած էի :

— Միթէ հոգ էք , Պ. Օտիօ :

Պատահանը եկայ անմիջապէս և կամուրջին քով հանդչող նա-
ւակի մը մէջ , օրիորդ Մարգարիտը նշմարեցի սր մէկ ձեռքով իր
յարդէ թխորակի զլխակին եզրը կը վերցնէր աչերը դէպ իմ մթին
աշտարակը դարձնելով :

— Ահաասիկ եմ , օրիորդ , ըսի շտապաւ :

— Պարտելու կը գա՞ք :

Իրաւացի վախերով երկու օր ասնջուելէ ետք՝ այսբան զիջում
վախոյս որ (ինչպէս կ'ըսեն) տեսածս խնթ երազ մը չըլնի :

— Ներեցէք օրիորդ , ինչ ըսիք :

— Պարտելու կը գա՞ք քիչ մը , Ալէնի , Մէրվինի ու ինծի հետ :

— Անտարակոյս , օրիորդ :

— Աս , նկարի ատարակը առէք ուրեմն :

Վար իջայ փութով և գետեզերք վազեցի :

— Ա՛հ, ա՛հ, ըստ ինձ պարմանուհին խնդալով, կ'երևի թէ այս օր զուարթ էք :

Միշտ զուարթ ըլնիս հասկըցընելու մտօք քանի մը խառն ու շփոթ խօսքեր մնւրացի, որով օրիորդ Մարգարիտ չհամողուեցաւ, ետքը մակոյկին մէջ ցատկելով իր քովը նստայ :

— Թիավարէ, Ալէն, ըստ նա իսկոյն, և ծերուկն Ալէն որ վարպետ նաւավար կը ձևանայ, սկսաւ կանոնաւոր կերպով թիերը շարժել թուչելու համար պարասպ փորձեր ընող ծանրամարմին թուչունի մը նման :

— Կ'երևի թէ, շարունակեց ան ատեն ինձ դառնալով օրիորդ Մարգարիտ, հարկ էր որ ես գայի զձեզ ձեր ամբողջ հանելու համար, որովհետեւ երկու օրէ 'ի վեր յամառութեամբ քէն կը պահէիք :

— Աը հաւաստեմ զձեզ, օրիորդ, որ միայն խոհեմութիւնը . . . ակնածութիւնը . . . վախը . . .

— Տէր ողորմեա, ակնածութիւնը . . . վախը . . . : Քէն կը պահէիք լմնցաւ : Այլ մենք ձենէ լաւադոյն ենք անվրէպ : Մայրս որ չգիտեմ ինչ պատճառաւ կ'ուզէ որ հետեւելու շատ յարգանօք վարուինք, աղաչեց որ ձեր հպարտութեան խորանին վրայ զո՛՛՛ր ընիմ ու եռ ալ իբր հլու և հնազանդ աղջիկ, կը զոհուիմ ահա :

Բացարձակ ու եռանդուն կերպով իմ անկեղծ երախտադիտութիւնը իրեն յայտնեցի :

— Գործը կիսկատար չընելու համար, ձեր քմաց յարմար խրախու՛նք մ'ընել ուզեցի, ուստի ահա ձեզի ամառային գեղեցիկ առաւօտ մը, լուսոյ ամեն փափաքելի արդիւնքները ներկայացընող անտառներ ու ծառերու մէջ բացավայրեր, տերևներու ներքև գեղդ գեղուն թուչուններ և կոհակին վրայ սահող խորհրդաւոր մակոյկ մը . . . : Գուր որ այս տեսակ պատմութիւնները կը սիրէք, պէտք էք զո՛՛՛հ ըլնիլ :

— Գլխովին զմայլուն և արբշիւ եմ, օրիորդ :

— Ա՛հ, անյաջող չեմ ուրեմն :

Իրօք բազդէս բաւական զո՛՛հ էի սոյն պահուն : Գետակին երկու դարափու՛նքը որոնց մէջտեղէ կը սահէինք, ծածկուած էին դալարի խոտերով որ օդը անոյշ հոտերով կը լեցընէին : Բոլորտիքս արագ

ծորագ խոյս կը տային շերոցին մութ ծառուղիները զորս առաւօտեայ արևը լուսափիւռ ցնցուղներով կը ընուր և ծաղկանց բաժակներուն մէջ բիւրաւոր զեռուններ ուրախ զուարթ բզլալով կ'դինովնային ցօղով :

Բարին Ալէն դիմացս նստած, թիերը ամեն մէկ անգամ շարժելուն կամարար ու պաշտպան եղանակաւ մ'ինձ կը ժպտէր : Օրիորդ Մարգարիտ իր սովորութեան հակառակ ձերմակ հաղուած՝ գեղանձն, թարմ և յակնթի նման անրի՛ծ՝ աւելի մօտս բազմած էր և մէկ ձեռքով կը թոթուէր այն խոնտ մարգարիտները որ առաւօտեայ ժամը իր զլիարկի տանթէլէ կը կախէր և միւսը խայծի մը պէս կը ներկայացընէր հաւատարիմ Մերվինին որ 'ի լուզ կը հետևէր մեզի :

Ստուգիւ շատ աղաչանքի հարկ չկար դիս համողելու համար որ այս սպիտակ նաւակին մէջ մինչև աշխարհիս ծայրը երթամ :

Այն ինչ շերոցին սահմաններէն դուրս կ'եղնէինք շրջապատ որմը ծակող կամարներէ մէկուն տակէն,

— Պարոն, չէք հարցըներ թէ զձեզ ո՞ւր կը տանիմ, ըսաւ նորատի գաղթածինը :

— Չէ, չէ, ատոր բողբոլին անտարբեր եմ :

— Զձեզ կիսերու աշխարհը կը տանիմ :

— Մտքս կ'անցնէր :

— Օրիորդ ձէլուէն, որ բանաստեղծական տեսիլներու ինչ աւելի հմուտ է, անշուշտ ըսած է ձեզի որ քսան միոն շրջաբերութեամբ երկիրը ծածկող պտրակները, հին Պրօսէլեանտ անտառին մնացորդներն են ուր ձեր բարեկամուհի օրիորդ տը ԲէրՏօէի նախահարք Աալէան թագաւորները յորս կ'հեծնէին, և ուր այս Մէրվինին պապը թէև կախարդ՝ Ալիւեան անուն օրիորդէ մը կախարդուեցաւ : Արգ՝ այս անտառին մէջտեղը պիտի գտնուինք հիւս և եթէ այսքանը բաւական չէ ձեր երեակայութիւնը զրգուելու, դիտցած եղիք որ այս մայրաւները Աեղտեան խորհրդաւոր կրօնին բիւրաղի հետքը կը կրեն ու անոնցմով ծածկուած են : Աւստի այս ամեն հովանիներու տակ, սպիտակազգեստ արուխտ մ'երևակայելու, և արևու ամեն մէկ ճառագայթին մէջ ոսկի մանդաղի մը շող շող փայլելը տեսնելու արածու՛թիւնը ունիք : Այս անտառնելի ծերերու կրօնը, լիպատանական, նկարագրական, ևսու՛, ուրիշ շինութիւն

մ'ես ձգած է հոս մօտ անմարդի տեղ մը, որու առջև մտային յափշտակութեան արամազիր եղող անձինք թաղխանալու սովորութիւն ունին: Մասածեցի որ կարելի է հաճելի էր ձեզ անոր պատկերը դժողբել, և որովհետև տեղը գտնելը զիւրին չէ, 'ի մտի գրի ձեզի կարապետ ըլնել միայն սա տրիտուրը խնդրելով որ, 'խնայէք ինէ այնպիսի դարմայման մը յայտարարութիւնները որու ես չեմ կարող մասնակցիլ:

— Աա, ինքզինքս կը բռնեմ, օրիորդ:

— Աղաչեմ:

— Անհոգ եղիք: Եւ այդ շէնքը ինչպէս կ'անուանէք:

— Ես խոշոր քարերու կոյտ մը կ'անուանեմ զայն: Հնազանդութեան, պարզապէս Տօլմէն*, աւելի մնապարծեբը Քրօմլէխ † և տեղացիք առանց պատճառը մեկնելու Մէկրօրթ ‡ կ'ըզնն զայն:

Այսպէս խօսելով, գետին հոտանքին հետ դար վար կ'իջնէինք խոնաւ մարմանդներու մէջ տեղէ: Մանրուկ, սե ու մեծ մասամբ երկայն ու սրածայր եղջիւրներով ցուլեր, մեր թիերու, ձայնէն ոտք ելնելով գաժան նայածքով մը զմեզ կը դիտէին: Չորը ուր գետակը կը սողոսկէր ու երթալով կը լայննար, երկու կողմէ դուրսը էր բլուրներու շղթայով մը որոնցմէ ոմանք չոր խտերով և ոմանք կանաչադեղ մայաւներով ծածկուած էին: Մերթ ընդ մերթ երկու սարակներու մէջ տեղէ շեղակի լեռանցամէջ մը, մանուածապատ հեռանկար պատկեր մը կ'ընար առջևնիս որու խորը, հեռուոր լեռան մը կապուտակ գաղաթը կը տեսնուէր:

Օրիորդ Մարդարիտ, իր անձեռնհասութեան հակառակ՝ այս վայրենի և անոյշ բնավայրին զեղեցիկութեանց վրայ հետզհետէ իմ ուշադրութիւնը կը հրաւիրէր, իր ամեն մէկ գիտողութեանց վրայ անձնապահ հեղնութիւն մ'ալ աւելցնելով:

Քանի մը վայրկենէ 'ի վեր, խորունկ և անընդհատ ձայն մը, կար-

*Տրուխեան կամ Քեղոտան շէնք որ երկու ուղղորդ ձեւով կանգնած քարերու վրայ մեծ տափարակ քարէ մը կը բաղկանար: Արարածի մէջ Քեղոտան մարտիկներու դամբաններն եղած ընթին ասոնք:

†Քրօմլէխները նոյնպէս Տրուխեան շէնքեր էին եւ կ'ըզննային բոլորածն շարուածմեծ քարերէ՝ որոնց մէջ տեղը աւելի բարձր քար մը կար ուղղանայնաց ձեւով կանգուն:

‡Մօրպիխանի Քատուտայ անտառին մէջ:

ծես սահանքի մը մերձաւորութիւնը կը ծանուցանէր մեզի երբ յանկարծ հովիտը մէկէն 'ի մէկ նեղնալով, վայրենի և անմարդի կրճի մը երեւոյթն առաւ: Չախ կողմէն ժայռէ լուռուտ պատ մը կը բարձրանար: Բազեղող ու պատաստուկ խոտերով խառն եղեխներ ու կաղնիներ մինչև առապառին գաղաթը խոռոչներուն մէջ կը գիզուէին բարդ 'ի բարդ ու խորհրդաւոր շուք մը կը ձգէին ապառաժին ստորտար աւարածուող աւելի խորունկ ջուրին վրայ: Մեր առջև քանի մը հարիւր քայլ անդին՝ ջուրը կը պղպջար, կը փրփրար և յետոյ մէկէն աներեւոյթ ըլնելով գետակին ընդհատ գիծը ճերմկորակ չողիի մը մէջէ հեռուոր ու աղօտ կանաչ յատակի մը վրայ կ'որոշուէր: Այլ կողմերնիս, ժայռերուն գիմացի գետեզերքը զառ 'ի թափ պղտի մարդագետին մը կը ներկայացնէր որու վրայ անտառուտ բլուրները թխագոյն թափիչէ քիւ մը (frange) կ'գծէին:

— Ցամաքին մօտեցո՛ւր, ըսաւ նորատի գաղթածինը:

Մինչդեռ Ալէն նստակը ուռնիի մը ոտներուն կը կապէր,

— Է՛հ, լաւ, պարոն, շարունակեց նա թեթեակի խոտերուն վրայ ցատկելով, չէք մարիք, չէք զգեսնիր աշուպեալ ու շանթահար: Արսեն սակայն թէ այս տեղը շատ աղուոր է: Ես ալ կը սիրեմ զայն վանն զի միշտ զով է . . . այլ եթէ կը համարձակիք, այս անտառներու մէջ հետեւեցէք ինձ, որպէս զի այն նշանաւոր քարերը ցուցնեմ ձեզի:

Օրիորդ Մարդարիտ, երկու ոտսով մարդագետնէն անցաւ այնպիսի աշխուժիւ, զուարթութեամբ և կայտառութեամբ մը որ վրան տեսած չէի երբէք, և մտաւ արահետի մը մէջ որ բլուրներէ վեր ելնելով անտառին մէջ կը յառաջանար: Ալէն և ես կարողով իրեն հետեւեցանք: Քանի մը վայրկեան արշաւակի քայլէտեքը մեր առաջնորդը կայ առաւ, սրահ մը խորհեցաւ բռնելիք ճամբուն վրայ ետքը իրարու պլլուած երկու ոտներ բաժնելով հորդուած ճամբէն ելաւ համարձակ ու մացաւներու մէջ նետուեցաւ:

Ճամբորդութիւննիս նուազ ախորժելի եղաւ ան ատեն: Այս մացաւները կազմող նորարոյս կաղնիներու մէջէ՝ որոնք արդէն ուժեղ էին և Բօպէնսօնի ցրցապատնէններու նման իրենց ծոխի ժոխի կոճղերն ու խիտ ոտները իրար կը խառնէին, ճամբայ բանալը շատ դժուար էր: Գէթ ես ու Ալէն, մեծ դժուարութեամբ կրնայինք յառաջանալ, երկու ծալուած՝ ամեն մէկ քայլերնուս զուխ-

նիս կը զարնէինք և մեր ամեն մէկ շարժումով ցօղի անձրև մը կը պատճառէինք. բայց օրիորդ Մարգարիտ իր սեռի գերազոյն ճարպկութեամբ ու կատուանման դիւրաշարժութեամբ, առանց զգալի նեղութեան՝ այս լարերինթոններու մէջէ կ'սպրդէր մեր տառապանքներու վրայ խնդալով և անհոգութեամբ կ'ընդունէր որ իր ետեկէն դիւրակոր ոտները ձգուելով գան մեր աչերը մարակեանք։

Հուսկ ուրեմն, այս բլրան գաղաթը պսակող նեղ ծառու մէջ մը հասանք ուր առանց յուզուելու չկրցայ տեսնել տխուր և վիթխարի քարի սեղանը հինգ կամ վեց ահագին պատուանդաններու վրայ՝ որոնք կէս մը հոգին մէջ թաղուած են և իրօք նուիրական սոսկումով լի քարայր մը կը շինեն։ Այս գրեթէ առասպելական ժամանակներու և նախնական կրօնքներու մէջ, առաջին տեսութեամբ այնպիսի ճշմարտութեան ոյժ մը և իրական ներկայութիւն մը կայ, որ մարդուս հոգին կը խռովէ ու կը գողացընէ զանի։ Արևու քանի մը ճառագայթներ տերևներու մէջէ թափանցելով ու անջատ քարերէ սպրդելով՝ աղետաբեր սալաքարին վրայ կը խաղային և այս բարբարոսական խորանին հովուական շնորհք մը կ'ընծայէին։ Նոյն իսկ օրիորդը մտախորհ ու զգաստ կ'երեւէր։ Իսկ ես քարայրին մէջ մտնելէ ու Տօլմէնը իր ամեն կերպարաններու ներքև քննելէ ետքը, սկսայ զայն զձագրել։

Գրեթէ տասը վայրկեան կար, որ այս աշխատութեամբ զբաղած էի, առանց հոգս ընելու ինչ որ բոլորսիքս կրնար անցնել, երբ օրիորդ Մարգարիտ յանկարծ ըստւ․

— Միթէ պատկերնիդ կենդանացնելու համար Վէլլեֆ* մը կ'ուզէք։

Աչերս վեր վերցուցի։

Օրիորդ Մարգարիտ իր ճակտին բոլորտիքը կազնի տերևները բուրբոն՝ ու Տօլմէնին գլուխը կանգուն կեցած էր թեթևակի մը նուրբոյս ծառերու կռթնելով։ Տերևներու կիսաստուերին տակ իր սպիտակ շրջագոյն սարմորի պայծառութիւնը կ'առնուր ու իր պսակէն յառաջ եկած շուքին մէջ իր բերբերը տարօրինակ կրակով մը կը շողային։ Գեղանի էր նա և կարծեմ գեղանի ըլնելը գիտէր։ Իրեն կը նայէի առանց ըսելիք բան մը գտնելու երբ յարեց,

* Գերմանական քրմունի։

— Ենեմ թէ որ ձեզ նեղութիւն կը տամ։

— Ոչ, մ'եղնէք, կ'աղաչեմ։

— Հուտ ըրէք ուրեմն, Մէրվինն ալ զրէք, ան տրուխտը և ևս տրուխտուհին կ'ըլնինք։

Ստուերագիրներու յատուկ եղող անորոշութեան շնորհիւ, այս քանաստեղծական տեսիլը բաւական ճշգիւ գծագրելու երանութիւնը ունեցայ։ Օրիորդ Մարգարիտ արարանքի ցոյցով մը զձագրուեցիւնը տեսնելու եկաւ։

— Գէշ չէ, ըսաւ։

Յետոյ իր պսակը մէկդի նետոց խնդալին ու աւելցուց։

— Խոստովանեցէք որ բարեսիրտ եմ։

Խոստովանեցայ զայս, ասկէ զատ եթէ ուզէր սա ալ կը խոստովանէի որ քիչ մը հպտանք ևս ուներ, այլ թէ որ հպտանք չունենար կին չէր ըլնէր նա ու կատարելութիւնը ասելի է։ Նոյն իսկ զիցուհիները, սիրուելու համար իրենց անմահ գեղեցկութենէն ուրիշ բան մ'ալ պէտք ունէին։

Անել մացառներուն մէջէն անտառին մէջ հորդուած արահետը գարձանք և դէպ 'ի գետակը իջանք։

— Մեկնելէ յառաջ ձեզի սահանքը կ'ուզեմ ցուցնել, ըսաւ ինձ պարմանուհին, մանաւանդ որ ես ալ քիչ մը զրօնուել կ'ուզեմ ըստ կարգի։ Եկու, Մէրվին, եկու բարի շնիկս, ո՛հ, ինչ գեղեցիկ ես։

Ընդ հուպ գետակին փոսը փակող խութերու դիմացի եզերքը գտնուեցանք։ Ջուրը քանի մը ոտք բարձրութենէ, սեպ ակերտով, լայն և բոլորաձև աւազանի մը մէջ կ'զահալիժէր որ նամէտ ժայռերով սփռուած գալարի ամփիթատորնով մը պատած էր։ Սակայն քանի մ'անտեսալի փայտի պղտի ըճակին աւելցուելը կ'ընդունէին և այս առուակները նորէն կ'երթային քիչ մը հեռուն կը միանային հասարակաց փոսին մէջ։

— Այս ճիշդ Նիակարա մը չէ, ըսաւ ինձ օրիորդ Մարգարիտ, հասանքին ձայնը խղրելու համար՝ քիչ մը ձայնը բարձրացնելով, այլ ձեռնհաս՝ այն է, արհեստագէտ մարդերէ լսած եմ որ ոչսակա սիրուն է ըստ բաւականի։ Սքանչացաք հէ։ Լաւ, հիմակ ալ կը յուսամ որ եթէ վրանիդ քիչ մը եռանդ մնաց ան ալ Մէրվինի կ'շնորհէք։ Հուս եկու Մէրվին։

Ամբիկեան դամիւր եկաւ իր տիրուհոյն քով կեցաւ ու անձ-
կութենէն դողալով երեսը նայեցաւ : Անտոնն պարմանու հին իր շուշ-
տակը քանի մը քայլախաղերով լեցուց և հոսանքին մէջ նետեց
սահանքէն քիչ մը վեր : Մերվին՝ անմիջապէս միաձոյլ ժայռի մը
պէս աւազանին մէջ նետուեցաւ ու գետեզերքէն հեռացաւ փոյթ
'ի փոյթ :

Հուշտակը ջրին հոսանքին հետեւելով խութերուն հասաւ , վայ-
րիկ մը յորձանքին մէջ դարձաւ ալեյոյզ , ետքը յանկարծ յղկուած
ժայռին վրայէն սլաքի պէս անցնելով եկաւ փոփոբէ կոհակի մը
մէջ շրջան առաւ շան աչքին տակ՝ որ զայն բերնովը բռնեց արա-
դափոյթ և զոյշ խածուածքով մը : Յորմէ ետքը Մէրվին յոխոր-
տանօք գետեզերք վերադարձաւ ուր օրիորդ Մարգարիա կը ծափէր
զուարթուն :

Այս սքանչելի խաղը միեւնոյն յաջողութեամբ քանի մ'անգամ
կրկնուեցաւ : Վեցերորդ կրկնութիւնը ընելու վրայ էր երբ այն-
պէս պատահեցաւ որ կամ շան ուշանալովը և կամ շուշտակը շուտ
նետուելով , խեղճ Մէրվինը վրիպեցաւ :

Հուշտակը սահանքներու յորձանքէն մղուելով փշոտ թուփերու
մէջ մտաւ որոնք քիչ մ'անգին ջրին երեսը կ'երևէին : Մէրվին
զայն առնելու դնաց , այլ մեծ եղաւ մեր զարմանքը երբ տեսանք որ
ջրաձողօրէն յուզուեցաւ նա ու բերնին որսը թողուց ողբաղին հե-
ծիւններով գլուխը մեզի դարձնելով :

— Ա՛հ , աստուած իմ , ինչ եղաւ արգօք , դոչեց օրիորդ Մար-
գարիա :

— Կարծեմ՝ այն թուփերուն մէջ ոտնակաղ բռնուեցաւ : Բայց
հիմակ կ'երևէ , մի վախնար :

Քիչ մ'ետքը սակայն հարկ եղաւ վախնալ և նոյն իսկ յուսահա-
տիլ : Ջրբաղեղի (liane) հիւսկէնը՝ որու մէջ խեղճ գամիւր բռնուած
էր իբր 'ի թակարթի , ուղղակի յցապատանէշին մէկ ծակին տակը
բուսած էր ուրիշ փոփոբէզ ջրի զանդուած մը անդուլ անդա-
դար Մէրվինին զլխին վրայ կ'ըյնէր : Թշուառ անասունը կէս մը
խղրուած՝ իր կապանքը խորտակելու համար ամեն ճիգ մէկ զի ըրաւ
ու իր լալաղին հաւիւնները խրալու հեղձական եղանակն առին :

Այս միջոցին օրիորդ Մարգարիա թեւ բռնեց ու կամացուկ ձայ-
նով մը գրեթէ ականջիս ըսաւ :

— Կորսուած է նա . . . եկէք , պարոն . . . երթանք :
Երեսը նայեցայ . վիշտը , անձկութիւնը ու բռնագատութիւնը , իր
սովորին գծագրութիւնը 'ի վեր 'ի վայր յուզելով՝ իր աչերու տակ
կապոյտ ծիր մը կը բոլորէին :

— Մաղոյրը հոս իջեցրնելու հնարը չկայ , բսի իրեն , այլ եթէ
կը ներէք , քիչ մը լողալ գիտեմ և կ'երթամ այս պարոնին օդնու-
թեան ձեռն կարկառելու :

— Ա՛յ , ո՛չ , մի փորձէք . . . ասկէ մինչև հոն բաւական հեռի
է . . . ասկէ զատ միշտ լսած եմ որ հեղեղատին տակ գետը խո-
րունկ է և վտանգաւոր :

— Միամիտ եղիք , օրիորդ , ես մեծ զգուշեաւ կը վարուիմ :

Այս ըսելով վրայի կապոյտ (jaquette) խոտերուն վրայ նետեցի
ու լծակին մէջ մտայ միշտ հեղեղատէն բաւական հեռու կենալու
զգուշութիւնն ընելով : Իրօք ջուրը շատ խորունկ էր , վասն զի միայն
հողեվարը Մէրվինի մօտեցու առնաւ ոտքս գետին դպաւ :

Չգիտեմ որ արգօք ժամանակաւ կղզեմի մը կար հոն որ սակաւ
առ սակաւ կորսուեր կամ վար իջեր է , կամ թէ ջրերու աճումը
յցապատիէշին կտորները հոս բերած խրած է , այլ օտ ստոյգ է որ
այս մասնաւոր ջուրերու տակ թուփերու և բոյսերու թառուտ մը կը
պահուի ու կը բարդաւածի : Ոտքս գրի այն կոճղերէ մէկուն վրայ
որմէ թուփերը բուսած կ'երևէին ու կրցայ ազատել զՄէրվինը որ
շարժելու կարող եղածին պէս իր ամեն միջոցները վերստին ձեռք
ձգեց և անյապաղ դէպ 'ի գետեզր լողաց բոլոր սրտովը զիս մի-
նակ թողլով :

Այս վարմունքը չէր պատասխաներ բնաւ այն աստիտական համ-
բաւին որ իր սեռը ստացած է , այլ բարին Մէրվին , մարգերու
մէջ շատ ասրած ընելուն՝ կարծեմ՝ քիչ մը փրիսոփայ եղած է :

Այս բաները խորհելով այն ինչ իրեն հետեւելու համար շարժիլ
ուզեցի , նեղութեամբ տեսայ որ ըստ կարգի ես ալ բռնուած էի
նախանձոտ և շար նայատին ուղիւններուն մէջ , որ ըստ երևութի՝
այս տեղերու վրայ կ'տիրապետէ : Սրունքներէս մէկը ջրբաղեղի ու-
տերէ մէկուն մէջ բռնուած էր և պարսպ տեղ զայն ազատելու
կաշխատէի : Խարունկ ջուրի մը մէջ և մուծանող յատակի մը վրայ
դիւրին չէ բոլոր ոյժը գործածել , ասկէ զատ փոփոուն ջուրերուն
յարտուեցնողներէ ալ կէս մը կուրացած էի :

Վերջապէս զգացի որ իմ գիրքը երկդիմի կ'ընէր: Նայուածքս գետեղերը դարձուցի և տեսայ որ օրիորդ Մարգարիտ՝ Ալէնի թեւէն կախուած՝ անդունդին վրայ կ'ծուէր և իմ վրայ մահացու անձկութեամբ լի նայուածք մը կ'սեւեւէր: Մն ատեն ըսի իւրովի որ կարելի է իմ ձեռքս էր այն գեղեցիկ աչքերը յարտօսը շարժել ու խեղճ կեանքի մը նախանձելի վախճան մը տալ: Յետոյ այս թոյլ և յոյլ խորհուրդները մէկ գի ըրի, բուռն ճիգ մը զիս փրկեց, վզիս կապեցի պղտի շուշտակը որ բղիկ բղիկ եղած էր և հանդարտութեամբ գետեղերը դարձայ:

Յամբը ելնելու վայրկենիս, օրիորդ Մարգարիտ՝ իր ձեռքը որ քիչ մը կ'դողար, ինծի երկեցուց: Այս բանը կարի քաղցր թուեցաւ ինծի:

— Ինչ խեղդութիւն էր ըրածնիդ, ըսաւ նա, ինչ խեղդութիւն էն կրնայիք մեռնիլ դուք շան մը համար:

— Այդ շունը ձերն էր, ըսի կէս ձայնով ինչպէս որ ինք խօսեցած էր:

Այս խօսքը անխորժ թուեցաւ իրեն գողցես, իր ձեռքը քաշեց խտտի և Մէրվինի դառնալով որ յօրանջելով արեւուն գիմացը ինքզինքը կը շարժէր, սկսաւ ծեծել դան:

— Ո՛հ, տխմար, մեծ տխմարը, ըսաւ: Ինչ անբան է:

Այս միջոցին ես խտտերու վրայ կեցած էի թրջած հաւի պէս և ինքզինքս ինչ ընելու չէի գիտեր, երբ պարմանուհին ետ դառնալով բարութեամբ շարայարեց:

— Պարոն Մաքսիմ, նաւակը առէք ու գացէք շուտով, թի քաշելով կը տաքնաք քիչ մը. ես անտառներու մէջէ՛ Վլէնի հետ տուն կը գառնամ: Ճամբան աւելի կարճ է:

Վաճեն կողմէ այս կարգադրութիւնը լաւագոյն կ'ըմբռնէր ինձ, ուստի առարկութիւն մը չըրի: Մնաք բարև ըսի և երկրորդ անգամ Մէրվինի տիրուհւոյն ձեռքը սեղմելու հաճութիւնն ունենալէ ետք նաւակին մէջ նետուեցայ:

Տուն դարձած ասեն՝ զարմացոյ հագուելու միջոցիս տեսնելով որ վիզս մնացեր էր այն պղտի և պատուած շուշտակը որ օրիորդ Մարգարիտի տալու մոռցեր էի: Նա զայն կորուսած կը կարծէր անշուշտ ուստի սիրով ինձ սեփհականել որոշեցի զայնիմ ջրային մրցուծին իբր հատուցում:

Իրիկունը դեռակը գացի, օրիորդ Մարգարիտ զիս ընդունեցաւ այն արհամարհական անհոգութեան, տխուր մտադրադուլթեան և դառն ձանձրութեան եղանակաւ՝ որ իրեն սովորական է և որ անատեն այնպիսի զարմանալի հակապատկեր մը կը ներկայացընէր իմ առաւօտեայ ընկերուհւոյն շնորհալի քաղցրութեան և զուարթ աշխուժութեանը հետ:

Ճաշի վրայ, որու ներկայ էր նաև Պէվալլան, մեր արշաւանքին վրայ խօսեցաւ նա, անոր որ և է զաղանիքի մը երևոյթը չտալու համար:

Բնութեան սիրահարներու նկատմամբ՝ անցողակի քանի մը կտրուկ հեզնութիւններ ըրաւ, ետքը խօսքը լմնաց Մէրվինի արկածը պատմելով, այլ այն վերջին անցքէ պահեց այն մասը որ ինձ կ'վերաբերէր:

Եթէ ինչպէս որ կը կարծեմ, այս զգուշութեան նպատակը զիս ալ խոհեմութեան հրախրել էր, պարմանուհին խիստ անօգուտ աշխատութիւն մը յանձն կ'առնուր: Ինչ և է, Պ. Պէվալլան այս պատմութիւնը լսելու ատենը իր յուսահատական ձայներովը զմեզ խլցուց:

— Ինչ, օրիորդ Մարգարիտ այն երկար նեղութիւնները քաշեր քաջն Մէրվին այն վտանգներու մէջ ընկեր էր, և ինքը Պէվալլան հոն չէր գտնուած: Գժբաղդութիւն: Այս բանը պիտի չկրնար երբէք մոռնալ ու մոխթարուիլ, ալ ոչ այլ ինչ կը մնար իրեն, բայց եթէ երթալ ու Բրիլլօնի պէս կախուիլ:

— Հը՛, լաւ, ըսաւ, իրիկունը ձերն Վլէն զիս օթոցս տանելու ատեն, եթէ կախուած տեղէն զինքն ազատելու համար ինչ ուրիշը չգտնուէր, շատ պիտի շարտորայի:

— Երէկուան օրը սակայն, աս ջի օրուան պէս ուրախութեամբ չսկսաւ ինծի համար: Առտու կանուխ Մատրիտէ նամակ մը ստացայ որ ինձ կը յանձնէր ծանուցանել օրիորդ տը Բէրհօէի թէ իր պատը վերջնական կերպով կորսուած էր:

Գործակատարը ասկէ զատ կ'իմացընէր նաև թէ այն ընտանիքը ու-

* Բրիլլօն, 16րդ դարու ամենէ քաջ գորպայետներէ մէկն էր: Հէնրիկոս Գ. զանի քաջն Բրիլլօն կը կանչէր միշտ եւ անգամ մ'որ գորպայետը Արքի պատերազանի ներկայ գտնուած չէր՝ անոր կ'գրէր «Ինքզինքը կախէ, քաջը Բրիլլօն, մենք պատերազմեցանք յԱրք եւ դոն չկայիր»:

բու դէմ ինք դատ վարած էր, իր յաղթութեան պտուղը չէր կա-
բող վայելել, վասն զի նա հիմակ անբու թեան դէմ կը մաքաւէր,
որ այս միլիոններու ձայնէն արթնցած՝ կը սնդէ եղեր թէ ժառան-
գութիւնը իրեն կ'ըլնի պանդուխտ և օտար ցեղէ մը գալուն համար:

Երկայն խորհրդածութիւններէ ետքը, այնպէս թուեցաւ ինձ որ
տղբմասիրութիւնը պարտ կը դնէր վրաս որ իր յոյսերու բոլորովին
փճանալը բարեկամութիւնս պահեմ: Աստի 'ի մտի ունիմ Սպանիոյ
գործակատարին մեղսակցութիւնը ձեռք ձգել, ապապրելով որ նոր
պայմանաժամեր պատրուակէ: Իմ կողմէս՝ զիւանագրութեանցս
մէջ հետազօտութիւններս պիտի շարունակեմ և ձեռքէս եկածը
պիտի ընեմ որպէս զի խեղճ կ'ինը մինչև իր վերջին օրը իր սիրա-
կան երազներովը մնայ: Արքան որ այս խարէութեան նպատակը օ-
րինաւոր էր, ուղեցի սակայն քանի մը փափուկ խղճերու նուիրա-
գործութիւնն ալ ստանալ, ուստի կէսօրէ ետքը զզեկը գացի ու գոր-
ծին եղելութիւնը արկին Լարօքի խոստովանեցայ. ճրագիրս հասնե-
ցաւ ան ալ ու նաև պէտք եղածէն աւելի գովեց զիս:

Մեծ եղաւ զարմանքս մանաւանդ երբ նա մեր խօսակցութիւնը
այս խօսքերով վերջացուց:

— Ժամանակը երաւ, պարոն, ձեզ ըսելու որ սաստիկ երախտա-
գէտ եմ ձեզի ձեր ինամոց համար, և օրէ օր ձեր ընկերութենէ
աւելի արտօմ և անձին համար աւելի յարգանք կ'ըզգամ: Ար փա-
փաքէի, պարոն (ներցէք ինձ, վասն զի հարկաւ այս փափաքը դուք
ալ չէք կրնար ունենալ) որ երբէք չբաժնուինք. . . : Խոնարհու-
թեամբ կ'աղաչեմ զՆստուած որ այս բանիս համար բոլոր պէտք ե-
ղած հրաշքները ընէ. . . որովհետև քաջ զիտեմ որ հրաշք պէտք
է:

Այս խօսքերու ճիշդ նշանակութիւնը չկրցայ ըմբռնել ինչպէս նաև
այն յուզմունքը որ այս պատուական կնոջ աչերուն մէջ փայլեցաւ:

Ինչպէս որ կը վայլէր շնորհակալ եղայ և դաշտերու մէջ իմ
տրամութիւնը ժուռ ամելու գացի:

Գիպուածը (որ իրան ըսելով զարմանալի չէր) ժամ մը քալե-
լէ ետքը զիս մենայեալ հովիտ մը, մեր նոր քաջութեան տեսարան
եղող աւազանին եզերքը տարաւ: Այս տեսնէ ու ժայտերէ բաղ-
կացած կրկէսը որ պղտի լճակը կը պատէ, մենութեան նոյն իսկ տես-
լական դաղափարը կ'իրացնէ: Հոն եղած ատենը, կարծես թէ ի-

քօք աշխարհիս ծայրն ես, կոյս երկրի մը վրայ, 'ի Ձին կամ ուր
որ կ'ուզես: Հաւամբերուն վրայ երկնցայ և միտքս բերի առջի օր-
ուան շրջագայութիւնս որ ամենէ երկար կեանքի մը շրջանին մէջ
երկու անգամ չէ կարելի ընել: Յրդէն կ'ըզգայի որ այսպիսի յա-
ջող բաղդի մը եթէ անգամ մ'ես հանդիպէի, ալ նոյն անակնկա-
լութեան, զուարթութեան, մէկ խօսքով անմղութեան հրապոյրը
պիտի չունենար այն:

Պէտք էի խոստովանիլ իւրովի որ այս երիտասարդական վէպը՝
որ իմ խորհուրդները կը խնկէր, միայն մէկ գլուխ՝ նոյն իսկ մէկ
երես կրնար ունենալ և զայն կարդացեր էի ես: Այս ժամը, իր
բուն անունը տալու համար, այս սիրոյ ժամը անոյշ էր գերազոյն
կերպով, վասն զի նախապատրաստուած չէր, վասն զի զայն վայելե-
լէ ետքը անոր անուն մը տալը մտքէս անցուցեր էի, վասն զի աւիւ-
նը զգացեր էի առանց սխալանքը գործելու:

Ալ հիմակ, խեղճս արթնցած էր, ինքզինքս, անհնարին, ծիծաղելի,
նա աւելին՝ մեղսալի սիրոյ մը զառ ի թափին վրայ կ'ըզգայէի: Ալ
ժամանակ էր որ ընկեցիկ ու թշուառս ինքզինքիս վրայ հսկէի:

Այս անմարդի տեղը նստած ոչին խրատները կ'ուզէի ինքս ինքիս
(թէև զանոնք ուղղելու համար հոն գալը հարկաւոր չէր մեծապէս)
երբ ձայներու աղմուկ մը զիս յանկարծ իմ մտադրալ վիճակէն հա-
նեց: Ոտք ելայ և տեսայ որ Ծ-Ն հօգիէ բաղկացած ընկերութիւն
մը՝ որ նոր ցամաք ելած էր, ինձ կը մօտենար:

Նախ օրիորդ Մարգարիտ կը դար Պ. Պէվալլանի թեկն կ'ախած,
յետոյ օրիորդ Հէլուէն ու տիկին Օպրի, որոնց կը հետեւին Ալէն
ու Մերվին:

Իրենց ոտնաձայնը սահանքներու շուռաչիւնէն խափանուած էր և
ալ ինէ երկու քայլ հեռի ընելուն՝ խոյս տալու ժամանակ չունէի
և կը պարտաւորէի համբերել այն տաղտուկութեան որ տխուր սիրա-
հարի ձեւերէս պիտի հետեւէր: Սակայն այս տեղ իմ ներկայութիւնը
մասնաւոր ուշագրութիւն մը չգրուեց, միայն օրիորդ Մարգարիտի
գէմբին վրայէ դժգոհութեան ամպի մ'անցնիլը և ակնբռն խօսու-
թեամբ մը բարևս առնելը տեսայ:

Պ. տը Պէվալլան լճակին եզերքին վրայ սնկուած՝ պահ մը բլբլն
արձապանդները յոգնեցուց իր զարմացման աննշան բացազանչու-
թիւններով,

— Հիանալի, նկարագրական: Ինչ համով տեղ. . . Ժօրժ Սա-
նի գրիչը . . . Սալվաթօր Ռօզաի վրձիչը:

Եւ այս ամենը ազդու ձևերով որ կարծես թէ կարգ ըստ կարգէ
այս մեծ արհեստողէտներէ իրենց հանձարի գործիքները փոխ կ'առ-
նուին: Ի վերջէ հանդարտեցաւ նա և ուզեց տեսնել այն դժուարին
անցքը ուր քիչ մնացեր էր որ Մէրվին կորսուի:

Օրիորդ Մարգարիտ, արկածը նորէն պատմեց, այլ միշտ նոյն
ըուծիւնը պահելով այն միջամտութեան վրայ որ վերջէն ես ը-
րած էի: Ննոր հակառակ տեսակ մ'անդթու թեամբ դովեց այն քա-
ջու թիւնը, աջուրջու թիւնն ու տաղանդը որ այս դիւցազնական պա-
րագայիս մէջ իր շունը ցուցրցած էր: Այնպէս կը կարծէր ըստ
երևուծի, որ իր անցաւոր բարեսիրու թիւնը և այն ծառայու թիւնը
որ իրեն ընելու երանութիւնը ունեցած էի զուխս յանձնապատան
կարծիքներով լցուցած էին քիչ մը զորս անհրաժեշտ էր խլել
անկէ:

Սակայն օրիորդ Հէլու էն ու տիկին Օպրի, Մէրվինի այնքան փա-
ռաբանեալ քաջութիւնը աչօք տեսնելու ջերմ բաղձանք մը յայտ-
նենուն՝ օրիորդ Մարգարիտ ամերիկեան դամիւրը կանչեց ու առջի
օրուան պէս իր շուշտակը գետակին մէջ նետեց. այլ այս նշանի
վրայ՝ արին Մէրվին լճին մէջ նետուելու տեղ, սկսաւ գետին եր-
կայնութեամբ վազել, երթալ զալ զարհուրած, հաջել մոլեղին,
պոչը շարժել, վերջապէս սաստիկ համակրութեան մը, և միանգա-
մայն պատուական յիշողութեան մը բիւրազի ապացոյցները տալ:
Իմացականութիւնը սրտին վրայ կը տիրէ անվրէպ այս կենդանուոյն
ներսը:

Պարագ տեղ, օրիորդ Մարգարիտ շփոթ ու զայրացած, զգուանքն
ու եպաւնախիբը փոփոխակի գործածեց իր սիրելւոյն յամառութեան
յաղթելու համար, բան մը չկրցաւ համոզել ուշիմ կենդանին որ
երթայ վերստին իր անդին անձը այն ահուելի ալիքներուն վտա-
հի:

Այնքան ուռուցիկ դովետներէ ետքը քաջն Մէրվինի յամառ խո-
հեմութիւնը ստուգիւ ծիծաղելի բան մ'ունէր և կարծեմ որ և է
մէկէ մ'աւելի անոր վրայ խնդալու իրաւունքն ունէի և 'ի գործ
գրի զայն: Ասկէ զատ խնդուքը քիչ մ'ետքը ընդհանուր եղաւ և
նոյն խի օրիորդ Մարգարիտ թէ և տկար կերպով՝ ընկերացաւ մեզի:

— Այս ամենով, ըսաւ նա, ահա ուրիշ շուշտակ մ'ալ կորսուե-
ցաւ:

Շուշտակը յորձանքին յարատե շարժումէն մղուած՝ բնականօրէն
գայեր խրեր էր դժնդակ թփին ստերուն վրայ, դիմացի եղբրքէն
քիչ մը հեռուն:

— Ինձ ապաստանեցէք, օրիորդ, դռնեց Պ. տը Պէվալլան: Տասը
վայրկիներէն կամ կը մեռնիմ, կամ շուշտակնիդ կ'ստանաք:

Այս վեհանձն յայտարարութեան վրայ, ինձ այնպէս թուեցաւ
որ օրիորդ Մարգարիտ զաղտագողի կերպով նշանական նայուածք
մը կը նետէր վրաս, իբրև թէ ըսելու համար. — Կը տեսնէք որ
բողորաբքս անձնասիրութիւնը հազուապիւտ չէ: Յետոյ Պ. Պէվալ-
լանին պատասխանեց.

— Յանուն Աստուծոյ. խեղութիւն մ'ընէք, ջուրը շատ խորունկ
է. . . իրական վտանգ կայ. . .

— Հոգս անդամ չէ այդ, յարեց Պ. Պէվալլան: Ինձի նայէ
Պէլէն վրադ. դանակ մ'ունիս անշուշտ:

— Գանա՛կ մը, կրկնեց օրիորդ Մարգարիտ զարմանքի եղանակաւ:

— Այո: Թողուցէք զիս, թողուցէք դուք:

— Բայց դանակը ինչ պիտի ընէք:

— Ոստ մը պիտի կտրեմ, ըսաւ Պ. Պէվալլան:

Պարմանուհին պշուցեալ երեսը նայեցաւ:

— Կարծէի որ, մոմուաց, լողալով պիտի առնէիք:

— Ոհ, լողալով, ըսաւ Պ. Պէվալլան, ներեցէք օրիորդ. . .
նախ և յառաջ լուղորդի հազուստով չեմ. . . ասկէ զատ կը խոս-
տովանիմ ձեզ որ լողալ չեմ գիտեր:

— Քանի որ լողալ չէք գիտեր, պատասխանեց պարմանուհին
վտուրկ եղանակաւ մը, լողորդի հազուստով ընենիդ կամ չըլ-
նենիդ ամենևին հոգ չէ:

— Շատ ճիշդ է, ըսաւ Պ. Պէվալլան զուարճալի հանդարտու-
թեամբ մը, այլ մանաւորապէս չէք փափարի որ խղզուիմ, այն-
պէս չէ: Շուշտակնիդ կ'ուզէք առնուլ, ահա գործին ետ թիւնը և
նպատակը: Հեռիք է որ ես նպատակին համիմ, դուք զոհ պիտ'
ըլնիք:

— Լաւ, ուրեմն դադէք, ըսաւ պարմանուհին համակերպութեամբ,
գայեք ձողը կտրեցէք, պարոն:

Պ. Պէվալլան որ դիւրաւ չշփոթիր, մտակայ մայառուտի մը մէջ աներևոյթ եղաւ ուր վայրիկ մը ճիւղերու խշրտոց մը լսեցինք, ետքը կաղնիի երկայն ոտտ մը 'ի ձեռին՝ դուրս ելաւ ու սկսաւ աւնոր տերևները քաղել:

— Երդեօք այդ դաւաղանով դիմացի եղբրքը հասնիլ կ'ուզէք, ըսաւ օրիորդ Մարգարիտ, որու զուարթութիւնը արժննալ կ'սկսէր յայտնի կերպով:

— Թողուցէք զիս, թողուցէք, տէր օղորմեա, կրկնեց աղատորդին անխումբ:

Ուստի զինքը թողուցին: Չողը պատրաստեց լմնոցուց և դէպ 'ի նաւակն ուղղեցաւ: Ան ատեն հասկցանք որ սահանքին տակէն նաւակով դիմացն անցնելով անկէ կ'ուզէր բռնել շուշտակը որ շատ հեռի չէր: Ասոր վրայ բոլոր հանդիսականները սրտմտեցան, վասն զի ընդհանրապէս կանայք շատ կը սիրեն այն ձեռնարկութիւնները որ վտանգաւոր են — ուրիշներու համար:

— Իրաւ որ, ահա պատուական հնարք մը, վայ պարոն Պէվալլան վայ:

— Աեցիք, կեցիք: Այլո՞մպոսի հաւկթին կը նմանի այս. դործը առաջէն մտածել ու զանելու վրայ էր:

Սակայն մեր անկալութեան հակառակ, այս ձեռնարկութիւնը որ այնքան ապահով կերեւէր, ոչ առանց սիրտ-խաղի և ոչ ալ անվտանգ պիտի լմննար:

Եւ իրօք Պ. Պէվալլան շիփ շիտակ պղտիկ խորշին դիմացի դարափին ուղղելու տեղ, սահանքին աւելի մօտ տեղ մ'ենելու թշուառ խորհուրդն ունեցաւ: Հետեւաբար մակոյկը հոսանքին մէջ տեղը տարաւ և վայրկեան մը թողուց որ անոր հետեւի: Բայց շուտով տեսաւ որ սահանքին մօտերը ջուրը կարծես թէ դէպ 'ի անպուռը մղուելով քաշուելով ահարկու արագութեամբ մը իր ընթացքը կը փութացընէր խենթեցածի պէս:

Վտանգը նախադրացինք իսկոյն, երբ տեսանք որ Պ. Պէվալլան մակոյկը կողմնակի դարձուց և սկսաւ տենդոտ եռանդով մը թլամվարել:

Հոտանքին դէմ քանի մը մանրերկրորդ խիստ երկբայելի յաջողութեամբ կուռեցաւ: Սակայն կամաց կամաց դիմացի, եղբրին կը մօտէր թէև հոտանքը ահօելի սաստիկութեամբ նաւակը կը տանէր շարունակ դէպ 'ի սահանքը՝ որու սզառնական շուռչիւնը իր ա-

կանջները անշուշտ կը լեցընէր այն ատեն: Այնոր հասնելու համար քանի մը սօք մնացեր էր, երբ վերջին ճիւղ մ'իր փրկութիւնը ապահովելու չափ զինքը գետեղերբին մօտեցուց: Պ. Պէվալլան իր բուլար ոյժը ժողվեց և ուժգին ոտտմով մը դարափին վրայ ցատկեց, ոտքովը ակամայ հրելով թողուցած նաւակը՝ որ իսկոյն խութերու վրայէն վար ընկաւ և աւաղանին մէջ սկսաւ լողալ ողնափայտօզին մէջ:

Վտանդի ժամուն՝ այս տեսարանի առջև միայն սաստիկ ահուդողի մը մէջ մնացեր էինք, այլ մեր սիրտը հանդուտացածին պէս, սրտերնիս պիտի դրաւուէր այն հակապատկերով որ այս արկածին ելքը կ'ընծայէր անոր զիցազնին սովորական համար ձակութեան և ինքնապատասանութեան հետ:

Այլուր, բարի վերջ ունեցող վախերէ ետքը ծիծաղը թէ բնական է և թէ դիւրին: Ուստի ընդհանուր և համարձակ խնդուք մը բռնեց մեզի, երբ Պ. Պէվալլանը նաւակէն դուրս տեսանք: Աս ալ ըսեմ որ իր դժբաղդութիւնը իրօք ցաւալի հանգամանքով մ'ևս աւելի կատարեալ կ'ընէր: Գետեղերքը՝ ուր ցատկել ուղեր էր նա, ցից ու խոնաւ զառ ի վեր մը ներկայացընելուն՝ ոտքը գրածին պէս վար ընկաւ: Բաղդիւ քանի մը հաստատուն ոտտեր, իրեն մօտ կը գտնուէին և երկու ձեռքով անոնց փակաւ մինչդեռ իր սրունքները երկու մոլեղին թիերու պէս կ'ուզուէին ծանծաղ ջրին մէջ: Սոյն կէտին՝ վտանդի որ և է վախ մը չընելուն այս կուռոյն տեսարանը միայն ծիծաղելի էր և կարծեմ թէ այս կսկծեցուցիչ դաղափարը Պ. Պէվալլանի ջանքերու վրայ անշնորհք արտորանք մը աւելցընելով անոր ելքը կ'ուշայընէր:

Այսպէս հազիւ սակայն կրցեր էր վեր ելնել և դարափին վրայ կանդնիլ, երբ յանկարծ տեսանք որ նորէն սահեցաւ ճամբուն վրայ թուփերը կտարտելով յորմէ ետքը ակներև յուսահատութեամբ մը իր՝ անկարգ մնչկատակը վերստին սկսաւ: Ստուգիւ չլինացուելիք բան էր:

Օրիորդ Մարգարիտ կարծեմ երբէք այսպիսի հանդէս մը տեսած չէր: Իր արժանապատուութեան ամեն հողը մոռցած էր ու խաղողով զինովցած յուերձահարի մը պէս անտառը գրեթէ ջղաձգային ուրախութեան արտայայտութիւններով կը ընուր և իր խնձիղներու մէջէ ձեռքը կը ծափէր ընդհատ ձայնով մը պոռալով:

— Աեցցե՛ս, կեցցե՛ս, պարոն ար Պէվալլան, համով, շատ սիրո՛ւն, նկարադրական, Սարվաթօր Ռո՛ղա :

Այս միջոցին Պ. Պէվալլան հուսկ ուրեմն հաստատուն երկրի վրայ ելնելու յաջողե՛ր էր, այն ատեն կանանց դառնալով նաճառ մ'ըսաւ զոր սրողակի չէինք կրնար լսել սահանքին աղմուկէն, բայց իր եռանդուն ձեւերէ, թեւերուն նշանացի շարժուածքէն և դէմքին անհորհր ժպիտէն, կրնայինք հասկընալ որ իր դժբաղդութեան վրայ ջատագովական բացաարութիւն մը կը տար մեզի :

— Այո՛, պարոն, այո՛, յարեց օրիորդ Մարգարիտ կնոջ մը անողոր բարբարոսութեամբ խնդալը շարունակելով, աղէկ յաջողութիւն մ'է այս, շատ աղէկ յաջողութիւն մը : Վարձքդ կատար :

Երբ քիչ մը ուշաբեցաւ, շրջած նաւակը ձեռք ձգելու վրայ խորհուրդ հարցոց ինձ օրիորդ Մարգարիտ, վասն զի, յիշենք անցողակի որ մեր պղտի նաւատորմին ամենէ աղէկն էր այն : Խոստացայ վաղը գործաւորներու հետ դալ և անոր փրկութեան աշխատիլ :

Յետոյ ուրախ զուարթ ճամբայ ելանք մարդերուն մէջէն դիտակը ուղղելով, մինչդեռ Պ. Պէվալլան լուրջօրի հագուստով չըլնելուն մեզի չէր կրնար ընկերանալ և մեկամաղձոտ դէմքով մը միւս գետնեղբորը պատող ժայռերուն ետին աներեղթ կըլնէր :

20 Օգոստոս

Հուսկ ուրեմն այս այլանդակ հոգին իր դաղանիքը ինձ բացաւ, բայց երանի թէ յաւիտենապէս պահէր զայն :

Վերը պատմած անցքերուս հետեւեալ օրերը, օրիորդ Մարգարիտ վայրկեան մը ցուցրցած երիտասարդական շարժումներու և ազատութեանը վրայ կարծես թէ ամչնալով, իր ճակատը ծածկող տխուր հպարտութեան, արհամարհանքի և անվստահութեան քողը աւելի թանձրացուցեր էր :

Աղմկալի զուարճութիւններու, իրար յաջորդող հանդէսներու և

ծղարներու մէջէ ստուերի պէս, անտարբեր, պաղ և նոյն խն զայն բացած կ'անցնէր նա :

Իր հեղնութիւնը անխմանալի դառնութեամբ մը, երբեմն մտքի ամենէ անմեղձ այն է ուսման և հայեցողութեան տուած վայելքներու՝ և երբեմն ամենէ աղնիւ ու անբանաբարելի զգացումներու դէմ կը յարձակէր : Եթէ իր առջև առաքինի կամ քաջասիրտ մարդու մը գործը պատմուէր, զայն կը քաշքշէր իսկոյն անոր մէջ ինքնաօրութեան դէմքը գանելու համար, եթէ դժբաղդաբար իր առջև, ճարտարութեան խորանին վրայ քիչ մը խուսկ վառուէր, ձեռքի հարուածով մը կը մարէր զայն : Իր կարծ, կցկտուր սարսափելի ծիծաղը որ իր շուրթերու վրայ երկնքէն ընկած հրեշտակի մ'երգիծանքին կը նմանէր, մարդկային հոգոյ ամենէ վնաս կարողութիւնները՝ եռանդը և կիրքը այսպանելու ետեւէ էր անդուռ ուր որ գտնէր անոնց հետքը :

Աը դիտէի որ պարտաւի այս տարօրինակ ողին ինձ նկատմամբ մասնաւոր հակառակութեան ու ճշմարիտ թշնամութեան մ'երեւոյթ կ'առնէր : Ձէի հասկընար և շատ լաւ չեմ հասկընար տակաւին թէ ինչպէս այս յատուկ ուշադրութեան արժանի եղած եմ, վասն զի եթէ իրաւ է որ իմ սրտի մէջ իտէական ու յաւիտենական բաներու հաստատուն հաւատը ունիմ և մահը միայն կրնայ զայն խլելանկէ, (էհ, մեծք Աստուած, ինչ կը մնար ինձ եթէ ան ալ չունենայի) հրապարակական հիացումներու հակամէտ չեմ ամենեւին և իմ զարմացումներն ինչպէս նաև սէրըր մէկու մը զլիսացաւ պիտի չտան բնա :

Այլ պարագայ սեղ առաջուրնէ աւելի ուշով կը պահէի այն տեսակ մը ամօթխածութիւնը որ իրական զգացումներու կը վայելէ, բան մը չէի վաստկեր ու կասկածելի էի իբր երեակայոտ կամ բանաստեղծ : Անթաղութիւն թէ վիպական ցնորքներ ունէի, որպէս զի անոնց դէմ խօսելու հաճոյքն ունենան, ձեռքս չգիտեմ ինչ տաւիղ մը կը տային որպէս զի անոր թեւերն կտրելու հաճութիւնն ունենան :

Թէպէտ շատոնց, օրիորդ Մարգարիտի բնութիւնն էր կռուիլ այն ամեն բաներու դէմ որ կենաց դրական շահերէ և ցամաք իրակաճութեանէ վեր կը բարձրանան, յանկարծ այս բնութիւնը այն ատիճանի սաստկացեր և ժանտացեր էր որ այս աղջկան հետ ամենէ աւելի սերտիւ կապուող սրտերն անգամ կը վիբաւորէր այն :

Օր մը, օրիորդ տը ԲէրՏօէ այս յարասե երդիծանքէ ձանձրա-
բայցած իմ առջև ըսաւ իրեն :

— Տատարակ իմ, քանի մ'ատենէ 'ի վեր ներսդ սատանայ մը
կայ որ լաւ կ'ընես եթէ շուտով գուրս հանես անկէ, թէ ոչ քեզ
սիրելուս կ'իմացնենմ որ տիկին Օպրիի ու տը Աէն-Քասթի հետ եր-
բորդութիւն մը սխալի կազմես : Իմ մասին, չեմ' ըսեր որ վիպա-
կան անձ մ'եմ կամ եղած եմ երբէք, այլ սիրելի է ինձ կար-
ծել որ աշխարհիս մէջ կան տակաւին հոգիներ որ վսեմ զգացում-
ներ ունենալու կարող են : Անշահասիրութեան կը հատամ, գոնէ
իմինիս . կ'հատամ նոյն իսկ զիւցարնութեան վանն զի զիւցարններ
տեսած եմ : Ասկէ զատ հաճութիւն կ'զգամ, սարիկնայիս ներքեւ
թռչնիկներու գայլայլը լսելով և անցնող օդապարիկ ամպերուն մէջ
կաթողիկէս շինելով : Կարելի է ասոնք ծիծաղելի բաներ են, սի-
րուն աղջիկ, այլ կը համարձակիմ յիշեցնել քեզի որ այս երազ-
ները աղքատին գանձերն են, թէ հրամանքն ու ես անկէ ուրիշ
գանձ չունինք և որ զարմանալին է չունենալնուս համար ալ չենք
գանդատիր :

Ուրիշ օր մը այն ինչ իմ սովորական անտարբերութեամբ օրի-
որդ Մարդարիտի յայտնի հեղնութիւններու առարկայ եղած էի,
մայրը զիս մէկ կողմ կանչելով,

— Գարոն Մարքիմ, ըսաւ ինձ, աղջիկս զձեզ կը նեղէ քիչ մը,
կ'աղաչեմ որ ներէք իրեն : Պէտք էք զխտել որ ժամանակէ մ'ի
վեր իր բնութիւնը փոխուած է :

— Օրիորդ ձեր աղջիկը, առաջուրնէ աւելի մտազրաղ կ'երևի :

— Տէր Աստուած, պատճառը կայ, խիստ ծանրակշիռ որոշում
մ'ընելու կէտին վրայ է նա և այս պարագայիս մէջ նորարոյս ան-
ձերու բնութիւնը խնդ քամիներու ձեռքն է :

Խոնարհեցայ առանց պատասխանելու :

— Հիմա, ընտանեաց մէկ բարեկամն էք դուք, շարունակեց փի-
կին Լարօք, ուստի կը խնդրեմ որ իբրև բարեկամ, Պ, Պէվալ-
լանի վրայ ունեցած կարծիքնիդ բտէք ինձ :

— Կարծեմ, տիկին, որ Պ, Պէվալլան պատուական հարստու-
թիւն մ'ունի, ձերինէ քիչ մը նուաղ, բայց և այնպէս աղէկ է,
տարին հարիւր յիսուն հազար Փրանք եկամուտ կ'աւան :

— Այո, բայց իր անձն ու բնութիւնը ինչպէս կ'երևի ձեզ :

— Տիկին, Պ, Պէվալլան ինչպէս որ կ'ըսեն շատ շնորհքով ե-
րիտասարդ մ'է և խելացի ու բարեբարոյ մարդ մը կը համարուի :

— Բայց միթէ կը կարծէք որ աղջիկս երջանիկ ընէ :

— Չեմ կարծեր որ զան դժբաղդ ընէ : Չար հոգիի տէր չէ
ան :

— Աստուած . ինչ ընեմ, ամեն կերպով հաւնած չեմ զինքը .
բայց մինակ այդ տղան ամեն կերպով անհաճոյ չէ Մարդարիտին
. . . ասկէ զատ քիչ մարդ կ'զանուի որ հարիւր հազար Փրանք եկա-
մուտ ունենայ : Կը հասկընաք որ աղջիկս իր կացութեամբը շատ ու-
զողներ ունեցաւ . . . երկու երեք տարիէ 'ի վեր ուղղոնքով կա-
տարեալ պաշարուած ենք . . . : Աւստի պէտք է որ այս բանը
լմնայ . . . ես հիւանդ եմ . . . այսօր վաղը կ'ընամ մեռնիլ . .
. . . անատեն աղջիկս անոք և անպաշտպան կը մնայ . . . : Եւ ո-
րովհետեւ այնպիսի ամուսնութիւն մ'է այս որ ամեն կերպ յարմա-
բութիւնները կը միանան և բոլոր աշխարհք ալ պիտի հաւնի, յան-
ցաւոր եղած կ'ըլլիմ թէ որ հաւանութիւն չտամ : Արդէն կ'ամ-
բատանեն զիս իբրև թէ ցնորատէր դաղափարներ կը տամ իրեն .
. . . բայց սուս է : Աղջկանս խելքը գլուխն է : Աերջապէս դուք
ինչ խրատ կը տաք ինձի :

— Արդեօք կը ներէք ինձ հարցնել ձեզ թէ օրիորդ տը Բէր-
Տօէի կարծիքն ինչ է : Փորձառու և դատողութեան տէր անձ մ'է
նա և ասկէ զատ ալ ինքզինքը բոլորովին ձեզ նուիրած :

— Է՛հ, թէ որ օրիորդ տը ԲէրՏօէի խօսքը մտիկ ընեմ, Պ,
տը Պէվալլանը պէտք եմ ճամբել . . . : Այլ օրիորդ ԲէրՏօէ
մեծ մեծ կը խօսի . . . թէ որ Պ, Պէվալլան ճամբուի ինքը չը
կընար ամուսնանալ աղջկանս հետ :

— Տէր ողորմա, տիկին, իբրև հարուստ, պէտք չէ ձենէ պահել
որ, Պ, Պէվալլան, հազուադիւտ փեսայու մ'է . . . և եթէ
հարիւր հազար Փրանք եկամուտ ասպատճառ կ'ուզէք ունենալ
. . . :

— Ես հարիւր հազար Փրանքը հարիւր տասնոցէ աւելի չեմ փնտուեր,
սիրելի պարոնն : Միայն թէ, այս բանը աղջկանս համար է . . .
վերջապէս որմաշէնի մը չեմ կընար տալ զան, այնպէս չէ : Ես
որմաշէնի մը կ'ընեմ ընելով բաւական դո՛ս կ'ըլլեի, բայց այն բա-
նը որ զիս երջանիկ կընայ ընել կարելի է աղջիկս երջանիկ չընեք .

Ձան կարդելու ատեն հասարակաց կարծիքներու հետեւիլ պէտք եմ և չէ թէ իմններուս :

— Է՛հ, լաւ, տիկին, թէ որ այս ամուսնութիւնը դործերնուդ կը դայ և եթէ նմանապէս ձեր օրիորդ աղջկան ալ հաճելի է . . . :

— Բայց չէ . . . դործիս չգար . . . աղջկանս ալ աւելի հաճելի չէ . . . սանկ ամուսնութիւն մ'է միայն : ահա յարմար ամուսնութիւն մ'է միայն :

— Պէտք եմ հասկընալ որ լմնցած է կատարելապէս : — Ձէ, որովհետեւ խորհուրդ կը հարցնեմ ձեզի : Եթէ խօսքը կարուէր, աղջիկս, աւելի հանդարտ կ'ըլնէր . . . : ՅՏա այս դեղեւումներն են որ զինքը կ'այլայլեն և . . .

Տիկին Լարօք, իր թիկնաթուին վրայի դմբէ թին շուրջն մէջ ընկողմով աւելցուց :

— Միթէ այն ընտանեացիս մէջ անցած դարձածին վրայ դառնալով մ'ունիք :

— Ամենին, տիկին : Այրկեան մը իր հրատապ նայուածքը վրաս յառեցաւ : Խորունկ հառաչեց և անոյշ ու տխուր եղանակաւ մ'ըսաւ :

— Գացէք, պարոն . . . ալ չեմ արդիւրը զձեզ :

Այն խորհրդակցութիւնը որով տիկին Լարօք պատուած էր զիս, ինծի քիչ զարմանք պատճառեց : Քոնի մը աստեղ 'ի վեր յայտնի կը տեսնուէր որ օրիորդ Մարգարիտ մարդկութեան համար պահած բոլոր համակրութիւնը Պ. Պէվալանի կը զոհէր, բայց և այնպէս այս նշանները աւելի բարեկամական նախապատուութեան մը քան թէ տրփալի սիրոյ մը գրոշմը կը կրէին :

Խոստովանելու է սակայն որ այս նախապատուութիւնն իր պատճառն ունի : Պ. Պէվալանը որ երբէք չտիրած եմ և որու չէ թէ պատկերը այլ ծաղրանկարը ներկայացուցած եմ հոս տկամայ, կանանց հաճելի եղող յատկութիւններու և պակասութիւններու մեծ մասը ունի :

Համետութիւն ըսուած բանը ամենին չունի, և այս աղէկ է, վասն զի կանայք զայն չեն սիրեր : Միւս կողմէ ունի այն լուրջ, հեղհող ու անբոյ թանձնապատասխանութիւնը որ գիւրաւ կ'ըլնէր զմարդ և զայն ունեցողին առաւելութեան երեոյթ մը և տեսակ մ'իշխանութիւն կ'տայ :

Իր բարձր հասակը, հաստ դժագրութիւնը, մարմնական կրթութեանց մէջ ունեցած ճարտարութիւնը, սրտորդի և անառակի համբաւը իրեն այնպիսի առնական մեծութիւն մը կ'ընծայեն որ երկչոտ սեռին վրայ ազդեցութիւն կ'ընէ : Աւերջապէս աչքերուն մէջ յանդգնութեան, աներկիւղութեան և աշխարհակալութեան հովմը կայ որ իր բարբով կ'արգարանայ, կ'ինքը կը շփոթէ և անոնց հողոյն մէջ դաղանի խանդեր կը վառէ :

Նրդար է աւելցրնել որ այս առաւելութիւնները ընդհանրապէս իրենց բոլոր ներգործութիւնը հասարակ սրտերու վրայ կ'ընեն, բայց օրիորդ Մարգարիտի սիրուն ալ որ (ինչպէս միշտ կ'ըլնի) ես նախ իր գեղեցիկութեան բարձրութեան հաւասար կարծելու միտեր էի, քանի մը ժամանակէ հետէ խիստ հասարակ կարգի զգացումներ կ'յայտնէր և շատ կը յուսայի որ եռանդ ու գիմարութիւն չունենալով անշարժ երեւակայութեան կրտսրական պաղութեամբը այս գուեանշարժ երեւակայութեան կրտսրական պաղութեամբը այս գուեանհիկ յաղթանակէն կը հրապարտի և յարմար ամուսնութեան մը յաջորդող լուծին տակ կը մտնէ :

Ասոնց վրայ պարտաւոր էի որոշումն ընել, և ամիս մը յառաջ յուսացածէս աւելի գիւրաւ կ'ընէի զայն, վասն զի 'ի սկզբանէ անտի բոլոր արիւթիւնս ձեռք առեր էի յաղթելու համար այնպիսի սիրոյ մ'առաջին տեսչանայ' զորս թէ պատիւն և թէ խելացութիւնը հասարակապէս կը մերժէին, աղէկն ան էր որ նոյն իսկ այն անձը որ առանց գիտնալու այս պատերազմը կ'ընէր ինծի դէմ, նաև առանց գիտնալու մեծապէս օղնած էր ինձ :

Իր գեղեցիկութիւնը չէր կրցած պահել իրաւ, բայց իր հողին ալ յայտնած էր որով իմ կէս մը գոցուեր էր կրկին : Անշուշտ այս բանը նորատի և բազմապանձ թառանգուհիին նկատմամբ սրտի դժբաղդութիւն մը սակայն ճշմարիտ երջանկութիւն մ'էր ինծի համար :

Անցեալները Բարիզ գացի տիկին Լարօքի և իմ դործերուս համար : Նրկու օր է որ եկայ և զգեական հասած ատենս ինձ ըսին որ ձեր Լարօքը առտուրնէ 'ի վեր թախանձանօք զիս կ'ողէր :

Արտորնօք իր սենեակը դացի :

Ձիս տեսածին պէս թե թե ժպիտ մը իր թարշամեալ այտերու վրայէ անցաւ, վրաս նայուածք մը սևեռեց ուր չար ուրախութեան և գաղանի յաղթանակի նշան մը կարծեցի տեսնել՝ ետքը անուր և խորունկ ձայնով ըսաւ ինձ :

— Պարոն տը Սէն-Քասթ մեռաւ, պարոն :

Այս լուրը որ զարմանալի ծերունին ինք իր բերանովը ինձ իմացընել ուզած էր, սուտ չէր : Նախորդ գիշերը, տը Սէն-Քասթ խեղճ զօրավարը կաթուածահար եղեր և ժամ մ'ետքը իր տիկնոջ պարտաւորած պերճ և հեշաւի կեանքէն զրկուեր էր :

Գէպըը դղելը խնացուածին պէս, տիկին Օպրի շտապաւ իր բարեկամուհւոյն տունը տանիլ տուած էր զինքը և սօրթօր Տէմարէի ըսածին նայելով, այս երու բարեկամուհւոյնը բոլոր օրը մահուան վրայ, անոր հարուածներու արագութեան վրայ, զանոնք նախատեսելու անկարելիութեան կամ անկէ պահանջուելու վրայ, մուեւըները չյարուցանող սուգերու վրայ, միսթարիչ ժամանակին վրայ լուրջ և նոր զաղափարներ փոխանակած էին : Յօրմէ ետք սեղան նստելով ինքզինքնին կազդուրեր էին սակաւիկ մը :

— Վղէ, կերէք, տիկին, մարդ ինքզինքը զօրացընելու է, Աստուած այնպէս կ'ուզէ, կ'ըսէ եղեր տիկին Օպրի : Սեղանէն ելնելու ատեն տիկին տը Սէն-Քասթ բերել տուեր էր Սպանիայի գինին մը զոր խեղճ զօրապետը կը պաշտէ եղեր և անոր համար իր կինը աղաչէր է եղեր զտիկին Օպրի որ անկէ խմէ : Բայց տիկին Օպրի մինակը խմելը յամառութեամբ մերժելով տիկին տը Սէն-Քասթ հաճեր է համոզուիլ թէ Աստուած կ'ուզէ եղեր որ բաժակ մը Սպանիայի գինի խմէ բերանը հացի կտոր մը դնելով : Բայց զօրապետին կենացը բաժակ չառաջարկեր են ամենեկին :

Երէկ սուտու տիկին Ղարօք և իր աղջիկը մեծ սուգով հաղուած կառք մտան, ես ալ քովերնին տեղադրուեցայ ու ժամը տասին մօտերը մօտակայ պզտի քաղաքը հասանք : Այն միջոցին որ ես զօրապետին թաղման հանդիսատես կ'ընէի, այս տիկինները տիկին Օպրիի հետ որբեւորին քով պարագային պատշաճեալ շրջանակը կը կազմէին :

Տխուր հանդէսը լմնցածին պէս հանգուցելոյն տունը դայի ու քանի մ'ընտանիներու հետ հուշակաւոր սրահակը հրամուսեցայ որու կարասին տանուհին հինգ հազար ֆրանք արժամ է : Տխուր կիսաստուերի մը մէջ և հազար երկու հարիւր ֆրանքնոց բազմոյն մը վրայ՝ տիկին տը Սէն-Քասթի անմխիթար շուրք սեռայ երկայն շղարչներու մէջ պլլուած որոնց զինն ալ ի մտոյ կ'իմանանք անշուշտ :

Իր քով նստած էր տիկին Օպրի, ֆիզիզական ու բարոյական ար

մենամեծ թուրութեան երևութիւն : Այս վշտալի ակումբը հինգ վեց ազգականներով ու բարեկամուհւոյնով կ'ըլանար :

Մինչդեռ սրահակին միւս ծայրը մենք ալ կ'շարուէինք կարգաւ, ոտքերու գլորդին մը և յատակի տախտակամանին վրայ դարդափու մը լսուեցաւ ու ետքը ցաւալի լուսթիւն մը տիւրեց նորէն : Միտայն մերթ ընդ մերթ բազմոյն վրայէն ցաւալի հատաչանք մը կ'եղնէր զոր տիկին Օպրի հաւատարիմ արձայանոցի մը պէս կը կրկնէր խկ և խկ :

Ղերջայեւ երիտասարդ մ'երեցաւ որ փողոցը ուշացած էր քիչ մը զերեզմաննոցէ ելնելու ատեն կ'ընտել մը լմնցընել ուզելուն համար : Այն ինչ կամացուկ մը մեր կարդերուն մէջ կը մանէր նա, տիկին տը Սէն-Քասթ զինքը նշմարեց :

— Գուր էք, Արթուր, ըսաւ շունչի նման ձայնով մը :
— Այո՛, հօրաբոյր իմ, ըսաւ երիտասարդը պահնորդի պէս մեր կարգէն դուրս ելնելով,

— Լաւ ուրեմն, կրկնեց որբեւորին նոյն աղիտըրմ և լալկան եղանակաւ, լմնցաւ :

— Այո՛, հօրաբոյր իմ, պատասխանեց կարուկ և համարձակ շեշտով մը Արթուր՝ որ ինքզինքը բաւական հաւանած երիտասարդ մը կ'երեկ էր :

Լուսթիւն մ'եղաւ, յորմէ ետքը տիկին տը Սէն-Քասթ իր սպասուեալ հոգւոյն խորէն հարցումներու նոր շարք մը հանելով,

- Միթէ աղէկ էր, հարցուց :
- Շատ աղէկ, հօրաբոյր իմ, շատ աղէկ :
- Շատ մարդ կ'ար :
- Բոլոր քաղաքը, հօրաբոյր իմ, բոլոր քաղաքը :
- Զօրախոմբը :
- Այո՛, հօրաբոյր իմ, բոլոր պահապան զօրքը նուազով հանդերձ :

Տիկին տը Սէն-Քասթ հեծիւն մը հանեց և աւելցուց,
— Հրանցոյցները :

— Անշուշտ հրանցոյցներն ալ, հօրաբոյր իմ :

Զգիտեմ որ այս վերջին հանգամանքը ինչ պատճառաւ մասնաւորապէս տիկին տը Սէն-Քասթի սիրտը կը շարժէր, այլ կ'երեկ թէ ալ ասոր զիրցաւ գիմանալ նա, և մանկական լալիւնով յան

կարծական մարելիք մ'իզական զգայնութեան բոլոր գարմանները իբր բոլորտիքը կանչելու պատճառ եղաւ և մեզի ալ կ'ծիկը դնելու առիթը ընծայեց :

Անասնելի էր ինձ այս ծիծաղելի զաֆթարին իր կեղծ ու պատիք մնջլատակները գործադրելը տեսնել այն տկար այլ բարի և անկեղծ ձարդուն գերեզմանին վրայ որու կեանքը թունաւորեր և մահը փութ թացընելու պատճառ եղեր էր :

Քանի մը վայրկեան ետքը , տիկին Վարօք մէկու մը միջոցաւ առաջարկեց ինձ որ իրեն ընկերանամ Վանկօտի աղաբակը որ ծովեզերքին ուղղութեամբը 5-6 մղոն հեռու կը գտնուի : Տիրուհի տիկինը իր աղջկան հետ հոն երթալ կ'ուզէր ճաշելու համար , վասն զի վարձակալուհին որ օրիորդ Մարգարիտի սնտուռն եղած էր , հիւանդ է և այս տիկինները շատոնց իրենց բարեկամութեան այս նշանը յայտնել կ'ուզէին անոր :

Աէսօրէն ետքը ժամը երկուքին մեկնեցանք : Ամառուան եղանակին ամենեւ տաք օրերէ մէկն էր : Առաքին երկու բաց դռնակներէն ներս կը մտնէին թանձր և կիզիչ գոլորշիքներ , զօրս այրեցեալ երկինք մը չոր ու ցամաք խոպաններու վրայ առատօրէն կը սփռէր :

Մեր մտային լքումը խօսակցութեան վրայ կ'ազդէր : Տիկին Վարօք որ արքայութեան մէջ գտնուիլ կը կարճէր հուսի ուրմն մուշտակները մէկի գրեթէ և անոյշ յափշտակութեան մը մէջ ընկղմած էր մինչդեռ օրիորդ Մարգարիտ Սպանիական ծանրութեամբ մը հազմանոց կը շարժէր :

Երկրին անհասնումը դառիթափերէ կամաց կամաց վեր ելնելու ատեն կրացեալ ապառաժներուն վրայ պղտի արծաթամորթ մողէզներ կը տեսնէինք որ կ'եռային խումբ խումբ և արևուտով և իրենց հասուն հոնաբեր բացող սէզերու յարատե շշնկոցը կ'էլէկնէր :

Այս տաժանելի վերելքի մէջտեղ յանկարծ ձամբուն եղերքէն ձայն մը պոռաց ,

— Քիչ մը կեցիք , կ'ազաչմ :

Եւ անմիջապէս մերի սրունքներով բարձրահասակ պարմանուհի մը աղէկատ մ'ի ձեռին , նախնաձե հաղուստով և այս երկրին դրսական խոյրը գլուխը , արագափոյթ քայլով մը փոսէն ցատկեց , անցնելու ատեն քանի մը ահաբեկ ոչխարներ որոնց հովուհին կ'երեկի դեռին տապալեց և տեսակ մը շնորհքով քայլարկին (march-pied)

Վրայ կանգնելով դռան շրջանակին մէջէ իր թուխ , համարձակ և ծիծաղուն դէմքը մեզի ներկայացոց :

— Ներեցէք , տիկնայք ըսաւ նա , այն կարճ ու ներդաշնակաւոր եղանակաւ որ երկրացիներուն յատուկ է , կը հաճի՞ք արդեօք սրվի կարդալ :

Այս ըսելով հովուհին կտրծքէն ծալլուած նամակ մը դուրս կը հանէր :

— Արդացէք , պարոն , ըսաւ ինձ տիկին Վարօք խնդալով , և եթէ կարելի է բարձր ձայնով կարդայէք :

Չեռքս առի նամակը , որ սիրազիր մ'էր , և մեծ զուռեաւ ուղղուած էր առ օրիորդ Քրիստին Օյատէք * * * զիւղէն * * * թեմէն * * * աղաբակը : Գիրը խիստ դեռավարժ ձեռք մը կը յայտնէր այլ անկեղծ կերեւար և թուականը կը ծանուցանէր որ օրիորդ Քրիստին քանի մը շարժ յառաջ ընդունած էր զայն : Ըստ երևութի խեղճ աղջիկը կարդալ չէր գիտեր և իր դաղտնիքը իր ծանօթներու շարամուտեան յանձնել չուզելով սպասած էր որ բարեմիտ , դրաւոր և անցորդ օտարական մը իրեն տայ այն դաղտնիքը բանալին որ տասնէհինգ օրէ 'ի վեր իր կտրծքը կ'այրէր :

Մինչդեռ նամակին ծոխի մոխի դիրերը կը քակէի դժուարութեամբ , իր կտայտ և լոյնօրէն բացուած աչքերը անասելի զոհուածութեան երեւոյթով մը վրաս յառած էին :

Այս էր սիրազրոյն պարունակութիւնը :

« Օրիորդ , ներկայիս նպատակն է ձեզ յայտնել թէ այն օրէն 'ի վեր որ երեկոյեան ժամերգութենէ ետքը դաշտավայրին վրայ խօսեցանք , իմ դիտաւորութիւնները չփոխուեցան և ձերիններու համար անհանգստութեան մէջ կը գտնուիմ . սիրտս , օրիորդ , բոլորովին ձերն է ինչպէս որ կը փափարիմ որ ձերն ալ իմ ըլնի բոլորովին , և թէ այս այսպէս է , կրնաք հաւատալի և ապահով ըլնիլ որ ոչ երկրի վրայ և ոչ երկինքը չկայ կենդանի հողի մը որ աւելի երջանիկ ըլնի ձեր բարեկամէն — որ չստորագրեր , այլ քաջ գիտէք օրիորդ թէ ո՞վ է : »

— Միթէ գիտէք թէ ո՞վ է , օրիորդ Քրիստին , ըսի նամակը իրեն ետ գործընելով :

— Շատ հաւանական է , պատասխանեց հովուհին իր ձեռնակ աւանները ցուցնելով մեզ և երանութեամբ լուսաւորուած գլու-

խը ծանրութեամբ ցնցելով : Հնորհակալ եմ, տիկնայք, և պարոնն :
Այս բտելով քայլարկէն վար ցտակեց նա և շուտ մը մայրանուն-
բուն մէջ աներեւոյթ եղաւ, Պրըթանեան երդի մը զուարթ և հեշ-
տալուր աագբըը երկինք դրկելով :

Տիկին Լարօք ակներև յափշտակութեամբ դիտեց այս հովուական
տեսարանին բոլոր հանդամանքը որ այնքան իր երազներուն կ'յարմա-
րէին : Ար ժպտէր, մտախորհ կ'երազէր և այս բոկանի ոտքերով եր-
ջանիկ աղջկան առջև բոլորովին հմայուած էր : Սակայն երբ օրիորդ
Օյատէք մեր տեսողութենէ կորսուեցաւ, յանկարծ այրանգակ խոր-
հուրդ մը ծագեցաւ տիկին Լարօքի մտքին մէջ, այսինքն թէ շատ
զէշ ըրած չէր ըլներ եթէ իր զարմացումէն զատ Ծ Փրանքնոց մ'ալ
տար նոյն աղջկան :

— Ալէն, պուայ, շուտով ետ կանչէ դանի :

— Ինչո՞ւ համար, մայր իմ, ըսաւ աշխուժիւ օրիորդ Վարդա-
րիտ որ մինչև այն ատեն այս դէպքին ուշադրութիւն չըրած կ'ե-
րէէր :

— Բայց, սիրելի աղջիկս, կարելի է կատարելագոյն չհասկընար
ան բոլոր հաճութիւնը որ կ'ունենայի — և ինքն ալ պէտք էր ու-
նենալ — հօղերուն մէջ բոկոսն վաղելով, ինչ և է յարմար կե-
րէի ինձ պզտի յիշատակ մը ապլ իրեն :

— Ստանկ, վրայ բերաւ օրիորդ Վարդարիտ, ս'հ, մայր իմ, այդ
բանը մի ըներ, այդ աղջկան երջանկութեանը մէջ ստակ մի՛ դներ :

Այս բարձր զգացման արտայայտութիւնը, որ (յիշենք անյողակի)
կարելի է խիստ հաճոց պիտի չերեւէր խեղճ Քրիտիանին, մեծապէս
զամացուց զիս օրիորդ Վարդարիտէ լսելուս համար՝ որ ընդհանրա-
պէս այս նրբութիւններէ հեռի է : Արթնեցի նաև որ կատակ կ'ը-
նէր թէպէտ իր դէմքին վրայ զուարթութեան հովմ'անգամ չկար :
Ինչ և է այս մտային հաճոցը մօրը կողմէն նկատողութեան առնուե-
լով եռանդուն կերպով վճռուեցաւ որ այս հովուերդութիւնը իր
անմեղութեամբ և բոբիկ ոտքերովը մնայ :

Այս մեծ գործէն ետքը, տիկին Լարօք յայտնի կերպով ինքզին-
քէն գոհ եղած նորէն իր խնդումներս յափշտակութեանը մէջ ըն-
կաւ և օրիորդ Վարդարիտ աւելի ծանրութեամբ իր հովանոցին հետ
խաղալը շարունակեց : Ժամ մը ետք մեր առաջադրած տեղը հա-
սանք :

Այս երկրին՝ որու թէ լեռներն և թէ լեռնադաշտերը ամայի
խոպաններով ծածկուած են, ազարակներու մեծ մասին պէս, Լան-
կօսի ազարակն ալ պահուրտած է ձորի մը խորը ուրիշ պզտի դե-
տակ մը կ'անցնի : Վարձակալուհին, որ աղէկի դարձած էր, խսկոյն
ճաշը պատրաստելու ետէէ եղաւ որու համար պէտք եղած գլխաւոր
տարերքը հետերնիս բերած էինք : Աերակունքերը գրուեցան մարդա-
գեանի մը բնական մարմանդին վրայ ահագին շագանակնիի մը շու-
քին տակ : Տիկին Լարօք թէև կառքին բարձրէ մէկու վրայ ան-
հանգիստ կերպով նստած էր բայց շատ գոհ կ'երևէր : Արտէր թէ
մեր ակումբը կը յիշեցնէր իրեն արտահունձերու խումբերը որոնք
աւառը ցանցերու տակ կը պատսպարուին և որոնց շինական հաց-
կերոյթները ամեն անգամ տեսնելուն կը նախանձէր : Ես իմ մա-
սիս, կարելի է ուրիշ առթի մէջ եղական քաղցրութիւն մը կը
գանէի այն սերտ և գիւրին մտերմութենէն որ այս խոտերու վրայի
ճաշը և ուրիշ ասոր նման տեսարանները մեր մէջը կը հաստատէին .
այլ անախորժ նեղութեամբ մը կը հեռացնէի ինէ այսպիսի հաճու-
թիւն մը որ զըջումի շատ ենթակայ էր և այս վաղանցուկ եղբայ-
րութեան հացը դառն կը թուէր ինձ :

Այն ինչ ճաշը կը լմնար,

— Միթէ երբէք հոն վերը ելած էք, ըսաւ ինձ տիկին Լարօք,
մարդերուն վրայ նայող խիստ բարձր բլրի մը գագաթը ցուցնե-
լով :

— Չէ, տիկին :

— Ո՛հ, ինքզինքնիդ զրկեր էք : Անկէ սքանչելի հորիզոն մը կ'ե-
րէի զոր պէտք է տեսնել : Մինչև կառքին լծուիլը Վարդարիտ թող
տանի առաջնորդէ ձեզի, այնպէս չէ՞, Վարդարիտ :

— Ես, մայր իմ, ես ալ անգամ մը զացած եմ միայն, ան
ալ շատ ատեն է . . . բայց ճամբան կը դանեմ : Հրամայէք, պա-
րոն, և դժուարին ելքի մը պատրաստուեցէք :

Քիչ մը ետքը, օրիորդ Վարդարիտ և ես սկանք վերելնել խիստ
ցից արահետէ մը որ օձաձև կ'բարձրանար լեռին կողին վրայ եր-
բեմն երբեմն անտառի փունջէ մ'անցնելով : Պարմանուհին մերթ ընդ-
մերթ իր արազ ու թեթեւ ընթացքին մէջ կանգ կ'առնուր, նայելու
համար թէ կը հետեւէի իրեն և քիչ մը հեռալով ինձ կը ժպտէր
առանց խօսելու : Գահաւանդը կազմող մերկ խոպանին վրայ հա-

տած ատեն, քիչ մը հեռուն գեղջական եկեղեցի մը տեսայ որու զանգակատունը երկնքին մէջ իր սուր անկիւնները կ'զծէր :

— Ահա հոս է, ըսաւ ինձ գեռատի առաջնորդս քայլերը փութացրնելով :

Եկեղեցւոյն ետեւը պատով գոցուած գերեզմաննոց մը կար : Օրիորդ Մարգարիտ անոր դուռը բացաւ և բարձր խոտերուն ու դեռնամած բոցերու մէջէ գծուարութեամբ դէպ 'ի կիսաբոլոր սանդուղ մը ուղղեցաւ որ այս հանգստեան պարտիզին ծայրը կ'դնուի : Ժամանակէն ճեղքուած և բուսական այլանդակ կերպով միաձոյլ շրջանակներով զարդարուած քանի մ'ատրիճաններ պատին բարձրութեամբ շինուած նեղ տանիք մը կը տանին որու մէջ տեղ քարէ խաչ մը կը բարձրանայ :

Օրիորդ Մարգարիտ հազիւ թէ տանիքին վրայ հասեր և առջին բացուած հորիզոնին վրայ նայուածք մը նեակ էր՝ երբ տեսայ որ ձեռքը շեղակի աչքերուն վրայ կը գնէր յանկարծական շլացում մը զպայածի պէս : Փութացայ իր քովը հասնիլ :

Այս գեղեցիկ օրը իր վախճանին մօտելով իր վերջին պայծառութեամբ, ընդարձակ նոր ու վեհ տեսարան մը կը լուսաւորէր որ երբէք պիտի չմոռնամ : Մեր դիմացը և գահաւանդէն անհուն խորութեամբ վարը մինչև աչքին կարած հորիզոնը լուսաճաճանչ թիթեղներով սփռուած ճահիճ մը կը տարածուեր որ կարծես թէ ջրհեղեղի մը տեղատուութենէն նոր ազատ էր :

Այս լայն խորշը մինչև մեր ոտքը, աղեղնաձև կտրուած լեռներու գողը կը յառաջանար : Ընդհատ լճակները զատող աւազի և տղմի կոյտերուն վրայ շամբերու՝ ու ծովային խոտերու խառն թաւտտ մը կը ներկուէր մութ այլ որոշ ազդի ազդի գոյներով որոնք ջրերու փալիւրուն մակերևութին հետ հակապատկեր մը կը ներկայացրնէին : Արևը հորիզոնին ուղղութեամբ ըրած մէն մի քայլով կը լուսաւորէր կամ մութին մէջ կը ձգէր կէս չորցած ծոցին բազմաթիւ լիճերը և կարծես թէ իր երկնային արկղէն կարգ ըստ կարգէ ամենէ թանկագին նիւթերը, արծաթ, ոսկի, սուտակ և անգամանդ կ'հասնէր այս հիանալի դաշտին վրայ զանոնք փայլ փայլ շողացնելու համար :

Երբ ցորեկուան աստղը իր ասպարէզին ծայրն հասաւ, շոգեւից ու կոհակաձև ծիր մը որ հեռուէն ճահիճներու վերջին սահմանը

կը դձեր, յանկարծ հրդեհանման լուսով մը վառեցաւ և վայրիկ մը շանթէ խզուած ամպի մը շողակաթ թափանցիկութիւնը առաւ : Գլխովին յափշտակուած էի իրօք Աստուածային մեծութեամբ դրօշմուած այս տեսարանէն որու ուրիշ ճառագայթի մը պէս Աստուած յիշատակն ալ կը խառնուէր, երբ քովէս մեղմ և կէս մը խեղճուած ձայն մը մրմնաց :

— Աստուած իմ, այս ինչ գեղեցիկ է :

Այս համակրական զեղումը քովի ընկերուհիէս բնաւ չպատեալու՝ դէպ' անոր գարձայ զարմացական արտորանքով մը որ ամենեւին չուաղեցաւ երբ իր գծագրութեան այլայլութիւնը և շուրթերու թեթև գողը իր հիացման խորին անկեղծութիւնը հաստատեցին ինձի :

— Ար խոստովանի՞ր որ գեղեցիկ է, ըսի իրեն :

Օրիորդ Մարգարիտ զլուխը ցնցեց, այլ նոյն պահուն իր խօշոր աչերէ երկու արցունքի կայլակներ վար կը սահէին, զորս զգացածին՝ պէս բարկալի շարժում մ'ըրաւ նա, յետոյ յանկարծ կրակախիթէ խաչին վրայ նետուելով որու հիմը իրեն պատուանդան եղած էր, երկու ձեռքով գրկեց զայն, սերտիւ մ'իր ճակատը քարին վրայ կռթնցուց և լսեցի որ ջրաձորքն կը հեծկտար :

Այս յանկարծական այլայլութեան ընթացքը խօսքով մը չուղեւրով աւրել յարգանօք քանի մը քայլ ետ քաշուեցայ : Վայրիկ մ'ետրք տեսնելով որ գլուխը կը վերցընէր և անմտադիր՝ ձեռքովը՝ իր արձրկուած մազերը կը տեղաւորէր, մօտեցայ իրեն :

— Ա՛հ որքան ամօթահար եմ, մրմնաց նա :

— Ընդհակառակը դո՛հ եղիք և հաւատացէք ինձ, այդ արցունքներու աղբիւրը մի չորցընէք ներսերնիդ, վասն զի նուիրական է է այն : Այլուր չէք կրնար երբէք յաջողիլ :

— Պէտքէ չորնայ, դոչեց պարմանուհին տեսակ մը խոստութեամբ : Եւ ահա արգէն լնցաւ : Յանկարծական այլայլութիւն մ'էր այն . . . ս՛հ, աշխարհիս վրայ ինչ որ գեղեցիկ է, ինչ որ սիրուն է . . . ատել կ'ուզեմ, — կ'ատեմ :

— Եւ ինչո՞ւ, տէր Աստուած :

Օրիորդ Մարգարիտ երես նայեցաւ ու վշտացեալ հպարտութեան անպատում շարժում մ'ընելով,

— Ասան զի ես ալ գեղեցիկ եմ, ըսաւ ու չեմ կրնար սիրուիլ :

Ան ատեն նման հեղեղին որ երկար ատեն արդիւնութիւնով վերջապէս իր թուածքը կը խորտակէ, տարօրինակ յուզմունքով մը շարայարեց ձեռքը իր դողդոջուն կուրծքին վրայ դնելով,

— Եւ ստիպոյ իրաւ է այս : Իմ սրտին մէջ դրած էր Աստուած այն ամեն դանձերը զորս ես հայհոյելով կը հեղնեմ ամեն օր, ամեն ժամ : Բայց երբ ինձի հարստութիւնն ալ տուաւ նա, ա՛հ, անատեն մէկ ձեռքով առատօրէն բաշխածը միւսովը ետ առաւ : Ինչի՞ կը ծառայէ գեղեցիկութիւնս, ինչի՞ կ'օգտեն ինքնուիրութիւնը, սէրն ու եռանդը որոնցմով հալեման իմ հիւժմի : Ա՛հ, ո՛չ, այս վատթար մարդերու մեծարանքը՝ որոնցմով կը նեղուիմ՝ այն հրապոյրներու համար չէ : Կը գուշակեմ, — դիտեմ, — քաջ դիտեմ : Եւ եթէ երբէք անշահասէր, վեհանձն, դիւցազնական հողի մը զիս՝ չէ թէ նիւթական արժողութեանս՝ այլ ինձի համար սիրէ . . . պիտի չդիտեմ . . . պիտի չհաւատամ բնաւ : Միշտ անվտանգութիւն : Ա՛հ այս է իմ վիշտն ու չարչարանքը : Աւստի որոշած եմ . . . ամենևին մէկը չսիրել բնաւ : Բնաւ իմ սիրտը այլ ըող ու սողորող մաքուր տրիփը, նուաստ, անարժան՝ և շահասէր սրտի մը մէջ հեղու վտանգին պիտի չենթարկիմ : Հողիս կոյս պիտի մեռնի կուրծքիս մէջ . . . : Հող չէ, դայն աչքս առած եմ, այլ ինչ որ գեղեցիկ է, ինչ որ զիս երազային խորհուրդներու մէջ կը ձգէ, արդիւնեալ երկնքի վրայ կը խօսի ու այն անօդուտ կրակները կ'արժարծէ ներսս, — ինչ կը հեռացնենմ, կ'ատեմ, չեմ ուզեր :

Ըսաւ ու այլայլութենէն դողդալով պահ մը լուրջ ետքը աւելի կամեց ձայնով մը աւելցուց :

— Պարոն, այս վայրկեանը չփնտուցի . . . խօսքերս չհաշուեցի . . . ձեզի վերապահուած չէր բոլոր այս մտեմտիկան խօսակցութիւնը, բայց վերջապէս խօսեցայ, հիմակ ամեն բան դիտէ . . . և կը յուսամ որ ա՛լ կը ներէք ինձ եթէ երբէք ձեր դիւրագիտութիւնը վերադարձեմ :

Նորատի բամբիշը ձեռքը ինձի երկնցուց : Երբ շուրթերս այս գաղջ ու տակաւին արցունքով թրջուած ձեռքին դպան կարծեցի որ երակներուս մէջ մահացու թուրութիւն մը կ'իջնէր : Իսկ նա գլուխը դարձուց, մթնցած հորիզոնին վրայ նախաձեռք մը սեւեռեց, ետքը ծանրութեամբ աստիճաններէն իջնելով,

— Երթանք, ըսաւ :

Աւելի երկար՝ այլ նախորդ ցից արահետէն դիւրին ճամբով մը աղարակին բակն հասանք առանց իրարու հետ բառ մը փոխանակելու : Բա՛րէ, ինչ կ'ընայի ըսել : Մանաւանդ ես որեւէ ուրիշ մ'աւելի կասկածելի էի ու եմ, զգացի որ իմ յորդալի սրտն խուսափող ամեն մէկ խօսքը պիտի մեծցնէր այն հեռաւորութիւնը որ զիս այս կասկածոտ ու պաշտելի հոգիէն կը բաժնէ :

Սրդէն մութը կոխած ընկուն՝ երկու բնուս ալ վրդովման հետքերը չէին տեսնուեր :

Ճամբայ ելանք :

Տիկին Լարօք նոյն օրը զգացած դոհութիւնը անդամ մ'էս մեղի յայտնելէ ետքը սկսաւ անոր վրայ երազել : Մարդարիտ՝ կառքին թանձր մութին մէջ թագուն և անշարժ, կարծես թէ ինքն ալ իր մօրը պէս կը քնանար : Բայց ճամբուն մէկ շրջանը իր վրայ աղօտ լոյս մը ձգածին պէս, իր բաց ու անշարժ աչքերը կը ցոլցնէին որ իր անմոխիթար մտածմանը հետ զլուս գլխի տուած կը հսկէր :

Իմ մասին հազիւ կրնամ ըսել թէ կը մտածէի, խորին ուրախութեամբ ու աստիկ գառնութեամբ խառն՝ տարօրինակ զգայութեամբ մը լի էի զլիտովին ու անով յափշտակուած էի ինչպէս որ կը յափշտակուինք այն երազներով որոնց իրականութիւն չընկիր գիտելով հանդերձ՝ անոնց հրապոյրէն չենք կրնար զատուիլ :

Կէս գիշեր մօտ էր երբ դղեակը հասանք :

Շառուղոյն բերանը կառքէն իջայ, ամենէ կարճ ճամբով շերտոցին մէջէ բնակարանս երթալու համար, բայց մութ ուղիի մը մէջ մտնելու ատեն՝ քայլերու և խօսակցութեան ձայն մը սկանչիս զարկաւ և մթութեան մէջ աղօտ կերպով մը երկու ստուերներ տեսայ զորս թառուտին մէջ պահուելով դիտելո՝ ատենն անցած ըլլանելուն կարգարանայ :

Այս գիշերային թափառաշրջիկները ծանր քայլով մը քովէս անցան և Պ. Պէվալլանի թևին կաթնած օրիորդ Հէլուէնը ճանչցայ : Միևնոյն ատեն կառքին դողդիւնը դիւրեք վախցուցած ընկուն՝ իրարու ձեռք սեղմելէ ետքը բաժնուեցան, օրիորդ Հէլուէն գէպ 'ի գղելը ու միւսը անտառին ուղղութեամբ վազելով :

Այս հանդիպումով մտազբաւ տուն գառնալու ատենս, բարկութեամբ կը հարցնէի իւրովի թէ արդեօք պէտք էի թողուլ որ Պ. Պէվալլա

լան իր երկզիմի սիրահարութիւնները ազատօրէն շարունակէ ու մի ևևոյն տան մէջ նշանած մը ու սիրուհի մը փնտռէ :

Հին գլուխ մէկը չեմ անշուշտ, տեսակ մը տկարութեանց նկատմամբ ազանդաւորի մը սաստիկ ատելութիւնը զգալու համար, ու այնպէս երևալու կեղծաւորութիւնն ալ չունիմ, բայց կարծեմ թէ ամենէ ազատ և թող բարոյականութիւնն ալ այս մասին արժանապատուութեան և խղճահարութեան քանի մը սահմաններ կ'ընդունի :

Նաև այս խոտորնակի ճամբաներուն մէջ, մարդ՝ աւելի կամ նուազ շիտակ կը քայլէ : Ամեն բանէ յառաջ, սիրելը՝ նոյն իսկ սիրոյ շատագոյութիւնն է ու Պ. Պէվալլանի սիրահարութեանց գուհի հիկ առատութենէ կը հետևի թէ անոնց մէջ սիրոյ և տրփանքի երոյժը անգամ չկայ : Այսպիսի սիրահարութիւնները սխալ անգամ չեն համարուիր, վասն զի սխալի մը բարոյական արժէքը չունին, այլ հաշիւներէ յառաջ կը քան աւ բիրտ ձիավաճառներու գրաւներ են :

Այս երեկոյթին զանազան դէպքերը մտքիս մէջ միացած ատեն՝ կատարեալ կը յայտնէին ինձ թէ այս մարդը ինչ աստիճան անարժան էր այն սրտին որու ցանկալ կը համարձակէր : Այս ամուսնութիւնը անհեղեղ էր, սակայն շուտով հասկըցայ որ անոր ուրուազիծը աւրելու համար չէի կարող գործածել այն զէնքերը որ գիպուածը ձեռքս կը տար : Ստորին միջոցները ամենաբարի նպատակաւ մ'անգամ չեն կրնար արդարանալ ու քսութիւնը երբէք պատուաւոր բան չէ :

Այս ամուսնութիւնը պիտի կատարուի ուրեմն : Աստուած պիտի ներէ որ իր ստեղծած ամենէ ազնիւ արարածներէ մէկը այս պաղ անառակին թեւերուն մէջ ը'յնի : Այս պղծութեան պիտի համբերէ նա՛ : — Բնորէ, և ինչ պղծութիւններու ևս չհամբերէր :

Յետոյ աշխատեցայ հասկընալու թէ ինչ մտային մոլորութեամբ այս նորատի օրիորդը ամեն երիտասարդներու մէջէ աս ընտրեւ էր և կարծեմ գուշակեցի : Պ. Պէվալլան խիստ հարուստ է ու իր բերելիք ինչքը ընդունածին հաւասար ըլնելով տեսակ մ'երաշխաւորութիւն կը համարուի այն : Այս փեսացուն այն հարստութեան վերադիրէն պէտք չունի ու կարօտ չըլնելուն նուազ շահասէր կը համարուի :

Յառաջի՛ պատճառարանութիւն և հազդին սխալ՝ որ բարքերու շահասիրութիւնը անոնց հարստութեան չափովը կը չափէ : Վասն զի ազահութիւնը հարստութեան հետ կ'աւելնայ միշտ ու աշխարհի մէջ ամենէ աղքատը ամենէ խեղճ մուրացիկները չեն ամենակին :

Արդեօք յոյս մը չկար որ օրիորդ Մարգարիտ իր ընտրութեան անարժանութեան վրայ ինքնին բանար իր աչքեր ու սրտին մի ներքին աւելնալ զանէր այն խորհուրդը որ ես չէի կրնար տալ իրեն : Արդեօք կարելի չէր որ յանկարծ այս սրտին մէջ նոր և անակնկալ զգացում մ'արմննար որ գար իր մտքի սին որոշումները արմատաքի խլէր ու փճացընէր : Սակայն չէ՛ մի որ այս զգացումը ծնած էր ու արդէն անոր անձխտելի նշանները ես տեսած էի : Այն մտային հաճոյքները, ալեծուփ վարանումներն, ներքին կռիւները և լացերը որոնց ժամանակէ մ'ի վեր առարկան կամ հանդիսատես եղած էի, անշուշտ խուժած և ինքզինքին չիշտող միտք մը կը յայտնէին :

Այնքան անփորձ չէի չհասկընալու համար որ այնպիսի տեսարան մ'որու նոյն իրիկունը դիպուածով խորհրդակից ու նոյն իսկ գործակից դատուած էի — որքան ալ յանպատրաստից եղած ըլնէր — չէր կրնար անտարբերութեան մթնոլորտի մը մէջ պայթիլ : Այսպիսի յուզումներ, այսպիսի տատանումներ արդէն հաւասարակէս պղտորուած կամ պղտորուելիք հոյկներ կ'ենթադրեն անվրէպ :

Բայց եթէ Մարգարիտ զիս իրօք կը սիրէր ինչպէս որ ստոյգ էր թէ ես զինքը կը սիրէի, այս սիրոյն նկատմամբ ես ալ կրնայի «Ինչի կը ծառայէ՞» ըսել ինչպէս որ ինքը իր գեղեցիկութեան համար ըսած էր : Վասն զի չէի կրնար յուսալ երբէք որ կը յաղթեմ այն յաւիտենական անվստահութեան՝ որ այս ազնիւ աղջկան թէ պակասութիւնն և թէ առաքինութիւնն է. անվստահութիւն՝ որ կը համարձակիմ ըսել թէ իրրև իմ պատուոյս դէմ նախատինք՝ չեմ ընդունիր բայց որն որ իմ կացութիւնը ուրիշ կացութեանէ մ'աւելի դիւրաւ կրնայ գրգռել : Անոր այս սոսկալի կտակածներուն՝ և անոնց դէմ ինքզինքս պաշտպանելու համար՝ ի գործ դնելիք զգաստութեանց մէջ տեղի անդունդը ինչ հրաշքով կրնար լեցուիլ :

Աւերպագէս թէ որ այս հրաշքն անգամ տեղի ունենար ու ինքը զիջանէր ինձ տալու այն ձեռքը որու համար կենքս կ'տամ բայց զոր երբէք չեմ խնդրեր, միթէ մեր միութիւնը երջանիկ կ'ըլնի : Սիթէ պէտք չեմ վախնալ որ ուշ կամ կանուխ այս անհանգիստ

Երևակայութեան մէջ կիսամուկ կասկածը վերստին արթննայ : Եւ իսկ այս տաժանելի խորհուրդէն կրնամ դերձ մնալ փոխ առնուած հարստութեան մը ծոցը : Առանց նեղութեան կրնամ վայելել սէր մը որ բարերարութեամբ մը խառն է :

Պատուոյ ամեն զգացումները այնպիսի յայտնի կերպով պարտ կը գնեն մեր վրայ կանանց նեցուկ և պաշտպան ընել, որ այս տարտըր նաև վայրկեան մը չկրնար զանց առնուիլ առանց մեր վրայ չղիտեմ ինչ կասկածելի ու երկբայական ստուեր մը ձգելու : Հարստութիւնը անանկ առաւելութիւն մը չէ իրօք, որ իրեն զուգակիւ հատուցում մը չունենայ աշխարհիս վրայ և կենթադրեմ թէ այն մարդը որ իր կնոջ քանի մը քսակ ոսկիներուն փոխարէն այնպիսի անուն մը կ'ընծայէ անոր որ ինքը փառաւորած է, բարձր արժանիք մը, կամ ապաղայ մ'ունի, երախտագիտութեան ներքև չկրնար ճղմուիլ. բայց եկու տես որ իմ ձեռքերը պարապ են, ոչ ներկայ, ոչ ապաղայ ունիմ և աշխարհիս մէջ կարևորութիւն ունեցող բաներէ միայն մէկը կայ վրաս, այն է տիտղոս զոր քաջ որոշած եմ չկրելու որպէս զի չըսուի թէ սակարկութեան զինն եղած է այն :

Մէկ խօսքով ամեն բան ընդունելով 'ի տրիտուր բան մը տուած պիտի չըլնիմ : Թագաւոր մը հովուհի մը կրնայ առնել և եթէ առնէ վեհանձնութիւն մը և պատուական զօրձ մ'ըրած կ'ըլնի, ամեն մարդ իրաւամբ կը շնորհատէ զինքը, այլ երբ հովիւ մը կը հաւանի որ զինքը թագուհի մ'առնու, այն ատեն խնդիրը կը տարբերի և ալ նոյն ազնիւ երեւոյթը չունի այն :

Բոլոր զիշերը այս բաները մաքիս մէջ դարձնելով և եղբակացութիւն մը հանելու աշխատելով անցուցի և դեռ ևս կ'աշխատիմ : Կարելի է հարկ պիտի ըլնի որ այս տունէն ու երկրէն անյապաղ մեկնիմ : Խեղցութիւնը այնպէս կը պահանջէ, վասն զի բոլոր այս բաները կրնան աղէկ չվերջանալ : Երբեմն մարդ վայրկեանական քաջութեամբ և որոշումով մ'ի՛նչ մահացու ցատիւրէ կ'աղատի : Գոնէ քիչ մը վշտաբեկ պէտք էի ըլնիլ, ասկէ լաւադոյն առիթ մը պատահած չէ ընա : Բայց որ զարմանալին է չեմ կրնար . . . իմ տակու վրայ և չարչրուած մաքիս մէջ խորհուրդ մը կայ որ ամեն բան կը նուաճէ ու զիս գերմարդկային խնդութեամբ մը կը ընու :

Օղապարհի թուանի մը նման հողիս թեթեւ է : Անդադար կը տեսնեմ, միշտ աչքիս զիմացը պիտի ըլնի այն պղտի գերեզմաննոցը

հեռուոր ծովը, անհուն հորիզոնը և այն պայծառ սարակին վրայ երկնային արցունքներով ողողեալ գեղեցիկութեան հրեշտակը :

Շուրթիս ներքև կ'զգամ տակաւին իր ձեռքը, և աչերուս ու օրտիս մէջ կ'զգամ անոր արցունքը : Կը սիրեմ զանի բայց և այնպէս վաղը եթէ կարելի է, որոշում մը ֆպիտի ընեմ : Բայց Աստուած իմ, մինչև վաղը թող հանգիստ ձգեն զիս : Երկար ատենէ 'ի վեր երջանկութիւնը եղծած չեմ . . . : Հաւանական է որ մեռնիմ այս սէրէն, միայն թէ ամբողջ օր մը խաղաղութեամբ կ'ուզեմ ապրիլ անով :



20 Օգոստոս

Այն օրը, այն աղերսանօք խնդրած միակ օրս չշնորհուեցաւ ինձ : Բաւութիւնը որ երկարատև պիտ' ըլնի, մօտէն հետեցաւ տկարութեանս : Ո՛հ, ի՛նչպէս մոռցեր էի որ թէ բարոյական և թէ միւս կարգին մէջ, օրէնքներ կան զորս երբէք չենք կրնար անպատիժ զանց ընել և որոնց անվրիպելի հետևութիւնները այս աշխարհիս վրայ Նախախնամութիւն կոչուածի բանին մշտակայ միջամտութիւնը կ'կազմեն :

Մեծ ու տկար մարդ մը, գրեթէ յիմար ձեռքով խնաստուհի մ'աւետարանը գրելու ատեն նոյն իսկ այս կրքերու համար՝ սրոնք իր թշուառութեան, անարգութեան և հանձարին սկզբնապատճառ եօղան, կ'ըսէր,

« Ամեն կիրքերը աղէկ են, երբ մարդ անոնց աէր կ'ըլնի, ամենքն ալ յոռի են երբ կ'թողուս որ անոնք քու վրայ տիրեն : Բնութիւնը մեզ կ'արգիլէ որ մեր զօրութենէ աւելի հեռուն տարածենք մեր յօժարութիւնները : Իմացականութիւնը կ'արգիլէ մեզ բազմալ այնպիսի բանի մը որ չենք կրնար ձեռք ձգել : Խիղճը կ'արգիլէ չէ թէ բանէ մը հրապուրուիլ այլ նոյն նոյն հրապոյրէ յողթուիլ : Վերջ ունենալը կամ չունենալը մենէ կախում չունի, այլ անոնց վրայ իշխել մենէ կախեալ է : Ամեն զգացումները որոնց վրայ կ'իշխենք

օրինաւոր են և ամեն մեր վրայ իշխողները մեզաւրի . . . Սիրտդ միայն անկորնչելի գեղեցկութեան տուր, թող քու վիճակն կամ կարգու թիւնը փափաքներուդ սահմանը դնէ, կրքերդ վեր համարէ պարտաւորութիւններդ, հարկի օրէնքը նաև բարոյական իրերու վերածէ, վարժէ կորսնցնելու այն բաները որոնցմէ կրնաս զրկուիլ, սորվէ ամեն բանէ զրկուելու երբ առաքլնութիւնը այնպէս կը պահանջէ : »

Այո՛, այսպէս է օրէնքը, գիտէի կը ճանչնայի և զայն առաջնորդ կորսելու համար պատժուեցայ ինչպէս որ իրաւացի էր :

Հազիւ թէ ոտքս այս յիմար սիրահարութեան ամպին վրայ դրած էի, երբ յանկարծ վար ընկայ բռնազին և անկէ հինդ օր ետքը հազիւ կըցայ անոր գրեթէ ծիծաղելի պարանոցները գրի առնելու աբիութիւնը ունենալ :

Առտու, տիկին Լարօք և իր աղջիկը, տիկին տը Յէն-Քասթի նոր այցելութիւն մ'ընելու և զտիկին Օպրին տունը բերելու գայեթ էին : Օրիորդ Հէլուէնը գեղեցիկ առանձին գտայ : Իր տարեկանին մէկ եռամսեայն կը տանէի իրեն, վասն զի թէ և ընդհանրապէս իմ պաշտօնը զիս տան ներքին կարգ կանոնէ բոլորովին գուրս ձգած է, այս տիկնայք, անշուշտ ինձ և օրիորդ Քարօլինի պատիւ ընելու համար պատուիրած են որ անոր ու իմ ամսականները միայն իմ միջոցաւ վճարուին :

Նորատի օրիորդը սրահակին կից ներքնասենեակը կը գտնուէր և զիս այնպիսի մտախոհ քաղցրութեամբ մ'ընդունեցաւ որ սիրտս շարժեց : Նոյն ժամուն ես իսկ կ'զգայի այն սրտի լիութիւնը որ զմարդ բարեսրտութեան և վստահութեան կը տրամադրէ : Առտի ճշմարիտ Տօն Քիշտի մը պէս 'ի մտի գրի այս խեղճ մենացելոյն օգնութեան ձեռք մը կարկառել :

— Օրիորդ, ըսի իրեն յանկարծ, դուք ձեր բարեկամութիւնը ինչեւ ետ սուիք այլ ես իմ պահեցի . կը ներէք որ անոր մէկ ապաւցոյցը տամ :

Երես նայեցաւ ու երկչոտ այժ մը մրմուռաց :

— Գիտցած ընիք ուրեմն, խեղճ աղջիկս, որ դուք ինքզինքնիկ կը կորսնցնէք :

Օրիորդ Հէլուէն աշխուժիւ մը ոտք ելնելով դուշեց :

— Անցեալ գիշեր զիս շերտցին մէջ տեսաք աներկբայ :]

— Այո՛, օրիորդ :

— Աստուած իմ :

Քայլ մ'ըրաւ դէպ ինձ :

— Պարոն Մաքսիմ, կ'երդնում ձեզ որ պարկեշտ աղջիկ մ'եմ :

— Ար հաւատամ, օրիորդ, այլ պէտք եմ ըսել ձեզ որ այս պղտի վէպին մէջ որ անշուշտ ձեր կողմէ խիստ անմեղճ բայց միւս կողմէ կարելի է աւելի մեղաւալի է, խիստ ծանր կերպիւ ձեր պատիւն ու հանգստութիւնը վտանդի կը դնէք : Աղաչեմ որ ասոր վրայ մտածէք և կ'աղաչեմ միանգամայն որ հաւաստի ընիք թէ այս խնդրոյն վրայ ձեռք ուրիշը երբէք խօսք մը պիտի չլսէ բերնէս :

Այս բնիէ ետքը մեկնելու վրայ էի, երբ ծունկերուն վրայ ընկաւ նա բազմոցի մը քով ու սկսաւ հեծկտալ, ճակատը կռթնած ձեռքիս վրայ որ իրեններուն մէջ առեր էր : Թէև տակաւին քիչ ատեն յառաջ, աւելի աղուոր ու յարզի արցունքներու հոսիլը տեսեր էի բայց և այնպէս սիրտս շարժեցաւ :

— Նայեցէք ինչ կըսեմ, սիրելի օրիորդ, ըսի իրեն . . . կարծեմ թէ արդէն կարի ուշ չէ :

Գլուխը ցնցեց նա ու ժգնակի :

— Ուրեմն, սիրելի աղջիկս, արիացիք : Հող մ'ընէք, կ'աղաւտենք զձեզ : Ըսէք նայիմ, ինչ կրնամ ընել ձեզի համար : Այդ մարդուն ձեռքը նշան մը, նամակ մը կայ որ երթամ ձեր կողմէ ուզեմ : Եզբօր տեղ զնելով հրամայեցէք ինձ :

Օրիորդ Քարօլին բարկութեամբ ձեռքս թողուց :

— Ա՛հ, ինչ քարսիրտ էք, ըսաւ : Գո՛րք զիս ազատելու խօսք կ'ընէք . . . : Զիս 'ի կորուստ մասնողը դուք էք : Զիս սիրելի կեզծելէ ետք մերժեցիք . . . : Նուաստացուցիք ու յուսահատութեան դուբը նետեցիք . . . : Այս եղելութեան միակ պատճառը դուք էք :

— Արդար չէք, օրիորդ, զձեզ սիրել չկեղծեցի երբէք, այլ ձեզի համար խիստ անկեղծ բարեկամութիւն մ'ունէի և ունիմ տակաւին : Ար խոստովանիմ որ ձեր գեղեցկութիւնը, խելքն ու տաղանդները կատարելապէս իրաւունք կը տան ձեզի ձեր մօտ ապրողներէն եղբայրական բարեկամութեան մ'աւելին սպասելու, բայց իմ ընկերական վիճակը, ընտանեկան պարտաւորութիւնները չէին

ներեր ինձ ձեզի նկատմամբ այս սահմանէն անդին անցնել առանց պատուոյ ճամբէն շեղելու : Բայց ՚ի բայ կըսեմ որ զձեզ հրատարակել կը զանեմ և կը հաւատեմ որ դողեցողիք արժանի եմ իմ զգացումները պահելուս համար այն սահմանին մէջ որ պատուասիրութիւնը կը պահանջէր : Այս գործին մէջ զձեզ նուաստացընող բան մը չեմ տեսներ, օրիորդ, եթէ մարդ մը զձեզ հասարակութեան մէջ նախ հասարակութեան քրտնաբերութեան լինելէ ետք արտաքին զձեզ նուաստացած համարելու :

- Արաս դաժան նայուածք մը նետեց նա :
- Ի՞նչ գիտէք, բաւ : Ամեն տղայ ստակի ետեւէ վաղող չէ :
- Ա՛հ, կեռեի թէ չարասիրտ անձ մ'էք, օրիորդ չէլուէն, բայ սի մեծ հանդարտութեամբ, եթէ այնպէս է պատիւ ունիմ զձեզ ողջունելու :

— Պարոն Մաքսիմ, դու չեց նա զիս արդիւնելու համար յանկարծ նետուելով : Ներեցէք ինձ, զթացէք վրաս : Աւաղ, ինչ թշուառ եմ, միտքս հասկըցէք : Երեւակայեցէք թէ ինչ կրնայ ընել ինձի պէս արարածի մը խելքը որու սիրտ մը, հողի մը և իմացականութիւն մը տրուած է անողորմաբար . . . և զորս ուրիշ բանի մը չկրնար գործածել նա բայց եթէ ստուապելու . . . և ատելու : Ի՞նչ է իմ կեանքը և ինչ է ապագաս : Կեանքս կ'անցընեմ աղքատութիւնս զգալով, զգացում՝ որ ևս աւելի կը սաստկանայ զիս պատող զարգարանքներու բոլոր նրբութեամբ : Ապագաս ոչ այլ ինչ պիտ' ընի բայց եթէ օր մը զատուսպէս ողբալ ու ցախել նոյն խոկ այս կեանքի վրայ — այս սարուկ կեանքի վրայ՝ որ ինձի այնքան ատելի է . . . Երիտասարդութեանս, խելքիս և տաղանդներուս խօսքը կ'ընէք . . . անհ, երանի թէ ճամբու վրայ քար կտրեւէ ուրիշ տաղանդ չունենայի, ան ատեն աւելի երջանիկ կ'ընէի . . . այն ինչ հիմա իմ կեանքի ամենէ ընտիր ժամանակը կ'անցընեմ այդ տաղանդներովս ուրիշ կին մը զարդարելով՝ որպէս զի աւելի գեղեցիկ, պաշտուած ու ևս ամբարտաւան ընի : Աւ երբ այսպէս իմ ամենէ անարատ արիւնը այս պէպէսին երակներուն մէջ անցնի լիմնայ, երջանիկ ամուսնոյ մը թեք մտած կ'երթայ նա կեանաց ամենէ շքեղ հանդէսներու մասնակցելու, մինչդեռ ես միայնակ ու լքեալ սենեկապանուհիի մը տարեկանով անկիւն մը պիտի մեռնիմ . . . Ա՛հ, ինչ ըրած եմ Աստուծոյ այս սև բաղդին ար-

ժանանալու համար : Ի՞նչու ասոնցմով ես տառապիմ՝ ու անոնք ոչ : Միթէ անոնք ինչ աւելի աղէկ են : Եթէ ես այնքան չար եմ, թշուառութենէս կարեւելը խոցուած ու անիրաւութենէն հոգիս սևցած ընելուն է . . . : Ես ալ իրենց պէս՝ — և կարելի է աւելի յարմար ծնած էի — բարի, գորովալիք և ողբմասէր ընելու համար . . . Ի՛հ, Աստուած իմ, հարուստ մարդու համար բարեգործութիւն ընելը աճան՝ և երջանիկ մարդերու համար բարեսիրութիւնը զիւրին է : Եթէ ես անոնց՝ ու անոնք իմ տեղն ընէին, անոնք պիտի առէին զիս, — ինչպէս որ ես զիրենք կ'ատեմ : — Մարդ իր տէրը չարիք . . . : Ա՛հ, այս ըսածներս սոսկալի բաներ են, այնպէս չէ՞ : Ես ալ քաջ գիտեմ և զիս մեռցնողն այն է, անարդութիւնս կ'զգամ ու կ'ամչնամ . . . բայց կը պահեմ զայն : Բարեւ, պարոն, հիմակ յառաջունէ աւելի արհամարհելով պիտի անդունէք զիս . . . դուք որ այնքան պիտի սիրէի եթէ ուզէիք, դուք՝ որ բոլոր իմ կորուսածը կրնայիք վերագարձընել ինձ, այն է խաղաղութիւնը, բարութիւնը և անձնական արժանապատուութիւնս . . . Ա՛հ, եղաւ վարկեան մը որ ինքզինքս փրկուած կարծեցի, ուր առաջին անգամ ներսս, երանութեան, ապագայի և հպարտութեան խորհուրդ մը ծագեցաւ . . . Եղուկ ինձ . . . :

Երկու ձեռքերէս բռնած էր նա կրկին, ալեծուփ երկայն դանդուրներու տակ ծածկուած զլուխը անոնց մէջ դրաւ և խելքի պէս լացաւ :

— Միրելի աղջիկս, ըսի իրեն, ձեր վիճակի դառնութիւնները և ձանձրոյթը որեւէ ուրիշէ մ'աւելի կը հասկընամ, այլ ներեցէք ինձ ըսել թէ զանոնք դուք շատ կ'աւելցընէք սրտեքնուդ մէջ սնուցանելով այն ցաւալի զգացումները զորս հիմա յայանեցիք ինձի : Չեմ չեմ պահեր որ ասոնք զէշ բաներ են և կամաց կամաց իրօք ձեր ճակատագրին բոլոր խտուածանցը արժանի պիտի ընիք, բայց եկէք անգամ մը տեսներ, ձեր երեւակայութիւնը այդ խտուածանքը զարմանալի կերպով աչքերնուդ կը մեծցընէ : Ինչ որ կ'ուզէք ըսէք, այս ասն մէջ առ այժմ իբրև բարեկամուհի բռնուած էք և անշուշտ եմ որ օրին մէկը երջանիկ ամուսնոյ մը թեք մտած պիտի ելնէք ասի : Ես իմ մասիս, ձեր սիրոյն համար ձեզի միշտ երախտապարտ պիտի ընիմ, բայց այս խօսքը մէյ մ'ալ չբանալու համար անգամ մ'ևս կ'ըսեմ ձեզի որ անխուսելի պարտաւորութիւններ ունիմ և չեմ ուզեր ու չեմ կրնար կարգուիլ :

Յանկարծ երեսո նայեցաւ ,
 — Նոյն իսկ Մարգարտին հետ , հարցոյց :
 — Ձեմ հասկընար թէ՛ օրիորդ Մարգարտի խօսքը հոս ինչ բան
 տունի :

Օրիորդ Քարօլին մէկ ձեռքով իր դէմքը ծածկող մազերը մէկ-
 դի ըրաւ և սպառնական շարժումով մը միւսը ինձ երկնցընելով

— Ձանի կը սիրէք , ըսաւ անլուր ձայնով մը , այսինքն անոր
 օժիտը կը սիրէք , բայց պիտի չկրնաք առնել :

— Օրիորդ Հէլուէն :
 — Ա՛հ , շարունակեց , շատ տղայամիտ էք եթէ զձեզ սիրող կին
 մը խարել կը կարծէք : Լոզ չէ , քաջ տեղեակ եմ՝ ձեր խորա-
 մանկութեանց : Այլուր ով ըլնելնիդ ալ դիտեմ . . . օրիորդ տը
 Բէրհօէ ձեր քաղաքագէտ խոստովանութիւնը տիկին Լարօքի հա-
 ղորդելու ատեն հոն մօտ էի :

— Ի՛նչ , դունէն ականջ ալ կը դնէք , օրիորդ :

— Առ ոչինչ կը սեպեմ ձեր նախատինքները . . . այլուր վրէժս
 պիտի լուծեմ և այս ալ մօտերս . . . Ա՛հ , պարոն տը Շանսի ,
 շատ վարպետ էք աներկբայ ու կը շնորհատրեմ զձեզ . . . ան-
 շուշտ Պ. Լօպօրէն զձեզ հոս զրկելու ատեն սորվեցուցած անշա-
 հասիրութեան և զգաստութեան դերը , սքանչելի կերպով խաղա-
 ցիք . . . դիմացիննիդ կ'ճանչնար նա . . . այն աղջկան ծիծա-
 դելի ցնորքը դիտէր : Ձեր որսը արդէն ձեռքերնուդ մէջ կ'կար-
 ծէք , այնպէս չէ : Պատուական միլիոններ որոնց աղբիւրը աւելի
 կամ նուազ պատուաւոր է կ'ըսեն բայց որոնք շատ յարմար են
 մարքիզութիւն մը ծեփելու և գինանշան մը վերստին ոսկեզօծելու
 համար . . . արդ՛ այս վայրկեանէն կրնաք մտքերնեզ հանել ա-
 տոնք . . . վասն զի կ'երգնում ձեզ որ օր մ'եւս չէք կրնար ձեր
 դիմակը պահել , ահա այս ձեռքովս վար պիտի առնեմ զայն :

— Օրիորդ Հէլուէն , մեծապէս ժամանակ է արդ այս տեսարա-
 նին վերջ տալու , վասն զի թատրերգութեան մ'երեւոյթը կ'առնէ :
 Թէ՛ և բանսարկութեան ու զրպարտութեան ճամբուն մէջ ձենէ յա-
 ուաջ շարժելու ժամանակ ունիմ , այլ դուք ապահովաբար կրնաք
 իջնել հոն վասն զի խօսք կը տամ որ ձեզ պիտի չհետեւիմ և
 հիմա ծառայ եմ ձեզի :

Սաստիկ զըռանքի և կարեկցութեան զգացումով մը այս թշուա-

նականէն զատուեցայ : Թէ՛ և միշտ կը խորհէի թէ՛ ամենէ շնորհա-
 զարտ էակն ալ նոյն իսկ իր ձիրքերու համեմատութեամբ պիտի
 զայրանար ու աւրուէր եթէ օրիորդ Հէլուէնի հոս ունեցած ան-
 ստոյգ ու անարգ կացութեան մէջ գտնուէր , բայց երևակայու-
 թիւնս կրցած չէր սուղիլ մինչև այն թունալի յատակը որ իմ ա-
 չաց առջև բացուեր էր :

Անշուշտ — եթէ ժարդ մտածէ — չկրնար ըմբռնել կեանք մ'որ
 ժարդկային հոգին աւելի ժանտալից փափաքներու ենթարկելով սրտին
 մէջ մնելիան ցանկութիւնները սրելու և աւելցընելու կարող ըլ-
 նի ամեն վայրկեան հպարտական ապստամբութիւններ գրգռէ և կա-
 նանց բնական եղող ամեն տեսակ նախանձ զայրացընէ :

Տարակոյս չկայ որ իրենց ազքատութեամբ կամ տաղանդով այս
 պաշտօնին մնտող աղջիկներէ մեծ մասը իրենց զգացումներու չա-
 փաւորութեամբ , Աստուծոյ օգնութեամբ կամ իրենց սկզբունքնե-
 բու հաստատութեամբ դերձ կը մնան այն ցաւալի յուզմունքէ ո-
 բոնցմէ օրիորդ Հէլուէն չէ կրցեր ինքզինքը պահել , բայց փորձը
 դժուարին է :

Իմ կողմէ՛ հա ալ քանի մ'անդամ մտածեր էի որ մեր դժբաղ-
 դութիւններով քոյրս ալ կրնար վարժուհիի պաշտօնով հարուստ
 ընտանիքի մը մէջ մտնելու սահմանուած ըլնիլ , բայց հիմակ երդում
 ըրի որ ինչ ալ ըլնի մեր ապագան աւելի աղէկ է որ ամենախեղճ
 մանսարգի մը մէջ աշխատութեան ամենէ աղի հացը քորջս հետ
 բաժնեմ քան թէ ձգեմ որ երթայ նա այն հարուստ այլ ատելու-
 թեամբ լի ծառայութեան թունաւոր կոչունքի սեղանը նստի :

Սակայն թէ՛ և հաստատ 'ի մտի դրեր էի օրիորդ Հէլուէնը ա-
 զաա թողուլ ու որ և է գնով անձամբ չմանել նուաստացուցիչ
 կուրի մը ամբաստանութեանցը մէջ , հանդիստ սրտով միտքս չէի բե-
 րեր ինծի դէմ բացուած նենդալի կուռոյն հաւանական հետեւութիւն-
 ները :

Յայտնի էր որ ինծի ամենէ շատ դայցող բաներուն այսինքն սի-
 րոյս և պատուոյս դէմ պիտի յարձակէր նա : Իմ կենաց ու սրտին
 գաղտնիքը 'ի ձեռին՝ իր սեռին յատուկ վարպետութեամբ սուան ի-
 բրաւի խառնելով օրիորդ Հէլուէն իմ վաբմունքը դիւրաւ կրնար կաս-
 կածելի երեցընել , իմ խղճահարութեան զգուշութիւնները ինծի
 դէմ դարձընել և իմ ամեն պարզ գնացից նախապատրաստեալ

սատանութեան մը գոյնը տալ : Ենկարելի էր զխնայ ճշգիւ թէ
ինչ ձև պիտի տար իր չարամտութեան : Բայց վտահ էի որ ընտրե-
լիք միջոցներուն մէջ պիտի չսխալէր , վասն զի որ եւ է մ'ա-
ղէկ կը ճանչնար այն երեակայութիւնները որոնց վրայ կ'ուզէր ներ-
գործել :

Օրիորդ Մարգարիտի և անոր մօրը մտքին վրայ ունէր այն բնա-
կան իշխանութիւնը , որ կեղծաւորութիւնը անկեղծութեան՝ և խո-
րամանկութիւնն պարզմտութեան վրայ ունին : Ենոնց քով կը վա-
յելէր նա այն ամեն վտահութիւնը որ բազմամեայ սովորութեանէ
մը ամենօրեայ մտերմութեանէ մը կը ծագի և իր բառը գործածե-
լով իր փերերը չէին կասկածեր որ արտաքին շնորհալի զուարթու-
թեան մը և յարգալի խնամներու տակ՝ որոցմով շատ վարպետու-
թեամբ կը ծպտի , կը դանուէր այն հպարտութեան և ապերախ-
տութեան ոգին որ այս թշուառ հոգին կը կրծէ :

Հետեւաբար տարակոյս չունէի որ աս աստիճանի զիտուն և ապա-
հով ձեռք մ'այսպէս պատրաստուած սրտերու մէջ ամենայն յաջո-
ղութեամբ պիտի թափէր իր թղթերը : Իրաւ էր որ օրիորդ Հէ-
լուէն իր քինախնդրութեան անսալով կրնար վախնալ որ օրիորդ
Մարգարիտի ձեռքը Պ. Պէվալլանին ձեռքին մէջ գրած կ'ընէր
նորէն և կը փութացընէր ամուսնութիւն մը որ նոյն իսկ իր փառա-
սիրութիւնը հիմն ՚ի վեր կ'կործանէր , բայց զիտէի որ կնոջ մ'ա-
տելութիւնը բան մը հաշիւ չընէր և ամեն բան աչքը կ'առնէ :
Ուստի օրիորդ Քարօլինի կողմէ ամենէ արագահաս և կոյր վրէժ-
խնդրութիւն մը կ'սպասէի և իրաւունք ունէի :

Աւելի անդ՛ մտածմունքերու յատկացած ժամերս տաժանելի
անձկութեամբ մ'անցուցի , զղացի այն ամեն մօրմօրը որ իր հպատա-
կութեանը համար հպարտ հոգի մը կ'զգայ , համակուեցայ այն վիշ-
տով որ դառն կասկածի մը համար ուղիղ խղճմտանք մը կը վշտա-
նայ և լցուեցայ այն ցառով որ ամենէ աղէոյժ արհամարհը կը
պատճառէ գորովալի սրտի մը : Իմ ամենէ գէշ օրերու մէջ ան-
զամ՝ տուայաբ աւելի աղէկ լցուած բաժակ մը ինձ ներկայացուցած
չէր բնաւ :

Բայց և այնպէս՝ սովորականիս պէս աշխատելու փորձ ըրի : Ժա-
մը հինգին մօտերը դղեակը գացի : Այս տիկնայք կէսօրէ ետքը տուն
դարձած էին : Օրիորդ Մարգարիտ , տիկին Օսրի և Պ. Պէվալ-

լան սրահակը կը դանուէին քանի մը անցորդ հիւրերու հետ :
Օրիորդ Մարգարիտ իմ ներկայութիւնը չտեսնելու զարկաւ և
անսովոր եռանդով մը իր խօսակցութիւնը շարունակեց Պ. Պէվալ-
լանի հետ : Խնդիրը պարահանդէսի մը վրայ էր որ յանպատրաս-
տից նոյն իրիկուն տեղի պիտի ունենար մտակայ դղեակներէն մէկուն
մէջ :

Օրիորդը մօրը հետ պիտի երթար և կ'ստիպէր զՊ. Պէվալլան
որ իրենց ընկերանայ և ապիկա ներում կը խնդրէր չխարնալուն
համար , աւարկելով որ աւտու դեռ հրաւերը չընդունած իր տու-
նէն մեկնած ըլնելուն՝ պատշաճ հաղուստով չէր :

Բայց Մարգարիտ սիրալիւր և փութկոտ հպտանքով մը՝ որու
վրայ նոյն իսկ իր խօսակիցը զարմացած կ'երեւէր , կ'պնդէր որ տա-
կալին ժամանակ ունէր տունը երթալ հազուիլ և դալ զիրենք առ-
նելու : Իրեն համար պզտի ճաշիկ մ'ալ վար պիտի գնէին :

Պ. Պէվալլան պատասխանեց որ իր բոլոր կառքի ձիերը հիւանդ
էին և պարահանդէսի հաղուստովը չէր կրնար ձիով վերադառնալ ,

— Ուրեմն ամբիկեան կառքով կը տանին ձեզ , ըսաւ օրիորդ
Մարգարիտ , միևնոյն ատեն առաջին անգամ աչքերը իմ կողմը
դարձուց և ծածկելով զիս նայուածքով մը ուր կայծակին պայթի-
լը տեսայ :

— Պարոն Օտիօ , աւելցուց հրամայական կտրուկ ձայնով , դա-
ցէք ըսէք որ կառքը լծեն :

Այս ծառայական հրամանը այնքան դուրս էր սովորաբար ինձ
տրուած և իմ գործադրելիք հրամաններու կարգէն , որ նոյն իսկ ա-
մենէ անտարբերներու ուշն և հետաքրքրութեանը արթնցան անմի-
ջապէս : Տաժանելի լուծիւն մը տիրեց . Պ. տը Պէվալլան զար-
մացած նայուածք մը նետեց օրիորդ Մարգարիտի վրայ , ետքը ինձի
նայեցաւ և ծանրագէտ՝ երևոյթ մ'առնելով ոտք ելաւ :

Եթէ յիմար բարկութեան մը ցոյցերը կ'սպասէին ինէ , մեծա-
պէս սխալեցան : Ենշուշտ այնպիսի գեղեցիկ , սիրելի , — և այն-
քան անպօթ բերնէ մը վրաս ընկնող նախատալի խօսքերը մահու
ցրտութիւն մը պատճառեց էին մինչև իմ կենաց խորին աղբիւր-
ները և կը տարակուսիմ որ սրտիս մէջէ անցնող պողովատիկ եր-
կաթ մը աւելի գէշ զգայութիւն մը պատճառեց ինձ , բայց բո-
լորովին հանդարտ մնացի :

Ծառաները կանչելու համար տիկին Լարօքի գործածած սկահա-
կը ձեռքիս աակ սեղանի մը վրայ էր ; մատս վրան գրի : Անմի-
շապէս սպասուոր մը ներս եկա :

— Կարծեմ թէ , ըսի անոր , օրիորդ Մարգարիտ ձեզ տալիք
հրամաններ ունի :

Օրիորդը այս խօսքերուն վրայ զորս տեսակ մ'ապշու թեամբ մտիկ
ըրած էր , գլխովը բացասական նշան մ'ըրաւ ու ժղնակի ու ծառան
ճամբեց : Մեծ փափաք ունէի դուրս ելնելու սրահակէն ուր ճամփիւս
կ'զար , բայց Պ. Պէվալլանի նոյն ժամուն ցոյց տուած զրգուիչ հովե-
րուն առջև չէի կրնար մեկնիլ :

— Երբարև զարմանալի բան մ'է այս , մըմնաց նա :

Ըսածը չլսել ձևացուցի : Օրիորդ Մարգարիտ անոր ախանջն ՚ի
վեր ցած ձայնով քանի մը խօսքեր ըսաւ :

— Կը խոնարհիմ , օրիորդ , վրայ բերաւ անատեն Պ. Պէվալլ-
լան աւելի բարձրաձայն , միայն թէ ներելի ըլնի ինձ յայտնել
այն անկեղծ ցաւը որ կ'զգամ այս գործին մէջ միջամտելու իրա-
ւունքը չունենալուս համար :

Ոտք ելայ իսկ և իսկ :

— Պարոն տը Պէվալլան , ըսի իրմէ երկու քայլ ասդին կայնե-
լով , այդ ցաւը աւելորդ է , վասն զի եթէ ինքզինքս օրիորդին հրա-
մաններուն հնազանդելու սլարատոր չհամարեցի , ձերիններուն հա-
մար պատրաստ եմ . . . և զանոնք սպասելու կ'երթամ :

— Շատ լաւ , շատ լաւ , պարոն , ատկէ ադէկ ինչ կրնայ ըլ-
նիլ , պատասխանեց նա , շնորհքով մը ձեռքը շարժելով կնիկները ա-
պահով ցրնելու համար :

Ատոր վրայ գիրար ողջունեցինք և դուրս ելայ :

Մենաւորիկ աշտարակիս մէջ ըստ սովորականի ճաշեցի Ալէնի
սպասարկութեամբ , որ անշուշտ նախասնեկի տարաձայնութիւններէ
եզելութիւնն իմացեր էր վասն զի վրաս անդադար լալկան նայուածք-
ներ կը նեւէր երբեմն երբեմն խորունկ հառաչելով և իր սովորու-
թեան հակառակ տխուր լուութիւն մը պահելով : Միայն իմ ինդրա-
նաց վրայ ինձ իմացուց թէ տիկինները նոյն երեկոյեան հանդէսին
չերթալ սրտեր էին :

Իմ համար ճաշը լմնալէ ետքը , թուղթերս կարգի գրի ու եր-
կու սող գիր մը գրեցի առ Պ. Լօպօբէն : Ամեն բան նախատե-

տեսնելով քոյրս իրեն կը յանձնարարէի : Գժբաղդութիւն մը պա-
տահած ատեն զան լքանելու խորհուրդը , սիրտս աղեյօշ մտրմօրով
մը կը յնուր առանց ամենեւին իմ սկզբունքը խախտելու : Կարելի
է կը սխալիմ , այլ միշտ կը կարծեմ թէ մեր արդի կենցաղալա-
րութեան մէջ պատիւը ամեն պարտաւորութիւններէ գերազույնն է :
Այսօր խղճերու մէջ պատիւը՝ այնքան կէս մը սրբուած աւաքինութիւն-
ներու , այնչափ կիսամեռ համոզումներու տեղ բռնած է , մեր ընկերական
վիճակին մէջ այնպիսի պահպանողական գեր մը կ'իտաղայ որ , երբէք ա-
նոր իրաւունքները տկարացընելը , վճիռներու դէմ վիճելը ու ան-
նոր պարտաւորութիւններու դէմ վարուելը մտքիս մէջ պիտի չմտնէ :
Պատիւը իր անորոշ նկարագրին մէջ օրէնքէն և բարոյականէ գերա-
զանց բան մ'է : Մարդիկ զայն մտքով չեն քննէր բայց կ'զգան : Արծնք
մ'է : Թող պատուամոլութիւնը ունենանք եթէ կրօնամոլութիւն չու-
նինք :

Թէ որ մտածես , կը տեսնես որ մարդկային հոգւոյ մէջ խորունկ
սպաւորած զգացում մը չկայ որ քննութիւնը նուիրադործած չըլնի :
Որ և է պարագայի մէջ աւելի աղէկ է որ աղջիկ կամ կին մ'աշխարհիս
մէջ առանձին՝ քան թէ անպատուած եղբօր կամ ամուսնոյ մը պաշտ-
պանութեան ներքև ըլնի :

Ամեն վայրկեան Պ. տը Պէվալլանէ գիր մը կ'սպասէի : Կը պա-
տրասուէի մօտակայ աւանին հարկահանին երթալ որ Բրիմէտի մէջ
վիրաւորուած պաշտօնակալ մ'է ու իր օգնականութիւնը ինդրեւ
երբ դուրը զարնուեցաւ : Ներս մտնողը նոյն ինքն Պ. տը Պէվալլ-
լան էր : Իր դէմքը սղափ շփոթի երևութով մը , զուարթ և անկեղծ
բարեմտութիւն մը կը յայտնէր :

— Պարոն , ըսաւ նա , այն ինչ բաւական ակներև զարմանքով մը
երեսը կը նայէի , այս վարմունքս անկանոն է , բայց անցեալս
իմ քաջարտութիւնը երկբայութեանէ ազատ կը պահէ : Միւս կող-
մէ այս իրիկուն ալ այնպիսի ուրախութիւն մ'ունիմ որ ներսս քի-
նու և թշնամութեան տեղ մը չձգէր : Աերջապէս անանկ հրաման-
ներու կը հնազանդիմ որ հիմակ յառաջունէ աւելի նուիրական
պէտք են ըլնիլ ինձի համար և կը գամ ձեզի հաշտութեան ձեռն
կարկառելու :

Ծանրութեամբ ողջունեցի զինքը ու ձեռքը բռնեցի :
— Այս կարգադրելէ ետքը , շարունակեց նա նստելով , իմ պատ-

դամաւորի պաշտօնը կատարելը շատ հեշտին է ինձ : Քիչ մը յառաջ օրիորդ Մարգարիտ , անմտադրութեամբ հրամաններ տուաւ որ անշուշտ ձեզի յատկացեալ չէին , որով ձեր դիւրազգածութիւնը , կը խոստովանինք , որ շատ իրաւամբ վերաւորուեցաւ , պարոն . հետեւաբար այս տիկինները ինձ յանձնեցին այս բանիս վրայ զգացած ցաւերնին ձեզ յայտնել : Երբէք պիտի չլինան միտթարուիլ եթէ այս վայրկեանական սխալը զիրենք զրկէ ձեր բարի ծառայութիւններէ (որոնց բոլոր կարեւորութիւնը կը ճանչնան) և կարէ այն յարաբերութիւնները որոնց անբաւ արժէք մը կը տան : Իմ մասիս , պարոն , իմ յորդորները այս տիկիններու ստիպմանց վրայ աւելցրնելու իրաւունքը , այս իրիկուն ստացայ . շատոնց ունեցած փափարներս ընդունուեցան հիմակ և ես ալ մասնաւորապէս երախպարտ կ'ըլնիմ ձեզ եթէ այս երեկոցեան երջանիկ յիշատակներու չխառնուի բաժանում մը որ թէ ցատախիթ և թէ վնասակար պիտ' ըլնի այն ընտանիքին որու մէջ մանեղու պատիւն ունիմ :

— Պարոն , ըսի իրեն , ձեր և այս տիկինանց կողմէ ինձ յայտնած բարեկամական ցոյցերէ մեծապէս շնորհակալ եմ , բայց ներեցէք ինձ եթէ ձեզի չեմ կրնար տալ անմիջական պատասխան մը որ ունեցածէս աւելի մտքի հանդարտութիւն մը կը պահանջէ :

— Պիտի ներէք դոնէ , ըսաւ Պ . տը Պէլլալլան , որ հետս աղէկ յոյս մը տանիմ . . . : Ինձ նայեցէք , պարոն , այս առթիւ յախտեանապէս մէկ զի ձգենք այն պաղութեան ստուերը որ մինչև հիմակ մէջերնիս կրցած է զանուիլ : Իմ կողմէ՝ ես բոլորովին արաւմազիր եմ : Տիկին Լարօք , առանց բոլորովին յայտնելու զազանիք մ'որ իբր չէ , կերպով մը հասկցուցած է ինձ որ ձեզ համար առանապատուաւոր պարագաներ կը պահուին այն տեսակ մը ծպտումի ներքեւ որով կը շրջապատուիք : Ասկէ զատ յատուկ շնորհակալութիւն մ'ալ կը պարտաւորիմ ձեզ , զիտեմ որ մտաբեր օրիորդ Լարօքի հետ ամուսնութեանս նկատմամբ ձեռն խորհուրդ հարցուած ատեն ինձի համար նպատակաւոր կերպով խօսեր էք :

— Տէր ողորմես , չեմ կարծեր , պարոն , որ արժանացած ըլնիմ . . . :

— Ո՛հ , դիտեմ , վրայ բերաւ նա ծիծաղելով , որ չափազանց չգովեր էք զիս բայց վերջապէս շոգ մոզ լեզու մը չգործածեր էք :


Պը խոստովանիմ նաև որ ճշմարիտ կորովամտութիւն մը ցուցրցեր էք : Ըսեր էք որ եթէ օրիորդ Մարգարիտ հետս եթէ ոչ բոլորովին երջանիկ՝ գէթ դժբաղդ ալ չըլնիր : Արդ՝ Գրանիէլ Մարգարէն անգամ ասկէ աղէկ չէր կրնար խօսիլ : Իբաւ է որ սիրասուն աղջիկը և ոչ մէկու հետ բոլորովին երջանիկ կրնայ ապրիլ , վասն զի համայն աշխարհի մէջ չկրնար դանել էրիկ մը որ անտուրնէ մինչև իրիկուն օտանաւորով խօսի իրեն հետ . . . Չկայ կ'ըսեմ , ես ալ ուրիշէ մ'աւելի քնարերգակ չեմ , կը հաւանիմ , բայց — ինչպէս որ ինձ համար ըսելու պատիւն ըրեր էք , — բարեբարոյ մարդ մ'եմ և իրօք պիտի չտարակուսիք երբ որ զերար աւելի աղէկ ճանչնանք : Չար սատանայ մ'ալ չեմ , բարի տղայ եմ . . . հարկաւ պակասութիւններ ունիմ , տէր ողորմես . . . մանաւանդ ժամանակաւ ունեցայ : Աղուոր կ'իները սիրեցի . . . այս բանը չեմ կրնար ուրանալ : Բայց ինչ կ'ըլնի , ասիկա զգայուն սիրտ մ'ունենալու նշանն է , Ասկէ զատ ալ նաւահանգիստը հասած եմ . . . և շատ գոհ եմ , վասն զի — խօսքը մէջերնիս , — սկսայ տարիս առնել : Արձկապեմ , ասկէ ետքը մինակ կնոջս ու տղոցս վրայ մտածել կ'ուզեմ , որով կը հետևընեմ ձեզի հետ թէ՛ օրիորդը շատ երջանիկ պիտ' ըլնի , այսինքն որքան որ իր գլուխը ունեցող մէկը կրնայ ըլնիլ , վասն զի վերջապէս շատ աղէկ պիտի վարուիմ հետը , բան մը պիտի չզլանամ իրեն , ընդհակառակը ամեն ուզածը պիտի կատարեմ : Բայց թէ որ լուսինն ու աստղերը ուզէ , իրեն հաճելի ընելու համար չեմ կրնար ելնել փրցրնել զանոնք . . . ասիկա անկարելի է , . . . ուստի , սիրելի բարեկամ , անգամ մ'ես ձեռքերնիդ տուէք : Չեւքս իրեն տուի : Ոտք ելաւ նա :

— Հա՛ , հիմա կը յուսամ որ կը մնաք մեզի . . . սա գէմբերնիդ զուարթացուցէք քիչ մը , մենք ձեր կենցաղավարութիւնը կարելի եղածին չափ ախորժելի պիտ' ընենք , բայց դուք զոյն ինչ ջանք ընելու էք ձեր կողմէ . . . ինչո՞ւ արտումութիւնը կ'սիրէք . . . ներեցէք բառիս , ճշմարիտ բուի պէս կ'ապրիք : Անսպաւառ տեսակէ Պպանիկ մ'էք . . . Մէկ զի ըրէք այդ հովերը : Երիտասարդ , շնորհքով , խելացի ու տաղանդաւոր տղայ մ'էք , այս բաներէ օգուտ քաղեցէք . . . հիմակ նայեցէք , ինչ կ'ըլնի թէ որ պղտի շէլուէնի հետ կտոր մը սիրախօսութիւն ընէք , անով կրնաք զուարճանալ . . . շատ սիրուն է նա և շատ կը յարմարէր . . . բայց վա՛յ թշուա

ուսական, բարձր աստիճաններ հասնիր քիչ մը կը մոռնամ ես ո՛ր . . . աղէ : Մնաք բարե, Մաքօհմ, և վաղը տեսնուինք, այնպէս չէ :

— Վաղը, անշուշտ :

Եւ այս բարեբարոյ մարդը — որ կարի հասարակ տեսակէ Սպարսիկ մ'է, — զիս իմ խորհուրդներու թողլով գնաց :



1 Հովտեմբեր

Տարօրինակ դէպք մը պատահեցաւ որու հետեութիւնները առայժմ եթէ ոչ իրիտ արդիւնաւոր՝ ինձ օգտակար եղան : Զիս ճնշող ծանր հարուածէն ետքը իմ կսկիծներու տակ թմրածի պէս մնացեր էի և այս դէպքը գոնէ կենդանութեան զգացումը տուաւ ինձ՝ որով երեք երկար շաբաթներէ ետքը այս թերթերը բանալով զբիշը ձեռք առնելու սիրտ կ'ընեմ :

Այս ամեն հատուցումները ստանալէ ետքը, խորհեցայ որ ալ պատճառ մը չունէի գոնէ շտապաւ ձգելու այնպիսի պաշտօն մը և առաւելութիւններ՝ որոնք 'ի վերջէ հարկաւոր են ինձ և որոնց նմանը շուտ մը գտնելու համար մեծ դժուարութիւն պիտի ունենամ :

Իմ տկարութեան պատճառաւ կրելիք վշտերուս վախը, չէր ներեր ինձ խոյս տալ այնպիսի պարտաւորութիւններէ՝ որոնց մէջ քրոջ շահն ալ 'ի խողուն էր : Բաց՝ յայտնանէ՝ չէի թղթեր որ օրիորդ Մաքսը կարիտ իմ յանկարծական հրաժարականը աղոտոր խաղ մը կորսնցընելու սիրտկարութեանէն կարծէ և քանի որ սրտէս անցածը չէր կրնար տեսնել նա, պատուոյ կէտ մը կը համարէի ինձ մինչև խորանին ոտքը, անտարբեր դէմք մը ցուցընել իրեն :

Չերկնցընեմ, առ այժմ գոհ եղայ զրելով Պ. Լօպօբէնի՝ որ իմ կացութեան քանի մը հանդամանքները մէկ վայրկեանէ միւսը կրնային ինձի համար անտանելի ըլնիլ և թէ շատ կը փափաքէի նուազ ամսականով աւելի անկախ գործ մ'ունենալ :

Նոյն իսկ երկրորդ օրը դղեակը ներկայացայ ուր Պ. տը Պէ-

վալլան զիս մեծ սիրով ընդունեցաւ : Ես ալ ձեռքէս եկածին չափ բնական կերպով այս տիկնանց բարե սուրի : Եւ երբէք է ըսել որ բացատրութիւն մը տեղի չունեցաւ :

Տիկին Լարօք մտազբաղ և յուզուած երեցաւ ինձ, իսկ օրիորդ Մարգարիտ սակաւ ինչ պաղ՝ այլ քաղաքավար : Օրիորդ Հէլուէն խիտ տոգոյն էր և աչքերը ձեռագործին վրայէն չէր վերցընէր : Խեղճ՝ աղջիկը իր քաղաքագիտութեան վերջնական հետեութեանէն մեծապէս գոհ չէր երևէր և թէպէտ աստիճանային յաղթական Պ. տը Պէվալլանի վրայ արհամարհանքով ու սպառնալեօք լինայուած մը կը նետէր, սակայն Պ. տը Պէվալլան այս մրերկալի մթնոլորտին մէջ՝ որ անշուշտ համբալ մէկը բաւական կը շփոթէր, ազատ շունչ կ'առնէր ու կատարեալ համարձակութեամբ թուշտելով հիւ կը դար : Այս անհոգ հանգարտութիւնը յայտնի կերպով օրիորդ Հէլուէնը կը զայբացընէր, բայց կը սանձէր զանի միանգամայն :

Սակայն և այնպէս թէ որ ապահով ըլնէր որ առջի օրը ինձի ըրած ծառայութեան պէս ծառայութիւն մ'ալ Պ. տը Պէվալլանի ընելովը իր մեղսակցին հետ ինքզինքը կը կորսնցընէր միայն, տարակոյս չունիմ որ անմիջապէս և աւելի իրաւունքով կ'ընէր զայն, բայց հաւանական էր որ իր նախանձոտ բարկութեան անսալով ու իր ապերախ երկրիմութիւնը խոստովանելովը, միայն ինքզինքը կ'կորսնցընէր ու կորսնցընէ իրը հասկընալու չափարթնութիւն ունէր նա :

Եւ իրօք Պ. տը Պէվալլան առանց զգուշութեան այսպիսի արկածի մը մէջ մտնելու մարդ չէր, զգուշութիւն՝ որ 'ի հարկին անողորմ պաղարիւնութեամբ մը պիտի գործածէր : Ստուգիւ օրիորդ Հէլուէն կրնար խորհիլ թէ առջի օրը իր խօսքով աւելի սուտ բանսարկութիւններու հաւատ ընծայեր էին, բայց դիտէր որ մարդ իր սրտին՝ ակործելի կամ անսխորժ սուտ մը, անտարբեր ճշմարտութեանէ մ'աւելի զիւրաւ կ'ընդունի : Հետեալբար կը համակերպէր նա, կարծեմ զգալով որ մասնութեան զէնքը երբեմն նոյն իսկ զայն գործածող ձեռքին դէմ կը դառնայ :

Այն՝ և հետեւեալ օրերը այնպիսի չարչարանքի մ'ենթարկուեցայ զոր նախատեսեր էի, բայց որու գառնակսկիծ պարայանները կրցած չէի հաշուել : Որոշուեր էր որ հարսանիքը ամիս մ'ետքը տեղի ունենայ սուտի հարկ եղաւ որ անյապաղ ու արտոյնօք անոր պատրաստութիւնները տեսնուին : Անհոնաւորապէս ամեն առաւօտ արիկին

Բրէվժի փունջերը եկան, և տըը ամսթէլաները, կերպարաները հասան առատորէն և ամեն իրիկուն սրահին մէջ նախանձնտ և փութկոտ բարեկամո հիներու աչքին տակ ՚ի ցոյց հանուեցան:

Օրիորդ Մարգարիտ անդոթ վարպետութեամբ մը կ'ինդրէր որ բոլոր այս բաներու վրայ կարծիք ու փորհորդ տամ, ևս ալ հաճութեամբ կը հնազանդէի, և տըը աշտարակս քաշուելով, դաղանի զզրոցէ մը կ'հանէի բզկտուած շուշուակը որ կենացս վտանդովը ազատեր էի և անով աչերս կը սրբէի: Աս ալ վատութիւն էր, բայց ինչ ընեմ թէ որ կը սիրեմ զինքը: Նենդութիւնը, թշնամութիւնը, անդարմանելի թիւրեմացութիւններ, իր և իմ հպարտութիւնը զմեզ յաւիտենապէս կը բաժնեն, հոգ չէ, սակայն ինչ կ'ուզէ ըլնի այս սիրտը անով լեցուն պիտի ապրի ու մեռնի:

Պ. տը Պէվալլանի նկատմամբ ատելութիւն մը չէի զգար, աստելու անդամ արժանի չէ նա, հասարակ բայց անփնաս մարդ մ'է: Փառք Աստուծոյ իր գոեհիկ բարեսիրութեան ցոյցէրը առանց կեղծ ծառորութեան կրնայի ընդունիլ և հանդարտ սրտով ձեռքս իրենիւն մէջ դնել, և թէ իր փցուն անձնաւորութիւնը իմ ատելութենէ կը խուսափէր, ոչ նուազ աղէյոջ և խորունկ անձիութեամբ կ'զգայի թէ այս մարդը անարժան էր այն ընտիր արարածին որու հետ պիտի միանայ ՚ի մտոյ, — բայց զոր պիտի չճանչնայ ընտ:

Երբէք պիտի չլինամ ու պիտի չհամարձակիմ ըսել գառն խորհուրդներու, անանուն զգայութիւններու հեղեղը որ կ'արժնայրնէր յիս — և տակաւին կ'արժնայրնէ, — այս անյարմար ամուսնութիւնը: Ճշմարիտ սիրոյ մէջ այնպիսի նուիրական բան մը կայ որ մեզ պատճառած թէ վշտերուն և թէ խնդութեանց զերմարդկային նկարագիր մը կ'ընծայէ: Սիրած կինդ այնպիսի աստուածութիւն մ'ունի որ կարծես թէ միայն քեզ յայտնի է և որու քօլին օտար ձեռք մը չկրնար դպնալ առանց անման, — ամբարիշտի սոսկում մը տալու քեզի: Միայն թանկագին բան մը չէ որ ձեռքէդ կ'յափշտակեն այլ խորան մ'է որ կը պղծեն ներսդ, դաղանիք մ'որ կը բռնաբարեն և Աստուած մը որ կը նախատեն: Ահա այս է նախանձը, դոնէ այս էր իմ զպայածը: Անկեղծօրէն խօսելով այնպէս կ'իմուէր ինձ թէ աշխարհին մէջ միայն ես աչք, միտք և սիրտ ունէի տեսնելու, հասկընալու և պաշտելու համար իր ամեն կատարելութեամբ թեամբը այս հրեշտակին զեղեցիութիւնը որ ուրիշի հետ քայլամոլոր

կը կորսուի և որ հոգւով և մարմնով յաւիտենապէս ինձ սահմանուած էր: Այո, ունեցայ այս անբաւ հպարտութիւնը որ անբաւ վշտով մը կը քաւուէր:

Սակայն ծագող սատանայ մը ականջս ՚ի վայր կը մըմուար որ մարդկային իմաստութեան ամեն նախատեսութեանց համեմատ Մարգարիտ խելացի ամուսնոյ մը չափաւոր բարեկամութեան մէջ աւելի հանդստութիւն և իրական երանութիւն պիտի գտնէր քան թէ վիպական էրիկի մը սաստիկ արփանքին մէջ: Միթէ, այս իրաւ է միթէ կարելի է: Ես չեմ հատար:

Իրաւ այնպիսի ամուսնոյ մը հետ հանգիստ կ'ապրէր նա, բայց վերջապէս հանդստութիւնը կենաց յետին նպատակը և երանութեան գերագոյն նշանաբանը չէ: Եթէ երջանիկ ըլնելու համար նեղութիւն չտեսնել և սիրտը պնդացընէր բաւական ըլնէր, շատեր, որ երջանիկ ըլնելու անարժան են, երջանիկ կ'ըլնէին: Չափազանց պատճառարանութեամբ և նիւթասիրութեամբ մարդիկ զՅաստուած կ'վատահամբաւեն և գործը կ'անարգեն:

Աստուած կիրքերը կենդանի մարդերու՝ և հանդստութիւնը մեռելուներու տուած է: Այս կեանքի ընթացիկ և ամենօրեայ շահերու ստորնութեան քով որմէ խուսափելու տղայական յաւակնութիւնը չունիմ, ներելի, ինչ կ'ըսեմ, — օրինաւոր բանաստեղծութիւն մը կայ: Անմահութեամբ զարգարուած հոգւոյ բաժինն է այն: Պէտք է որ այս հոգին երբեմն զգալի ըլնի և երևան զայ իրականութենէ գուրս զրգուութեամբ, կարելիութեան սահմանը զանցանող փափաքներով կամ փոթորիկներով: Այո, երանութենէ գերազանց վիշտ մը կայ որ նոյն իսկ երանութիւնն է, այսինքն կենդանի արարածի մը մորմոքը որ մարդկային սրտի բոլոր յուզմունքը և մտքի բոլոր ցնորքը կը ճանչնայ և այս ազնիւ տառապանքը կը բաժնէ նմանօրինակ սրտի՝ և եզրայրական իմացականութեան մը՝ հետ: Ահա այս է այն վէպը որ ամեն մարդ իրաւունք, լաւ և սրտով, պարտաւորութիւն ունի իր կեանքին մէջ դնելու, և թէ մարդու անունը կը կրէ և զայն կ'ուզէ արդարացընել:

Ասկէ զատ, խեղճ աղջիկը՝ այնքան գովուած հանդստութիւնը անգամ պիտի չունենայ: Վընդունիմ մտազխի՛ր որ երկու անգայ սրտերու և սառ երեակայութիւններու միութենէն չէմ թեան հանգիստը կը ծնի, բայց մահու և կենդանութեան զուղաւորութիւնը չլինար

դիմանալ առանց սոսկալի բռնադատութեան և յարատև տառապանաց ։
 Այս ընտանի խեղճութեանս մեջ տեղ որ ամեն օր կ'աւելնար , միայն
 իմ պառաւ և թշուառ բարեկամոհնի՝ օրիորդ ար Բէրհօէի քով
 քիչ մը սփոփանք կ'դանէի ։ Սրտիս վիճակը չէր դիտեր կամ չզխա-
 նալ կը կեղծէր նա , այլ սքօղեալ կամ ակամայ ակնարկութեանց
 մեջ , իմ արիւնսող վէրքերու վրայ կնոջ մը փափուկ և ճարտար ձեռ-
 քը կը դնէր ։

Սյուր՝ այս անձին հողոյն մէջ՝ որ զրհոզութեան և համբերու-
 թեան կենդանի նշանաբանն է և որ կարծես թէ երկրէ վեր կը
 ծածանի , այնպիսի անմեղութիւն և քաղցր հաստատութիւն մը կայ
 որ ինձի ալ կը հաղորդուի ։

Կամայ կամայ իր անմեղ խենդութիւնը կ'սկսէի հասկընալ և
 նոյն իսկ անոր մասնակցիլ , տեսակ մը միաստութեամբ ։ Տեսրիս
 վրայ ծռած՝ ժամերով իր կաթողիկէին մէջ կը դոյրուէի և վայրիկ մը
 իտէական սրբութեան անորոշ խունկերը կը ծծէի ։

Գրեթէ ամեն օր օտարդ օրիորդին տունը ուրիշ տեսակ զբաղում մ'ալ
 մնտուէրու կ'երթայի ։ Ասան զի չկայ աշխատանք մ'որ սովորութեամբ
 հրապոյր մը չտանայ ։ Իր դատին վերջնական կորստեան վրայ օ-
 րիորդ ար Բէրհօէի կասկած մը չտալու համար , կանոնաւորապէս իր
 ընտանեկան տարեդիրները կը հետազօտէի ։

Սյս խուզարկութեանց մէջ մերթ ընդ մերթ — աւանդութիւններ ,
 առատպէններ , բարուց նկարագիրներ կ'դանէի , որոնք հետաքրքրու-
 թիւնս կը շարժէին և պահ մ'երևակայութիւնս անցեալին մէջ կը
 փոխադրէին դառն իրականութենէն հեռի ։

Օրիորդ ար Բէրհօէ՝ որու պատրանքը իմ յարատևութեամբ կը
 սնանէր , այնպիսի երախտագիտութիւն մը կը յայտնէր ինձ՝ որու
 ոչ այնքան արժանի էի , վասն զի այս դործես՝ որ ալ անօրուտ էր
 այսուհետէ՝ սկսած էի այնպիսի ճաշակ մ'առնուլ որ իմ աշխատու-
 թիւնը վարձատրելով իմ ցաւերու փրկաւետ դաղար մը կը տար ։

Սակայն քանի դժնդակ ժամը կը մօտենար , օրիորդ Մարգարիտ
 կը կորսնցընէր այն ջրային աշխոյժը որով կենդանացած էր ամուս-
 նութիւնը վերջնական կերպով որոշուած օրէն՝ ի վեր ։ Գոնէ ատեն
 ատեն դարձեալ իրեն սովորական եղող կրաւորական թուրութեան և
 սև տրամութեան մէջ կ'ըյնէր ։ Նոյն իսկ երկու երեք անգամ իր
 աչերը արտաքոյ կարգի տատամութեամբ մը վրաս յառած տեսայ ։

Տիկին Լարօք ալ իր կողմէ շատ անգամ այնպիսի անհասկացալութեամբ
 և երկմտութեամբ մ'երեսս կը նայէր , որ կարծես թէ ինձի հետ
 տածանելի խօսակցութիւն մը կ'ուզէր այլ կը վախնար բանալու ։

Երէկ չէ առջի օր , օրիորդ Հէլուէն յանկարծ հրաման մը տա-
 լու համար դուրս ելնելով , զիպուածով սրահակրիբն հետ մինակ
 մնացի ։ Յանկարծ ըրած անսարբեր խօսակցութիւննիս գողցես
 դաղանի համաձայնութեամբ մը դադրեցաւ ։ Կարճ լուրձնէ մ'ետ-
 քը՝

— Պարոն , ըսաւ ինձ տիկին Լարօք յուզուած ձայնով , ձեր
 մտերիմները շատ դէշ կ'ընտրէք ։

— Մտերիմներս մի , տիկին ։ Չեր միտքը չեմ կրնար հասկընալ ։
 Օրիորդ ար Բէրհօէէ զատ ոչ որ ինէ խորհրդակցութեան ստուեր
 մը ընդուած է ։

— Բ՛աբէ , վրայ բերաւ նա , կ'ուզեմ հաւատալ . . . կը հաւա-
 տամ . . . բայց հաւատալը չբաւեր ։

Նոյն միջոցին օրիորդ Հէլուէն վրայ գալով , խօսքը կտրեցինք ։

Երկրորդ օրը — այսինքն երէկ — առտունէ դուրս ելեր էի շրջա-
 կաներու մէջ կարուած փայտերու վերակացութիւնն ընելու համար ։
 Երեկոյեան ժամը 4ի մօտերը գրեկին ուղղութեամբ կը դայի՝ երբ
 ճամբուն մէկ անկիւնը , օրիորդ Մարգարիտի հետ գիմացէ դիմաց
 դանուեցայ յանկարծ ։

Մասնին էր և ես զինքը բարեւելով անցնելու կ'պատրաստուէի ,
 այլ իր ձին կայնեցուց նա ,

— Մշանային գեղեցիկ օր մ'է այս , պարոն , ըսաւ ։

— Սյո՛ , օրիորդ , պարտելու ելմբ ։

— Ինչպէս որ կը տեսնէք ։ Անխախտութեան վերջին վայրկեաններ-
 քէս օգուտ կը քաղեմ՝ նոյն իսկ չարաչար կ'ործածեմ զանոնք վասն զի
 առանձնութենէս քիչ մը կը նեղանամ . . . բայց Սէն գործ ունէր
 տունը . . . խեղճ Մէրվինս կաղ է . . . Երդեօք կ'ուզէք անոք
 տեղը լեցընել ։

— Հաճութեամբ ։ Ո՛ր կ'երթաք ։

— Բայց . . . դրեթէ մինչև Էլվէնի աշտարակը երթալ կ'ու-
 ղէի ։

Սյս ըսելով նա իր մտրակին ծայրովը միգապատ սարակ մը կը
 ցուցընէր ինձ , որ ճամբուն աջ կողմը կը բարձրանար ։

— Կարծեմ թէ, յաւելցուց, այս այցելութիւնը երբէք ըրած չէք:

— Սյնպէս է: Շատ անգամ մտքէս անցած է բայց չզիտեմ ինչ պատճառաւ մինչև հիմա՛ի կախ թողած եմ զայն:

— Ուրեմն, յարմար կը գայ, բայց ժամանակն անցած է արդէն և եթէ կը հաճիք քիչ մը փութալ պէտք ենք:

Զիտս զլուխը դարձուցի և արշաւակի մեկնեցանք:

Վազելու ատեն կ'աշխատէի մեկնութիւն մը տալու այս անակնկալ յօժարութեան որ քիչ մը նախապատրաստեալ կ'երևէր, և կ'նկատուի որ ժամանակն ու խորհրդածութիւնը, օրիորդ Մարգարիտի մտքին մէջ կըրցած էին մեղմել զայն յուզող զրպարտութեանց առաջին տպաւորութիւնը: Կերևար թէ օրիորդ Հէլուէնի անկեղծութեան վրայ կասկած ունենալ սկսեք էր և դիպուածին հետ համաձայնելով անզգալի կերպով մը կ'ուզէր ինձ այնպիսի հատուցում մը տալ որու իրաւունք ունէի:

Սյն ատեն զիս պատող պաշարող զբաղումներու մէջ՝ պղտի կարեւորութիւն մը կ'ընծայէի այն մասնաւոր նպատակին՝ որու կը դիմէինք այս տարօրինակ շրջադայութեան մէջ: Շատ անգամ Էլվէնի աշտարակին անունը ականջիս զարկած էր իրրև երկրին ամենէ հետաքրքրական աւերակներէ մէկը, և ամեն անգամ Ռէննէ կամ Թօսլէնէ դէպ ՚ի ծովեղբր երթող ճամբաներէ անցնելու ատենս՝ հետաքրքիր նայուածքով մը դիտեր էի այն անորոշ զանդուածը որ ահագին կոթողի մը պէս կ'բարձրանայ հեռաւոր խոպաններու մէջ տեղ, բայց մինչև հոն երթալու ժամանակն ու առիթը ունեցած չէի ամենին:

Մեր ընթացքը յամբողջութեամբ, անցանք Էլվէնի գեղէն որ ստուգիւ ազգու գաղափար մը կը տայ միջին դարու դեղերու վրայ: Հինգ վեց դարէ ՚ի վեր տուներու ցած ու տխուր ձևը փոխուած չէ: Մարդ երազ կը կարծէ երբ կը տեսնէ այն առանց շրջանակի և կամարաձև որմնածակերու մէջէ դաժան նայուածքով ու գերեզմանաւիան հազուստով կիներու խումբերը որոնք մտքին մէջ իրենց ազգեկաւոր կ'որբեն և անձանօթ լեզուով մը կը խօսին: Սյնպէս կը թուի թէ բոլոր այս մոխրագոյն ուրուականները իրենց գամբանաւիան սպաքարերը նոր ձգեք են, հինօրեայ տեսարան մը ներկայացնելու համար որու միակ հանդիսատեսը դուն ես:

Մարդու սիրտը կը գոցէ այս բանը: Գեղին միակ փողոցը որ մեռած ժամանակներու նախնական և այլանդակ երևոյթը կենդանութեան հոտը կը բուրէ ճշդիւ կը կրէ տակաւին:

Էլվէնէ քիչ հեռի խոտորակի ճամբայ մը բռնեցինք որ զմեզ գաղկաղէմ բլրի մը գագաթը հանեց: Անկէ անտառուտ բարձրաւանդակի մը վրայ՝ թէև հեռուն՝ մեր դիմացը կ'երևէր հողատիրական հսկայագործը:

Գանուած խոպանիս, բաւական ցից զառիթափով մը թաւ մացառներով պատած ճախճախուտ մարդերու մէջ կը խոնարհէր, անոր յետակողմէն վար իջնելով շուտ մը անտառներուն մէջ, մտանք:

Նոյն միջոցին նեղ ճամբէ մը կ'անցնէինք որու քակուած և խորտու բորտ սաւարկը մեր ձիերու սմբակներու տակ կը հնչէր: Շատոնց տեսութեան կարուսեք էի Էլվէնի աշտարակը որու նոյն իսկ տեղը գուշակել չէի կրնար երբ տեսիլքի անակնկալութեամբ մենէ երկու քայլ անդին առջևնիս ելաւ մէկէն:

Այս աշտարակը աւերակ դարձած չէ բնաւ, և մինչև այսօր պահած է իր նախկին բարձրութիւնը որ հարիւր ոտքը կ'անցնի, և իր կրանիթէ կանոնաւոր քարաշարքը, որ ութանկիւնի ձև մը կ'տայ իրեն ամենամաքուր զրոյցով զեռ երէկ ձևուած ահեղ քարի մ'երեւոյթը կ'ընծայէ անոր:

Մենացեալ անտառներուն մէջ սոյն հինաւուրց բերդէն աւելի սեղու տխուր շէնք մ'անկարելի է երևակայել: Չայն շրջապատող խորունկ փոսերու մէջ իրենց բոլոր հասակով երկնցած ծառեր բուսած են, որոնց գագաթները անոր ամենէն ցած պատուհաններուն ձեղքին հազիւ հազ կը մտնեն: Այս հսկայական բոյսերը՝ որոց մէջ խառնակ կերպով մը շէնքին հիմը կը կորսուի անոր ցնորական զոյն մը կը տան բոլորովին:

Այս առանձնութեան և անտառներու մէջ տեղ այլանդակ ճարտարապետութեամբ կանգնուած զանդուածին դիմացը անկարելի է չյիշել այն կատարական աշտարակները, ուր գեղանի բամբիշներ գարեար քունով մը կը ննջեն:

— Մինչև այսօր տեսածս այս է, ըսաւ ինձ օրիորդ Մասգարիտ, որու այս տպաւորութիւնը հաղորդել կը ջանայի, բայց թէ որ դուք իշխանուհին կ'ուզէք արթնցընել կրնանք ներս մտնել: Գիտցածս՝ այս շրջականներու մէջ միշտ բանալիով զինուած հովիւ կամ հով-

ու՛հի մը կը գտնուի : Մեր ձիերը հոս կապենք և սկսինք փնտռել , դուք հովիւր և ես հովուհին :

Չիերը աւերակին մօտ պղտի արգելոցքի մը մէջ արածելու ձգեցինք և շրջակաները հետազօտութիւն մ'ընելու համար օրիորդ Մարգարիտ ու ես վայրիկ մը բաժնուեցանք , բայց հովիւ կամ հովուհի մը չգտնելու ցաւն ունեցանք : Ան ատեն աշտարակին ներսը տեսնելու համար ունեցած փափաքնիս արդիւնտլ պողոցն ամեն հրապուրովը աւելցաւ և դարձը բաղդին թողլով խրամատին վրայ ձգուած կամուրջին վրայ յառաջացանք :

Մեծ գոհութեամբ տեսանք որ աս բերդին միաձոյլ դուռը գոց չէր և զայն հրեշուս պէս նեղ , մուլթ , և տախտակի կտորներով լի խցիկի մը մէջ գտնուեցանք որ կարելի է ժամանակաւ իբրև պահանոց կը ծառայէր , ետքը գրեթէ բոլորաձև ընդարձակ սրահակ մ'անցանք որու կրակարանի վրայ տակաւին խաչակրաց զինանշանը կը տեսնուի : Գիմայնիս բացուող լայն պատուհան մը որու մէջ տեղը կտորհրդական խաչը քարին վրայ որոշակի փորուած էր , այս շրջափակին ատորին մասը լիովին կը լուսաւորէր , մինչդեռ մարդու նայուածքը փլփլած քարձը կամարներու ստուերներուն մէջ կը կորսուէր :

Մեր քայլերուն ձայնէն , անտեսանելի թռչուններու խումբ մ'այս մթութեան մէջ թռաւ , դարերու փոշին մեր գլխին վրայ թոթոտելով : Պատուհանին մէջ երկու պատերուն տակ սանդուխի ձևով դրուած քարի կոյտերէ վեր ելնելով դուրսի խրամներու խորութեան և բերդին աւերեալ մասերուն վրայ կրցանք հայեցուածք մը նետել , բայց ներս մտածատիւնիս պատին թանձրութեան մէջ շինուած սանդուխի մը առաջին ոտքերը տեսեր էինք և մեր զիւտերը աւելի յառաջ տանելու համար տղայական փոյթ մ'ունէինք : Աւտի սկսանք վեր ելնել , ես յառաջ անցայ և օրիորդ Մարգարիտ կարելի եղածին չափ իր երկայն շրջագիւտաները քաշելով արխաբար ինձ հետեւեցաւ :

Տանիքին վրայէ տեսարանը անբաւ և հիանալի է : Աւերջալուսոց անոյշ զոյնները սոյն ժամուն կը ներկէին աշունէ կէս մը ոսկեզօծեալ տերեւները , մթին ճահիճները , դալարազեղ մարգերը և մինչև անհուն հեռաւորութեան մէջ իրար խառնուելով յաջորդող հորիզոնական կամարները :

Այս շնորհազեղ , տխուր և անհուն մարդավայրին զիմացը՝ քրեկոյեան լուծիւնը , առանձնութեան հանդարտութիւնը , կը վա-

յիւլէինք և կ'զգայինք որ անցեալ ժամանակներու մեղամաղձութիւնը հզօր բժժանքի մը պէս մեր մասց և սրտերու վրայ կ'իջնէր միանգամայն : Անշուշտ այս ժամը ուր միևնոյն հայեցողութեան , յուզմունքի , խորին և մաքուր հեշտութեան հաղորդ կը գտնուէինք , պէտք էր վերջինն ըլնէր որ իր քովն ու հետը պիտանցընէի և հետեւաբար անոր յարած էի գրեթէ ցաւալի և բուռն զգայութեամբ մը :

Մարգարիտի գալով չգիտեմ թէ անիկա ինչ կ'զգար , պատին եզերքը նստած հեռուն կը դիտէր լուռ ու մունջ , և միայն իր քիչ մ'արագ շնչառութեան ձայնը կը լսէի :

Չեմ գիտեր որքան ժամանակ անցած էր այսպէս , երբ ստորին մարմանդներու վրայ զօլորշիները թանձրացան և վերջին հորիզոնները հետզհետէ աւելցող մութին մէջ սկսան կորսուիլ , Մարգարիտ ոտք ելաւ .

— Երթանք , ըսաւ կէս ձայնով և այնպէս որ կարծես թէ ցանկալի տեսարանի մը վրայ վարագոյր մ'իջած ըլնէր , — լմնեցաւ :

Յետոյ սանդուխէն վար իջնել սկսաւ , ես ալ իրեն հետեւեցայ :

Սակայն մեծ եղաւ մեր զարմանքը երբ ամրոցէն դուրս ելնել ուղեւ ատեն դուռը գոց դտանք : Ըստ երևութի նորատի պահագանք մեր ներկայութիւնը չգիտնալով տանիքը գտնուած միջոցնիս կղպեր էր զայն :

Մեր առաջին սպաւորութիւնը զուարթութիւնն եղաւ : Աշտարակը կախարդեալ աշտարակ մ'էր աներկբայ : Քանի մ'ուժդին ձիեր ըրի կախարդանքը խզելու համար , բայց հինօրեայ նոյն ահագին պարզունակը կրանիթին մէջ ամուր բռնուած էր և հարկադրեցայ այս փորձէն ալ ետ կենալ : Ան ատեն յարձակումս նոյն խնդրան ուղեցի բայց միաձոյլ ծխիքը և կաղնիէ երկաթապատ տախտակները ամենէ անյաղթելի զիմադրութեամբ պատասխանեցին ինձ : Փլառակներու մէջէ առնելով նետած որմաքարերս ալ միայն կամարը գըրգեցին և եկան ոտքերնուս տակ ընկան :

Օրիորդ Մարգարիտ չուղեց որ շարունակեմ ձեռնարկութիւն մը որ թէ վտանգաւոր և թէ անօգուտ էր : Ան ատեն պատուհան վաղեցի դուրսը ձայն տալու համար , բայց ոչ որ պատասխանեց : Այսպէս պարագտեղ տասը վայրկինի չափ պուտայի միևնոյն ատեն վերջալուսոյ վերջին լուսերէն ալ օգուտ քաղելով ամրոցին

ներսը մանրամասնաբար կը խուզարկէինք, բայց այն գունէն՝ որ մեզի համար գրեթէ պատով զոյցուած էր, և մեծ պատուհանէն զատ՝ որ խրամատներու յատակէն երեսուն սանաչափ վիհով մը բաժնուած էր, ուրիշ և ոչ ելք մը գտանք:

Մինչ այս մինչ այն՝ մուտքը երթալով կը կոխէր դաշտին վրայ և խաւարը կը տրեւր հին աշտարակին մէջ: Լուսնի քանի մը շառուիղներ պատուհանին շրջանակի մէջէ թափանցելով աստիճաններու քարերը շեղակի կերպով մը կը ճերմկցնէին: Օրիորդ Մարգարիտ որ կամաց կամաց ամեն զուարթութիւն կորուսեր էր, գաղտնջաւնակ պատասխանելու այն քիչ շատ հաւանական ենթադրութեանց որով իր վախերը փարատել կը ջանայի:

Մութին մէջ կեցած էր նա լին և անշարժ՝ ես լուսին մէջ նստած էի պատուհանին ամենէ մօտ դանուող աստիճանին վրայ և անկէ մերթ ընդ մերթ օգնութեան կը կանչէի, բայց իրան ըսելու համար անդիմադրելի հրճիւ մը կը գար վրաս քանի որ իմ ճգանցս յաջողութիւնը երկբայելի կ'ըլնէր: Եւ իրօք ինծի համար սիրասահրներու յաւիտենական և ամենէ անկարելի երազը իրականութիւն կը դառնար, ամենէ սերտ առանձնութեամբ և անպատի մը մէջ, սիրած կնոջս հետ զոյցուած էի: Եւ երկար ժամերու համար աշխարհիս վրայ միայն ինքն ու ես կայինք, իր և իմ կեանքը կար:

Ի մտի կը բերէի քաղցր պաշտպանութեան, դորովալի յարգանաց նշանները զորս առատապէս իրեն տալու իրաւունքն ու պարտքը պիտ' ունենայի: Իր վախերը, վտտահութիւնը և քունը երևաւ կայելով՝ խորին հիացմամբ մը կ'ըսէի իւրովի որ եթէ սոյն բարեբաստիկ օրը աս սիրասուն էակին եթէ ոչ սէրը, գէթ յախտենապէս անոր ամենամոլորդութի յարգանքը ստանալուս պատճառ պիտ' ըլնէր:

Այն ինչ տրիանքի բոլոր ինքնասիրութեամբ ինքզինքս տուած էի իմ գաղտնի յափշտակութեան՝ որու քանի մը ճառագայթները կարելի է գէմբիս վրայ կը նկարուէին, յանկարծ արթնցայ այն խօսքերէն որոնք խորին և շինձու հանդարտութեան եղանակաւ մ'ինձ կ'ուղղուէին:

— Միթէ ձեռնէ յառաջ ձեր ընտանիքին մէջ շատ վատեր գտնուած են Պ, Մարքիլ ար Ըանսի:

Ոտք ելայ և նորէն ընկայ քարէ նստարանին վրայ, ապուշ նա-

յուածք մը յարելով մութին վրայ ուր պարմանուհայն ստուերը կը տեսնէի անորոշ կերպով: Սոյն վայրկենիս միայն մէկ ու սոսկալի դաղափար մը մ'նկաւ միտքս, այսինքն թէ վախն ու վիշտը իր ըղեղը խանգարած էին — թէ Մարգարիտ խենթեցած էր:

— Մարգարիտ, զօչեցի առանց զիտնալու անգամ որ կը խօսէի:

Վերևի թէ այս բառը իր դայրոյթը լրացուց:

— Սատուած իմ, այս ինչ գարշէլի բան է: Այս ինչ վատութիւն է, այո՛, կը կրկնեմ, վատութիւն է:

Ճշմարտութիւնը մտրիս մէջ կ'սկսէր ծաթիլ: Սանդուխին մէկ ոտքը իջայ:

— Ինչ կայ ուրեմն, ըսի պաղութեամբ:

— Գուք, պատասխանեց նա յանկարծական խտտութեամբ մը, դուք այդ մարդուն, — կամ ինչ գիտեմ, տղուն, ստակ տուիք որպէս զի զմեզ այս թշուառակաձ աշտարակին մէջ գնցէ: Վաղը հասարակաց համարումին առջև կորսուած . . . անարգուած պիտ' ըլնիմ . . . և միայն ձեր կինը պիտի կարենամ ըլնիլ . . . այս է ձեր հաշիւը, անանկ չէ՞: Բայց կը հաւաստեմ զձեզ որ այդ հաշիւն ալ միտնեթէ աւելի պիտի չյաջողի: Խիստ թերի կերպով կը ճանչէք զիս եթէ կը կարծէք որ իմ ձեռքը — կեանքը, ձերինին հետ կ'ապելու անարգութեան նախագաս պիտի չհամարիմ անպատուութիւնը, վանքը, մահը ու ամեն բան: Եւ եթէ այս վատ հնարքնիդ յաջողէր, եթէ ունենայի այն տկարութիւնը, — որ անչուշտ պիտի չունենամ, — անձս, — մանաւանդ, աւելի փափաքածնիդ, իմ հարստութիւնը, — այս քաղաքապետական աղուր գործերնուդ փոխարէն ձեզի տալու, ինչ տեսակ մարդ էք, ինչ տղմէ շաղուած մէկն էք դուք որ այս միջոցներով ձեռք ձգուած կ'ին մը և հարստութիւն մը կ'ուզէք: Ա՛հ, ինէ շնորհակալ եղիք դեռ ևս, պարոն, որ ձեր իւճը կը մերժեմ: Հաւատացէք ինձ անխոհեմ իղձեր են անոնք, վասն զի եթէ երբէք ամօթն ու հասարակաց այսպանքը զիս ձեր թեւերուն մէջ նետէր, զձեզ այնքան թուրուուր պիտի ընէի որ սիրտերնիդ յօշոյշ պիտի պատուէր: Այո՛, թէ որ այս քարերու շափ սառ ու կարծր իսկ ըլնէր այն . . . արիւն պիտի կաթեցնէի անկէ . . . և արցունք պիտի հանէի:

— Օրիորդ, ըսի կրցածիս շափ հանդարտութեամբ, կ'աղաչեմ որ

օթափիք, խեղճերնիդ գլուխնիդ բերէք: Պատուոյս վրայ կ'հաւատանեմ՝
 զձեզ որ զիս կ'անարգէք: Հաճեցէք մտածել անգամ մը: Ձեր
 կասկածները ստուգութեան վրայ հիմնուած չեն: Ես ե ոչ կերպով
 մը կրցամ չեմ պատրաստել այն մասնութիւնը որով զիս կ'ամբաս-
 տանէք, վերջապէս միթէ երբէք իրաւունք մը սուսած եմ ձեզ կար-
 ծելու որ այդ բանն ընելու կարող եմ:

— Ձեզ նկատմամբ առած տեղեկութիւններս այդ իրաւունքը կը
 տան ինձ, գոչեց նա իր մտրակով օղբ ձեծելով: Եւ պէտք է
 որ խիստ շատոնց հոգեոյս մէջ ունեցածս ձեզի ըսեմ միանգամ: Փոխ
 առնուած անուամբ և երևութով մը ծպտած՝ ինչ ընելու եկաք մեր
 տունը: Երջանիկ էինք, հանգարտ կ'ապրէինք մայրս և ես . . .
 և դուք ձեր հետ մեզի այնպիսի ցաւեր և խռովութիւններ բերիք
 որ չէինք ձանձնար յառաջմէ: Ձեր նպատակին հասնելու, փճա-
 ցած հարստութիւն մը ձեզի համար, մեր վստահութիւնը յափշտա-
 կեցիք . . . հանգստութիւնը խանդարեցիք . . . մեր ամենէ սուրբ
 ճշմարիտ և նուիրական զգացումները հեզնեցիք . . . մեր սիրտը ա-
 նողորմաբար վիրաւորելով խորտակեցիք: Ահա ասի ըրիք . . . կամ
 ընել ուզեցիք: Սրբ՝ ձեզ կ'ըսեմ որ այս ամենէ կարի ձանձրացած
 և վշտացած եմ, և երբ այս ժամուս իրրև զրաւական կը տաք ինձ
 ձեր ազատանի պատիւը որ արդէն այնքան բաներ ընելու թող տուած
 է ձեզ, անշուշտ իրաւունք ունիմ չհաւատալու անոր, — և չեմ
 հաւատար:

Ինքզինքէս ելած էի, այնպիսի բռնալի եռանդով իր երկու ձեռ-
 քէն բռնեցի որ յաղթահարեցաւ նա,

— Մարդարիտ, խեղճ աղջիկ . . . լաւ միտ գրէք: Ար սիրեմ՝
 զձեզ, իրաւ է, և երբէք մարդկային սրտի մէջ աւելի բուռն, ա-
 ւելի անշահասէր, և աւելի սուրբ սէր մը եղած չէ . . . բայց
 դուք ալ զիս կը սիրէք . . . կը սիրէք զիս թշուառահի . . .
 և զիս կը մեղցնէք . . . վիրաւորեալ և խորտակեալ սրտի խօք
 կ'ընէք . . . ահ, միթէ հիմակ դուք իմն չէք խոցեր, չէք խոր-
 տակեր . . . բայց հոգ չէ, վասն զի ձերն է այն և ձեզի կը
 թողում . . . բայց պատիւս իմն է և միայն ինձի կը պահեմ . . .
 վասն զի ամբողջ և անարատ է այն . . . դուք ալ շատ չերթար խոս-
 տովանելու պիտի բռնադատուիք . . . : Եւ ահանորէն այդ պատուոյն
 վրայ կ'երգնում ձեզ որ եթէ մեռնիմ վրասս պիտի լաք և եթէ:

Երբէք այրիմ, — թէ և կը պաշտեմ զձեզ, — նաև երբ ծնկի վրայ
 եկած առջևս աղաչէք ինձ, — զձեզ չեմ առներ, թէ որ դուք ին-
 ծի նման աղբատ՝ կամ թէ ես ձեզի նման հարուստ չըլնիմ: Եւ
 հիմակ աղօթեցէք, աղօթեցէք որ Աստուած հրաշքներ ընէ վասն զի
 ալ ժամանակն է:

Ըսի և պատուհանէն զինքն ուժգին անդին հրելով դէպ ՚ի բարձ-
 րագոյն աստիճանները սլայայ, միտքս յուսահատական խորհուրդ
 մ'ունէի որ ճշմարիտ խենդութեան մ'արագութեամբ ՚ի գործ դրի
 խսկոյն:

Ինչպէս որ ըսի, աշտարակին փոսերուն մէջ բուսնող ուրիշներու
 և կաղնիներու դագաթները մինչև պատուհանին եզերքը կ'հասնէին,
 ծալլած մտրակովս անոնց ամենէ մօտ ոտերը ինձի քաշեցի, գրկեցի
 ըստ սպասուման և ինքզինքս պարապին մէջ ձգեցի: Գլխիս վրա-
 յէ յանկարծ կսկծալի ձայնով մը արտաբերուած անունս ականջիս
 զարկաւ, Մաքսիմ:

Գրկած ոտերս իրենց բոլոր երկայնութեամբ դէպի՝ անդունդ
 կտնարհեցան, ետքը աղետալի դարգափում մը լուսեցաւ, ամենքն
 ալ ծանրութեանս տակ կտրուեցան և գետին ընկայ:

Արածեմ թէ հողին աղմային բնութիւնը անկմանս սաստկութիւնը
 մեղմեց, վասն զի թէ և վիրաւոր՝ այլ ինքզինքն կենդանի զգացի: Թե-
 ւեբէս մէկը քարաշէրտին զարկեր էի և անանկ ցաւ մը կ'զգայի որ
 սիրտս կը թալկանար: Արձատե նուաղում մ'եկաւ վրաս, ու Մար-
 դարիտի խենթեցած ձայնէն արթնցայ:

— Մաքսիմ, Մաքսիմ, կը գոչէր նա, շնորհ, զթութիւն: Յա-
 նուն Աստուծոյ, խօսեցէք հետս, ներեցէք ինձի:

Ոտք ելայ և տեսայ զինքը պատուհանի խորշին մէջ լուսեղէն աղօտ
 պսակի մը մէջ տեղ, գլուխը բաց, հերարձակ, ձեռքերը խաչաձև
 երկաթը կ'սեղմէին ջղաձգօրէն և աչքերը մութ անդունդի խորը կը
 հետազօտէին անձկութեամբ:

— Բանէ մը մի վախար, ըսի իրեն: Բան մը չեղայ: Միայն մէկ
 երկու ժամ համբերեցէք: Ամենէ ապահով այն է որ ինձ մինչև
 դղիկն երթալու ժամանակ տաք: Հաւատի եղիք որ դաղանիքը կը
 պահեմ և ձեր պատիւը կ'աղատեմ ինչպէս որ իմն աղատեցի:

Շատ գժուարաւ ելայ խրամատներու մէջէ և դացի ձիս առի-
 քաշկինակս սնդեղով կախեցի ձախ թևս՝ զոր ալ չէի կրնար գոր-
 ծածեղ և օրն որ շատ կը ցաւէր:

Գիշերային միջնադ լոյսին միջոցաւ ճամբաս դիւրաւ գտնելով ժամ մ'եաքը գեղեակ հասայ : Իմացայ որ Տէմարէ բժիշկը սրահալը կը գանուէր , փութով ներս գացի և տասներկուքի չափ անձինք դտայ հոն որոնց դէմքը անձկութիւն և անհանդստութիւն կ'այտնէր :

— Տօբթօր , ըսի խնդաղին ներս մանելով , ձիւ իր շուքէն վախաւոր ճամբուն վրայ դիւս վար նետեց և վախնամ թեւ ճգմուած է : Ար նայիք հեղ մը :

— Ինչ ճգմուած , ըսաւ Պ. Տէմարէ թաշկինակը քակելէ ետքը , թեւերնիդ կատարեալ խորտակուած է , խեղճ տղայ :

Տիկին Լարօք պղտի աղաղակ մը ձգեց և ինձ մօտեցաւ :

— Բայց միթէ աղետաբեր դիշեր մ'է այս , ըսաւ նա :

Չարմանալ ձեացուցի :

— Աւրիշ ինչ կայ , պոռայցի :

— Տէր Աստուած , կը վախնամ որ աղջկանս գլուխը փորձանք մ'եկած չըլնի : Ժամը երեքին մօտ ձիով գուրս ելաւ , հիմակ ութն է և տակուին չվերադարձաւ :

— Օրիորդ Մարգարիտ . բայց իմ դիմացն ելաւ նա . . . :

— Ինչպէս , ո՞ւր , ե՞րբ . . . ներեցէք պարոն , այս վարմունքս մայրական ինքնասիրութեանս տուէք :

— Բայց ժամը հինգ կար երբ ճամբուն վրայ իրեն պատահեցայ : Գիմացէ դիմաց ելանք : Ինձ այնպէս ըսաւ նա որ իր շրջագայութիւնը մինչև Էլվէնի աշտարակը պիտի քշէր :

— Էլվէնի աշտարակը մի , անտառներուն մէջ կ'որսուած պիտ' ըլնի նա անվրէպ . . . շուտ հոն երթալու է . . . հրաման ըրէք որ երթուի :

Պ. տը Պէվալլան անմիջապէս ձիեր ապսպրեց , նախ ես ալ հեծեալներուն ընկերանալու փափաք կեղծեցի , այլ տիկին Լարօք և բժիշկը խտիւ աղղիլեցին և դիւրաւ համոզուեցայ անկողին երթալու որու մեծ պէտք ունէի իրան ըսելով :

Պ. Տէմարէ , վիրաւորուած թեւ մէյ մը դարմանելէ ետքը կատաքը մտաւ տիկին Լարօքի հետ որ աշտարակին շրջակաները Պ. տը Պէվալլանի ընկիւր հետազօտութեանց արդիւնքը սպասելու կ'երթար Էլվէն գիւղը :

Ժամը 10ը կար երբ Նլէն եկաւ ծանոց որ օրիորդ Մարգարիտ գտնուեր էր : Անոր բանտարկութեան պատմութիւնը պատմեց ինձ

միայն այն պարագաները դուրս ձգելով զորս ես և նորատի աղջիկը պիտի դիտնայինք : Քիչ մը հետքը Տօբթօրն ալ նոյնը վերահաստատեց ինչպէս նաև տիկին Լարօք ալ որ յաջողաբար ինձ այցելութիւն ըրաւ և մեծ գոհութեամբ տեսայ որ եղելութեան վրայ ամենափոքր կասկածն անգամ չունէին անոնք :

Բոլոր դիշերս անցուցի տաղովալի յարատևութեամբ , երազի և տենդի այլանգակ խառնակութեան մը մէջ տեղ , ամբողջին պատուհանէն ըրած վտանգալի ոտուան նորոգելով , բայց չէի կրնար վարձուիլ . ամեն վայրկեան պարապի զգայութիւնը կոկորդէս կը բռնէր և հեկալով կ'արթնայի : Աերջպէս լուսցաւ և հանդարտեցայ :

Ժամը ութ էր երբ օրիորդ ալ Բէրհօն եկաւ և անկողնոյս վերևը տեղադրեցաւ իր ձեռագործն 'ի ձեռին ու մինչև իրիկուն եկող այցելուներուն սենեկիս մեծարանքն ըրաւ : Օտարդ բարեկամահիէս ետքը եկողն տիկին Լարօք եղաւ : Այն ինչ իրեն երկնցուցած ձեռքս երկայն ճնշումով մը կ'սեղմէր նա , տեսայ որ երկու արցունքի կաթիլներ իր այտերու վրայէ կը սահէին : Երբեք Մարգարիտ եղելութիւնը խոստովանեցաւ իրեն :

Օրիորդ ալ Բէրհօն ինձ իմացուց թէ երէկուրնէ 'ի վեր ծեր Պ. Լարօքը անկողին ընկած է : Արան թեթեւ անդամալուծութիւն մը մ'եկեր է , այսօր չխօսիր և իր վիճակը վախ կ'պատճառէ : Հարսանիքը փութացնելու որոշում տրուեցաւ և Բարիկ Պ. Լօպօբէնի լուր զրկուեցաւ որ դայ , վաղը կ'սպասուի նա և հետեւեալ օրն ալ դաշնագիրը պիտի ստորագրուի իր նախագահութեան ներքև :

Այս իրիկուն քանի մը ժամ կըցայ նստիլ , բայց Պ. Տէմարէի խօսքին նայելով տենդս վրաս եղած ատեն զիր զրեւովս գէշ ըրի և մեծ աւանակ մ'եմ :

3 Հովտակերպ

Ստուգիւ կարծես թէ չարակամ զօրութիւն մը իրեն բան գործ

ըրեր է զարմանալի և անզուժ փորձեր հնարել, զանոնք կարող ըստ կարգէ իմ խղճին և սրտին առաջարկելու համար :

Պ. Լօպօրէն այս առտու եկած չըլնելուն՝ տիկին Լարօք ինձ քանի մը տեղեկութիւններ հարցնել տուեր էր դաշնադրին հիմնական պայմանները որչե՛լու համար, որ ինչպէս արդէն ըսի վաղը պիտի ստորագրուի : Քանի մ'օր ևս սենեկէս դուրս չե՛լնելու գտտապարտուած ըլնելու՝ ինդրեցի տիկին Լարօքէ որ ինձ զըկէ իր սկեւրայրին քով գտնուած քանի մը մասնաւոր թուղթերն ու մուրհակներն որ անհրաժեշտ էին լուծելու համար այն դժուարութիւնները զորս ինձ կը նշանակէին : Իսկոյն երկու երեք պահարաններ բերին թղթերով լի՝ զորս Պ. Լարօքի սենեկէն դողցեր էին անոր 'ի քուն եղած միջոցին, վասն զի իր դաղանի դիւանին համար շատ նախանձախնդիր էր նա :

Ձեռքս ընկած առաջին թղթին մէջ աչքիս զարկաւ որ ընտանեացս անունը խիտ ստեպ կրկնուած էր և անդիմադրելի հետաքրքրութեամբ մը ուշադրութիւնս զբաւուեցաւ :

Ահա այս յիշատակարանին ճշգրիտ պարունակութիւնը :

ԻՄ ԶԱՒԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

«Ձեզ կտակած անունս որ ես փառաւորուած եմ, իմս չէ : Հայրս Պավաթ կը կոչուէր և տեսուչ էր ան ատեն Սէնթ-Լիւսի՝ գաղղիական կղզւոյն մէջ գտնուող մեծկակ երկրի մը, որ Տօֆինեան հաբուստ և ազնուական ընտանիքի մը՝ Շանսի ա'Օթըրիֆերու կայուածն էր :

1793ին հայրս մեռաւ և թէև շատ դեռահաս էի՝ ժառանգեցի այն վտահալութիւնը որ Շանսիի ընտանիքը անոր վրայ ունէր : Սոյն աղետալի տարւոյն վերջերը, Գաղղիացւոց վերաբերող Մեթիլեան կողմիները Մեղդիայի ձեռք անցան կամ տրուեցան ազատամբ գաղթականներէ : Ժաք Օկիւսթ ար Շանսի ա'Օթըրիֆ մարքիզը որ տակալին Քօնվանտիօնի հրամաններէ զերծ մնացեր էր, երեք տարիէ հետէ այս ծովերու մէջ սպասող Թօնթիէս անուն թնդանօթակիր նաւուն հրամանատարն էր : Կղզւոյն մէջ տարածուած գաղղիացի գաղթականներու մեծ մասը իրենց հարստութիւնը՝ որ ամեն օր 'ի վտան-

գի էր, ստակ ընելու յաջողելով ար Շանսի հրամանատարի հետ համաձայնեալ էին թեթեւեմաց նաւախումբ մը կազմելու, որու վրայ իրենց ինչքը պիտի բեռնաւորէին Թօնթիէսի թնդանօթներու պաշտպանութեան ներքև հայրենիք վերադառնալու համար :

Ես ալ մօտաբար մտանդներու նախատեսութեամբ, շատոնց հրաման և իշխանութիւն ստացած էի տեսչութեան ներքև գտնուող երկիրը որ և և դնով ծախելու : 1793 նոյեմբեր 14ի դիշերը Աւագուտ Հրուանդան ըստուած տեղէ նաւակ մը հեծայ մինակուկ, և գաղտնապէս միկնեցայ Սէնթ-Լիւսիէ որ արդէն թշնամեաց ձեռքն անցած էր : Ծախուած երկրին փոխարէն առած ստակներս անդլիական արժէթղթերու և կֆէի փոխելով հետս առած էի :

Պ. ար Շանսի այս կողմերու վրայ ստացած քաջ տեղեկութիւններովը անդլիական լրտես նաւը խաբէր՝ և Կրօ-Իլէ կոչուած դժուարին և անձանօթ կրճին մէջ պահուրտեր էր : Ինծի ալ հրաման ըրած էր որ նոյն դիշերը իրեն միանամ և մինակ դիս կ'սպասէր նոյն կրճէն անցնելով Քրանսա ուղղելու համար :

Գժբաղդարար, ճանբան անդլիացւոց ձեռքն ընկայ, և այս մասունիչ վարպետները ինձ հարցուցին թէ անմիջապէս հրացանի բռնուիլս լաւագոյն ունէի կամ թէ վրաս ունեցած միլիոնս փոխարէն ընդուներով, նաւախումբին թագստոցը իրենց յայտնել : Երիտանարդ էի ու փորձութիւնը կարի սաստիկ եղաւ. կէս ժամ ետքը Թօնթիէսը ընկրկած, նաւախումբը ձերբակալեղած և Պ. ար Շանսի ծանր վիբաւորուած էր :

Տարի մ'անցաւ, անբուն տարի մը, վրաս խեղճութիւն կը դար : Որոշեցի որ անդլիացիէն հատուցում պահանջեմ ինձ պատճառած կակիծներու համար : Աւստի Կուատըլուք անցայ, անունս փոխեցի և իմ մասնութեան իբր տրիտուր ընդունած գնոյս մեծ մասը զիւնեալ երկկայմ մը գնելու դորձածելով անդլիացւոց զէմ խաղացի : Տկար ժամու մը մէջ հայրենեացս դրօշակին բերած արատս տան և հինգ տարի իրենց և իմ արեան մէջ լուացի և թէև իմ արդի հարստութեան կեսէն աւելին փառաւոր կուիւներու մէջ վաստկած եմ, անոր աղբիւրը դարձեալ յիշեալ անցքէն կ'սկսի :

Ծերութեանս մէջ Գաղղիա վերադառնալուս՝ Շանսի ա'Օթըրիֆներու նիւթական վիճակին վրայ անզեկանալով իմացայ որ փարթամ և հարուստ էին, ձայն չհանեցի : Իմ զաւակներս թող ներեն ինձ :

Անոնց ասջև բողոք կեանքիս մէջ ամօթով ընելու արիւթիւնը չու-
նեցայ, բայց իմ մահը պիտի յայտնէ իրենց այս դաղանիքը որ ի-
րենց խղճի համեմատ թող գործածեն:

Իմ կողմէ միայն բան մը կ'աղաչեմ իրենց, երբ և իցէ Ֆրանս-
սայի և իր ղիմացի դրացւոյն մէջ, վերջնական պատերազմ մը տեղի
պիտ'ունենայ: Մէկմէկու դէմ ունեցած ատելութիւննիս չափազանց
է, ուստի երբ և իցէ պէտք է որ կամ անոնք զմեզ՝ կամ մենք զա-
նոնք կոչւլ տանք: Եթէ այս պատերազմը իմ զուակաց կամ թո-
ռերու կենդանութեան ատեն հրատարակուի, կը խնդրեմ որ ղինեալ
երկկայսմ մը նուէր ասն տէրութեան, այն սլայմանաւ որ անունը Սա-
վաթ և Պրթթայնցիի մը հրամանատարութեան տակ ընի: Այս երկ-
կայսմը ամեն անգամ կարթագինեան ափունքներու վրայ ուսմբ մը
դրկած ատեն՝ ոսկորներս ուրախութենէս պիտի սարսուին ցուրտ
շիրմիս մէջ:

ԲԻՇՍԻ ՍԱՎԱԹ

Մահանունէսն ԼԱՐՕՔ:»

Այս սոսկալի խոստովանութեան ընթերցումով մտքիս մէջ ար-
թնցած յիշատակները անոր ճշդութիւնը հաստատեցին ինծի: Գառ-
նութեամբ խառն հպարտութեամբ մը հայրս քսան անգամ պատ-
մած էր ինձ այս անցքը որու կ'ակնարկէր Պ. Լարօք: Սա տարբե-
րութեամբ որ ընտանիքս կ'կարծէր թէ Բիշար Սավաթ՝ որու անունը
կատարելապէս միտքս էր՝ զո՛հ եղբր էր այն մասնութեան կամ ղիպ-
ուածին, որով Թիէթիի հրամանատարը ձեռք ընկեր էր:

Նոյն կէտին հասկըցայ ծերուկին բնութեան այլանդակութիւն-
ները և մանաւանդ իմ՝ ղիմացն ունեցած մտադրաղ և երկչոտ ձեւ-
ըը որ շատ անգամ նշմարած էի: Հայրս միշտ ըսած էր ինձ որ
մեծ պատիւ ծաք մարքիզին կենդանի պատկերն էի և անշուշտ այս
նմանութեան քանի մը նշոյնները երբեմն երբեմն իր ըզիզի ամպերու
մէջէն մինչև իր յուզեալ խղճին մէջ կը թափանցէին:

Այս յայտնութեան տէր եղածիս պէս, սարսափելի վաբանման մը
մէջ ընկայ: Իմ մասիս չնչին զայրոյթ մը կ'զգայի այս խեղճ մար-
դուն նկատմամբ՝ որու բարոյական սխալները քաւուած էին ղղջու-
մով, յուսահատութեամբ և վսեմ՝ ատելութեամբ լի կեանքով մը:
Նոյն իսկ տեսակ մը ղարմայմամբ կը ծծէի այն վայրենի շունչը որ

այս մեղապարտ այլ ղիւցաղնական ձեռքը կը կենդանացնէր: Բայց
հիմակ այս սոսկալի դաղանիքը ինչ կրնայի ընել:

Նախ այն դաղափարով գրաւուեցայ որ Մարդարտի և իմ մէջ տե-
ղէ ամեն քարընդոսն կ'վերցընէր այն, թէ զմեզ բաժնող հարստու-
թիւնը այսուհետէ ղրեթէ ստիպողական կապ մը պիտի ըլնէր մեր
մէջ, վասն ղի ես միայն այն հարստութիւնը վաւերական կրնայի ը-
նել անոր մասնակից զանուելով:

Թէև այս գաղտնիքը իմն չէր և ամենէ անմեղ ղիպուածը ղիս
անոր տէրն ըրեր էր, կարելի է սակայն անաչառ ուղղասիրութիւնը
կը պահանջէր որ այն թուղթը իր հասցէին երթայ ժամանակին,
բայց ինչ, չէ՞ մի որ այն ժամանակը սպասելով անդարմանելին պիտի
կատարուէր, անբակտելի կապեր պիտի հաստատուէին և ղամբա-
նական քարը յախտնապէս իմ սիրոյս, յոյսերուս և անմխիթար
սրտիս վրայ պիտ' ըլնէր: Եւ ես աչք պիտի ղոցէի ատոր երբ մէկ
խօսքով կրնայի ղայն ջնջել իսպառ, որով այս խեղճ կինը, աղե-
տալի ճշմարտութիւնը իրենց ղէմքը կարմրեցուցած օրը, կարելի է
իմ ցաւերուս և յուսահատութեանս հաղորդ գանուելով պիտի սր-
ուային,


— Ա՛հ, թէ որ ղիտէիք ինչո՞ւ չխօսեցա՛ր:

Բայց և այնպէս չէ, ոչ այսօր, ոչ վաղը և եթէ ղործը ինե-
կախեալ է, երբէք ամօթը այն ազնիւ ղէմքերը պիտի չներկէ: Իմ
երանութիւնը անոնց նուաստանալովը ծախու պիտի չառնում բնաւ:
Այս դաղանիքը, որ միայն իմն է և որ այս ծերն անգամ այսուհե-
տէ համը ըլնելովը չկրնար յայտնել, այսօր բոցերու ճարակ և ան-
հետ եղած է:

Քաջ մտածեցի: Գիտեմ ինչ համարձակեցայ ընելու, հրիտակ
մը, նուիրական յիշատակարան մ'էր այն և ջնջեցի: Ասկէ ղատ
միայն ինծի համար կարևոր չէր: Քոյրս որ ինձ յանձնուած է
կրնար հարստանալ անով և ես առանց իրմէ խորհուրդ հարցնելու
իմ ձեռքով ղինքն աղքատութեան մէջ ընկղմեցի նորէն: Այս ամե-
նը ղիտեմ, սակայն երկու անրիծ, վսեմ և հպարտ հողինքը պի-
տի չձգմունին ո՞ճիրի մը բեռին ներքև որու մէջ՝ իրենք մաս ունե-
ցած չին:

Այս ղործին մէջ այնպիսի արդար սկզբունք մը կար որ ամեն
գրական ճշդութենէ ղերազանց թուեցաւ ինձ:

Եթէ ես ալ ոճիր մ'ըրի, անոր պատասխանատուն եմ. . . բայց այս կռիւր զիս ճղմեց. . . ալ կարողութիւնս չմնաց:



4 Հոկոսեմբեր

Պ. Լօպօրէն երէկ իրիկուն հասաւ վերջապէս և եկաւ ձեռքս սեղմեց:

Մտադրաւ, դաժան և դժգոհ էր: Պատրաստուած հարսանիքին վրայ կարճաւօտ խօսեցաւ:

— Շատ յարմար գործ մ'է, ըսաւ նա, ամեն կողմէ խիստ դու վեղի միաւորութիւն մը՝ ուր բնութիւնը և ընկերութիւնը միանգամայն կը դտնեն այն երաշխաւորութիւնը որ այսպիսի պարագայի մէջ կը պահանջեն: Ասոր վրայ քեզի գիշեր բարե կը մաղթեմ և կ'երթամ հիմնական պայմաններու փափուկ խնդիրը հարթելու որպէս զի այս պատուական ամուսնութեան կամքը անսայթաք իր նպատակին հասնի:

Այսօր կէսօրէ ետքը ժամը մէկին, սովորական բազմութեան և պատրաստութեանց մէջտեղ՝ գաշնագրոյն ստորագրութիւնը սկսելու համար սրահակը կը ժողվուէին: Այս հանդիսին ներկայ չէի կրնար գտնուիլ և օրհնեցի վէրքս որ այս չարչարանքը ինձ կ'ինսուշէր:

Նամակ մը կը գրէի առ Հէլէն՝ որու յառաջմէ առելի հոգւով մարմնով նուիրուելու ուխտ ընել կ'աշխատիմ, երբ ժամը երեքին մօտերը, օրիորդ տը Բէրհօէ և Պ. Լօպօրէն սենեակս մտան:

Պ. Լօպօրէն, Լարօբեան գղելը ըրած յաճախ ուղևորութեանցը մէջ, իմ պատկառելի բարեկամու հւոյս առաքինութիւնները ճանչցեր էր և այս երկու ձերերու մէջ, շատոնց պղատոնական և յարգալի համակրութիւն մը հաստատուեր էր որու նպատակը պարսպ տեղ իսթրմելու կ'աշխատի տօթթօր Տէմարէ:

Մնվերջանալի խոնարհութիւններէ, բարևներէ ու ձևերէ ետքը

իրենց մեծարած աթոռներս ընդունեցան և երկուքն ալ ծանր ինդուլթեամբ մ'երես սկսան նայիլ:

- Ե՛հ, ըսի, լմնցա՛ւ:
- Լմնցաւ, պատասխանեցին միաբերան:
- Աղէկ անցա՛ւ:
- Շատ աղէկ, ըսաւ օրիորդ տը Բէրհօէ:
- Սքանչելի, աւելցուց Պ. Լօպօրէն:

Յետոյ գաղարէ մ'ետքը,

- Պէվալլանը կրողին բերանն է:
- Ընկերութեամբ օրիորդ Հէլուէնի, վրայ բերաւ օրիորդ տը Բէրհօէ:

Զարմանքի աղաղակ մը հանեցի:

— Տէ՛ր Աստուած, ի՛նչ ըսել կ'ուզէք:

— Բարեկամ, ըսաւ ինձ Պ. Լօպօրէն, յառաջադրած միութիւնը ամեն փափաքելի առաւելութիւնները կը ներկայացընէր, և տարակոյս չկայ որ նշանածներու հաւասար երանութիւնը պիտի ապահովցընէր այն եթէ ամուսնութիւն ըսուած բանը, պարզապէս առևտրական ընկերակցութիւն մ'ըլնէր, բայց անանկ չէ ամենին: Այս կարևոր պարագայի մէջ իմ ներկայութիւնը խնդրուած ատեն՝ իմ պարտաւորութիւնն էր երկուքին ալ հարստութեան քանակութեանը հետ իրենց սրտերու միտումները և բարուց յարմարութիւնը քննել: Արդ՝ առաջին տեսութեամբ ինձ այնպէս երեցաւ որ պատրաստուած ամուսնութիւնը մասնաւորապէս և ոչ մէկին հաճելի էր, ոչ իմ պատուական բարեկամուհի՝ տիկին Լարօբի, ոչ սիրասուն հարսնայուին, ոչ այս տիկնանց ամենէ լուսաւորեալ բարեկամներու՝ և ոչ մէկին վերջապէս, բայց եթէ կարելի է փեսացուին միայն՝ որ իմ հոգն անդամ չէր: Օրիորդ տը Բէրհօէի ըսածին պէս, իրաւ է որ ալ նուական է նա. . .

— Ճէ՛րբընէն է, եթէ կը հաճիք, ընդմիջեց օրիորդ տը Բէրհօէ խտուութեամբ:

— Ճէ՛րբընէն, կրկնեց Պ. Լօպօրէն բողբոջ ընդունելով, բայց անանկ ճէ՛րբընէն մը որ գործիս չգար:

— Եւ ոչ իմիսիս, ըսաւ օրիորդ տը Բէրհօէ: Անցեալ դարու մէջ Շարլ դուբլին առաջնորդութեամբ յեղափոխութիւնը պատրաստողները, անգլիացի աստուներէ ելնող այս տեսակ սպիրտատ ստահակներ էին:

— Ա՛հ, ըրածնին բան մը պիտի չհամարուէր թէ որ միայն յեղափոխութիւնը պատրաստած ըլնէին, ըսաւ վճռաբար Պ. Լօպօբէն:

— Հազար ու բիւր ներուժներ կը խնդրեմ, պարոն, բայց ձեր կողմէ խօսեցէք: Խօսքը ասոր վրայ չէ սակայն, և հաճեցէք շարունակել:

— Աւստի, աւելցոց Պ. Լօպօբէն, տեսնելով որ յուղարկաւորութեան մ'ետեւէ երթալու պէս այս ամուսնութեան ետեւէն կ'երթուէր, պատուաւոր և օրինաւոր միջոց մը փնտռեցի եթէ ոչ Պ. տը Պէվալլանի խօսքը ետ տալու՝ դոնէ զինքը ստիպելու որ ինքնին ետ առնէ զայն: Այս գործը շատ պատշաճ էր, վասն զի իմ բացակայութեանս ատեն, Պ. տը Պէվալլան իմ պատուական բարեկամուհիս, տիկին Լարօբի, միամտութիւնը և մօտակայ աւանը գտնուող պաշտօնակցիս անփորձութիւնը խաբելով, չափազանց մեծ առաւելութիւններ ձեռք ձգեր էր: Առանց պայմաններու տառերէն շեղելու անոնց միտքը զգալի կերպով փոփոխեցի: Բայց և այնպէս պատիւն ու արդէն տրուած խոստումներն ինձ այնպիսի սահմաններ կը դնէին, զորս չկրցայ զանցանել, հետեւաբար, այս ամենուն հակառակ՝ դաշնագիրը գեւ ևս նպաստաւոր էր և քիչ մը հոգւոյ բարձրութիւն ու իր նշանածին համար ճշմարիտ սէր մ'ունեցող մէկը վստահութեամբ, կրնար ընդունիլ զայն: Պ. տը Պէվալլանի այս տեսակ մարդ մ'ըլնելը փորձին մէջ պիտի տեսնուէր: Ար խոստովանիմ ձեզ որ այն անգառնալի դաշնագրութիւնը պատկառելի ակումբի մ'առջև կարողաւ սկսած ասենս բոլորովին անվրդով չէի:

— Իմ մասին, ընդմիջեց օրիորդ տը Բէրհօն, երակներուս մէջ կաթիլ մ'արիւն չմնացեր էր: Գաշնագրոյն առաջին մասն անգամ թշնամիին համար այնքան նպաստաւոր էր, որ ամեն բան կորսուած կարծեցի ես:

— Անշուշտ, օրիորդ. բայց ինչպէս որ մենք մեր լեզուաւ կ'ըսենք, Թոյնը պոչին մէջ է . . . : Բարեկամ, երբ յանկարծ իմ մարտկոցները բացի, Պ. տը Պէվալլանի և իրեն քով գտնուող Բէնցի պաշտօնակցիս գէմբերը տեսնելու էր: Նախ և յառաջ չուէր եայն իրարու երես նայեցան, ետքը մէջերնին փարագին, վերջապէս ոտք ելան և մօտելով սեղանին՝ սրու քով ես նստած էի, ցած ձայնով ինէ բացատրութիւն խնդրեցին:

— Աւելի բարձր խօսեցէք, եթէ կը հաճիք, պարոններ, ըսի իրենց: Հոս գաղտնիք պէտք չէ: Ինչ կ'ուզէք:

«Հանդիսականները ակոսն զնեւ կ'սկսէին: Պ. տը Պէվալլան առանց ձայնը բարձրացնելու, զիտելտուաւ ինձ որ այս դաշնագիրը անվստահութեան գործ մ'էր:

«— Անվստահութեան գործ մի, պարոն, կրկնեցի բոլոր ձայնովս: Ատով ինչ ըսել կ'ուզէք: Այդ տարօրինակ ամբաստանութիւնը տիկին Լարօբի, ինձի, թէ հոս ներկայ գտնուող պաշտօնակցիս գէմ կ'ուզէք:

«— Սըսթ, լուռութիւն, աղմուկ մի հանէք, ըսաւ ան ատեն Բէնցի նօտարը ամենակոչեմ շեշտով մը, կեցիք նայինք: Նախ այնպէս խօսք եղած էր որ օժտական օրէնքը մէկի պիտի գրուէր» . . .

«— Օժտական օրէնք մի, պարոն: և այս տեղ օժտական օրէնքին խօսքն ո՛ր եղած է:

«— Բայց ինչ կ'ըսէք, պաշտօնակցից իմ, քաջ զիտէք որ փախուստով մը կը հաստատէք զայն:

«— Ինչի՞ փափուստ, պաշտօնակցից իմ: Տարբերով՝ իբրև ձեր մեծը կը յորդորեմ որ այդ բառը ձեր բառարանէն սրէք:

«— Բայց վերջապէս, մրմուսց Պ. տը Պէվալլան, ամեն կերպով ձեռքերս կը կապին, տղայի տեղ կը դնեն զիս:

«— Ինչո՞ւ, պարոն: Այս ժամուսին կ'ընենք ուրեմն, ձեր խօսքին նայելով: Գրածնիս դաշնագիր է թէ կտակ: Ար մոռնա՞ք որ տիկին Լարօբ կենդանի է, իր պարոն հայրը ողջ է և դուք չէք ժառանգեր այլ կը կարգուիք . . . չէ, դեռ չէք ժառանգեր, պարոն: Բիչ մը համբերեցէք, Տէր ողորմես:

«Այս խօսքերու վրայ օրիորդ Մարգարիտ ոտք ելաւ,

«— Այսքանը բաւական է, ըսաւ: Պ. Լօպօբէն այդ դաշնագիրը կրակը նետեցէք: Մայր իմ, հրաման ըրէք որ այս պարոնին տուած ընծաները իրեն ետ տրուին:

«Ետքը վշտացած թագուհիի մը քալուածքով դուրս ելաւ: Տիկին Լարօբ ալ իրեն հետեւեցաւ, ես ալ դաշնագիրը կրակարանին մէջ նետեցի:

— Պարոն, ըսաւ ինձ անատեն Պ. տը Պէվալլան սպառնական եղանակաւ մը, ասոր մէջ անանկ խորամանկութիւն մը կայ որ ես պիտի հասկընամ:

*Օժտական օրէնքը, կ'ընէ իր բերած պոռոյնի տէր կ'ընէ եւ իր մոմուսինը իրաւունք չունենար անոր ձեռք դպցունելու կամ ծախելու: Ծ. Թ.

«— Զեղի բացատրեմ, պարոն, պատասխանեցի: Նորատի անձ մը որ արդարացի հպարտութեամբ մ'ինքզինքը կը յարդէ, վախցեր էր որ ձեր ուզածը միայն իր հարստութիւնը չըլնի, ասոր վրայ ապահովուիլ ուզեց և հիմակ ալ տարակոյս չունի: Պատիւ ունիմ ձեզ բարևելու:

«Ասոր վրայ, բարեկամ, այս տիկիններու քով գացի որոնք հաւատա, վիզս սլլուեցան: Քառորդ մ'ետքը Պ. տը Պէվալլան դղեկէն կը մեկնէր Բէնցի պաշտօնակցիս հետ: Իր երթն ու շնորհանկումը անխուսելի կերպիւ իրեն ետեւէ գրողեց ծառաներու վայրաս հաշուութիւնը և օրիորդ Էլուէնի հետ իր լրբենի հաղորդակցութիւնը շատ մ'երեսն ելաւ: Նորատի օրիորդը որ քանի մ'ատենէ 'ի վեր զանազան պատճառներով կասկածելի եղած էր իր հրածարականը առաւ և ստացաւ: Աւելորդ է ըսել որ այս տիկինները պատուաւոր ապագայ մը հաստատած են իրեն . . . Վհա այսպէս, տղաս, դուն ինչ կ'ըսես ասոնց: Միթէ թեկից ցաւն աւելցաւ որ մեռելի պէս գեղնեցար . . .»

Իրական այն է որ այս անակնկալ լուրերը ներսս այնքան ուրախառիթ և ցաւալի վրդովումներ պատճառած էր, որ մարելու մօտ կ'ըզգայի ինքզինքս:

Պ. Լօպօրէն որ վաղը արշալուսին ասիէ պիտի մեկնի, այս իրիկուն ինձի եկաւ մնաս բարև ըսելու:

Երկուքնիս ալ քանի մը շփոթ խօսքեր փոխանակելէ ետքը, — Նայէ ինչ կ'ըսեմ, սիրելի տղաս, ըսաւ ինձ, քեզ չեմ հարցններ թէ հոս ինչ կ'անցնի, բայց եթէ մտերմի կամ խորհրդականի մը պէտք ունիս, կը խնդրեմ որ զիս նախադաս համարես:

Ստուգիւ չէի կրնար աւելի բարեկամ և հաւատարիմ մէկու մը քացուիլ: Հոս գալէս 'ի վեր, օրիորդ Մարդարթի հետ ունեցած մասնաւոր յարաբերութեանցս մէջի ամեն պարագաներուն մանրամասն պատմութիւնը ըրի իրեն: Այս յարաբերութեանց և հոգոյս վիճակին վրայ աւելի ճշգիւ դատարար մը տալու համար, նոյն իսկ այս օրագրէս քանի մ'երես կարգացի, վերջապէս բան մը չպահեցի իրմէ բաց 'ի ան պաղտնիքէն, որ առջի օրը Պ. Լարօքի գիւռանաթղթերուն մէջ գտեր էի:

Երբ խօսքս լմնցուցի, Պ. Լօպօրէն՝ որու դէմքը վայրկեանէ մ'ի վեր շատ թախծալի կ'երևէր, խօսքը շարունակեց:

— Աւելորդ է քենէ պահել, բարեկամ, որ զքեզ հոս զրկելու ատեն օրիորդ Լարօքի հետ միացնել էր միտքս: Նախ և յառաջ ամեն բան ուզածիս պէս գնաց: Զեր երկու սրտերը որոնք իրարու սրժանի են ըստ իս, մէկ մէկու մօտեցածուն պէս զիրար հասկըցան: Բայց կը խոստովանիմ որ սա Ելվէնի աշտարակին անցքը զիս բողբոջի կը շփոթէ: Ինչ կ'ըսես, նորատի բարեկամք իմ, ներքէ ինձ ըսել որ կտոր կտոր ըլնելը աչք առնելով պատահանէն ցատկելը, անշահասիրութեանդ նկատմամբ բաւական մեծ ցոյց մ'էր և այս պատուաւոր ու փափուկ վարմունքին վրայ աւելորդ էր երդում ընել այս խեղճ աղջիկը շառնելու առանց այնպիսի պատահական դէպքերու՝ որ բողբոջին անկարելի է ակնկալել: Իբր հնարագետ մարդ կը պարծիմ, այլ ինքզինքս բողբոջին անկարող կ'զգամ քեզ 200,000 Ֆրանք եկամուտ կապելու կամ օրիորդ Լարօքն ալ իր նոյնչափ եկամուտէն զրկելու:

— Ուրեմն, խրատ մը տուէք ինձ, պարոն: Աւելի ձեր՝ քան թէ իմ վրայ վստահութիւն ունիմ, վասն զի կ'զգամ որ իմ աղքատութիւնը միշտ կասկածի ենթակայ ըլնելուն՝ պատուոյ դիւրագլածութիւնները շտիպանց գրողած է յիս: Խօսեցէք, կը խրատէք որ մոռնամ այն անխոհեմ այլ հանդիսաւոր երգումը որ ձեր օրգեգիր զաւակը երազած երանութենէն կը բաժնէ:

Պ. Լօպօրէն ոտք ելաւ, իր թաւ յօնքերը աչերուն վրայ իջան, քանի մը վայրկեան սենեկիս մէջ ժուռ եկաւ մեծաքայլ, յետոյ իմ առջև կանգ առնելով և ձեռքերէս բռնելով ուժգին:

— Երիտասարդ դու, ըսաւ ինձ, իրաւ զաւակիս պէս կը սիրեմ զքեզ, բայց թէ որ քու սիրտը իմինիս հետ խորտակուի անգամ, իմ սկզբունքները ոտքի տակ պիտի չառնում: Լաւ է պատուոյ պահանջումներէ աւելի ընել, քան թէ պակաս: Ամեն այն երգումները որ դանակի կամ հրացանի տակ եղած չեն, կամ ընելու չէ կամ ընելէ ետքը բռնելու է: Ահա իմ կարծիքը:

— Իմս ալ այնպէս է: Վաղը ձեզի հետ կը մեկնիմ ասիէ: — Չէ, Մաքսիմ, դեռ քիչ մ'ատեն հոս մնայիր: Հրաշքի չեմ հաւատար, բայց կը հաւատամ Աստուծոյ որ քիչ անգամ թող կը տայ որ մեր առարկիւնութեանց պատճառաւ կորսուինք . . . Նախաձեռն

խնամութեան պայմանաժամ մը տանք . . . : Գիտեմ որ քենէ մեծ քաջութիւն մը կը խնդրեմ, բայց քու բարեկամութենէ կը պահանջեմ զայն : Թէ որ միայն մէկ ամիս ինէ լուր չառնես, անատեն կը մեկնիս :

Ասոր վրայ զիս զրկեց և բաժնուեցաւ ինէ՝ խիղճս հանդարտ, այլ հոգիս յուսահատութեան մէջ թողլով :

12 Հոկտեմբեր

Երկու օր է որ բնակարանէս ելնելով կրցայ զզեկը երթալ : Էլ վէշի աշտարակին դիպուածէն ՚ի վեր օրիորդ Մարգարիտը տեսած չէի : Սրահակը առանձին էր երբ ներս մտայ, զիս տեսածին օյէս իբր թէ ելնելու համար ահամայ շարժում մ'ըրնու, ետքը անշարժ մնաց և իր գէմքը սաստիկ կարմրութեամբ մը ներկուեցաւ :

Փոխադրական եղաւ այն, վասն զի զգայի թէ ես ալ մինչև ճակատս կը կարմրէի :

— Ինչպէս եղաք, պարոն, ըսաւ ձեռքն ինձ երկնցընելով, և այս պարզ խօսքերը այնպէս անոյշ, խոնարհ, — և բարէ, գորովալի եղանակաւ մ'արտասանեց, — որ կ'ուզէի իր առջև ծունկի վրայ դալ : Սակայն պարտաւորեցայ պաղ քաղաքավարութեան եղանակաւ մը պատասխանել իրեն : Աշտալի կերպով մ'երեսս նստեցաւ նա, յետոյ համբերատար երևութով մը իր խոշոր աչերը վար իջեցուց և ձեռքի աշխատութիւնը շարունակեց :

Գրեթէ նոյն հետայն մայրը զինքն իր սրային քով կանչեց որու վիճակը երթալով շատ կը գէշնար : Շատոնց ձայնը և շարժելու կարողութիւնը կորուսեր էր նա : Անգամալուծութիւնը գրեթէ բոլորովին արիւր էր վրան : Մտաւոր կենդանութեան վերջին նշոյլներ ալ մարեր էին և միայն իր ցաւերը և զգայութիւնը կը զիմանային :

Տարակոյս չկար որ ձերունոյն վախճանը մօտ էր, բայց այս արի սրտին վրայ կեանքը անանկ սաստիկ արմատացած էր որ առանց

յամառ մաքառումի մը չէր կրնար բաժնուիլ անկէ : Բժիշկը գուշակեր էր որ հոգեվարքը երկար պիտի ըլնէր :

Տիկին Լարօք ու իր աղջիկը իրական սեռի յատուկ առարկութեանը եզոզ սիրալի անձնու բացութեամբ և ինքնուիրական խանդով իրենց արնութիւններն ու ջանքը վասնեք էին : Երէկ չէ առջի իրիկուն տենդի և անքունութեան տակ ընկճած ըլնելուն, Պ. Տէմարէ և ես երկրորդ գիշեր իրենց տեղը բռնել ուղեցինք, որպէս զի իրենք քանի մը ժամ հանդիստ առնուն :

Բժիշկը, ինքն ալ յոգնած էր, ուստի քիչ մ'ետքը իմաց տուաւ ինձ, որ մօտակայ սենեկին մէջ անկողնոյ մը վրայ նետուելու միտք ունէր :

— Հոս բանի մը չեմ ծառայեր, ըսաւ ինձ, գործը լմնցած է : Կը տեսնէք որ խեղճ մարդը ցաւ անդամ չզղար . . . անանկ թմբրութեան մը մէջ է որ անախորժ բան մը չունի . . . և մահը պիտի յաջորդէ անոր . . . Աստի հանդիստ կրնար ըլնիլ : Թէ որ փոփոխութիւն մը տեսնէք զիս կանչեցէք, բայց չեմ կարծեր թէ վաղէն յառաջ պէտք ըլնիմ : Սպասելով ես քունի համար կ'մտնեմ :

Աղմկալի ձայնով մը յօրանջեց և դուրս ելաւ : Հիւանդին դիմաց բանեցուցած լեզուն և վարմունքը զիս վշտացուցած էին : Պատուական մարդ մ'է նա, բայց հարկ եղած յարգանքը մահուան ընծայելու համար միայն անոր լուծած նիւթը տեսնելու չէ այլ անկէ ելնող անմահ հոգին ևս միտքը բերելու է մարդ :

Տխուր սենեակը մինակ մնալուս պէս՝ նստայ անկողնոյն ոտքը սրու վարագոյրները վեր ըրած էին, և իմ քովս դուրս ազատի արապիկը մը վրայ եղած ճրագին շնորհիւ կարգալու աշխատեցայ : Գիրքը ձեռքէս ընկաւ, մտքէս չէր ելնէր այն դիպուածներու զարմանալի միտորութիւնը որովայս մեղաւոր ձերունին՝ իր յախտենական քունին իբր միակ պաշտպան և հանդիսատես, իր զոհին թողը կ'ուսենար այնքան տարիներէ ետքը :

Յետոյ, այս տեղայն և ժամուն խորին հանդարտութեան մէջ տեղ՝ ահամայ կը յիշէի արիւնալի կռիւներու և բռնութեանց տեսարանները՝ որոնցմով սոյն վերջացող կեանքը լեցուած էր : Այս ալեւոր հոգեվարքին գէմքին և հաստ զձաղբութեան վրայ՝ որու տղոյն քանդակը կ'ընայ գիմակի մը պէս մութին մէջ կ'որոշուէր՝

անոնց հեռաւոր սպաւորութիւնը կը փնտռէի : Բայց միայն ծանրութիւն և զերեզվանի կանխահայտ հանդատութիւնը կը տեսնէի հոն : Մերթ ընդ մերթ իր մտաբերին կը մտաէի այսպէսով ըլնելու համար որ կենսական շունչը այս ճնշուած կուրծքը սակաւին կը յուզէր :

Վերջապէս կէս զիշերի մօտ , անդիմադրելի թմրութիւն մ'եկաւ վրաս և ձեռքիս վրայ յենած քնացայ : Մէյ մ'ալ յանկարծ արթնցայ չդիտեմ ինչ աղետալի շշուկէ մը , աչքերս վեր ըրի և ոսկրներուս մէջէ սարսուռի մ'անցնելը զգացի :

Երբունին իր անկողնոյն մէջ կէս մը կանգնած էր և իմ վրայ ուշադիր և ապուշ նայուածք մը բեւեռէր ուր այնպիսի արթնուածեան և կենդանութեան մը նշանները կը փայլէին որ մինչև անասն տեսած չէի :

Երբ իմ աչքը իրենին հանդայեցաւ , ուրուականը դողաց , իր թեւերը խաչաձև տարածեց և աղետալի ձայնով մը՝ ոչ ու տարօրինակ , անծանօթ շեշար սրտիս շարժումները պահ մը դադարեցուց , ըսաւ ինձ .

- Պարոն մարբիլ , ներեցէք ինձի :
- Ընդունայն ուզեցի ոտք ելնել և խօսիլ , թիկնաթուխ մէջ կարծես թէ քար կտրած էի :
- Լուռութեմ'եաքը , ուր հոգեվարբին նայուածքը նոյն աղերսասնօք վրաս մնացեր էր ,

- Պարոն մարբիլ , կրկնեց , հաճեցէք ներել ինձ :
- Վերջապէս իր քովն երթալու սիրտ ըրի : Քանի կը մօտենայի դժուարութեամբ ետ ետ կ'քաշուէր նա , սոսկալի մերձումէ մը խուսելու պէս : Մէկ ձեռքս վերցուցի և մղմիկ մը զայն իր չափազանց բացած և ահարեկ աչերուն առջև երկնցնելով ,

- Գացէք ՚ի խաղաղութիւն , ըսի իրեն , կը ներեմ ձեզի :
- Հազիւ թէ այս խօսքերը լինցուցեր էի , երբ իր թարշամեալ դէմքը , երիտասարդութեան և ինդութեան ճառագայթով մը լուսաւորուեցաւ : Միևնոյն ատեն իր չոր ակնապիճերէ երկու արցունքի կաթիլ կը ցայտէին :

Մէկ ձեռքը ինձի երկնցուց , եաքը յանկարծ այս ձեռքը դոյուտեցաւ բռնապին և օդին մէջ կարծրացաւ սպառնական շարժումով մը , տեսայ որ դնտակէ մը զարնուածի պէս իր բացուած արտևանց մէջ իր աչերը շուրջ մուր կը դառնային :

— Ո՛հ , անդ զիայցին , միմաջ նա ,
Եւ անմիջապէս անշարժ զանդուածի մը պէս բարձին վրայ ընկաւ :

Մեռած էր :
Մարդ կանչեցի շտապաւ , ներս վաղեցին և շուտ մը բարեպաշտական արցունքով և աղօթքներով շրջապատուեցաւ իր մարմինը : Իսկ ես սոյն տարօրինակ տեսարանէն՝ որ իմ և այս մեռելին մէջ տեղ զաղանի պիտի մնար խտննապէս , բռնորովին յուզուած՝ սենեակս քաշուեցայ : Այս ընտանեկան ցաւալի դէպքը քիչ մ'ետքը իմ վրայ այնպիսի հոգեր և սարսուռութիւններ աւելցուց , որոց ես ալ պէտք ունէի այս տան մէջ կենալու աչքիս առջևն արդարացրնելու համար :

Նակարելի էր ինձ ըմբռնել թէ ինչ պատճառաւ Պ. Լօպորէն իմ երթն երկարաձգելու խրատեր էր : Երդեօք սոյն երկարումն ինչ կ'սպասէ նա , ինձ կը թուի թէ այս պարագայի մէջ , չնչին տխրութեան և խորունկ նախապաշարման մ'անսաց որոնք այնպիսի կուրծկամտ մէկը պէտք չէին յաղթել և որու հնազանդելովս ես ալ սխալեցայ : Բնչպէս չէր հասկընար նա որ վշտերս աւելցնելով կեղծուպատիր և անարժան դեր մը խաղալու կը բռնադատէր զիս :

Սյուտ հետէ իմ գործն ինչ է հոս : Չէ՞ որ հիմակ իրաւամբ կրնային երեսս զարնել թէ նուիրական զգացումներու հետ կը խաղայի :

Օրիորդ Մարգարիտի հետ ունեցած նախնութեան տեսութիւնս բաւական եղեր էր յայտնելու ինձի այն փորձին ամեն խստութիւնը և անկարելիութիւնը որու դատապարտուած էի , երբ Պ. Լարօքի մահը վրայ դալով քանի մ'ատենուան համար իմ յարարերու թիւններու քիչ մը պարզութիւն և հոն մնալու տեսակ մը պատշաճութիւն տուաւ :

26 Հոկտեմբեր—Բեմնը

Ամն բան լմնցաւ :

Նստուած իմ, որչափ հզօր էր այս կապը, ինչպէս կը պատէր բոլոր սիրտս և ինչպէս իր կարուելու ասան շարաշար վերաւորեց զայն :

Երէկ իրիկուն ժամը Յին մօտերը այն ինչ բաց պատահանիս վրայ կը լծնած էի, զարմանքով առնայ որ շերտցին մուժ ուղններու մէջէ լոյս մը քնակարանիս կը մօտենար և այնպիսի ձամբէ մը որ զգեկին սպասաւորները սովորութիւն չունէին անցնելու : Վայրկեան մը ետքը դուռս զարնուեցաւ և օրիորդ տը ԲէրՏօէ հեալով ներս մտաւ :

— Տօհմիկ, ըսաւ ինձ, ձեզի ըսելիք ունիմ :

Երեսը նայեցայ :

— Մի՛թէ գժբաղդութիւն մը կայ, ըսի :

— Չէ, ճշգիւ գժբաղդութիւն մը չէ, ինչպէս որ դուք ալ հիմա պիտի տեսնէք : Նստէք : Այս շարաթ քանի մը դիշեր դիւակն անցուցիք, մի՛թէ այս տիկնանց վարմունքին մէջ նոր կամ զարմանալի բան մը չլինի :

— Չէ :

— Գոնէ իրենց գծաբութեան մէջ տեսակ մը անտուր զուարթութիւն մը նշմարեցիք :

— Արժեամայո : Իրենց նոր սպառութեան տխրութիւնը ՚ի բաց առնելով, աւելի խաղաղ և նոյն իսկ յառաջունէ աւելի երջանիկ երևցան ինձի :

— Անշուշտ : Ուրիշ մանր պարագաներ ալ պիտի դիտէիք թէ որ ինձի պէս ամեն օր հետեւնին ապրելիք : Այսպէսով ես շատ անգամ մէջերնին դաղանի համամտութեան և խորհրդաւոր գործակցութեան մը նշանները տեսայ : Ասկէ զատ իրենց սովորութիւններն ալ զգալի կերպով փոխուեցան : Տիկին Ղարօք իր ուռանը մէկդի դրաւ ինչպէս նաև դահաւորակր և իր բոլոր գաղթածնի այլանդակութիւնները : Խիտս կանուխ կ'ենէ և արշալուսէն յառաջ Մարգարիտի հետ գործի սեղանին քով կ'սեղաւորուի : Երկուքն ալ գործ

բանելու սիրով մը բորբոքեր են և հարցաւորձ կ'ընէի թէ կին մը այս տեսակ աշխատութեամբ ինչ կրնայ շահիլ : Վերջապէս այս բանիս մէջ գաղանիք մը կայ որու մեկնութիւնը պարագայ անզ գտնել կը ջանայի, սակայն ինքնին գտնուեցաւ այն և ձեր ուղածէն աւելի ձեր գաղանիքները լծափանցելը աչքս առնելով ինձ պարտ համարեցի անյապաղ զայն ձեզի հաղորդել :

Երբ զինքն համազօյցի որ իր վրայ կատարեալ վստահութիւն ունէի, օրիորդ տը ԲէրՏօէ իր հաստատուն և անսոյ խօսածքով սկսաւ,

— Այս իրիկուն տիկին Օսրի, եկաւ զիմ գտաւ գաղանապէս, նախ իր անձուռնի ձեռքերը վիզս նետելով զիս դրկեց որ ամեն ինչ շարիցի, յետոյ հաղարու մէկ անձնական երեմիտաբանութիւններէ ետքը որ ձեզ ինայելով չեմ կրկնէր, աղաչեց որ իր ազդակները իրենց կորստեան անգունդէն ետ քաշեմ : Իր պատուական սովորութեանը համեմատ դունքէ ականջ գնելով իմացեր էր որ այս տիկնաները, կառավարութեան արտօնութիւն կը խնդրեն այսօր, իրենց բոլոր ինչքքը Բէնը քաղքին մէկ վանքին ձգելու, որպէս զի վերնայ ձեր և Մարգարիտի մէջէն հարստութեան տարբերութիւնը որ զձեզ կը բաժնէ : Ա՛յ ուղեն իրենք աղքատնալ քանի որ չեն կրնար զձեզ հարստացնել : Ուստի, սիրելի տօհմիկս, ինձ անհրաժեշտ թուեցաւ որ իմանաք սոյն որոշումը որ այս վեհանքն հողիներուն և ցնուրալից գլուխներուն երկուքին ալ հաւասարապէս արժանի է : Ներքեցէ ինձ յաւելցնել որ ձեր պարտաւորութիւնն է զիրենք այս խորհրդէք ինձ յաւելցնելու որ ձեր պարտաւորութիւնն է զիրենք այս խորհրդէք ինձ յաւելցնելու : Մասածեցէ թէ ինչ անխուսելի զղջումներ կը պատրաստէ այն, ձեր բարեկամութիւններուն և ինչպատասխանաւորութեան տակ կը ձգէ զձեզ, ասոնք աւելորդ է ձեզի ըսել վասն զի դուք ալ դիտէք : Թէ որ բարակը չնայէիք, բարեկամք իմ, և անմիջապէս Մարգարիտի ձեռքն ընդունէիք, այս ամենը շատ աղէկ կը լմնար, բայց այս մասին ալ կատարած էք այնպիսի խոստումով մը որ թէ և կոյր և անխոհեմ սակայն և այնպէս ձեր պատուին համար պարտաւորիչ է : Հետեւաբար միայն բան մը կը մնայ ձեզ ըսելու, այն է անյապաղ մեկնիլ այս երկրէն և արիաբար կտրել տալ այն յոյսերը որ ձեր ներկայութիւնը կ'արժարձէ բնականօրէն : Գուք հոս չեղած ասոնք աւելի դիւրին պիտ'ընի ինձ այս երկու աղայամիտներու խելքը գլուխը բերել :

— Լաւ ուրեմն, պատրաստ եմ և նոյն խակ այս գիշեր պիտի մեկ- նիմ:

— Քաջ է, վրայ բերաւ նա: Երբ ձեզի այս խրատը կը տամ, քարեկամ, ես իսկ՝ պատուոյ խիտո կսկծալի օրէնքի մը կը հնազան- դիմ: Իմ երկար միայնութեան ժամերը դուք կը զուարթացնէիք, կենանքի ամենաքաղցը մտերմութիւնները զորս շատ տարիներէ ՚ի վեր կորուսած էի, ձեր քով սկսայ վերստին վայելել: Չձեզ քովէս հեռացնելով իմ յետին գոհողութիւնը կ'ընեմ և անբաւ է այն:

Ոտք ելաւ նա և վայրիկ մ'առանց խօսելու երեսս նայեցաւ:

— Իմ տարիքի մէջ եղողները, կրկնեց տրամազին ժպտելով, ե- ըրիտասարդները չեն գրկեր այլ կ'օրհնեն: Մնաք բարև, սիրելի տղաս, և շնորհակալ եմ: Բարեբարն Աստուած ձեր օրհականն ըլնի:

Իր դողդոջուն ձեռքերը պազի, և արտոնօք բաժնուեցաւ ինէ:

Շուտ մը ճամբորդութեանս պատրաստութիւններն ըրի, ետքը քանի մը սող գրեցի առ տիկին Լարօք, զինքն աղաչելու համար որ ետ կենայ այնպիսի սրողումէ մը՝ որու սահմանը չէր կրցած չա- փել և որու՝ քաջ միտքս զրած էի ես իմ կողմէ գործակից չգանուե- չու: Խօսքս կը տայի իրեն, — և գիտէր որ անոր կրնար վտա- հիլ, — թէ երբէք իմ երջանկութիւնը անոր կործանումով չէի ու- զեր ծախու առնել: Նստակի լմացնելով զինքն իր յիմար խոր- հուրքէ աւելի ևս դարձնելու համար, մտաւրտ ապագայի մը խօսքն ըրի և հարտանալու յոյսեր ալ կեղծեցի:

Աէս գիշերին, երբ ամեն մարդ կը քնանար, մնաս բարև, ա- ղեյօշ մնաս բարև մ'ըսի բնակարանիս, այն հինօրեայ աշտարակին ուր այնքան տառապեի, — ուր այնքան սիրեր էի, — և զաղանի դունէ մը, որու բանալին ինձ աուեր էին, դղելին մէջ սպրդե- ցայ:

Յանցաւորի մը պէս պարսպ ու հնչական դաւիթներէն անցայ կրցա- ծիւս չափ ճանրաս գտնելով: Վերջապէս հասայ այն սրահակը ուր առաջին անգամ զՄարգարիտ տեսեր էի:

Ինքն աւ մայրը հազիւ ժամ մը կար որ անկէ մեկնած էին և ի- ընեց նորոգ ներկայութիւնը կը յայտնուէր գաղջ և անօշ հոտով մը սրով յանկարծ դիմովցայ: Փնտռեցի, ձեռքով շօշափեցի կա- րի սակաւը որու մէջ քիչ մ'առաջ անոր ձեռքը իր գործը զետեղեր էր . . . բարէ, խեղճ սրտիկս: Իր նստած տեղը ծոնգի վրայ ըն-

կայ և հոն ճակատս մարտիրին վրայ ձեծելով, աղայի պէս լացի ու ողբացի . . . Աստուած իմ, սրբան կը սիրէի զանի:

Գիշերուան վերջին ժամերը ՚ի կիր առնելով՝ զիս մօտակայ առանը տանել տուի ուրիշ Բէնն երթալու համար կառք մը մտայ: Վա- ղը իրիկուն Բարիզ պիտի գտնուիմ: Աղքատութիւն, առանձնու- թիւն և անյուստութիւն, — զորս հոն ձգեի էի, զձեզ պիտի գտնեմ՝ վերստին: — Իսկ քիչ վերջին երազք երիտասարդութեան, — ե- րազք երկնային . . . մնաս բարև:

Քարիզ

Երկրորդ օրը առաւօտուն, այն ինչ երկաթուղին կերթայի, սուրհանդակի կառք մը կար պանդուկին բակին մէջ, ուրիշ ձեռքի Ալէնի իջնելը տեսայ:

Չիս տեսածին պէս իր գէմը զուարթացաւ:

— Ա՛հ, պարոն, ի՛նչ երջանկութիւն որ տակալին մեկնած չէք, ձեզի համար նստակ մ'ուրիմ:

Պ. Լօպօթէնի գիրը ճանչցայ, նա երկու տողով կ'իմացնէր ինձ թէ օրիորդ ար Բէրհօե ծանր հիւանդ էր և զիս կ'ուզէր: Անմի- ջապէս ձիերս փոխել տուի և կառքին մէջ նստուեցայ դժուարու- թեամբ Ալէնը համոզելէ ետքը՝ որ ինքն ալ զիմացս նստի: Անտե՛ն հարցմունքներովս զինքը նեղեցի և սուսած լուրը որ ինձ անիմանալի կ'երևէր, կրկնել տուի:

Օրիորդ ար Բէրհօե, առջի օրը Պ. Լօպօթէնի ձեռքէ պաշտօ- նական նստակ մը ստացիւր էր որ իրեն ազգ կ'ընէր թէ իր սպա- նիացի ազգականներուն ժառանգութիւնը լիովին վաստակեր էր: — Եւ կ'երևի թէ, կ'աւելցընէր Ալէն, այս բանը հրամանքնուդ կը պարտաւորի, վասն զի հրամանքնիդ գտեր էք աղաւեստան մէջէ՛ այն հինուսին թուղթերը որ և ոչ մէկուն մտքէն կ'անցնէին և որմնցմով օտարօք օրիորդին իրաւունքը հաստատուեցաւ: Չգիտեմ թէ ասոր որ- քանը ստոյգ է, բայց եթէ իրաւ է, մեղք, ըսի իւրովի, որ այս

յարգելի անձը զլուխը կաթողիկէի զաղախարհնրով լեցուցած է և շուրջը զանոնք հանել անկէ . . . վասն զի նշանակեցէք, պարոն, որ յառաջընէ աւելի անով զգլխած է նա . . . : Նախ այս լուրը առածին պէս փայտ կտրած գետինն ընկաւ և կածեցին որ մեռած է, բայց ժամ մ'ետըը սկսաւ անդուլ անդադար իրկաթողիկէին, անոր դուսն, դահլճին, վանական ժողովին, կանոնիկոսներուն, աջ և ձախ կողմի աւանդատուններու վրայ խօսել այնպէս որ հարկ եղաւ ճարտարապետ մը և գործադրներ կանչել ու իր անիծեալ շէնքին բոլոր ստուերազիծերը իր անկողնոյն վրայ դնել : Վերջապէս ասոր վրայ երեք ժամ խօսելէ ետքը քիչ մը քուն մտաւ, ետքը արթնցած ատեն հրամանքնիդ տեսնել ուզեց, Պ. մարքիզ, (Վէն աչերը պոցելով խոնարհեցաւ) և զիս 'ձեր ետեւ վազցուցին : Ա'երեկ թէ իր կաթողիկէին ընկն վրայ խորհուրդ պիտի հարցնէ նա հրամանքնուդ :

Այս տարօրինակ դէպքը, զիս մեծ դարմանցման մէջ ձդեց, սակայն յիշատակներուս և Ալէնէ սաացած շիրթ լուրերուս օգնութեամբ կրցայ անոնց բացատրութիւն մը տալ որ ետքէն աւելի ստոյգ տեղեկութիւններով հաստատուեցաւ : Կնչպէս որ արդէն ըսի, Բէրժօնեց Սպանիական ճիւղին ժառանգութեան խնդիրը երկու կերպարանք առած էր : Նախ և յառաջ օրիորդ ար Բէրժօնի և Քասթիլեան մեծ ընտանիքի մը մէջ տեղ, երկար դատ մը բացուեր էր զոր այս վերջերս իմ պառաւ բարեկամուհին կորուսեր էր, յետոյ նոր վէճ մը՝ որու մէջ օրիորդ ար Բէրժօն բնաւ գործ չունէր, սկսած էր նորէն նոյն ժառանգութեան վրայ, բայց Սպանիկ ժառանգներուն և տերութեան մէջ, որ կը պնդէր թէ այս ինչքերը օտար հպատակէ մնացած ըլնելուն իրեն կ'ընէին : Գործն այս տեղերն էր, երբ զղիկէն մեկնելէս Չ ասիս յառաջ արձանագրութեանց մէջ իմ հետադրութիւնները շարունակելու ատեն, զարմանալի թուող մը դտեր էի որու ճիշդ պատճէնը հոս կը դնեմ :

«Տօն Ֆիլիք՝ շնորհօքն Աստուծոյ, թաղաոր քասթիլի, Աէօ-ճնի, Արախօնի, երկու Սիկիլիաի, Երուսաղէմի, Նապարայի, Արը-ճնատայի, Թօլէտի, Վալանսի, Կալիցիաի, Մայօրբայի, Սէվիլի, Սարտէնիսի, Գօրտուի, Քատիքսի, Միւրսիի, Ժակէնի, Ալլարվի

«Ալժէզիբասի, Ճիպրալթարի, Քանարեան կղզիներու, Արևելեան և Արևմտեան Հնդկաստաններու, Ովկիանոսի կղզիներու և հասաւտուն երկրաց : Ներհոլանդս Աւստրիոյ, դուքս Պուրկօնի, Պրապանդի և Միլանու, Կոմս Հասպպուրիի, Ֆլանտրի, Թիբուրի ու «Պարչէլճնայի, տէր Պիսքէյի ու Մօլինայի ևայն ևայն :

«Քեղ, Հէրվէ Ժան Ժօսրլէնիդ, տէր ար Բէրժօնէ Կաէլեանց, «Կոմս Նոր-երկիրներու ևայն, որ իմ հայրենեաց մէջ ինձ հետեւ-«Եցար ու բարի օրինակ տուող հաւատարմութեամբ ծառայեցիր, «յատուկ շնորհօք կը խոստանամ որ եթէ երբէք քու ուղղակի և «օրինաւոր սերունդը սպառի, ընտանեացդ ինչքը նոյն իսկ 'ի վնաս իմ «թաղին, դարձեալ ար Բէրժօնէ Կաէլեանց զաղղիական ճիւղին օ-«րինաւոր զաւակներուն սկիտի դառնան քանի որ ողջ ըլնին անոնք :

«Եւ այս խոստումը կ'ընեմ իմ և յաջորդներուս կողմէ, արքունի «հաւատոյս և խօսքիս վրայ :

«Տուեալ 'ի պալատն Էսթրիալ . 10 ապրիլ 1716
«ԵՍ ԱՐՔԱՅ :»

Այս մուհիակին քով, որ անոր թարգմանութեան ընդօրինակութիւն էր միայն, Սպանիոյ զինանշանները կրող քնազիւն ալ զտած էի :

Թէև այս թուող ին կարևորութիւնը զգացեր էի բայց կը վախնայի որ նոյն կարևորութիւնը աչքիս առջև չստուարացնեմ : Ամենեւին չէի յուսար որ Սպանիական կառավարութիւնն ընդունէր այս մուհիակին օրինաւորութիւնը՝ որու վրայ այնքան տարիներ անցեր էին. եթէ ուղէր անգամ՝ կը տարակուսէի որ կարենար զայն յարգել տալ : Ուստի որոշեր էի օրիորդ ար Բէրժօնէն պահել զիս մը՝ որու արդիւնքը շատ երկմտելի կը թուէր ինձ, այսպէսով մուհիակը Պ. Լօպօքէնի զրկելով զոճ եղեր՝ և անոր վրայ լուր մը չառնելուս զայն բոլորովին մուցեր էի անտեսն զիս ճնշող անձնական հողերուս մէջ :

Սակայն իմ վախերուն հակառակ՝ Սպանիական կառավարութիւնը Փիլիպպոս Եի խոստումը ընդուներ էր իսկ և իսկ ու Բէրժօնեցանբաւ հարստութիւնը յետին վճիռով մը յարբուհիս զբաւելու միջոցին՝ զայն վնահանորէն օրինաւոր ժառանգին դարձուցեր էր կրկին :

Երեկոյեան ժամը Պ կար երբ իջայ այս խոնարհ անակին դուսն առջև՝ ուր այն զրեթէ թաղաւորական հարստութիւնը ներս մտած էր թէև քիչ մ'ուշ : Պղտի սպասուհին լալով եկաւ դուռը բա-

յաւ և սանդուխին վրայէն անմիջապէս Պ. Լօպօբէնի ծանր ձայնը լսեցի որ — Ան է, կ'ըսէր ինծի համար :

Աստիճաններէն վեր սլացայ փութանակի, ծերունին ձեռքս սեղմեց ու ժղին և առանց բառ մ'արտասանելու՝ զիս օրիորդ տը ԲէրՏօէի սենեակը տարաւ : Եւանին բժիշկն ու ժողովրդապետը պատահանին շուքին մէջ կը կենային անձայն : Տիկին Լարօք, անկողնոյն քով աթոռի մը վրայ նստած էր ու իր աղջիկը սնարբին քով կանգուն՝ բարձերը կը վերցընէր որոնց վրայ խեղճ ու պառաւ բարեկամուհւոյ տղայն զլուխը կը հանդէր :

Հիւանդը զիս տեսածին պէս, իր այլայլած դժագրութեան վրայ տկար ժպիտ մ'անցաւ և իր թևերէ մէկը դժուարութեամբ մը դուրս հանեց : Չեռքը բռնեցի, ծունկի վրայ ընկայ և արցունքներս չկրցայ բռնել : — Տղան, ըսաւ նա, սիրական տղան :

Ետքը Պ. Լօպօբէնի երեսը նայեցաւ պշուցեալ :
Անասն ծեր նստարը անկողնոյն վրայէն թուղթի թերթ մ'առաւ և ընդհատեալ ընթերցում մը շարունակելու պէս կարգաց,

« Էտեաւարար, տոյն ինքնագիր կտակովս, թէ Յպանիաի և թէ « Գրանայի մէջ ունեցած բոլոր ինչքերուս, առանց որ և է բաւ « ցառութեան կամ պայմանի՝ ինձ տիեզերական ժառանգորդ կը կարգուիմ զՄարքիմ-Ժաք-Մարի-Օտիօ, տը Շանսի տ'Օթըրիվ մարբիզը « որ թէ սրտով և թէ սերնդով ազնուական է : Այս է իմ կամբը :

« Ժօսը լինտ-Ժաննը, կոստուհի ՏԸ ԲԷՐՏՕԷ ԿԱՆԷԼ »

Չարմանքիս սաստկութեանը մէջ, տեսակ մը ամարդութեամբ ոտք ելած էի և պիտի խօսէի երբ օրիորդ տը ԲէրՏօէ, ձեռքս մեղմիկ մը բռնելով Մարգարիտի ձեռքին մէջ դրաւ : Այս յանկարծական կցորդութեան վրայ՝ սիրատուն աղջիկը դողաց, իր թարմ ճակատը սղաղեաց բարձին վրայ ծուեց և հոգեվարբին ականջն 'ի վար կարմրելով քանի մը խօսք մը մուսայ : Իսկ ես, ըսելու խօսք չգտայ, դարձեալ ծնկի վրայ եկայ և աղօթեցի : Հանգիստաւ լուծեան մը մէջ քանի մը վայրկեան անցեր էին՝ երբ Մարգարիտ յանկարծ ձեռքը քաշեց և վախի շարժում մ'ըրաւ :

Օրիորդ տը ԲէրՏօէի զլուխը յանկարծ ետևը ծռուած՝ և իր անշարժ ու փայլուն նայուածքը երկինք ուղղուած էր, իր շուրթերը կէս մը բացուեցան, և երազին մէջը խօսելու պէս,

— Աստուած, ըսաւ : Բարեբար Աստուած, կը տեսնեմ զայն հոն վերը այն դասը ոսկեղէն կանթեղները ապակիները և ամեն կողմ արեւը խորանին առջև երկու հրեշտակներ կան ծո՞նկի վրայ՝ ճերմակ հալած իրենց թևերը կը շարժեն տէր Աստուած կենդանի ե՛ն :

Այս աղաղակը սպառեցաւ իր բերնին վրայ՝ որ ծիծաղուն մնաց, աչքերը դոցեց քնանալու պէս, և յանկարծ անմահ երիտասարդութեան հօվ մը տարածուեցաւ իր դէմքին վրայ որ անձանաչ լի գարձաւ :

Այսպիսի կեանք մը պսակող սոյնպիսի մահ մը, իր մէջը անանկ դասեր կը պարունակէ որոնցմով ուղեցի հոգիս մինչև յատակ լեցըներ : Աղաչեցի որ զիս նոյն սենեկին մէջ քահանային հետ առանձին թողուն : Այս բարեպաշտական հսկումը յուսամ որ ինծի համար պիտի չկորսուի : Փառաւոր խաղաղութեան մը դրոշմը կրող այս դէմքին վրայ ուր իրօք չգիտեմ ինչ գերբնական նշոյլ մը կը բեկբեկէր, մէկէն աւելի մուցուած կամ երկմտելի ճշմարտութիւններ անհերքելի յայտնութեամբ մ'երեցան ինծի : Ավ ազնիւ ու արդար բարեկամուհիս, զո՞հողութեան առաքինութիւնը ունենալդ բաւական զիտէի և կը տեսնէի որ հիմակ անոր վարձարութիւնը կ'ընդունէիր :

Այն գիշերէ ետքը ժամը երկուքին մօտերը, յոգնութենէ ու ժամափ վայրի մ'ուղեցի մաքուր օդ ծծել : Սանդուխէն վար իջայ մութին և պարտեղ մտայ՝ զգուշանալով գեանայարկին սրահակէ անցնելու ուր լոյս տեսած էի : Գիշերը խաւարտին էր, այն ինչպաղտի շրջափակին ծայրը գտնուող գալարի հովանոցին կը մօտենայի, սարփինային տակ տկար շշուկ մը լսեցի, միևնոյն ատեն անորոշ տուեր մը տերևներու մէջէ բաժնուեցաւ :

Յանկարծական շլացում մը զգացի, սիրտս տրոփեց արագ, և տեսայ որ երկինքը աստղերով կը լեցուէր :


— Մարգարիտ, ըսի թևերս տարածելով :

Թեթև աղաղակ մը լսեցի, ետքը կէս ձայնով մ'արտասանուած անունս ու ետքը ոչինչ . . . : Իր շուրթերը իմիններու վրայ զղացի և կարծեցի որ հոգիս ինէ կը խուսափէր :

.
.

.....

Հարստութեանս կէտը քրոջս՝ Հէլէնի բաշխեցի : Մարդարիտ կինս է : Յախտե՛նապէս կ'զոյեմ այս էջերը վասն զի ալ անոնց աւանդելու բան մը չունիմ : Մարդերու համար կրնայ ըսուիլ ինչ որ ժողովուրդներու համար ըսուած է . Երանի անոնց որ սպասում լին չունին :



ՎՐԻՊԱԿ

Սխալ	Ռ-դէլ	Երէս	Տող
Խնձորենիներէս	Խնձորենիներէն	37	48
զբացւոյն	զբացւոյն	51	42
երիտասարգ	երիտասարգական	61	47
զարիը	սկահակը	70	24
ու	այլ	118	11
անոնց	մարդերու	149	2
կամբը	կառքը	154	12
կ'ընէին	կ'ընեն	165	4

Յառաջարանի ծանօթեան Յրդ տողին զժուած անունը կարդա՛ Բ. Զաքթօն, և բոլոր գործին մէջ յիշուած Լօպտէնները Լօպտէնն :

9590

24584

24585

2013

